ISSN 2579-2733

УНИВЕРСИТЕТ
ГРИГОР НАРЕКАЦИ

UNIVERSITI
GRIGOR NAREKATSI

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԴՊՐԱՏՈՒՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՆԴԵՍ

1 (9)-2020

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է
ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ
Պատասխանատու քարտուղար՝ ՆԱՆԱՐ ՍԻՄՈՆՅԱՆ

Главный редактор: ВАРДАН АКОПЯН
Ответственный секретарь: НАНАР СИМОНЯН

Chief Editor: VARDAN HAKOBYAN
Executive Secretary: NANAR SIMONYAN

© Հանդեսում զետեղված հեղինակներ, 2020
© Ստեփանակերտի «Գր. Նարեկացի» համալսարան, 2020
© «Դիզակ պլյուս» հրատարակչություն, 2020

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԴՊՐԱՏՈՒՆ

Հասարակական գիտությունների

հանդես

2020-1 (9)

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԱՎԱԳՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկան

ԱՎԱՆԵՍՅԱՆ ԱՐՄԵՆ - բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող

ԱՎԱՆԵՍՅԱՆ ՎԱԼԵՐԻ – պատմական գիտությունների դոկտոր, ԱրՊՀ պրոռեկտոր

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ԼԻԼԻԹ – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի ռեկտոր

ԲԱԲԱՅԱՆ ԴԱՎԻԹ - պատմական գիտությունների դոկտոր, ԱՀ նախագահի աշխատակազմի տեղեկատվության գլխավոր վարչության պետ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ – բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի Արևմտահայերենի, հայագիտության գիտահետազոտական Լուտովիկա և Յակոբ Այնթապլեան կենտրոնի տնօրեն, Որակի ապահովման պատասխանատու

ԴԵՎՐԻԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ – բանասիրական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱԶԱՏ - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայ-ռուսական համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ

ԹՈՎՄԱՍՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ – բանասիրական գիտությունների թեկնածու, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի օտար լեզվի դասախոս

ՀԱԿՈԲՅԱՆ ՍԵՎԱԿ – իրավաբանական գիտությունների թեկնածու, ԱՀ գլխավոր դատախազի տեղակալ, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի իրավագիտության ամբիոնի վարիչ

ՀՈՎՍԵՓՅԱՆ ԳԱՅԱՆԵ – մանկավարժական գիտությունների թեկնածու, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի օտար լեզուների ամբիոնի վարիչ

ՄԱՆԱՍՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ – փիլիսոփայական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ԵՊՀ տեսական փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնի պրոֆեսոր

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԻՐԱՆՈՒՇ – բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական քարտուղար

ՄԿՐՏՉՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի լեզուների ամբիոնի դասախոս

ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ ՀՈՎԻԿ – բանասիրական գիտությունների դոկտոր, ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոնի դասախոս

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԱՄՎԵԼ - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ ակադեմիկոս Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի վարիչ

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ԱՐՔՄԵՆԻԿ – բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

АВАКЯН АРЦРУН – доктор филологических наук, профессор, декан филологического факультета ЕГУ

АВАНЕСЯН АРМЕН – кандидат филологических наук,старший научный сотрудник литературного института имени М. Абегяна НАН РА

АВАНЕСЯН ВАЛЕРИЙ – доктор исторических наук, проректор АрГУ

АРЗУМАНЯН ЛИЛИТ – доктор филологических наук, профессор, ректор Ереванского государственного института театра и кино

АКОПЯН СЕВАК – кандидат юридических наук, заместитель главного прокурора АР, заведующий юридической кафедрой Степанакертского университета «Григор Нарекаци»

БАБАЯН ДАВИД - доктор исторических наук, Начальник Главного информационного управления Аппарата Президента АР

ГРИГОРЯН АМАЛИЯ - кандидат филологических наук, доцент, директор западно-армянского арменоведческого научно-исследовательского центра Лютовики и Акопа Айнтаплеан Степанакертского университета «Григор Нарекаци», ответственная по обеспечению качества

ДЕВРИКЯН ВАРДАН - доктор филологических наук, директор литературного института имени М. Абегяна НАН РА

ЕГИАЗАРЯН АЗАТ - доктор филологических наук, профессор, заведующий кафедрой армянского языка и литературы армяно-русского университета

МАНАСЯН АЛЕКСАНДР - доктор философских наук, член-корреспондент НАН РА, профессор кафедры философии и логики ЕГУ

МАРГАРЯН СИРАНУШ - кандидат филологических наук, научный секретарь литературного института имени М. Абегяна НАН РА

МКРТЧЯН ЭДУАРД - доктор филологических наук, профессор, преподаватель кафедры языков Степанакертского университета «Григор Нарекаци»

МУРАДЯН САМВЕЛ - доктор филологических наук, профессор, ЕГУ, заведующий кафедрой армянской литературы и истории имени академика Г. Тамразяна

МУСАЕЛЯН ОВИК - доктор филологических наук, преподаватель кафедры литературы и журналистики АрГУ

НИКОГОСЯН АРКМЕНИК - кандидат филологических наук, старший научный сотрудник литературного института имени М. Абегяна НАН РА

ОСИПЯН ГАЯНЕ - кандидат педагогических наук, заведующая кафедрой иностранных языков Сепанакертского университета "Григор Нарекаци"

ТОВМАСЯН ЛУСИНЕ - кандидат филологических наук, преподаватель кафедры языков Степанакертского университета «Григор Нарекаци».

EDITORIAL COUNCIL

ARTSRUN AVAGYAN - Doctor of Philology, Professor, Dean of the Faculty of Philology of YSU.

ARMEN AVANESYAN - Candidate of Philological Sciences, Senior Researcher at the Institute of Literature after M. Abeghian of NAS of RA.

VALERI AVANESYAN - Doctor of Historical Sciences, ASU Vice-rector.

LILIT ARZUMANYAN - Doctor of Philology, Professor, Rector of Yerevan State Institute of Theatre and Cinematography.

DAVIT BABAYAN - Doctor of Historical Sciences, Head of the Central Information Department of the Office of the President of the Artsakh Republic

AMALYA GRIGORYAN - Candidate of Philological Sciences, Docent, Director of Lutovica and Agob Aintablean Western-Armenian and Armenology Research Centre at Stepanakert «Grigor Narekatsy» University, in charge of Quality Assurance.

VARDAN DEVRIKYAN - Doctor of Philosophy, Rector at the Institute of Literature after M. Abeghian of NAS RA.

AZAT EGHIAZARYAN - Doctor of Philology, Professor, Head of the Armenian Language and Literature Chair at Armenian-Russian University.

LUSINE TOVMASYAN - Candidate of Philological Sciences, Lecturer of Foreign Language at Stepanakert «Grigor Narekatsy» University.

SEVAK HAKOBYAN - Candidate of Law Sciences, Deputy of AR Chief Presecutor, Head of the Law Chair at Stepanakert «Grigor Narekatsy» University.

GAYANE HOVSEPYAN - Candidate of Pedagogical Sciences, Head of the Foreign Languages Chair at Stepanakert "Grigor Narekatsy " University.

ALEQSANDR MANASYAN - Doctor of Philosophy, Corresponding Member of NAS RA, Professor of the Chair of Theoretical Philosophy and Logic of YSU.

SIRANOUSH MARGARYAN - Candidate of Philological Sciences, Scientific Secretary at the Institute of Literature after M. Abeghian of NAS RA.

EDUARD MKRTCHYAN - Doctor of Philology, Professor, Lecturer of Languages Chair at Stepanakert »Grigor Narekatsy» University.

HOVIK MUSAELYAN - Doctor of Philosophy, Lecturer of the the Literature and Journalism Chair at ASU.

SAMVEL MURADYAN – Doctor of Philology, Professor, YSU, Head of the History of Armenian Literature Chair named after Academician Hr. Tamrazyan.

ARQMENIK NIKOGHOSYAN - Candidate of Philological Sciences, Senior Researcher at the Literature Institute after M. Abeghian of NAS of RA.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գրականագիտություն և լեզվաբանություն

Լաուրա Մուրադյան
Նոր ուսումնասիրություն արևմտահայ գրող Տիրան Չրաքյանի (Ինտրա) կյանքի և գործի մասին 15
Էդուարդ Մկրտչյան
Պատմագեղարվեստական անդրադարձ՝ սարկաստիկ լուծումներով ու ինքնատիպ գաղափարաբանությամբ 21
Միեր Քումունց
Լեզվի և լեզվաշինության մի քանի հարցեր. (Մուրացան) 32
Լիանա Սանթրյան
Սիամանթոյի և Դանիել Վարուժանի լեզվամտածողության զուգահեռներ 40
Արքմենիկ Նիկողոսյան
Չպատմելու մեղքը (Անրի Գրիգորյանի «Դմբո Ջոյս» ժողովածուի առիթով) 49
Տաթևիկ Պողոսյան
Շիրակի պատկերակերտումը Ավետիք Իսահակյանի մի շարք պատմվածքներում 54
Հովհաննես Հովակիմյան
Կատյան՝ իբրև մակգաֆֆին Համբարձում Համբարձումյանի համանուն պատմվածքում 62
Անի Շիրինյան
Հրանտ Մաթևոսյան. բնաշխարհիկ հերոսների և քաղաքակրթված աշխարհի բախումն ու հանգուցալուծումը 68

Իրավագիտություն

Մալիկ Թելունց
Մարդու հիմնական իրավունքների և ազատությունների համակարգը՝ ըստ «Որոգայթ Փառաց»-ի 76
Արտյոմ Դերյագին
Հեռուստատեսության հանդեպ վստահության անկումը Հայաստանում և Ռուսաստանում 87

Պատմագիտություն

Մհեր Հարությունյան
Շուշիի ինքնապաշտպանության (1920թ.) ձախողման պատճառների լուսաբանումը հայ պատմագրության մեջ …….…….. 93
Հայկարամ Հակոբյան
Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունը Մեծ Հայքի թագավորությունում Արտաշեսյան դինաստիայի օրոք ……..…… 106
Զարուհի Զաքարյան
Թուրքիայի հարավկովկասյան քաղաքականության լծակները …….…… 119
Մոնթե Մաթևոսյան
Սկիհի խորհուրդը հայկական մանրանկարչության մեջ՝ որոշ մանրանկարների օրինակով …….…...…… 127

Տնտեսագիտություն

Արսեն Եղիկյան, Հենրիկ Մանուկյան
ՀՀ հիփոթեքային շուկայի փոփոխությունները 2018-19թթ. և զարգացման հեռանկարները ……..… 137
Հայկ Հովհաննիսյան
ՀՀ հիպերկենտրոնացված տնտեսությունը, բազիսային եկամուտի հնարավոր ներդրումը և սահմանամերձ գյուղերի վերաբնակեցումը ……...… 144

Մանկավարժություն

Գայանե Հովսեփյան
Հայ դպրոցականների հնչյունաբանական-հնչակարգային ինտերֆերենցիայի առանձնահատկությունները՝ ռուսերենը որպես օտար լեզու դասավանդման պրոցեսում ……..……..…… 152
Կարինե Փաթյան
Բարձր տեխնոլոգիաների ազդեցությունը սովորողների ուսումնառության վրա ……..…...……. 159
Արաքսյա Աբրահամյան
Նորարարությունները լեզվի ուսուցման և դասավանդման գործընթացում. տեղեկատվական տեխնոլոգիաների դրական ազդեցությունը …….……..….. 167

СОДЕРЖАНИЕ

Языкознание и литературоведение

ЛАУРА МУРАДЯН
НОВОЕ ИССЛЕДОВАНИЕ О ЖИЗНИ И ТВОРЧЕСТВЕ
ЗАПАДНОАРМЯНСКОГО ПИСАТЕЛЯ ТИРАНА ЧРАКЯНА (ИНТРА)..... 15
ЭДУАРД МКРТЧЯН
ИСТОРИКО-ХУДОЖЕСТВЕННОЕ РАЗМЫШЛЕНИЕ С
САРКАСТИЧЕСКИМИ РЕШЕНИЯМИ И УНИКАЛЬНОЙ ИДЕОЛОГИЕЙ …….. 21
МГЕР КУМУНЦ
НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ЯЗЫКА И ЕГО СТРОЕНИЯ. МУРАЦАН ……..…….. 32
ЛИАНА САНТРЯН
ПАРАЛЛЕЛИ ЯЗЫКОВОГО МЫШЛЕНИЯ СИАМАНТО И
ДАНИЭЛЯ ВАРУЖАНА …….…. 40
АРКМЕНИК НИКОГОСЯН
"ТРЕХ, О КОТОРОМ НЕ ГОВОРЯТ" (ПО СЛУЧАЮ СБОРНИКА АНРИ
ГРИГОРЯНА "ГЛУПЫЙ ДЖОЙС") …… 49
ТАТЕВИК ПОГОСЯН
ОБРАЗОТВОРЕНЬЕ ШИРАКА В РАССКАЗАХ АВЕТИКА ИСААКЯНА …… 54
ОВАННЕС ОВАКИМЯН
КАТЯ КАК МАКГАФФИН В ОДНОИММЕННОМ РАССКАЗЕ
АМБАРЦУМА АМБАРЦУМЯНА …….. 62
АНИ ШИРИНЯН
ГРАНТ МАТЕВОСЯН. СТОЛКНОВЕНИЕ КОРЕННЫХ
ГЕРОЕВ С ЦИВИЛИЗОВАННЫМ МИРОМ И ЕГО РАЗРЕШЕНИЕ …….…. 68

Юриспруденция

МАЛИК ТЕЛУНЦ
СИСТЕМА ОСНОВНЫХ ПРАВ И СВОБОД ЧЕЛОВЕКА
ПО «ЗАПАДНИ ЧЕСТОЛЮБИЯ» ……..……. 76
АРТЕМ ДЕРЯГИН
ПАДЕНИЕ УРОВНЯ ДОВЕРИЯ К ТЕЛЕВИДЕНИЮ В АРМЕНИИ И РОССИИ …….. 87

История

МГЕР АРУТЮНЯН
ОСВЕЩЕНИЕ ПРИЧИН ПРОВАЛА САМООБОРОНЫ ГОРОДА ШУШИ 1920Г.
В АРМЯНСКОЙ ИСТОРИОГРАФИИ. …… 93

АЙКАРАМ АКОПЯН
ВЗАИМООТНОШЕНИЕ ДУХОВНОЙ И МИРСКОЙ ВЛАСТЕЙ В ЦАРСТВЕ ВЕЛИКОЙ АРМЕНИИ ПРИ ДИНАСТИИ АРТАШЕСЯНОВ ……..……. 106
ЗАРУИ ЗАКАРЯН
РЫЧАГИ ЗАКАВКАЗСКОЙ ПОЛИТИКИ ТУРЦИИ …….…… 119
МОНТЕ МАТЕВОСЯН
СОВЕТ ПОТИР НА ПРИМЕРЕ НЕКОТОРЫХ МИНИАТЮР В АРМЯНКОЙ МИНИАТЮРНОЙ ЖИВОПИСИ …….…… 127

Экономика

АРСЕН ЕГИКЯН, ГЕНРИК МАНУКЯН
ИЗМЕНЕНИЯ ИПОТЕЧНОГО РЫНКА АРМЕНИИ В 2018-2019 ГГ. И ПЕРСПЕКТИВЫ ЕГО РАЗВИТИЯ …… 137
АЙК ОГАННИСЯН
СВЕРХКОНЦЕНТРИРОВАННАЯ ЭКОНОМИКА РА, ВОЗМОЖНОЕ ВНЕДРЕНИЕ БАЗОВОГО ДОХОДА И РАССЕЛЕНИЕ ПРИГРАНИЧНЫХ ГОРОДОВ В АРМЕНИИ …… 144

Педагогика

ГАЯНЕ ОСИПЯН
ОБ ОСОБЕННОСТЯХ ПРОЯВЛЕНИЯ ФОНЕТИКО-ФОНОЛОГИЧЕСКОЙ ИНТЕРФЕРЕНЦИИ АРМЯНСКИХ ШКОЛЬНИКОВ ПРИ ОБУЧЕНИИ РКИ ……... 152
КАРИНЕ ПАТЯН
ВЛИЯНИЕ ВЫСОКИХ ТЕХНОЛОГИЙ НА ОБУЧЕНИЕ СТУДЕНТОВ ……. 159
АРАКСИЯ АБРААМЯН
ИННОВАЦИИ В ИЗУЧЕНИИ И ОБУЧЕНИИ ЯЗЫКУ: ПОЛОЖИТЕЛЬНОЕ ВЛИЯНИЕ ИНФОРМАЦИОННЫХ ТЕХНОЛОГИЙ ……..…… 167

CONTENT

Literary Criticism and Linguistics

LAURA MURADYAN
NEW STUDY ON THE WORK OF WESTERN ARMENIAN WRITER TIRAN CHRAKYAN 15
EDUARD MKRTCHYAN
HISTORICAL AND ARTISTIC REFLECTION WITH SARCASTIC SOLUTIONS AND UNIQUE IDEOLOGY 21
MHER KUMUNTS
SOME ISSUES OF LANGUAGE AND LANGUAGE CONSTRUCTION: MURATSAN 32
LIANA SANTRYAN
PARALLELS OF LANGUAGE THINKING OF SIAMANTO AND DANIEL VARUZHAN 40
ARQMENIK NIKOGHOSYAN
THE SIN OF NOT TELLING (ON THE OCCASION OF THE COLLECTION OF HENRY GRIGORYAN "DMBO JOYCE")..... 49
TATEVIK POGHOSYAN
THE DEPICTION OF SHIRAK IN AVETIK ISAHAKYAN'S STORIES 54
HOVHANNES HOVAKIMYAN
KATYA AS MACGUFFIN IN HAMBARDZUM HAMBARDZUMYAN'S NAMESAKE STORY 62
ANI SHIRINYAN
HRANT MATEVOSYAN: CLASH AND RESOLUTION OF THE ABORIGINAL HEROES AND THE CIVILIZED WORLD 68

Jurisprudence

MALIK TELUNTS
THE MAIN SYSTEM OF HUMAN RIGHTS AND REEDOMS ACCORDING TO 'SNARE OF GLORY' 76
ARTYOM DERYAGIN
THE FALL IN THE LEVEL OF CONFIDENCE IN TELEVISION IN ARMENIA AND RUSSIA 87

History

MHER HARUTYUNYAN
COVERAGE OF THE REASONS FOR THE FAILURE OF SHUSHI'S SELF-DEFENSE IN ARMENIAN HISTORIOGRAPHY (IN 1920) 93

HAYKARAM HAKOBYAN
THE RELATIONSHIP BETWEEN THE SPIRITUAL AND SECULAR AUTHORITIES IN THE KINGDOM OF GREAT ARMENIA DURING ARTAXIAD DYNASTY REIGN …… 106
ZARUHI ZAQARYAN
THE LEVERAGE OF TURKEY'S TRANSCAUCASIAN POLICY …….….. 119
MONTE MATEVOSYAN
CHALICE'S ADVICE ON THE EXAMPLE OF SOME MINIATURES IN ARMENIAN MINIATURE PAINTING ……..…. 127

Economics

ARSEN YEGHIKYAN, HENRIK MANUKYAN
CHANGES OF MORTGAGE MARKET OF ARMENIA IN 2018-2019 AND ITS DEVELOPMENT TRENDS ……... 137
HAYK HOVHANNISYAN
THE HYPER CONCENTRATED ECONOMY OF RA, THE POSSIBLE IMPLEMENTATION OF BASIC INCOME AND THE RESETTLEMENT OF BORDER TOWNS IN ARMENIA ……..… 144

Pedagogy

GAYANE HOVSEPYAN
PECULIARITIES OF THE MANIFESTATION OF PHONETIC-PHONOLOGICAL INTERFERENCE OF ARMENIAN SCHOOLCHILDREN IN TEACHING RUSSIAN AS A FOREIGN LANGUAGE ……. 152
KARINE PATYAN
THE IMPACT OF HIGH TECHNOLOGIES ON STUDENT LEARNING …….…. 159
ARAKSYA ABRAHAMYAN
INNOVATIONS IN LANGUAGE LEARNING AND TEACHING: THE POSITIVE IMPACTS OF INFORMATION TECHNOLOGY …… 167

ԼԱՈՒՐԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳՐՈՂ ՏԻՐԱՆ ՉՐԱՔՅԱՆԻ (ԻՆՏՐԱ) ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾԻ ՄԱՍԻՆ

Հոդվածում ներկայացվում է բանասիրական գիտությունների դոկտոր Պետրոս Դեմիրճյանի նոր աշխատությունը՝ նվիրված արևմտահայ գրող Տիրան Չրաքյանի (Ինտրա) ստեղծագործությանը:

Ուսումնասիրությունը դիտարկվում է որպես առաջին ամբողջական հետազոտություն գիտական կենսագրության ժանրով՝ ներառելով ժամանակի հասարակական-գրական համապատկերը: Աշխատությունն արժևորվում է հաճախ ոչ հայտնի, հարուստ փաստական նյութերի, ինչպես նաև առաջադրվող տեսական խնդիրների քննությամբ:

Բանալի բառեր՝ *արևմտահայ գրականություն, գիտական կենսագրություն, «Ներաշխարհ», «Նոճաստան», խորհրդապաշտություն, ազգային մտածողություն:*

Մեր գրականության արևմտահայ հատվածի շուրջ հետաքրքրությունը վերջին տասնամյակներում նոր վերելք է ապրում՝ գրավելով ուսումնասիրողներին հետազոտության նոր ոլորտների հայտնաբերմամբ: Կարելի է ասել, որ գրականագիտության մեջ հաստատված որոշակի ավանդույթը նախանշում է հետագա ուսումնասիրությունների անհրաժեշտությունն ու հեռանկարային արգասավորությունը: Այդ իմաստով է հատկանշվում Պետրոս Դեմիրճյանի «Տիրան Չրաքյան (Ինտրա) կյանքը և գործը» ուսումնասիրությունը, որ լույս է տեսել ծավալուն գրքով 2016 թվականին[1]:

Տիրան Չրաքյան-Ինտրայի գործի ուսումնասիրման գրավչությունը մերօրյա հետազոտողի համար հասկանալի է մի շարք առումներով: Գրող-իմաստասերի՝ առեղծվածներով լեցուն կյանքն ու ստեղծագործությունը խնդրադրության լայն հնարավորություններ են ընձեռում՝ միաժամանակ ի հայտ բերելով գրողի արժեքայնության նոր որոնումների ցանկալի մատույցների ձգտումը: Առաջադրվող աշխատության դեպքում այս գործոններին միանում են անթաքույց մեծ սերը և մասնագիտական բացահայտումների համառ ջանքը, որոնք անպայմանորեն իրենց դերն են ունեցել թեմայի ընտրության հարցում: Կարծում ենք՝ այս գործոններն էական են, քանի որ Պետրոս Դեմիրճյանի գրականագիտական բազմաթիվ նախասիրություններում Ինտրա երևույթն արդեն տարիներ շարունակ հետևողական ու լուրջ քննության բնույթ է կրում: Հենց այդ իմաստով էլ ուշագրավ է համալրված գործառույթներով

[1] Պետրոս Դեմիրճյան, Տիրան Չրաքյան (Ինտրա). Կյանքն ու գործը, կամ՝ «Հեքիաթի իրականությունը», Եր. ՀԳՄ հրատ., 2016, 720 էջ:

հատկանշվող աշխատությունը, որ ներառում է դիտարկվող նյութի հետ կապված բազմապիսի հարցադրումներ՝դրանց գտնված պատասխաններով: Դրսևորվել է ուսումնասիրողի մոտեցման էական առանձնահատկությունը՝ բացահայտել ոչ միայն գեղարվեստական երևույթն իր խորքով, բացառիկությամբ, այլ նաև գեղագետի անհատականությունն ու ստեղծագործական իմացաբանական հիմքերը:

Ծավալուն ուսումնասիրությունը բաղկացած է ներածությունից, հինգ մասերից՝ժամանակագրությունից՝ իրենց 13 գլուխներով, ծանոթագրություններից, բառացանկից և օգտագործված գրականության ու հապավումների ցանկերից: Կառուցվածքային հնարավոր տարբերակներից ընտրելով ժամանակագրական՝ կյանքի և ստեղծագործության զուգորդվող քննության տեսակը, ուսումնասիրողը ներածության մեջ համառոտ ներկայացրել է հետազոտության նյութը, նպատակը, արդիական նշանակությունը, ինչպես նաև պատճառաբանված աղերսները համաշխարհային և հայ գրականության զուգահեռներում: Կարևորելով մտահղացման տրամաբանությամբ և նյութի յուրահատկությամբ պայմանավորված կառուցվածքի սահմանագծումը՝ պետք է նշել, որ գրքի հեղինակի մանրակրկիտ մտածված ամբողջական մոտեցումը թույլ է տվել ներթափանցել գրողի գեղարվեստական մտածողության շերտերը,բացահայտել նրա ինքնատիպ աշխարհի առանձնահատկությունները: Անշուշտ, յուրաքանչյուր հետազոտող ազատ է քննության ուղիների ընտրության մեջ, և հիմնականում համաձայնելով հեղինակի առաջարկած ներածության բնույթին, որտեղ առկա է նյութի մասնագիտական ընկալումը, կարծում ենք՝ նպատակահարմար կլիներ առավել հանգամանորեն ներկայացնել ներածության մեջ հարցի պատմությունը, ուր կդիտարկվեին նախորդ ուսումնասիրողների կարծիքներն ու տեսակետները: Բացի անհրաժեշտ գիտական տեղեկատվությունից, դրանով ստուգության կենթարկվեին հեղինակի հետագա քննության առաջադրույթները: Անարդար կլիներ չնշել՝ գլուխների շարադրանքի ընթացքում հեղինակը տարբեր առիթներով անդրադարձել է Ռեթեոս Պերպերյանի, Հակոբ Օշականի, ինչպես նաև մերօրյա հետազոտողներից Վազգեն Գաբրիելյանի, Ստեփան Թոփչյանի, Վլադիմիր Կիրակոսյանի, Գրիգոր Պըլտյանի և շատ այլ գրականագետների տեսակետներին, այսինքն իրապես կարևորում է դրանք՝ գրողի կյանքի և գործի ամբողջական ներկայացման համար: Սակայն այստեղ խոսքը վերաբերում է ժամանակների հոլովույթում գրողի գնահատման գրականագիտական լիարժեք պատկերին, որը ցանկալի կլիներ տեղադրված տեսնել հենց ներածության էջերում: Թվարկվել են անուններ, այնինչ, այդ ուսումնասիրողների գործի քննությունը պատմագործառութային հայեցակետից ցույց կտար տարբեր մոտեցումներով գրողի նշանակության բացահայտման շերտերը ժամանակների հոլովույթում:

Չրաքյան-Ինտրայի անձի և գործի հանդեպ հետաքրքրությունը, արժևորող կարծիքներն ի հայտ են եկել նրա գրական առաջին փորձերի հետ և շարունակվել ու խորացել գրականագիտական նշանակալի իրացումներով: Շուրջ մեկ և կես դար ձգվող այդ պատմությունը նաև յուրօրինակ անդրադարձն է այն տեղաշարժերի, որ ունեցել է

հայ քննադատական միտքը բարդ ու իրարամերժ տեսակետների հանգուցալուծումներում: Հանգուցային խնդիրները պայմանավորված են ոչ միայն ստեղծագործական ժառանգության ինքնատիպությամբ, այլև մեծ պատմական ընթացքում դրանց ընկալման և արժևորման փոփոխվող չափանիշներով: Հատկապես դա էլ ակնհայտ ցուցանում է Պետրոս Դեմիրճյանի համոզված մոտեցումը, քանի որ արդեն գրքի վերջում հեղինակն անհրաժեշտ է գտել տեղադրել «Վերջաբանի փոխարեն, գնահատության հետագա ընթացքը» բաժինը, որտեղ համալրված ներկայացվում են 20-ական թթ. մինչև մեր օրերը ձգվող ուսումնասիրությունները:

Աշխատության բոլոր գլուխները, բովանդակային ընդհանուր տրամաբանությամբ կապակցված, աստիճանաբար ընդլայնում են նյութի քննությունը՝ այնտեղ ներառելով գրողի ինքնության հայտանիշները՝ իրենց ուրույն արտահայտությամբ: Կարծում ենք, որ հաջողված և արդյունավետ է հետազոտողի կողմից բազմադիմի խնդրի քննության ընտրված սկզբունքը՝նկատի առնելով նյութի առավել ամբողջական մատուցման հիմնախնդիրը:

Աշխատության հինգ մասերում՝ իրենց ենթամասերով, մանրակրկիտ քննությամբ լրացվում, վավերագրվում է գրական, գեղագիտական , իմացաբանական խնդիրների այն տիրույթը, որտեղ ամրագրվում է Չրաքյանի գործի նշանակությունը՝ իր ստեղծագործական մտածողության յուրատեսակ արժեքայնությամբ: Արդեն առաջին գլխից՝ «Անհատականության ձևավորումը» վերնագրով, առկա է հմուտ գրականագետի նպատակաուղղված ջանքը՝ որոնելու և գտնելու գրողի ստեղծագործական առեղծվածի բանալին նրա մտածողության իմացաբանական ակունքներում՝ ծննդավայրի, ընտանիքի, ուսման գործոնների կարևոր առաջնահերթությամբ: Շարադրանքի հետագա ընթացքով դիտարկվում են Ինտրայի գրական նախափորձերը՝ մանրամասն վերլուծությամբ ներկայացնելով «Հրուանդան», «Լետին», «Աշնային թաղում» և մյուս բանաստեղծությունները՝ իբրև նախամուտք նրա կյանքի գլխավոր գործի՝ « Ներաշխարհի» հայտնության:

«Ներաշխարհի» ստեղծագործական պատմությունը, ներկայացված հանգամանալի քննությամբ, աշխատության հաջողված հատվածներից է՝ կարևորված անձի ինքնատիպ հոգեբանության, հեղինակի բնորոշմամբ՝ «տեսակացող անհատի» արարման բանաձևումներով, առանձնությունը գոյավորող սենյակի խորհրդանշական երևույթով, ինքնաճանաչման ձգտման արտահայտություններով: Վերլուծության ընթացքով ճշգրտվում է ստեղծագործության ժանրը՝ իբրև քնարափիլիսոփայական արձակ՝ նկատի ունենալով գրողի ուրույն հոգեբանի ձևառճական իմաստների և խոհազգացական կառույցի ըմբռնումը:

Ինչպես այս հարցի անդրադարձում, այնպես էլ գործի ուղղության, գեղարվեստական հայացքների, ստեղծագործական մեթոդի, միստիցիզմի առանձնահատկության և շատ այլ խնդիրների քննությունը Դեմիրճյանը միջարկում է ինչպես Ինտրային ժամանակակից, այնպես էլ հետագա՝ մինչև մեր օրերը հասնող կարծիքների ու տեսակետների զուգորդվող համապատկերում: Եվ այդ

համապատկերում «ներաշխարհը» և Ինտրային ընկալելու, ճանաչելու և ի վերջո արժևորելու ուղիներում գրականագետի դրույթների հաստատման հուսալի հենարան են դառնում հենց իր՝ Ինտրայի «ներաշխարհ»-ն իր հեղինակէն դիտուած» ինքնադատական հոդվածը, ինչպես նաև ավելի ուշ հրապարակված «Կարծիքներ և կարծողներ» վերլուծականը, Մ. Կյուրճյանին ուղղված նամակները, տարբեր առիթներով գրված գրախոսականները և այլ գրություններ: Այս առումով կարծում ենք արդարացված է ուսումնասիրողի մոտեցումը, երբ իր քննության մեջ առաջնորդվելով հենց գրողի հավատամքի փաստարկումներով, որոնք լիարժեքորեն բացահայտում են և «Ներաշխարհի» ուրույն ստեղծագործական հայեցության հիմքերը, հղացման նպատակը՝ հաստատում է նրա երկի փիլիսոփայական-էթիկական-հոգեբանական գործառույթների փոխներթափանցված դաշնությունը:

Իր իսկ՝ Ինտրայի բնորոշմամբ՝ «Ներաշխարհի» «երրեակ հատկանիշների»՝ բնութենապաշտի, կենսապաշտի ու բարոյապաշտի սկզբունքների երևույթն էր այդ դաշնությունը, ինչը դառնում է որոշակի գեղագիտություն, որի մեկնության խորքային շերտերում Դեմիրճյանը գտնում է աղերսներ ոչ միայն եվրոպական, այլև Արևելքի դարավոր պոեզիայի ու արձակի նախորդ փորձի ուղենշային երևույթների հետ: Ընդ որում, այդ աղերսների ընդգծումը չի հանգում ազդեցությունների բացահայտման: Դեմիրճյանը գտնում է շատ ավելի կարևոր՝ գեղարվեստական մտածողության տիպաբանական ընդհանրություններ՝ միաժամանակ հետևողականորեն շեշտելով Չրաքյան-Ինտրայի՝ ինքնության երևույթով բնորոշվող հայեցության ուրույն բնույթը: Ի վերջո, գրականագետի մեկնություններում գրողի՝ բնություն-կյանք-գոյի իմացաբանության և գեղագիտության առանցքն ի հայտ է գալիս ոչ միայն միջտեքստային հարաբերություններում, այլև տիեզերականի համաստվածային ընկալումից, որ ձգվում է որոշակի տեղանք-բնակավայրից՝ իբրև ներաշխարհային իրողություն:

Ինտրայի քնարական-գեղագիտական հայեցության դրսևորումների քննությունն ուսումնասիրության ըստ ամենայնի ուշագրավ մասերից է:

Հոդվածների, նամակների, բանավեճերի մանրամասն դիտարկումներում Դեմիրճյանն ի հայտ է բերում գրողի տեսադրույթներից բխող որոշարկված սկզբունքները, որոնք հստակեցվում և ձևավորում են դրանց համակարգված բնույթը: Սակայն ուսումնասիրողի՝ ամբողջության մեջ արդարացված միտումը՝ ներկայացնելու գրողի և մտածողի տեսակետների ճշմարտացիությունը, երբեմն վերածվում է անվերապահ հիացումի կամ կրքոտ հակադարձման, մանավանդ, երբ խոսքը վերաբերում է «Ներաշխարհի» տարամետ գնահատումներին: Նույնականանում են նույնիսկ այդ կարծիքները որակող արտահայտությունները՝ «միջակություններ, կանխակալ ու չարամիտ, անհեթեթ, սուտ ու սխալ» մեկնաբանություններ և այլն: Եթե Չրաքյանի պարագայում միանգամայն հասկանալի են զգացական վրդովմունքն ու հուզական բնորոշումները «քննադատցուների» հասցեին, ապա հետազոտող հեղինակի դեպքում տեղին կլիներ պահպանել պատմական-քննական հայացքի զուսպ, անխոտոր ընթացքը, ինչով բնութագրվում է ուսումնասիրությունն իր համատեքստի ամ-

բողջական բովանդակությամբ:

Չրաքյանի ստեղծագործական անհատականության արտասովոր, նաև բազմաբնույթ երևույթը լիարժեք նկարագիր է ստացել աշխատության հաջորդ գլուխներում՝ «Նոճաստանի», մանկավարժական հայացքների, հուշ-ուղեգրությունների հանգամանալի վերլուծություններում: Կուզենայինք առանձնացնել այդ արժեքավոր քննությունն այն իմաստով, որ աշխատության հեղինակի հետևողական ջանքով այստեղ ի ցույց են հանվում և հաստատվում Չրաքյանի խորապես ազգային, հասարակական պատկերացումները: Ինչպես իրավացիորեն նշում է Դեմիրճյանը, հատկապես «Աղօթք», «Տօրոսէն անցք» գործերում «դրսևորվել են գրողի ազգասիրությունն ու հայրենասիրությունը»՝ դրանով իսկ հերքելով ազգային կյանքին անհաղորդ մնալու մասին կարծիքները: Ուսումնասիրության վերջին՝ հինգերորդ մասում, հենվելով ժամանակակիցների՝ Վ. Թեքեյան, Ե. Օտյան, Նշան Պեշիկթաշլյան, Թեոդիկ և շատ ուրիշների հուշերի, տեղեկությունների վրա, հեղինակը վավերագրական ճշգրտությամբ վերականգնում, ամբողջացնում է Չրաքյանի կյանքի վերջին տարիների՝ 1919-1921 թ. պատմությունը՝ ձերբակալության, աքսորի և ի վերջո, եղերական մահվան դրվագներով:

Աշխատության հեղինակը, ձգտելով Չրաքյանի գործի ամբողջական, գիտական համակարգված հետազոտության հասունացած պահանջի իրագործմանը, պատշաճ արդյունքի է հասել առաջադրույթների նպատակաուղղված, բազմակողմանի քննությամբ: Ծավալուն շարադրանքում առկա է հեղինակի՝ հետազոտվող նյութին բազմակողմանի տիրապետումը: Դեմիրճյանի ուսումնասիրության գիտական նորույթը ոչ միայն աննախադեպ ամբողջացված նյութի անդրադարձն է, այլև գրողի կյանքի ու գործի պատմության իմաստային դաշտի լայնացումը, որտեղ կարևորվում են ոչ միայն նորահայտ փաստերը, այլև նոր մոտեցումները գրողի կենսապատումը, ստեղծագործական առնչությունների ներդաշնակությունն ու հակասությունները մեկնաբանելիս: Ընդհանրապես ողջ շարադրանքի էական արժանիքն է ամբողջական համակարգում հատկանշվող նոր փաստերի, ճշտումների առաջին անգամ շրջանառելու երևույթը: Կատարվել են բազմաթիվ բանասիրական ճշտումներ՝ կապված գրողի կյանքի և ստեղծագործության հետ, ճշգրտվել են գործերի ստեղծման, տպագրության տարեթվեր, ճշտվել են նաև հուշագիրների կողմից ներկայացված որոշ փաստեր, տարեթվեր, այդ թվում, որ կարևոր է, նաև Տիրան Չրաքյանի մահվան օրը՝ 1921 թ. հունիսի 6-ը:

Պետրոս Դեմիրճյանի ուսումնասիրության հետազոտական արգասավորությամբ մեկ անգամ ևս հիմնավորվում է արևմտահայ գրականության բացառիկ արժեքների նորովի, խորքային ճանաչման, բացահայտման պահանջը՝ ի նպաստ ազգային գրականության ամբողջական համապատկերի:

НОВОЕ ИССЛЕДОВАНИЕ О ЖИЗНИ И ТВОРЧЕСТВЕ ЗАПАДНО-АРМЯНСКОГО ПИСАТЕЛЯ ТИРАНА ЧРАКЯНА (ИНТРА) - ***ЛАУРА МУРАДЯН*** - *В статье представлена новая монография доктора фил. наук Петроса Демирчяна «Тиран Чракян (Интра), жизнь и творчество или реальность «сказки».*

Работа рассматривается как первое целостное исследование в жанре научной биографии, включая панораму общественно-литературной жизни Западной Армении, посвященное изучению жизни и творчества писателя Тирана Чракяна (Интра). Серьезными достоинствами книги являются богатые документальные, часто малоизвестные материалы, а также предлагаемые некоторые теоретические проблемы.

Ключевые слова: *западноармянская литература, научная биография, «Духовный мир», «Кипарисовая роща», символизм, национальное мышление.*

*NEW STUDY ON THE WORK OF WESTERN ARMENIAN WRITER TIRAN CHRAKYAN–***LAURA MURADYAN** - *The article presents the new monography " Tiran Chrakyan (Intra), life and work or reality of Tale" by Petros Demirchian, Doctor of Philological Science. The work is seen as the first holistic study in the genre of scientific biography, including the panorama of social- literature life of Western Armenia, devoted to the study of life and work of West-Armenian writer Intra (Tiran Chrakyan) . The serious dignity of the book is the rich documentary, often little known materials, and also some proposed theoretical problems.*

Key words: *Western Armenian literature, scientific biography, «Inner world», «Cypress Park», symbolism, national thinking.*

ԷԴՈՒԱՐԴ ՄԿՐՏՉՅԱՆ

ՊԱՏՄԱԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁ՝ ՍԱՐԿԱՍՏԻԿ ԼՈՒԾՈՒՄՆԵՐՈՎ ՈՒ ԻՆՔՆԱՏԻՊ ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ

Հոդվածագիրը հավաստի փաստերով ցույց է տալիս, որ Վարդան Հակոբյանի ***«Երկու միլիոն զոհերի ձայնով...»*** *ստեղծագործությունը հույժ պատմական և արդիական խնդիրներ է արծարծում:*

Հեղինակը, կերպարանավորելով Մեծ Եղեռնի երկու միլիոն զոհյալներին, շնչավորելով նրանց ու խոսելով նրանց ձայնով, պատմագեղարվեստական հզոր պատկերացումներով և քաջատեղյակությամբ տիպական հանգամանքներ է կերտում, անվանում-հիշեցնում է դրանք, որոնք, լինելով աշխարհի տարբեր ծայրերում, երկրներում, տափաստաններում, քաղաքներում, գյուղերում և այլուր, այսօր իրենց անուններով ափսոսանք ու կորուստյան ծանր ապրումներ են առաջացնում, ողբի ու տառապանքի, ատելության և վրեժխնդրության զգացմունքներ արթնացնում:

Բանալի բառեր՝ *Մեծ Եղեռն, երկու միլիոն զոհեր, Հայաստան, Արցախ, Արևմտյան Հայաստան, արդիական խնդիրներ, հավաստի փաստեր, Ադրբեջան, Թուրքիա, խաղաղասիրություն խաղալ:*

2019 թվականն ավարտվում է, և Հայաստան-Արցախ աշխարհի երկնակամարում կրկին սև ամպեր են կուտակվում. Ադրբեջանը տենդագին ժամանակակից զենքեր է կուտակում և պահանջում մեր կողմից ազատագրված տարածքներից հեռացնել զորքերը, նորից բնակեցնել ադրբեջանցիներ, Ղարաբաղը համարել Ադրբեջանի մաս և դրանից հետո զբաղվել նոր խնդիրներով: Սա նշանակում է, որ անվտանգության առեղծվածը նոր ու վտանգավոր արմատներ է նետում մեզ համար, ուստի այսօր յուրաքանչյուր հայ, գիտակցելով այդ վտանգը, պետք է լրջագույնս մոտենա իր գործին և երկրին, հայրենիքին հետաքրքրող հարցերին:

Այստեղ ընթերցողի ուշադրությունը հրավիրում ենք Արցախի տաղանդաշատ բանաստեղծ ու հրապարակախոս Վարդան Հակոբյանի մի ստեղծագործության վրա[1], որը հույժ պատմական և արդիական խնդիրներ է տարփողում:

«Երկու միլիոն զոհերի ձայնով...» -ը մտնում է հեղինակի «Տիրադներ»[2] շարքի մեջ՝ նրան բնորոշ տաղաչափությամբ, ձևով ու բովանդակությամբ: Տիրադն այստեղ

[1] Տե՛ս Հակոբյան Վ., «Երկու միլիոն զոհերի ձայնով...» (վեց լեզվով՝ ֆրանսերեն, հայերեն, ռուսերեն, անգլերեն, գերմաներեն, թուրքերեն), «Ծիծեռնակ» հրատ., Երևան, 2015թ., 80 էջ:

[2] Հմմտ. Ա. Ս. Ղարիբյան, Ռուս-հայերեն բառարան, Ե, 1982, Тирада6, հ, 1. տիրադ, երկարաշունչ ճառ՝ խոսք: 2. երկարաշունչ մենախոսություն (էջ 1227):

կիրառվում է «երկարաշունչ մենախոսություն», խոսք իմաստով։

Սա իր նմանը չունեցող մի ստեղծագործություն է՝ արտակարգ ու բազմագաղափարայնությամբ հագեցած, որի հեղինակը, կերպարանավորելով Մեծ Եղեռնի երկու միլիոն զոհյալներին, շնչավորելով նրանց ու խոսելով նրանց ձայնով, պատմագեղարվեստական հզոր պատկերացումներով և քաջատեղյակությամբ տիպական հանգամանքներ է կերտում, անվանում-հիշեցնում է դրանք, որոնք, լինելով աշխարհի տարբեր ծայրերում, երկրներում, տափաստաններում, քաղաքներում, գյուղերում և այլուր, այսօր իրենց անուններով ափսոսանք ու կորուստյան ծանր ապրումներ են առաջացնում, ողբի ու տառապանքի, ատելության և վրեժխնդրության զգացմունքներ արթնացնում։

Այսպիսով.

- Տասնմեկ էջանոց չափածո արձակում ձևավորվում է պատմաաշխարհագրական բնույթի ահռելի մի տարածք՝ ծովից ծով փռվածքով և հրաշափառ անվանումներով, որոնք ճշմարիտ պատմության արձագանքներ են, հպարտության վերհուշեր և կրկին հասնելու, սրբացնելու ազդակներ։

Տեսեք՝ ***Արևմտյան Հայաստան***. Եվ ***Արևմտյան Հայաստանը*** սպասում է մեր վերադարձին (400)։ Իսկ հիմա սահման են բացում. . .

Թող բացեն ապա մեր ելքը դեպի ծով՝
մեր իսկ հայրենիքով՝
Հայաստանով Արևմտյան,
Մուշ ու Բիթլիսով, Վանով, Տիգրիսով, Տարոն ու Կարսով. . . (402)։

Տիգրանակերտ (***Տիգրանակերտում*** հիմա պեղումներ են կատարում, որ գտնեն մեր. . . կորուսյալ Երկիրը) (397)։

Վանա ծով. Վանա ծովում ձկները մեռնում են կարոտախտից (404)։

Մասիսներ. Եվ քանի տարի է ***Մասիսները*** հոտնկայս սպասում են.
«Գողեր, ավազակներ, օրուցերեկով՝ թալանչիներ,
օրորոցագողեր, վերադարձրեք մեզ մեր տերերին» (403)։

Մասիս. . . . առջևից ***Մասիսն*** է քայլում՝ Տիգրան Մեծի արևն ուսին (406)։

Քիրս, Մարութ ու ***Միս***. Հայոց լեռների քարավանները ելել են արդեն՝ զենասպար կապած, ***Քիրս, Մարութ*** ու ***Միս*** (406)։

Դեր Զոր, Անի. Վերջապես մեղք է ճշմարտությունը, ուզում է ասվել, բարձրաձայնեք աշխարհով մեկ՝ երկու միլիոն զոհերի ձայնով. . .

Դեր Զորի անապատների,
հայոց ավեր շենների, քաղաքների ու
աշխարհի բոլոր ճանապարհների վրա անվերջ սավառնում են
թռչունների
բյուրավոր երամներ, որոնց ոչ մի գնդակ չի դիպչում ոչ մի ժամանակ,
երկնքից իջնելու համար
նրանք գմբեթներ են փնտրում հայոց բիբլիական հողի վրա։

Դրանք սովորական թռչուններ չեն,

դրանք պարզապես սուրբ խաչերն են ***Անիի*** հազար ու մեկ վանքերի (405-406):

Պոլիս, Սկյուտար. Եւ ***Պոլսո*** ծաղկուն թաղերի վրա իջած լուսինը՝ «հաշիշով օձուն ու բալասանով», սառավ մեկեն (397): Բույլ մը նայվածք, փունջ մը ժպիտ

լերդացել են ***Սկյուտարի*** երկնքի մեջ (396):

- ***Մեր ժամանակների ցեղասպանություն, կոտորածներ և նորագույն գաղափարաբանություն:***

Նախիջևան, Արցախ. Քանի դեռ ցեղասպանությունը՝ հազար ու մի

կերպարափոխության մեջ, այս անգամ՝ որպես հայրենասիրություն, անցել է ***Նախիջևանով***, իսկ հիմա սպառնալ է ուզում ***Արցախին*** (401):

Հին Հարար[3], Շուշի, Սումգայիթ, Բաքու, Գանձա, Մարաղա. . .

«կոտորած, կոտորած, կոտորած. . .»:

Կարմիր արյուն, կարմիր լուրեր,

Միամանթո, Ռուբեն Սևակ, Զոհրապ, Վարուժան,

Կոմիտաս Վարդապետից մինչև ***Կոմիտաս Հակոբյան***,

մինչև ***Ավո,*** Բեկոր, մինչև ***Նորեկ Դանիելյան, Ազգալդյան***, մինչև. . . (403):

- Աշխարհասփյուռ հիշյալ տարածքում Թուրքիան մշտապես հանդես է գալիս հայության դեմ, և նրա հետ, նրա նման ու նրա օրինակով՝ Ադրբեջանը, ճակատագրական պահերին՝ որոշ «թուրքագար իշխանություններ» (402) և գործիչներ, ինչպես ԱՄՆ-ի, Ճապոնիայի, Անգլիայի, վարկուսյան Գերմանիայի և այլոց հովանավորությամբ, այլև անտարբերությամբ:

Բանաստեղծը արժանի դիտողություն է անում Սևրի պայմանագիրը ստորագրողներին, որ գոնե հարգեն իրենց ստորագրությունները, չվախենան, չսարսափեն ճշմարտությունից. այն հրեշտակ է, ոչ երբեք՝ շեյթան «սատանա»: Ապա հավելում է, թե քանի դեռ նենգափոխությունը ուժ է համարվում, Թուրքիան առաջիններից մեկն է քայլելու երկրագնդի միջօրեականներով և անընդհատ թոզ է փչելու աշխարհի աչքերին (402): Միաժամանակ հիշեցնում է թուրքի մասին Դոստոևսկու ասածը.

Եվ հիշեցեք, որ

թուրքը քաղցրավենիք շատ է սիրում:

(Դոստոևսկուն չմոռանալն այնքան չէ

Կարևոր, որքան՝ միշտ հիշելը) (402-403):

Հոյակապ է ասված, մանավանդ որ փոխաբերական իմաստ ունի:

- Անհանգիստ հեղինակը լռություն է պահանջում. «Ինչ՝ սուս. . . ինչ՝ լռություն», կարևոր բան ունի ասելու աշխարհի բերանում մի նոր ծամոն

[3] Հին Հարարը Հայաստանի և Արցախի սահմանային շեն բնակավայր էր՝ Գորիսից մոտ 40 կմ հեռավորությամբ, որի բնակիչներից էին նաև Վարդան Հակոբյանի նախնիները:

դարձած՝ հայ-թուրքական արձանագրությունների մասին (401)։ Թեև դրանք առկախված և կասեցված են, սակայն ինքը որոշակի պահանջ ունի.

Ես առաջարկում եմ դրանք, ընդհանրապես, օրակարգից հանել, շպրտել։ Բավական է։ Հերի՛ք (401)։

Պատճառը պարզ է. Մենք իրավունք չունենք ձեռք մեկնել թուրքին, այն էլ՝ առաջինը, որը նշանակում է վտանգել Հայաստանի և մոլորակի հայության ապագան։ Ուրեմն.

պիտի պարիսպներ ձգել սահմաններն ի վար, ի վեր,

այլապես տանուլ կտանք և այս մի բուռ Հայաստանը (401)։

Բանաստեղծի լռության պահանջը վերաճում, տեղի է տալիս կայծակնային հռետորաբանության, և դիմելով համայն աշխարհի պրեզիդենտներին, իրավագետներին ու դիվանագետներին՝ կոչ է անում թուրքին ճանաչել, նրա ապօրինի արարքն իմանալ, հայոց պատմական ճակատագրի իսկությունը գնահատել, խոսքն ասում և ավարտում է սպանիչ ծաղրով.

Ի՞նչ սահմանների մասին է խոսքը, պրեզիդենտներ,
իրավագետներ, դիվանագետներ համայն աշխարհի, երբ
թուրքը
ապօրինաբար
մտել է մեր բիբլիական տունը, եղեռնել, դարձրել հիմնավեր,
պատնեշներ քաշել «մեր և մեր միջև» և հիմա էլ հռխորտում է
նախապայմաններով։ Բարաքյալլա... (401)։

Ապա հիշեցնում է Երկրորդ համաշխարհային պատերազմը, երբ թուրքը մի բառ դարձած Հայաստանի նույն այն փակ սահմանի երկայնքով դարանակալ կանգնեցրել էր իր զորքերը՝ հարմար պահի հարձակվելու համար, և եթե ստալինգրադյան մարտում ռուսական և խորհրդային տերության զորքերը մի փոքր հապաղեին. ***«թուրքը՝ որպես հիտլերյան աջակից, պիտի մտներ երկիրը հայոց՝ մեր արյան համը ատամների տակ»*** (402)։

Թուրքն այսօր առավել շատ է ուզում սահմանը բաց տեսնել և Ազերբաջանը խաղաքարտ դարձրած՝ խաղաղասիրություն է խաղում՝ հայ-ադրբեջանական, ղարաբաղյան արնաածոր խնդիրները կոպերի և եղունգների տակ.

Եղեռնագործի
ձեռագիր-ոճը նա փոխանցել է
քրոջն՝ ազերուհուն. «Ա՛յ, վերիմ սանա՛» (403)՝ «Վերցրո՛ւ, տալիս եմ քեզ»։

- Բանաստեղծը ներքին զայրույթով է բնութագրում Թուրքիային՝ որպես խառնակչի և հանցավորի, որպես հանցակից մշակողի և հովանավորողի, որպես անամոթաբար բարբաջողի.

Թուրքիա՝ անամոթ, լիրբ ու անհիշողություն,
մի ամբողջ ժողովրդի ոչնչացնելուց, նրա
երկիրը զավթելուց հետո աշխարհի առաջ բացեիբաց խոսում է

«աղրբեջանական հողերի»
Վերադարձման մասին... (399):

Ցավոք, աշխարհը չի արձագանքում անարդարացի բարբաջանքներին, չի խոսում, չի տեսնում, չի լսում.

Աշխարհը՝ լալ, աշխարհը՝ քոռ, աշխարհը՝ քառ... (ն.տ.):

Էրդողանն այսօր Թուրքիա է, և նրա ասածին բանաստեղծն այսպիսի հակոտնյա արդարացի ծրագրային պատասխան ու վճիռ է հնչեցնում.

Դա բացառվում է, պարո՛ն Օրդուխան, մեր ազատագրված
Եխծիներն ու վանքերը
Մեզ չեն ների, մի բուռ հող անգամ մենք չենք զիջելու:
Բա-վա-կան է: Հերի՛ք (ընդգծ. - ԷՄ) (ն.տ.):

Այնուհետև արժանի խորհուրդներ է տալիս թուրքերին, թե ժամանակն է արդեն, որ իրենց մենյուն փոխեն, հրաժարվեն հո՛ղ ուտելուց, խնայեն իրենց ատամները (կասեի՝ *դիշերը*), որովհետև մեր հողերը քարաշատ են, չեն մարսելու, խնայեն իրենց ստամոքսները (տեղին է ասել՝ թափանները)՝ Եվրոսեղանին հասնելուց առաջ. Եվ չի խանգարի, որ հենց այնպես, թեթևակի իրենց եղունգների կարմիրը ստուգեն...

Ապա հարց է հղում «Դրկից, դուռ-դռան կպած գրեթե «հայրենի» թուրքերին», թե հաշվե՞լ են արդյոք, որ մանչ ու լաճով, հերումերիկով, տատուպապիկով՝ անմեղ, մաքրաշունչ, մեռոնով օծված, քանի՛ տներ են ավերել, քանդել, թաղել հողի տակ, քանի-քանի վանք ու տաճար են վառել, թալանել, թաղել հողի տակ, և նրանց աշխարհացույց ու աշխարհացունց զանգերը ինչպե՞ս են լռեցնելու, երբ Աստծո դռների առաջ՝ երկնքի բարձր գմբեթներում, մինչև հիմա դեռ հնչում են դրանք: Եվ եզրահանգում. ***«Արևմտյան Հայաստանը սպասում է մեր վերադարձին»*** (399-400):

- Պարոն Վարդան Հակոբյանը սուր անկյան ներքո անդրադարձ է կատարում որոշ տարածում ստացած հարցի, այն է՝ «կան թուրք մտավորականներ, որոնք ներողություն են խնդրում հայ ժողովրդից՝ Եղեռնի համար» (400), և անում հետևյալ մեկնաբանությունները: Նախ՝ նրանց այդ արարքից ինքն այժմ ավելի է զգուշանում, միաժամանակ սարսռում, «որովհետև այդ քչերի լույսը խավարի մեջ ավելի կուրացնող է» (ն.տ.), ապա հիշեցնում է «լույսը խավարի մեջ ավելի կուրացնող» համանման փաստարկներ.

Չէ՞ որ երիտթուրքերն էլ ուզում էին ռեֆորմացիաներ կատարել,
չէ՞ որ նրանցից առաջ Սուլթան Համիդն էլ բարության անուն էր
ճամարտակում,
չէ՞ որ Աթաթուրքի «մարդասիրությունն» էլ շլացնում էր...
Այնպես որ,
չխաբվենք ու չհավատանք, դավաճան է նա, ով
երբևէ կհավատա թուրքին (ն.տ.):

Այս վկայություններից հետո ինչպե՞ս կարելի էր չհիշել Սողոմոն Թեհլերյանին, և նրանով վեհորեն արձանագրվում է մեր անելիքը.

Թեհլերյանի
արձակած նետը մշտապես սլացքի մեջ է և
գտնելու է «սիրտը» հին ու նոր բոլոր նեռերի,
քանի դեռ հայոց աշխարհում «օձերն ու գորտերն» են
վխտում: Քանի դեռ ցեղասպանությունը հազար ու մի
կերպարափոխության մեջ է. . . (ն. տ.):

Ստեղծագործության մեջ հին նեռերից երիտթուրքերը, Սուլթան Համիդը, Թեհլերյանի նետի զոհը և Աթաթուրքն են, նոր և նորագույններից կերպավորված են Էրդողանը, Դավութօղլուն, Իլհամ Ալիևը: Թուրքին չպիտի հավատալ. «Նա միանգամից խոսում է մի քանի բերանով» (398): Օբամայի հետ հանդիպման գնալուց առաջ ինչպե՞ս են խոսում այս նեռերը:

«Ադրբեջանական հողերը» ճանաչող Էրդողան Օրդուխանը մռլտում է. «Թուրքիան մշտապես մուսուլմանների կողմն է»:

Շեկ անապատի շեկ աղվես Դավութօղլուն իբրև հուզում է. «Անցյալի վերքը մեզ էլ հանգիստ չի տալիս»:

Իլ[4] Ալիևը հոխորտում է. «Ղարաբաղը կվերցնենք ուժով», ապա նա անմիջապես սև նավթի սև լորձունքով շփում է ձյուն տարած (երևի Օմար լեռան վրա, 1994-ին) իր աչքերը («козлар»-ը) (398):

Եվ հռետորական հարցն է հնչում.
հասկացա՞ք հիմա,
թուրքը թուրք է նրանով, որ
երբեք չի փոխվում: Ով-ով, հայ մարդը պիտի հետևի թուրքի
միմիայն գործի ու արարքների, անցած ճամփեքի տրամաբանությանը,
ոչ երբեք՝ խոսքին (398-399):

Բանաստեղծը հայ մարդուն ուղղած գաղափարական շեշտն իջեցնում է թուրքի գործելակերպի տրամաբանության վրա, ոչ թե կեղծ ու սին խոսքերի:

- Թուրքիան իր քաղաքական անբարոյականությունները թաքցնելու լավագույն ձև է ընտրում դրանք բաց-ափաշկարա դարձնելը, չթաքցնելը, որն աշխարհի համար լուծելու խնդիր չէ. «Աշխարհը՝ լալ, աշխարհը՝ քոռ, աշխարհը՝ քառ. . .» (404):

Ուստի բանաստեղծը մի ելք է տեսնում.

Ուժեղ լինել, այսինքն՝ չլինել անմիաբան, որ հայոց Վաչագան Արքայի կողմից իր իսկ աղջկան տված օժիտը՝ Բագրավան-Բագուն, չմնա քոչվորներին, որ մեր Հայաստանի մի փոքրիկ մասը չհագնի բոլշևիկյան կարմիր՝ խորտակելով մյուս կեսի վերադարձման վիլսոնյան ռեժիմը Իրավարար՝ ճզմելով երկրի ամբողջացման երազն իրական՝ թունավոր խանդի իմպերիալիստական մամլիչների տակ, Անգլիայի հորդորների ներքո (ընդգծ.-ԷՄ) (404):

[4] ***Իլհամ*** անվան այսպիսի կրճատումը՝ ***Իլ*** (նույնն է՝ ադր. օձ): Գյուտ է, համապատասխանում է տիրոջը:

Ուժեղ լինել և տեսնել՝ այդ ոնց էր պարվուսյան[5] Գերմանիան ստեղինգով Ռուսիո ցարին վերցնում, որ նա երկիրն իր արհեստականորեն, անամոթաբար դուրս հայտարարի առաջին համաշխարհայինից և, հայկական հողերը թունավոր օձի բերանում թողած, հեռանա հանգիստ (404-405)։

Ուժեղ լինել, անհեռատես չլինել և տեսնել՝ այդ ո՞նց էր պարվուսյան Գերմանիան ստեղինգով Լենինին հանում նույն Ռուսիո ցարի դեմ, այս անգամ, սակայն, հեղափոխության նկատառումներով (405)։

Մութ,
չարչիական այս գործարքներում դարձյալ
Թուրքիան է՝ իր մանաթներով, աղվեսի պոչով,
շիլշան աչքերով (405)։

Պատմական ճշմարտությունների այսպիսի արձանագրումները լուրջ հարվածներ են պատմության կեղծարարներին, իսկ ոչ ծավալուն գեղարվեստական՝ արձակ բանաստեղծության մեջ այսպիսի բնութագրումներն ու մեկնաբանությունները նախ քաջատեղյակություն, ապա քաջություն են պահանջում, որպիսիք Տերը պարգևել է Վարդան Հակոբյանին։ Եվ երբ տրված փաստարկումներից հետո նա ասում է.

«Մենք իրավունք չունենք հենվելու մեծ տերությունների
խոստումներին,
ոչ ատելությամբ խաբվենք թշնամու և ոչ էլ սիրով՝ բարեկամների,
քանզի թունավոր խոտը հաճախ չես իմանում՝ որտեղ է բուսնում» (405),

ամբողջ իմաստով համաձայնում ենք նրա հետ, որովհետև կյանքը մեզ ուսուցանել է այդ։ Դրա տրամաբանական շարունակությունն է, երբ, ելնելով աշխարհաճանաչողությունից, Հայաստան-Արցախի արդի խնդիրներից և իր իսկ բանաստեղծական ներքին տառապանքներից, կրկնաբանում է.

Ապավինենք մեր, մեր, մեր, միայն ու միայն մեր
ուժին» (405).

այն ըմբռնում և հասկանում ենք որպես ճշմարտությունների ճշմարտություն, որի իրականացմանը պետք է զորավիգ լինեն Հայաստանը, Արցախը և Սփյուռքը, այսինքն՝ ողջ հայությունը։

Հեղինակի նպատակն է՝ իրերը կոչել իրենց անուններով, որովհետև այդ եղանակով ճշմարտությունը գլուխ է բարձրացնում.

Վերջապես մեղք է ճշմարտությունը, ուզում է ասվել,
բարձրաձայնենք աշխարհով մեկ՝
երկու միլիոն զոհերի ձայնով. . . (ընդգծ. -ԷՄ) (40)։

---

[5] **Ալեքսանդր Պարվուս**, ծնունդով **Իսրայել Լազարևիչ Գելֆանդ** (ռուս.՝ Израиль Лазаревич Гельфанд) (1867-1924), Մարքսիզմ տեսական, հեղափոխական, և Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության կասկածելի ակտիվիստ։ Ասում են, որ նա գործում էր որպես գերմանական հետախույզ։ Թուրքամետ գործիչ, ով աչքի էր ընկնում իր հակահայկական գործունեությամբ։

Նա ճիշտ է նկատում, որ ճշմարտությունն» ուզում է ասվել», այսինքն՝ ճշմարտությունը պետք է հարգել և ներկայացնել, ճիշտը աշխարհ բերել, իսկ դրա համար պետք է տիրապետել ճշմարիտ պատմություններին, եղելություններին և համարձակություն ունենալ դրանք ներկայացնելու. Վարդան Հակոբյանը ծնված է այդ ամենի համար:

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐԺԱՆԻՔՆԵՐԸ

Սույն ստեղծագործությունն ունի ծանրակշիռ թեմա և բովանդակություն, որոնք էլ համապատասխան ձև ու հնչերանգ են սերել: Դյուրին գործ չէ խոսել երկու միլիոն զոհերի ձայնով, որի համար նախ և առաջ պիտի ունենալ վարժված, տոկուն ու դիմացկուն սիրտ ու բազմաբնույթ գիտելիքներով ամբարված ուղեղ, որոնց գործառությունների ընթացքն ու գնահատությունն ըստ ամենայնի կարող են պատկերացնել ու տալ միայն բանիմաց հոգեբանը և նևրոպաթոլոգը բծախնդիր: Մեզ մնում է միայն ենթադրել, թե ինչպիսի պատասխանատվությամբ պիտի իրագործվեր նպատակը, և թե բարոյահոգեբանական, ինչու չէ՝ նաև մարմնական ինչպիսի անսպասելի սրացումներ ու բարդություններ կարող էին ծագել և տանջահար անել հեղինակին: Սակայն, փա՛ռք Տիրոջը, անվեհեր կամքն ու համառությունը իրենց գործն արեցին:

Վարդան Հակոբյանը միայն տաղանդավոր բանաստեղծ և արձակագիր չէ, նա միաժամանակ բանասիրական գիտությունների դոկտոր է և ճանաչված գրականագետ, գերազանց է պատկերացնում գեղարվեստական գրականության պահանջներն ու առանձնահատկությունները, գեղարվեստական խոսքի և լեզվի պատկերավորության արժեքը. նա այդ ոգով էլ գրում և կերտում է իր ստեղծագործությունները:

Այժմ ներկայացնենք սույն ստեղծագործության մի քանի հատկանշական կողմերը:

- Հեղինակը բառի արժեքը գիտի, ամենուր ուշադրության է առնում, հետևում բառ գործածողներին, գնահատում ու խորհուրդներ տալիս: Ինքը բառեր գործածում է ընտրությամբ և բառերին հավելում է նոր իմաստներ. բառերը սրսկվում են իր՝ յուրային իմաստներով, և նրանցից յուրաքանչյուրը՝ իբրև իմաստավորված միավոր, ուշադրության է արժանանում և զբաղեցնում մի ամբողջ տող, որով ձևավորվում է նաև բանաստեղծության շարադրանքի յուրատեսակ ձև՝ չափ: Դրանից ընթերցողը եզրակացնում է, թե հեղինակն ինչ էական միտք է արտահայտում կամ ի՛նչ գաղափար է առաջնային համարում, տեսանելի դարձնում:

  Օրինակ՝ թուրքը
  ապօրինաբար
  մտել է մեր բիբլիական տունը (401):

Թուրք և ***ապօրինաբար*** բառերն առանձին տողեր են զբաղեցնում, և իմաստները հասկանալի են. անբարո թուրքը՝ Թուրքիան, օրինազանց է և հանցավոր:

Մենք
իրավունք
չունենք
հենվելու
մեծ տերությունների խոստումներին (405)։

«Մենք իրավունք չունենք հենվելու» կառույցի միավորներն առանձնակի իմաստավորված են։

Բառերը, փոխաբերական իմաստ ստանալով, բառակապակցություններում մակդիրի արժեք են ունենում։ Այդպիսի կիրառություններն անսահման շատ են, նշենք մի քանիսը.

որդերը սև, բազմաբեղուն (396)
շիլ ու շնաչք ժամանակներ (397)
ծաղկուն թաղերի (397)
ոսկեղենիկ դաշտեր, ձորեր (397)
Թուրքիա՝ անամոթ, լիրբ ու անհիշողություն (399)
Աստծո դռների (400)
մի բուռ Հայաստան (401)
բիբլիական (401)
արյան համը (402)
Իրավարար Վիլսոն (402)
թուրքագար իշխանություն (403)
արևածոր խնդիրներ (403)
քաղաքական անբարոյականություն (404)
թունավոր խանդ (404)։

Բառիմաստների փոփոխումով կազմված են այլաբանություններ, ոճական արտահայտություններ, որոնք խոսքը երանգավորում են տարբեր գաղափարներով։

Օրինակ 1. Թուրքը քաղցրավենիք շատ է սիրում (403), (Դոստոևսկու ասածն այլաբանություն է. աչքը շորթելու, հափշտակելու վրա է)։

2. Ձեր մենյուն փոխե՛ք, հրաժարվեք հող ուտելուց (399). Այսինքն՝ հող զավթելուց հրաժարվեք։

3. Ձեր եղունգների կարմիրը ստուգե՛ք (ն.տ.). Հիշեք ձեր ոճրագործությունը։

4. Սրանց հարիր է փոխանունությունը՝ սինեկդոխի մի տեսակը՝ անունը այլ անվան փոխարեն։

Օրինակ՝ Երբ Դեր Զորի անապատների, շեների, քաղաքների, աշխարհի բոլոր ճանապարհների վրա անվերջ սավառնում են թռչունների բյուրավոր երամներ, որոնք հայոց բիբլիական հողի վրա գմբեթներ են որոնում, սովորական թռչուններ չեն, այլ Անիի հազար ու մեկ վանքերի սուրբ խաչերն են (405). թռչունները խաչերի փոխարեն։

5. Խորիմաստ ոճական արտահայտություն է.

Վանա ծովում ձկները մեռնում են ***կարոտախտից*** (404). Թուրքի զավթած երկրում ձկները կարոտում են իրեն տերերին՝ հայերին։

- Պատկերավորման միջոց է համեմատությունը.

Նարեկավանքը անկեզ մորենի է՝ սպասման հայելում (404)։

Բուն տերերից զրկված լինելով՝ ձյուները վշտից քարերի են փոխվում, իսկ հայ հովիվների չվառած կրակները հրաբուխներ են դառնում լեռների ընդերքներում։ Բռնազավթած Վան աշխարհն է։

ձյունները սարերի վրա սառել-կարծրացել, քարերի են փոխվել. հայ հովիվների չվառած կրակները հրաբուխներ են դառնում ընդերքներում լերանց (և. տ.):

Դավութողլուն համեմատվում է շեկ աղվեսի հետ, իսկ Իլ Ալիևի աչքերը՝ ձյուն տարած աչքերի հետ.

Դավութողլուն՝ շեկ
անապատի շեկ աղվեսը...
Իլ Ալիևը... սև նավթի սև լորձունքով շփում է
ձյուն տարած (երևի Օմար լեռան վրա, 1994-ին) իր
աչքերը (398):

- *Կրկնությունները* սաստկական իմաստ են հաղորդում խոսքին. դրանք երկու տեսակ են՝ բառերի և նախադասությունների:

Օրինակ՝ Ապավինենք *մեր, մեր, մեր, միայն ու միայն մեր ուժին* (405):

«Սո՛ւս... Լռություն» բառերը նախադասության արժեք ունեն տարբեր հնչերանգներով և հանդիպում են երեք անգամ՝ էջ 396, 401, 404:

Այս բառերից անմիջապես հետո նույն էջերում երեք անգամ կրկնվում է հետևյալ նախադասությունը. *Աշխարհը՝ լալ, աշխարհը՝ քոռ, աշխարհը՝ քար:*

- *Սարկազմը*՝ ոչնչացնող, թունոտ ծաղրը, թուրքերին ձաղկելու և ոչնչացնելու զենք է, երբեմն հեղինակը սլաքն ուղղում է որոշ մեծ տերությունների պարագլուխների դեմ, ովքեր անարդարացի դիրք են ունեցել հայերի, Հայաստանի, Արցախի նկատմամբ:

Էրդողանն «աշխարհի աչքին թոզ փչող է», *մանաթներով* չարչիական գործառություններով է զբաղվում, պարվուսյան Գերմանիան ստեղինգով վերցնում է Ռուսիո ցարին, ինչպես և Լենինին, Իլ Ալիևը էությամբ ծաղրի նյութ է:

Եվ սարկազմը կրկին եռում է իմ մեջ (406):

- Ստեղծագործությունը շարադրանքի խնդրում հետաքրքիր լուծում ունի. սկիզբը և վերջը նշվում են Պետրոս Դուրյանի բանաստեղծության երկու կապակցություններով. *«Բույլ մը նայվածք, փունջ մը ժպիտ»*, սակայն նույն կապակցությունները տարբեր տեղերում հավելման եղանակով ունեն հակադիր իմաստներ:

Սկզբում շարադրանքն այսպես է. *«Բույլ մը նայվածք, փունջ մը ժպիտ լերդացել են Սկյուտարի երկնքի մեջ, և անհայտից իջնող թույնի աղջամուղջում, և խիստ կարմիր արյան խորքում որդերը սև, բազմաբեղուն խրախճանում են՝ գերմանական ֆյուրերների թողության ներքո»* (396): Եվ թուրքերն ու գերմանացիները ողջունում են միմյանց, քանի որ եղեռնը հաջողությամբ են իրագործում:

Բնագրի վերջը.

«Բույլ մը նայվածք, փունջ մը ժպիտ... Եվ Սկյուտարի երկնքի մեջ բացվում է հուսո աստղն անմեկնելի... Եվ լույսը դառնում է բանալի» (406):

Սա բանաստեղծի լավատեսության գաղափարաբանությունն է, որն ունի նաև

գեղարվեստական պատկերավորության բացառիկ պատկեր.

«Հայոց լեռների քարավանները ելել են արդեն՝ զեն-ասպար կապած,
Քիրս, Մարութ ու Սիս,
տղերքը հայոց,
տղաքն Սվոյի,
գալիս են,
առջևից Մասիսն է քայլում՝ Տիգրան Մեծի արևն ուսին» (406):

ИСТОРИКО-ХУДОЖЕСТВЕННОЕ РАЗМЫШЛЕНИЕ С САРКАСТИЧЕСКИМИ РЕШЕНИЯМИ И УНИКАЛЬНОЙ ИДЕОЛОГИЕЙ - ***ЭДУАРД МКРТЧЯН*** *- Автор статьи достоверными фактами показывает, что произведение Вардана Акопяна «Голосом двух миллионов жертв ...» затрагивает исторические и актуальные проблемы. Автор, изображая двух миллионов жертв Геноцида армян, мощными историко-художественными представлениями осознанно создает типичные обстоятельства, называет –напоминает их, которые, будучи в разных концах мира , - странах, степях, городах, селах и других местах, сегодня своими именами вызывают сожаление и сильные переживания от потерь, пробуждают чувства скорби и страданий, ненависти и мести.*

Ключевые слова: *Геноцид, два миллиона жертв, Армения, Арцах, Западная Армения, актуальные вопросы, достоверные факты, Азербайджан, Турция, играть в филонтропию.*

*HISTORICAL AND ARTISTIC REFLECTION WITH SARCASTIC SOLUTIONS AND UNIQUE IDEOLOGY-****EDUARD MKRTCHYAN*** *- The author of the article provides proof that the work "With the voice of two million victims" of Vardan Hakobyan raises serious historical and contemporary issues.*

The author, characterizing two million victims of the Armenian Genocide, making them breathe and speaking with their voice, creates typical circumstances with strong historical and artistic ideas and knowledge, dominates and reminds them that being in different parts of the world, countries, steppes, cities, villages and elsewhere, today, with their names, they cause deep feelings of regret and loss and arouse feelings of mourning and suffering, hatred, and revenge.

Key words: *Armenian Genocide, two million victims, Armenia, Artsakh, Western Armenia, current issues, reliable facts, Azerbaijan, Turkey, playing peace.*

ՄՀԵՐ ՔՈՒՄՈՒՆՑ

ԼԵԶՎԻ ԵՎ ԼԵԶՎԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ. ՄՈՒՐԱՑԱՆ

Հայ դասական գրականության հեղինակ Մուրացանի ստեղծագործությունները հիմնականում ուսումնասիրվել են գրականագիտության տեսանկյունից: Առանձնապես չկան այնպիսի աշխատություններ, որոնցում քննված լինեն Մուրացանի գեղարվեստական արձակի լեզուն և հեղինակի լեզվագիտական հայացքները: Մուրացանի երկերը արժեքավոր են ոչ միայն պատկերավորման արտահայտչամիջոցներով, այլև գրաբարյան և բարբառային բառերի գործածությամբ: Հեղինակը փորձել է մասնակցել նոր գրական հայերենի բառապաշարի ձևավորման գործընթացին՝ հետևելով 18-րդ դարի վերջի և 19-րդ դարի այն հեղինակներին, որոնց դերը մեծ է գրական հայերենի ձևավորման գործում:

Բանալի բառեր՝ *Մուրացան, նոր գրական հայերեն, բարբառ, գրաբար, գեղարվեստական գրականություն, փոխառություն, բառապաշար:*

Մուրացանի ստեղծագործությունների արժևորումը սկսվել է դեռևս հեղինակի կենդանության օրոք: Քննադատական առաջին դրվագները թերևս կարելի է վերագրել Վրթանես Փափազյանին[1] և Լեոյին[2]: Հանգամանալից, միևնույն ժամանակ գիտական հենքով է նեկայացնում Մուրացանի երկերը Ա. Տերտերյանը «Մուրացանը որպես մտածող և գեղագետ» աշխատությամբ[3]: Հետագայում արդեն Մուրացանը Րաֆֆու, Շիրվանզադեի, Նար-Դոսի հետ համալրում է հայ դասականների շարքերը[4], որ առավելապես պայմանավորված է հայ նոր գրականության և նոր գրական հայերենի ձևավորման գործում մուրացանական դերով: Մուրացանի երկերի լեզվի վերաբերյալ

---

[1] **Փափազեան Վ.**, Պատմութիւն հայոց գրականութեան (Բանահիւսութեան պատմութիւն): Սկզբից մինչեւ մեր օրերը: (Բանաւոր գրականութիւն, Հին, միջին եւ նոր դարեր, Նորագոյն շրջան ռուսահայ եւ թիւրքահայ գրականութիւն), Էլեկտրաշարժ տպարան օր. Ն. Աղանեանի, Թիֆլիս, 1910, 830 էջ (այսուհետև՝ Փափազյան, 1910):

[2] **Լէօ**, Ռուսահայոց գրականութիւնը (Սկզբից մինչեւ մեր օրերը: Բանաստեղծութիւն, թատերգութիւն, վիպագրութիւն), Բ տպագր., Ս. Ղազար, Վենետիկ, 1928, 337 էջ (այլև նույնը՝ 1904) (այսուհետև՝ Լէօ, 1904):

[3] **Տէրտէրեան Ա.**, Մուրացանը որպես մտածող եւ գեղագետ (Գրական-քննադատական ուսումնասիրություն), Ս.Պետերբուրգ, Ի. Մ. Բորգոնսկու տպար., 1913, 138 էջ:

[4] Հիշենք վերջին շրջանում հրապարակված աշխատություններից՝ **Հակոբյան Վ.**, «Մուրացան եւ Դոստոեւսկի», Ստեփանակերտ, «Արցախ» հրատ., 2002, 32 էջ, «Պարտքի էթիկան Մուրացանի գեղագիտության մեջ» Ստեփանակերտ, «Արցախ» հրատ., 2003, 24 էջ, «Ներքին մարդու պրոբլեմը Մուրացանի ստեղծագործության մեջ», Ստեփանակերտ, «Սոնա» հրատ., 2004, 60 էջ:

ուսումնասիրություններ կամ գնահատականներ առանձնապես շատ չեն[5]: Բայց, կարծում ենք, դա այդքան էլ բնական չէ, քանի որ առավել հանգամանալից և ուղղորդված ընթերցելով Մուրացան, նկատում ենք, որ տարբեր ժամանակներում գրված երկերը լեզվի և ոճի առումով բավական հետաքրքրություններ ունեն, ուստի և՝ լեզվաբանական և գրականագիտական տեսանկյունից տարբեր գնահատականների են կարոտ: Մուրացանի և նրա հերոսների խոսքը, հեղինակի ստեղծած պատկերավորման համակարգը, լեզվագիտական հայացքները աչքի առջև ունենալով՝ խորամուխ եղանք Մուրացանի երկերը նորովի ընթերցելում և որոշ հատկանիշներ առանձնացրինք, որոնք կարող են ուսումնասիրության թեմա դառնալ լեզվի տարբեր բնագավառների համար:

1. Հնարավոր չէ Մուրացանի որևէ ստեղծագործության ուսումնասիրություն սահմանափակել լեզվի կամ ոճի այս կամ այն առանձնահատկությամբ, և ճիշտ է նկատված, որ «**Մուրացանի լեզուն, նրա ճշգրիտ հայերենը՝ գեղեցիկ բառերի ընտրությամբ, պատկերավոր ոճով մեզ համար ուսանելի դպրոց էր**»[6]: Մուրացանը օգտագործել է հայերենի պատկերավորման համակարգի գրեթե բոլոր ձևերը, բառակազմական հնարավորությունները, որոնք տարբեր եղանակներով անցել են գրական հայերենին. «Մուրացանի ռոմանտիզմի մեջ էական դեր են կատարում չափազանցությունը, հիպերբոլան: Ընթերցողի երևակայությունը վառելու համար հեղինակն աշխատում է խտացնել գոյները»[7]:

2. «Մուրացանը տիրապետում էր գրաբարին»[8], «լաւ ծանօթ էր հայ պատմութեան և դասական գրականութեան հետ»[9], ուստի և մեծապես կրելով ազդեցությունը այս ամենից՝ իր պատմական բնույթի երկերը հարստացրել է հատկապես գրաբարաբանություններով. «Մուրացանի պատմական իդեալիզմը դրել է իր կնիքը նրա գրական ուղղության վրա այն իմաստով, որ նա շատ խոշոր արժեք է տվել խոսքի ուժին, օրինակին…»[10]: Մուրացանը հին հայերենի ձևերին դիմել է հատկապես այն ժամանակ, երբ գրաբարը այլևս ժամանակավրեպ էր ու «հին», և 19-րդ դարի վերջի աշարհաբար հայերենը նոր-նոր գրական «պատյանն» էր ձևավորում: Մուրացանը աշխատել է արտահայտչական ձևերի շուրջ, իր լեզվի մեջ թարմացրել հին գաղափարներ, հնամյա հիշողություններ. «Նրա ոճի մեջ կան արխայիզմներ… Ասես թե Մուրացանը նախարարական Հայաստանի պայմանների մեջ գտնվելիս լինի»[11]:

---

[5] Թերևս ուշադրության է արժանի Լ. Եզեկյանի ուսումնասիրությունը (այդ մասին տե՛ս՝ **Եզեկյան Լ.,** Ռաֆֆու ստեղծագործությունների լեզուն և ոճը, Երևան, 1975, 220 էջ):

[6] ***Խաչակյան Ա.***, *Երկերի ժողովածու* (վեց հատորով), *հատ. V, «Սովետական գրող» հրատ., Երևան,* 1977, *էջ 39 (այսուհետև՝ Խաչակյան ԵԺ):*

[7] **Մուրացան**, Ընտիր յերկեր, հատ. I, (խմբագրությամբ և առաջաբանով՝ Ա. Տերտերյանի) Պետական հրատ., Յերեվան-Մոսկվա, 1936, «Մուրացանը իբրև գյուղագիր (առաջաբան)», էջ XIX (այսուհետև՝ Մուրացան, 1936):

[8] ***Խաչակյան ԵԺ***, *էջ 43:*

[9] **Փափազյան, 1910**, էջ 505:

[10] **Մուրացան, 1936**, էջ XIX:

[11] **Մուրացան, 1936**, էջ XIX-XX:

Հեղինակի ստեղծագործական լեզվի ընտրության այս մեթոդը, կարծում ենք, խրախուսելի է նաև հայերենի զարգացման հետագա շրջանների համար: Դա ոչ թե լեզվի ավանդական միջոցներից կախում է, այլ զարգացման ճիշտ և բնական ճանապարհ:

3. Մուրացանի որոշ երկեր մեծապես կրում են բարբառայնություններ, որոնք քիչ թե շատ պատկերացում են ստեղծում ոչ միայն ժամանակաշրջանի բարբառային տարբերակների, այլև բառային և քերականական ձևույթների վերաբերյալ: Իր երկերի շարանը բաց անելով «գյուղագրական նմուշներով»[12]՝ գյուղական թեմայի շուրջ ծավալումներ, «բնական կենցաղի պաշտամունքը»[13] և այլն, Մուրացանը գրականություն է բերել կենդանի խոսակցականին բնորոշ բառեր ու կապակցություններ, որոնք տակավին ուսումնասիրված չեն:

4. «…Ես միշտ աշխատել եմ մեր մի կարգ հրապարակախոսների անհեթեթ մտքերի և կարծիքների դեմ կռվել»[14],- գրում է Մուրացանը, և հեղինակի այս սկզբունքը ոչ միայն գրական երկի թեմայի, բովանդակության և գաղափարական խտացմանն է առնչվում, այլև ստեղծագործական լեզվի ընտրությանը: Շատ երկեր լեզվական առումով չեն վրիպում այսօրվա գրական հայերենի տարբերակի պահանջներից, բայց որոշ ստեղծագործություններ դուրս են նախանշված և ժամանակին տարածված գրական լեզվի ձգտումներից: Մուրացանի ձեռագիրը միատարր չէ բոլոր ստեղծագործություններում. դրա հիմքում հեղինակի՝ ոչ թե բառով գրավելու և առանձնանալու մոլուցքն է, ռոմանտիկական դրսևորումը, այլ հասարակական խնդիրը հասանելի դարձնելու լեզվական բանաձևումն է. «Որքան է ինձ այդ հաջողել, չգիտեմ, այսքանը միայն կա, որ չեմ մտածել իմ ապագա փառքի համար, չեմ աշխատել գրվածներս ազատ պահել ժամանակակից ցավերին վերաբերյալ տենդեցիայից, թեպետ հավատացած եմ եղել, որ այդտեսակ գրվածքների կյանքը կարճ է լինում: Ինձ ոգևորել է իմ ժամանակակից եղբայրներին պիտանի լինելու միտքը և ոչ թե անմահ գրողների շարքը անցնելու տենչանքն»[15]:

Հայ գրականության մեջ շատ հեղինակներ են աչքի ընկել գեղարվեստական լեզվի առանձնահատկություններով: Մուրացանին վերաբերող այն կարծիքը[16], ըստ որի՝ «…մեզ նման մի հասարակութիւն չէր կարող ոգեւորվել այն պահպանողական գաղափարներով, որոնք երկրպագում է պ. Մուրացանը»[17], թերևս ընգրկում է նաև երկերի լեզուն, որ ժամանակիցներին առանձնապես չի գրավել: Գրականության ասպարեզում «Մուրացանը որևէ չափով չոգեշնչվեց հույսի ու հավատի ժամանակների

[12] **Մուրացան, 1936**, Առաջաբան:
[13] **Տերտերյան Ա.**, Հայ կլասիկներ, Պետական համալսարանի հրատ., Երևան, 1944, էջ 475:
[14] **Մուրացան**, Երկերի ժողովածու, հատ. VI., «Հայպետհրատ», Երևան, 1963, էջ 138 (այսուհետև՝ Մուրացան, 1963):
[15] **Մուրացան, 1963**, էջ 138:
[16] Այս կարծիքը միանշանակ չի ընդունվել. «Մուրացանին կը գնահատէ ապագայ հասկացող ու գիտակից հայը». այս մասին տե՛ս՝ **Տէր-Աստուածատրեանց Հ.**, Մուրացան (մահագոյժ), «Հովիւ», 1908, N 33, էջ 523:
[17] **Լէօ, 1904**, էջ 280:

ռոմանտիկական տրամադրություններով»[18], չոգևորվեց նաև գրական-գեղարվեստական լեզվի ընտրության հարցում: Կարծում ենք՝ Մուրացանը չունի որևէ հեղինակի ստեղծագործության լեզվի ազդեցություն: Նա էլ, ինչպես նկատվում է երկերի ընթերցումից, մշակել է խոսքը, հաճախ մտորել բառերի ու բառային-քերականական տարբերակների, ձևերի ընտրության շուրջ, բայց դուրս չի եկել այն սահմաններից, ուր կանխորոշված էր գաղափարը ընթերցողին հասցնելու առաքելությունը. «Ինքնազարգացումը շատ օգնեց ապագայ վիպասանին: Սիրում էր նա աշխատել»[19]:

Դեռևս 19-րդ դարի սկզբից հայ հեղինակները սկսել էին նոր գրական հայերենի մշակման փորձերը: Դա առավելապես նկատվում է բառապաշարից օտար բառերի դուրսմղման գործընթացով: Եվ ինչպես էր դա կատարվում. դրվում է հայերեն կամ այդպիսին համարվող բառը, ապա փակագծերում դրան փոխարինած կամ փոխարինող օտար բառը (նաև հակառակը), որ որոշակի հաճախականություն ուներ լեզվում, ինչպես՝ «…ամենևին նման են **սարդոստայնէրուն (էօրիւմճեկ)**, որ որչափ ալ բարակ ըլլան….»[20], կամ՝ «…**սահմանակցութեան (հիւտիտնէրու)**», «**պաշար (զահրէ)**», «**ասպատակութիւն (չարխա)**»[21] և այլն: Հետագայում այս կարևոր նախաձեռնությանը միացավ Խ. Աբովյանը[22]՝ «…մեկ նաչար բայղուշ (բու)…», «Հավի թշնամի **ուրուրը (ձերեն)**…»[23] իսկ ավելի ուշ՝ Մուրացանը: Վերջինս չէր կարող ուշադրության չարժանացնել լեզվի շինության գործընթացը. չէ՞որ Խ. Աբովյանի պես «ազգության հիմքը ընդունում էր կրոնը և լեզուն»[24]: Լեզվաշինական այս մեթոդը ընդգծվում է հեղինակի ուշ շրջանում տպագրված գործերում՝ 1902-1904թթ.: Արդեն 1902թ. «Լումա» հանդեսի II համարում տպագրված «Անմեղ զրույցներ» ընդհանուր խորագրի տակ «Թե ինչո՞ւ իմ ստորագրությունը չընդունեցին» և «Հատուկ թղթակիցը» ծավալուն պատմվածքներում, ապա «Առաքյալը» վեպում (վիպակ)՝ տպագրված 1904թ. «Երկասիրությունների» I

---

[18] **Մարինյան Ս. Ն.**, Մուրացանի ռոմանտիկական պատմահայեցությունը, Պատմա-բանասիրական հանդես, № 1, Երևան, 1969, էջ 15:

[19] **Փափազյան, 1910**, էջ 505:

[20] Իմաստութիւն մարդկային, որ կը սորվեցնէ մարդուս՝ խելքը աղէկ բանեցնել, կատարեալ մարդ ըլլալ և մեծութեան հասնիլ, Ս. Ղազար, Վենետիկ, 1833 (Հեղինակը գրքում նշված չէ: Ըստ մատենագիտական աղբյուրների՝ այն վերագրվում է Եղիա Թովմաճանյանին. ՀԳ 2069, Մ, ՄԼԳ, Զ Մատ. 244: Ղ. 1. 766), էջ 5:

[21] **Ինճիճեան Ղ.**, Դարապատում, որ է աշխարհամար կամ ընդհանուր պատմութիւն, հատ.2, դար ութուտասաներորդ 1757-1768, Սբ. Ղազար, Վենետիկ, 1825, էջ 3, 107, 108:

[22] Մ. Նաբանդյանը այլ կերպ էր ըմբռնում լեզվի մշակման գործընթացը. «Այժմ մտքումս մի ընդարձակ ծրագիր ունեմ,- գրում է Մ. Նալբանդյանը,- «Մեր լեզվի արմատական բարեփոխության մի փորձ», շարադրել հնի քայքայման և նորի կազմավորման ընթացքը և, ըստ հնարավորության, նոր լեզվի երկու կարևորագույն ճյուղերը հաշտեցնել, միանգամայն հրաժարվելով ժողովրդի այժմ կենդանի լեզվում անգործածելի բոլոր ձևերից, բացառելով, իհարկե, օտար բառերը՝ եթե ժողովուրդը գործածում է առանց կարիքի և առանց խտրության» (**Նալբանդյան Մ.**, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 4, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1949, էջ 189 -190):

[23] **Աբովյան Խ.**, Երկերի լիակատար ժողովածու (ութ հատորով), հատ. III, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1948, էջ 242:

[24] **Սուրխաթյան**, Հայ գրականություն (Արևելահայ 19-րդ դար յեվ 20-րդի առաջին քառորդ, արձակ յեվ չափածո նմուշներ), հատ. I, Պետական հրատ., Յերեվան, 1926, էջ 475:

հատորում[25] նկատվում են բազմաթիվ բառեր իրենց փոխարկիչներով, ինչպես՝ «-Հեր օրհնած, թող մի **նափաս (շունչ)** քաշեմ է՛…»[26], «…հոգիդ լուս դառնա, ժամհար Պետրոս, էս ինչ **ղիամաթ (երևելի)** զադ ա ըլել…», «…օյաղ **վախտդ (ժամանակդ)** սկսելու ես ամեն բանի խառնվիլ…», «… Հարսդ էդ բանը տեսնելով՝ **փարվան (պտույտ)** ա տալու…», «…էն ա էդենց **վախտը (ժամանակ)** սիպտակ աբասին դնում ա ձեռքումս հու ասում…», «Ա Պետրոս, տեսնում եմ, որ ծարավել ես, գնա մի **դոյինջան (կուշտ)** կուլ տուր», « Ես էլ, ի՞նչ մեղքս ծածկեմ, գլուխս քաշ եմ զցում ու **թուշ (ուղիղ)** Կարունի դուքանը գնում»:

Պետք է նկատել, որ ոչ բոլոր օտար կամ բարբառային բառերն են մեկնվում ներդրյալ գրական տարբերակներով: Դժվար է որոշակիացվում այն սկզբունքը, որ նույն նախադասության մեջ որոշ բառեր ունեն իրենց գրական տարբերակները, իսկ որոշները՝ ոչ. հմմտ.՝ «Նրա **արաղը**, **ղորթ** ա, խաղողի չի, թութի ա, ամա դե որ **տրիցատկան (չափ)** քամում եմ, վրան էլ մի կտոր հաց, յա աղի **խիյար** ծամում…», «…**հարամզադա՛**, գիտում չե՞ս, որ վեց շահին չորս **մանեթ** պիտի ասեմ, որ էս անզգամ կնանիքը վախեն, հորի ջուրը **իթիաթով (խնամքով)** բանեցնե՞ն», «…**սաղ** օրը բան արին ու **անջախ (հազիվհազ)** որ **հայաթը** մաքրեցին…»: Կարծում ենք՝ հեղինակը փորձում է տարբերակելի դարձնել օտարաբանությունը փոխառությունից: Սա լեզվի բառային կազմում ընդգրկված օտար բառերի տարբերակման հատկանիշներից մեկն է: Օտարաբանությունները սովորաբար չեն ընդգրկվում բառապաշարի հիմնական շերտում և գեղարվեստական ստեղծագործություններում սովորաբար գործածվում են ոճավորման նպատակներով, «իբրև ոճական հնար, երբ հատկապես անհրաժեշտ է լինում ստեղծել համապատասխան (կոլորիտ), կամ ընդգծել տվյալ կերպարի անհատականությունը»[27]: Տեսականորեն դժվարություններ ծագեցնող այս հիմնադրույթը, որ Մուրացանի ժամանակ լեզվի մեջ քննարկման նյութ չէր, մինչև հիմա հստակ սահմանում չունի: Մեր դիտարկումն առ այն, որ Մուրացանը բառապաշարի գործառական շերտում փորձում է տեղաշարժեր մտցնել, կարծում ենք, մասամբ ամրապնդվում է որոշ դիպուկ օրինակներով, ինչպես՝ «…ինչի՞ էդ **շառինջը (դույլ)** հորի պատերին ես խփում…», «…**էլլիկի (ժողովրդի)** առաջին ընենց բարձր ձենով չորս մանեթ ասեց …», « Էս որ լսեցի, **բեյինս (ուղեղս)** ժաժ եկավ», «Բա՛, Շուղի-հաքիր, **յանղլիշ էկա (սխալվեցա)**», « Եկ էս մինը **թավ չանենք (չհաշվենք)**, մինն էլ ածա՛ խմեմ Սիմոն աղին օրհնեմ», «…քաղաքում հայտնի յուր **սնըխչիական (կոտրածը** ողջացնող) արհեստով…», «… կարող էր ընտիր **արզաներ (խնդրագրեր)** գրել …», « «**Ասիլ (իսկական)** ստորագրությունն էլ քունն ա որ կա», «… դու էդ ո՞նց ես **ջուռիաթ անում (համարձակվում)** ասում …», «-**Ձեր հախն ա. (տեղն է.)** ձեզ ո՞վ ա ասում…» և այլն:

Մուրացանի լեզվաշինական փորձերնը անցկացվում են ոչ միայն օտար, այլև

[25] Առաջին անգամ տպագրվել է «Լումա» հանդեսում. Այս մասին տե՛ս Մուրացան, Երկերի ժողովածու, հատ. VI, «Հայպետհրատ», Երևան, 1963, էջ 403:

[26] Բոլոր օրինակները քաղված են նշված գրքից. **Մուրացան**, Երկերի ժողովածու, հատ. VI, «Հայպետհրատ», Երևան, 1963:

[27] **Պետրոսյան Հ. Զ.**, Հայերենագիտական բառարան, «Հայաստան» հրատ., Երևան, 1987, էջ 627:

բարբառային բառերի շուրջ. կան բառեր, որոնց համար հեղինակը բերում է՝ ա. ***բարբառային իմաստը***, ինչպես՝ «…նահլաթը չար սատանին, թող մի քիչ համբերենք. էն ա, որ Մեսրոբ աղան հեռացավ, **թունդված (զայրացած)** մոտացա երեցփոխին…», «…երեցփոխի հաշիվներին **ձեռք քաշելու (ստորագրելու)** համար …», «Ընչի՞, թող առաջ **մեծերը (հասակավորները)** ձեռք քաշեն, այ, Մեսրոբ դային, Աբրահամ ապերը...», «- Տո դու չե՞ս ասել, թե հաշիվը մեկ-մեկ պետք ա կարդամ, **փոնացնեմ (համեմատեմ)**», բ. ***բարբառային ձևի կամ տարբերակի փոխարինողը***՝ « Հենց էն ա, ուզում ի ասեմ, մեկ էլ տեսնեմ աղբաթիխերը սպիտակ աբասին դրավ **հափռումս (բռանս մեջ)**…», «…**օխտնջինն** էլ **(յոթերորդ)** քո **հերն (հայրն)** ա, նա հու ըստեղ չի…», «Բա՛, էս ցո-ին **հաքին (պոչը)** շատ էրկանացավ, հու վնա՞ս չունի…», «Բա՞ ես խելքս կորցրե՞լ եմ, որ էդ **քչեղակին (կաչաղակ)** հաշիվ տամ ստորագրի …», «…էդ **պիծի (փոքր)** տեղովդ ուզում ես քննես…», գ. հանդիպում են բառեր, որոնց ***փոխարինողները նույնպես բարբառային տարբերակ կարող են համարվել***, ինչպես՝ « …ես հրես ագռավի **չանչյուլներ (չանգեր)** եմ քաշիլու…» և այլն: Այլ դեպքեր նույնպես արձանագրվում են Մուրացանի արձակում, օրինակ՝ հետաքրքրական է, որ հին փոխառության համար հեղինակն առաջարկում է նորը՝ «բայց ես այսօր **սապատող (կուզ)** եմ…»: Սրանիցից վերջինը հանդիպում է ուշ շրջանում. Հ. Աճառյանը առաջին վկայությունը վերագրում է Գ. Տաթևացուն[28], իսկ առաջինը՝ ավելի վաղ է վկայվում Փարպեցու և այլոց գործերում **սապաթ, սապատակ**[29] «փոքրիկ կողով» իմաստով[30]:

Մուրացանը լեզվի մշակման այս հարցում հետևողական չի եղել: Դա երևում է հենց վերոնշյալ երկերում: Հանդիպում են բազմապիսի բառեր ու դարձույթներ թե՛ հերոսների, թե՛ հեղինակային խոսքում, որոնց առումով, կարծում ենք, նույնպես պահանջվում է յուրահատուկ մոտեցում, ինչպես՝ «**ըռավոտ**», «հո՞վ դուրս տարավ», «**հմեն մինը** շահով», «**թամզել**», «ա՛յ հայվան, բա դու **գիտում չե՞ս**», «Եվ իսկույն էլ **տարիր** Կարունի դո՞ւքանը», «Բա **ըսկի թողա՞ցի**, որ ջանին քամի դիպչի՞... տարի, **հու քու** կենացը լավ անուշ արի», « առաջ **ըսկի ըլել չի**» «արաղդ փորումս **դամ ա տալի**», «**քե մատաղ**», «**ընենց ըլի**, որ չեդանաս», բարբառային տարբերակներով հատուկ անունները՝ «**Լալյունց Մեսրոբը**», «**Ջիլփունց Ռահանջան**», «**Շողի-հաքիր**», «**Տուտուշենց Մցական բեգը**», «**Դաստակենց Ավան ապերը**», «**Սափարունց Դավութ բեգը**», «**Բալադուզուն Դավութ բեգը**» և այլն:

Իհարկե, սրանց գործածությունը առավելապես վերագրվում է հերոսներին, բայց, միևնույն է, հետևողական մոտեցում՝ ո՞ր դեպքում է տուրք տված բարբառայինին

---

[28] **Աճառյան Հր.**, Հայերեն արմատական բառարան (4 հատորով, 2-րդ հրատարակություն), հատ. II, «Երևանի համալսարանի հրատ.» (առաջին հրատարակությունը՝ 1926-1935, 7 հատորով), Երևան, 1971-1979, էջ 653 (այսուհետև՝ ՀԱԲ):

[29] **Աւետիքեան Գ., Սիւրմէլեան Խ., Աւգերեան Մ.**, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, Տպարան ի Սրբոյն Ղազարու, 1836-1837, 2-րդ հրատ. (2 հատորով), հատ. II, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1979-1981, էջ 694, ՀԱԲ IV, էջ 175:

[30] **Կուզ**-ը համարվում է նոր պարսկերենից անցած փոխառություն՝ کوز (qūz-քուժ) «1. կուզ, սապատ, 2. ուռուցիկ, կորնթարդ», իսկ **սապատ>սապատակ, սապատաւոր** և այլն՝ միջին պարսկերենից՝ **sapat** (բառը տարածված է քրդ. արաբ. թյուրք.):

և ո՞ր դեպքում գրականին, չի նկատվում: Կարծում ենք, որ կերպարների տիպականացման միջոց է եղել նաև բառընտրությունը. թերևս հերոսները առանձնանում են նաև բառապաշարի գործածությամբ: Այս հարցը՝ Մուրացանի գեղարվեստական երկերում յուրաքանչյուր հերոսի ունեցած բառապաշարի ուսումնասիրությունը, կարող է այլ քննություն ենթադրել, որ մեր նպատակից դուրս է: Ավելի վաղ շրջանի գործերում այս խնդիրը լուծված է նախ ի շահ ձևավորվող նոր գրական հայերենի, ապա գրաբարի: Դա առավելապես նկատվում է պատմական անցյալը ներկայացնող երկերում՝ «Ռուզան», «Անդրեաս Երեց», «Գևորգ Մարզպետունի»: Ինչ խոսք, բառը նկարագրվող երևույթից առաջ կարող է ներկայացնել ժամանակաշրջանը: Դա կարևոր մի փորձ է, որին, օրինակ, հետագայում հետևեց Ս. Խանզադյանը «Թագուհին հայոց» վեպը գրելիս[31]:

Ե՛վ «Անմեղ զրույցները», և՛ «Հատուկ թղթակիցը» կրում են փակագծերով ներդրյալ խորագիր՝ «(Գավառացու օրագրից)»: Մուրացանի երկերին վերաբերող գրականագիտական աշխատություններից չկարողացանք պարզել, թե այս ստեղծագործությունների բովանդակությունը այլ հեղինակի «օրագրի՞ց» է քաղված, և Մուրացանը գրական մշակմա՞ն է ենթարկել, թե՞ հենց հեղինակինն է և բարբառային ձևերին տուրք տալու հանգամանքով է պայմանավորված «(Գավառացու օրագրից)» նշելը:

Անտարակույս, հայ մեծանուն գրող Մուրացանի գեղարվեստական արձակի լեզուն հանգամանալից ուսումնասիրության կարիք ունի: Թեմատիկայի լայն համապատկերում, ժամանակաշրջանի գրական խոսքի մշակման և թեմայի ամբողջացման պահանջով Մուրացանը գեղարվեստական գրականություն է բերել բարբառային բառեր և իմաստներ, գրաբարաբանություններ, բառային և քերականական տարբերակներ, կայուն կապակցություններ, խոսքի պատկերավորման արտահայտչամիջոցներ: Պակաս կարևոր չեն մուրացանական փորձերը լեզվաշինության բնագավառում. որոշ ստեղծագործություններում շատ բառեր և կապակցություններ, որ գրական լեզու մուտք չեն գործել, հեղինակի կողմից հասարակայնացվել են, հանձնվել ընթերցողի դատին՝ ընտրելու, հանրայնացնելու և ձևավորելու նոր գրական հայերենը:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ЯЗЫКА И ЕГО СТРОЕНИЯ. МУРАЦАН - ***МГЕР КУМУНЦ*** *-Произведения автора армянской классической литературы Мурацана в основном изучались с точки зрения литературоведения. Нет в особенности таких трудов, в которых анализировались бы язык художественной прозы и лингвистические взгляды автора. Сочинения Мурацана ценны не только выразительно-экспрессивными приемами, но и употреблением диалектных слов и слов грабара. Автор пытался участвовать в процессе сформирования лексики нового литературного армянского языка, следя за теми авторами конца 18-го и 19-го вв., роль которых велика в сформировании литературного армянского языка.*

[31] Այս մասին տե՛ս՝ **Ներսիսյան Լ.**, Գրաբարաբանությունները Ս. Խանզադյանի «Թագուհին հայոց» վեպում, Հայագիտություն. Սյունիք (գիտական նյութերի ժողովածու), թեվ 1, «Նոր տպագրիչ» հրատ., Երևան, 2016, էջ 73-83:

Ключевые слова: *Мурацан, новый литературный армянский язык, диалект, грабар, художественная литература, заимствование, лексика.*

SOME ISSUES OF LANGUAGE AND LANGUAGE CONSTRUCTION: MURATSAN- ***MHER KUMUNTS****-The works of Muratsan who is the author of Armenian classical literature were mainly studied from the point of viewliterary science. There are no works where the language of fictional prose of Muratsan and the author's linguistic views are studied.*

The works of Muratsan are valuable not only for expressive means but also for the use of Grabar and dialect words.

The author attempted to participate in the process of developing a new literary Armenian vocabulary by following the authors of the late 18th and 19th centuries, whose role was great in shaping literary Armenian.

Key words: *Muratsan, new literary Armenian, dialect, Grabar, fictional literary, loan, vocabulary.*

ԼԻԱՆԱ ՍԱՆԹՐՅԱՆ

ՍԻԱՄԱՆԹՈՅԻ ԵՎ ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ ԼԵԶՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐ

20-րդ դարասկզբի հայկական սիմվոլիզմի ամենախոշոր ներկայացուցիչը՝ Սիամանթոն և ռեալիստ-ռոմանտիկ Դ. Վարուժանը, ժամանակակիցներ լինելով, ունեցան նույն ճակատագիրը, նույն մտահոգությունները, բայց դրսևորեցին տարբեր խառնվածքներ և ընտրեցին պայքարի տարբեր ուղիներ: Եթե Սիամանթոն սգաց համահայկական ողբերգությունը՝ խորապես ապրումակցելով, միշտ մնալով մռայլ ու սարսափազդու մթնոլորտում, ապա Դ. Վարուժանը ծառս եղավ անգամ աստվածների դեմ, կոչ արեց պայքարելու, հուսաց և հավատաց լուսավոր գալիքին:

Բառագործածությամբ ևս տարբերվեցին այս հսկաները՝ ընտրելով նույն բառապաշարը՝ տեղադրեցին տարբեր խոսքաշարերում և տարբեր իմաստներ ու ընդգրկումներ հաղորդեցին բառերին: Գործածության հաճախականությամբ առաջինը Արյուն բառն է (համապատասխանաբար 180 անգամ գործածվել է Դ. Վարուժանի և 134 անգամ՝ Սիամանթոյի երկերում), որին հակակշիռ դրված է Կյանք բառը (92 անգամ հանդիպում է Սիամանթոյի և 81 անգամ՝ Վարուժանի շարքերում):

Պատկերների ստեղծմանը ծառայել են հոմանիշները, հականիշները, կրկնությունը, օքսիմորոնը:

Երկուսն էլ այնպիսի մեծություններ են, որ գնահատվել են ոչ միայն հայերի, այլև օտարների կողմից:

Բանալի բառեր՝ *Եղեռն, պայքար, Սիամանթոյի լեզվամտածողությունը, Դ. Վարուժանի լեզվամտածողությունը, խորհրդանիշ, հասարակ անունների հատկացում, գործածության հաճախականություն, հոմանշություն, հականշություն, օքսիմորոն, կրկնություն:*

20-րդ դարասկզբի հայկական սիմվոլիզմի առաջին խոշորագույն ներկայացուցիչը Սիամանթոն էր, որին Իսահակյանը բնութագրում է որպես «ունիկում համաշխարհային պոեզիայում»: 6 տարի անց ծնվում է ևս մի տաղանդավոր, պոետական վիթխարի երևույթ՝ Դանիել Վարուժանը, որի կրակոտության չափանիշն են Արշակ Չոպանյանին գրված հետևյալ տողերը՝ «Անահիտ» ամսագրում տպագրվելիք բանաստեղծության առթիվ. «Քերթվածը զոր կներփակեմ՝ թերևս Դուք սիրեք. հա-

կառակ պարագային՝ կարող եք այրել, իր բոցը՝ ապահով եմ՝ երեք օր Փարիզը պիտի լուսավորե»[1]:

Երկու մեծություն միևնույն ժամանակաշրջանում, նույն մտահոգություններով, նույն ճակատագրին արժանացած, բայց տարբեր թե խառնվածքով, թե պայքարի՝ ընտրած ճանապարհով: Սիամանթոն ամենայն մանրամասնությամբ տվեց դժոխքում հայտնված արևմտահայության զարհուրելի ճակատագիրը, չփարվեց հույսին, չշեղվեց իր ճանապարհից: Նա խարազանը դարձավ անտարբեր աշխարհի թիկունքին. «*Ո՛վ մարդկային արդարություն, թո՛ղ ես թքնեմ քու ճակատիդ*....»(«Պարը», էջ 135)[2]:

Դ. Վարուժանն իր ամբողջ կիրքն ու եռանդն ուղղեց իր ժողովրդին՝ հույսի նեցուկ դառնալով ու լավատեսություն ներշնչելով նրան:

Եթե Սիամանթոն կենտրոնանում է իրադարձությունների, դեպքերի վրա, սգում մարդկային ողբերգությունը և ընդհանրականի միջոցով ասելիքը տեղ հասցնում, ապա Վարուժանը մարդկային հոգեբանության, առանձին կերպարների անհատական տառապանքի ընդհանրացումով է բացում ողբերգությունը:

Սիամանթոն ու Դ. Վարուժանը լրացնում են միմյանց. այդ դժվարին ժամանակներում մեկի ներկայությունը բավարար չէր: Ինչպես նկատում է Հ. Ռշտունին. «Հնագույն մշակույթի մի ժողովրդի անհետացման վտանգը, ապրելու և տևելու կամքը, լավատեսությունը, բարոյական ուժն ու վեհությունը քչերին հաջողվեց երգել այնպես հուժկու և մարդասիրական պաթոսով, ինչպես Վարուժանին ու Սիամանթոյին»[3]:

Բարձր գնահատելով իր ավագ գրչընկերոջը՝ «հոյակապ և հրաբորբոք տաղանդ»՝ Վարուժանը չի զիջում նրան իր ներքին բռնկումով: Դեռևս 1894-96 թթ. ջարդերի տարիներին տեղափոխվելով Պոլիս և հորը բանտում գտնելով՝ Վարուժանն իր մեջ զգում է «առյուծի բաշի» թափահարումը, որը նրան ուղեկցում է մինչև մահ /ականատեսի վկայությամբ՝ 1915 թ. Չանղրրից Այաշ տեղափոխվող նահատակներից միայն Վարուժանն է դիմադրություն ցույց տալիս իր դահճին/:

Վարուժանի պոռթկուն ու անսանձ խառնվածքը հստակորեն գծագրվում է իր գործերում: Սգալը նրան հատուկ չէ, այլ միայն պայքարը: Անգամ 1895-96 թթ.-ի առթիվ գրված «Զարդը» բանաստեղծության մեջ, որ կոտորածներին անմիջապես առնչվող գործերից է, չկան մազափետում, սարսափի ու սգի ծանր տրամադրություն, ինչն անխուսափելիորեն ձգվում է Սիամանթոյի շարքերով, այլ կա վրեժի առնական կոչ:

---

[1] Տե՛ս Գրականության և արվեստի թանգարան, Ա. Չոպանյանի արխիվ, 4/4, 1907-ին գրված նամակը Կանտից: Դ. Վարուժան, Երկեր, Եր., 1979, էջ 209:

[2] Տե՛ս Սիամանթո, Դանիել Վարուժան, Երկեր, Եր., «Սովետական գրող» հրատ., 1979: (Այսուհետ այս բնագրից բերվող օրինակների մոտ կնշվեն ստեղծագործության անվանումը և էջը):

[3] Տե՛ս Ռշտունի Հ., Դանիել Վարուժանի պոեզիան (մահվան 50-ամյակի առթիվ) hpj.asj-oa.am/733/1/65-1/69/.pdf (Որոնման ամսաթիվ՝ 28.08.2019):

Զարդի սեղմ նկարագրությունները հաճախակի ընդմիջվում են պայքարի և ընդդիմության կոչերով՝ «Հառա՛ջ, հառա՛ջ» [289-290]:

Վրեժի կոչ է անում նաև Սիամանթոն («Ատելության կոչ»): Նա գիտակցում է, որ իր կոչն ահավոր է, բայց ունի արդարացում և պատճառ.

Թեև գիտեմ որ Ատելության Կոչս ահավոր է և ռազմի հրավերս ամեհական,
Բայց յոթը դար է, որ մայրագութ Հայրենիքը մեր հաղթական այցելությանը կսպասե,
Եվ դեռ մտիկ ըրեք, ըմբոստ և Անվրեժ Տարոնն է որ իմ մեջես կգոռա,
Արյունլվա Վասպուրականին մահվան հոտը ահավասիկ և մոխրի մրրիկներն Ակնա հովիտներուն,
Ահավասի՛կ հազարավոր ավերակներու անեծքը Հայրենիքին պատգամին մեջ արյունագծված...
Եվ շունչիս մեջ մահամերձի հոնդյուն, նզովքի խոսքեր, պայքարի վճիռ, և ապրելու անսահման սեր կա... (66-67):

Սիամանթոն բացում է վերքը, ցավեցնելու աստիճան փորփրում: Վարուժանը կույր ձևացող Եվրոպայի երեսին է շպրտում նրա ցինիզմը և անեծք հղում ոճրագործներին.

– Անե՛ծք...ու սև՛ շիրիմներուն մեջ իսլամ՝
Բոլոր ոսկրերն իրարու դեմ կջարդեն.
–Անե՛ծք... ու թո՛ւք մայրերուն մութ ծոցին մեջ
Կաթը կը՛ըլլա սնդիկ կամ խյուս եղիճի.
–Անե՛ծք... ու վե՛րն, Ելտրզ-Քյոշկի երդին վրա
Բու մը հսկա կդնե բույնն իր հսկա: [«Զարդը», 293]

Վարուժանը երբեք չի հուսահատվում. կոչ է անում հայ մայրերին լալ վերջին անգամ, որովհետև արդեն տեսնում է «Նոր սաղմեր նոր Որդիներու ստեղծիչ...//Հզոր ճեմքերն Առյուծներու ապագա....» [«Զարդը», 293-294]:

Իսկ վերջին տողերն ուղղակի լավատեսության գերաստիճանն են.

....Ու անհամբեր հեռո՛ւն, հեռո՛ւն ակնապիշ
Պիտի սպասեն վարդահեղեղ գալուստին
Արշալույսի մ՝Արշալույսի մը՝որուն
(Հավատացեք ինձ, Մայրեր,)
Ես ոտնաձայնը կառնեմ.... [«Զարդը», 294]:

Սիամանթոն ևս ունի «Հույսին համար», սակայն այստեղ հույսի ու լավատեսության փոխարեն իրականում պարզապես ցանկություն է, այն չի թևավորում. թերևս բառապաշարի ծանրությունը, պատկերների մռայլությունը թույլ չեն տալիս լիարժեքորեն ոգևորվել:

Սիամանթոն ինքը բացատրում է իր տառապանքի և հուսահատության պատճառն ու ցույց տալիս դրանց աղբյուրը.

Հոգիս այն երկինքն է, ուրկե հույսին բոլոր աստղերը թափեցան,
Ու այն մարմարակերտ տաճարն, ուր կյանքը ծունկի եկած՝
Խելահեղորեն Ամենագութ մահը կպաղատի….
….Հոգիիս մեջ երբեմն արշալույսներ կարյունին,
Եվ պաղատող աղաղակներու անասելի համանվագ մը կորոտա….[«Հոգիս», 123]:

Տարբերություններով հանդերձ՝ Սիամանթոյին ու Վարուժանին բնորոշ են աղերսներ ունեցող մի քանի գործեր: Նախ դիտարկենք դրական ու խաղաղ մթնոլորտ ներկայացնող՝ Սիամանթոյի «Հանգրվանը և վաղորդայնը» բանաստեղծությունը և Վարուժանի «Հացին երգը» շարքը: Եթե Վարուժանի շարքը թեթև է, ուրախ, պայծառ ու արևոտ, Սիամանթոյի բանաստեղծությունը կրկին բառապաշարի հագեցածության ու խտության, վերամբարձության պատճառով, ավելի ծանր է, կոթողային: Վարուժանի վերոնշյալ շարքին նմանություն ունի նաև Սիամանթոյի «Սովամահը» բանաստեղծությունը, որի միայն սկիզբն է թվացյալ խաղաղություն երգում, որովհետև ներսում հասունանում են մռայլությունն ու ողբերգությունը:

Ապա՝ Սիամանթոյի «Ատելության կոչ» բանաստեղծությունը՝ վարուժանյան պոռթկումով ու թափով:

Եվ ի վերջո երկուսին բնորոշ «հեթանոսությունը»՝ ցասումն Աստծո դեմ, որը մոռացել է մի ամբողջ ազգի և թողել անպաշտպան: Սիամանթոն ահեղ Աստված է խնդրում.«*Քու աղամանդյա արգանդեդ, ո՜վ Դիցուհի, ահեղ Աստված մը ծնանե՜ մեզ….*»[«Նավասարդյան աղոթք առ դիցուհին Անահիտ»,194]: Վարուժանն ավելի համարձակ է դրսևորվում, դրա պատճառը հուսալքումից ծնված ծառացումն է հեթանոս աստվածների դեմ, որոնք մեռան, և ահա «*Մարդն է ընկած գարշապարի տակ հսկա//Խուլ Աստուծո մը հրեա*» [«Մեռած աստվածներուն», 394]: Նա տարբերակում չի մտցնում և հայ աստվածներին հավասար դժգոհում է հունական և հռոմեական աստվածներից: Հաստատելու համար իր տրամադրվածության անհողդողդությունը՝ բանաստեղծության վերջում կրկնում է վերոբերյալ տողը:

Իսկ «Հորս բանտին մեջ» բանաստեղծության մեջ, երբ հորը բաժանում են որդուց, և նա հեռանում է առանց համբույրի, երկար լացում է մենակ, «*Մինչ կրծքիս տակ բաշ կթոթվեր ոխ մը նոր// Միտս աչքերես քամեցի*» [276]: Բանաստեղծությունն ավարտվում է հետևյալ տողերով, որոնք հուսահատության և դրանից ծնված ցասման աստիճանի ցուցիչն են.

Տեսա որ ձեզ հետ, ձեզի հետ սուզեցան
Եղեռնի մեջ, արտալած,
Սուրբերն ամե՛ն կրոնքի, ամեն շուշաններ
Եվ Հիսուսներ թքնված: [276]:

Երկու մեծությունների հոգու և մտքի ընթացքն ինչ-որ տեղ ուղղորդվում է նաև անձնական կյանքով: Վարուժանն ուներ մխիթարություն՝ Արաքսին և երեխաները, որոնք թև էին տալիս ու սփոփում, լավատեսության ահռելի ուժ հաղորդում: Ներքուստ

անհանգստություն ու մտահոգություն ունենալով՝ Վարուժանը ցուցադրեց միայն հույսը, լավատեսությունը, ոգևորությունը:

Սիամանթոն զուրկ էր այս ամենից և իրեն ընտանիք է դարձնում ժողովրդին, գերագույն ուժով ապրումակցում.

....Վասնզի, Մահը ուսերուս վրան է այս իրիկուն,
Ու մտիկ ըրեք, ակռաներս մահագուժորեն կկրճտեն... [«Հիշատակ»,90]:

Միայնակ մնալով իր համազգային ցավի ու անզորության հետ՝ Սիամանթոն շուրջն է նայում համախոհներ ու պայքարողներ գտնելու հույսով, և չգտնելով՝ նախատում է հայոց հոգևոր առաջնորդ Խրիմյան Հայրիկին, որը, չափազանց հնազանդ գտնվելով, չառաջնորդեց նրան պայքարի, այլ խոնարհաբար աղոթեց: Ըմբոստ Սիամանթոն պայքար էր ուզում, սակայն չկար պաշտոնական-պետական առաջնորդ (չհաշված հայդուկապետերը, որոնք ապօրինի էին գործում).

....Եվ քո մեկ պատգամդ, քու օրհնությունդ, քու մեկ քայլդ պիտի բավեր,
Որպեսզի կամքերը սուրերուն հետ վառեին, որպեսզի քայլերը հառաջանային,
Որպեսզի թշնամիները զարհուրեին, որպեսզի հաղթանակները
մարմարվեին... [«Խրիմյան Հայրիկ»,53]:

Խորազգաց ու ներքնատես բանաստեղծը մարգարեանում է և նախապես տեսնում ու բազմիցս ապրում իրեն հասանելիք ճակատագիրը.

Ու նորեն, երազներու ուխտված մարմնիս վրան,
Արյունով թրջված պատանքներուդ խոնավությունը կզգամ,
Ու չարագոր ձեռվրներ երկաթեղեն ծանրությամբ,
Կմոտենա՛ն, կմոտենա՛ն արտնանունքներս փակելու,
Ու բազուկներս, որ ատենով հաղթանակներու արեգակին գալարվեցան...
Այսօր ջախջախված՝ արտիս սերերուն վրա կխաչաձևվին....
[«Հիշատակ»,90]:

Անզորությունից Սիամանթոյի մնում է միայն խնդրել.

Տե՛ր, հիվանդներուն և լքվածներուն սնարեն
Ոճրագործներդ ու իրենց սուրերուն սարսափը հեռացո՛ւր,
Եվ ջուրերդ թո՛ղ քիչ մը իրենց կատաղութենեն հանդարտին,
Որպեսզի մահապարտները աքսորանքի նավերուն մեջ,
Թեև քեզ անիծելով, բայց գոնե խաղաղությամբ ոգեվարին....
[«Գթություն»,91]:

Համակերպվելով իր ճակատագրին՝ Սիամանթոն իր անդրշիրիմյան պատգամն է հղում սերունդներին.

Ա՛ռ այն սուրը որ օր մը իբր Խորհրդանիշը իմ անձնուրաց անցյալիս,
Եկար կայծակի բեկորի մը նման շիրիմիս վրան ցցելու,
Վերցո՛ւր զայն, աջ ձեռքիդ մեջ, վստահ և ամրապինդ, վերցո՛ւր,
Ու սուրա՛, սիրելիս, պերճորեն, զվարթորեն, կտրիճորեն սուրա՛,
Հոն, ուր ես գաղափարիս և գաղափարիդ համար առավոտ մը, արյունիս մեջ

ինկա.... [«Անդրշիրիմյան աղաղակ», 92-93]:

Ասելիքի ծավալն ու թափը, դուրս հորդող զգացմունքները պահանջում էին համապատասխան լեզու, որի մասին Դ. Վարուժանն ինքն է դատում. «Մենք ազգի մը լեզուն ճոխ ու կատարյալ կը համարիք այն ատեն միայն, երբ այն ընդունակ է հաջող կերպով պատկերելու այն ազգին մեծամասնության հոգեբանությունն իր բոլոր երանգներով, երբ մյուս մասամբ կը պահե իր մեջ նկարագիրը այն նախնիներուն, որոնց բերնին մեջ կազմավորված է իր նախնական ձևը»[4]:

Սրատես քննադատ Ա. Չոպանյանը ըստ արժանվույն գնահատել է Վարուժանի՝ լեզվագործածության հմտությունը. «Ազնիվ ու ճոխ հայերենը, զոր կգրե, տաղաչափական հմտությունը, զոր ցույց կուտա, հստակ ու կուռ շարադասության, համաչափության ու կարգի դասական հատկությունները, զոր ի հայտ կբերե, Մխիթարյան մթնոլորտին շատ բան կպարտին: Ինչ որ ի՛րն է, այն բուռն ու սուր զգայնությունն է, տաք ու քաղցր սրտի մը հզոր ու խորունկ բաբախումը, ամենեն սովորական տեսիլներե ուրույն եղանակով մը նկատելու, զգալու և արտահայտելու կարողությունը, որ կտիրե իր քերթվածներուն մեջ»[5]:

Իսկ Սիամանթոյի գրիչը բնորոշել է Վարուժանն ինքը՝ «Սուրբ Մեսրոպ» պոեմի առթիվ Սիամանթոյին անվանելով «վերադիրներու գրիչ մը», «ինչպես իր Վարպետը՝ Նարեկացին»[6]:

Ինչպես սկզբում նշել ենք, Սիամանթոն 20-րդ դարասկզբի հայ խոշորագույն խորհրդապաշտներից է, և իր բոլոր շարքերում առատորեն հանդիպում են խորհրդանիշներ, որոնք Սիամանթոն ստեղծում է՝ հասարակ անունները հատկացնելով և բառիմաստի մեջ գաղափար ամփոփելով: Այս կերպ խորհրդանիշներ են դարձել Եղեռնը, Կոտորածը, Մահը, Դին, Դիակը, Արյունը, Սևը, Ցավը, Ըմբոստացումը, Ընդվզումը, Ըմբոստը, Պայքարը, Կարմիրը, Վրեժը, Նպատակը, Հույսը, Կյանքը, Ապրելը, Հաղթանակը, Արդարությունը, Ազատությունը, Արշալույսը և այլն:

Նույն այս խորհրդանիշները կան նաև Վարուժանի շարքերում, բայց հիմնականում հասարակ անվան գործածությամբ:

Մենք կազմել ենք թվարկված բառերի գործածության հաճախականության աղյուսակներ՝ ըստ երկու հեղինակների շարքերի: Համեմատությունը ցույց է տալիս, որ գործածության հաճախականությամբ առաջին հորիզոնականում *Արյուն* բառն է Դ. Վարուժանի «Ցեղին սիրտը» շարքում (97 անգամ), սակայն մեծավ մասամբ դրական խոսքաշարում: Ընդհանուր Վարուժանի շարքերում այս բառը հանդիպում է 180 անգամ (դարձյալ ամենագործածականն է), Սիամանթոյի մոտ՝ 134 անգամ՝ հիմնականում Եղեռնին հարաբերակից: Երկրորդը *Մահն* է՝ Սիամանթոյի երկերում 97, Վարուժանի մոտ՝ 39 անգամ գործածված: Կիրառական հաճախականությամբ երրորդ

[4] Տե՛ս Վարուժան Դ., Երկերի լիակատար ժողովածու, հ.3, Եր., Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., 1987, էջ 121:
[5] Տե՛ս Չոպանյան Ա., Երկեր, Եր., «Սովետական գրող», 1988, էջ 645:
[6] Տե՛ս Ղազարյան Ն., Նարեկացի-Սիամանթո, Էջմիածին , echmiadzin.asj-oa.am/15044/1/127.pdf (Որոնման ամսաթիվ՝ 27.08.2019):

բառը *Կյանքն* է՝ 92 անգամ գործածված է Սիամանթոյի և 81 անգամ՝ Վարուժանի շարքերում: Երկու հեղինակներն էլ *Արյանն* ու *Մահին* հակակշիռ դնում են *Կյանքը*:

Խոսքաշարով պայմանավորված՝ նվազում է *Սև* բառի բացասական արժեքը, իսկ բառը հանդիպում է 63 անգամ Վարուժանի և իր բուն բացասական իմաստով 41 անգամ՝ Սիամանթոյի երկերում:

Գործածական մեծ հաճախականություն ունի *Հույսը* (72 անգամ) դժոխք պատկերող Սիամանթոյի երկերում (միայն 27 անգամ գործածված է «Հոգեվարքի և հույսի ջահեր» շարքում): 25 անգամ հանդիպում է Վարուժանի շարքերում:

Հետաքրքիր է *Կարմիր* բառի երկփեղկված գործածությունը Սիամանթոյի գործերում՝ մերթ որպես կոտորածի խորհրդանիշ *(...Մեր վերարկուներն իրենց կարմիր նախճիրին տակ //Բովանդակ ռազմադաշտը մեր նայվածքներեն դիապատեցին...* («Հաղթանակեն հետո», 32)), մերթ ապագայի պայծառ երազների և հաղթանակի խորհրդանիշ *(....Երազներս, հույսերս, սերերս և կամքս կարմիր,// Տարիներով, մտածումիս հետ, ցոլացին...* («Ափ մը մոխիր հայրենի տուն», 88): *Ու դեռ մայրերը կան, արգասաբեր ու հերարձակ,// Որ վերը, վրաններուն մեջը դաշ-տավայրին, // Իրենց հուրթի ու լայն ու լուսավոր կողերուն տակ,// Մեր վա-ղորդայնները նորեն փառավորելու համար // Մոլեգին Դյուցազներու կարմիր եր-կունքը կապրին...* («Հույսին ճամփան», 23)): Այս տեսակետից Սիամանթոն հա-կանշային շարք է ձևավորում՝ *Կարմիր* բառի մեջ ամփոփելով կյանքի ու մահվան հակադիր գաղափարները:

Գաղափարային խտացումների շնորհիվ են *Արհավիրքը, Ցավը, Ոճիրը* Սիամանթոյի գործերում վերածվում *Եղեռնի* հոմանիշների: Իսկ կրկնությունը դառնում է պատկերավորման և հուզական պաթոսի արտահայտչամիջոց (....*Դժխեմ ու նիհար ծառերը... Անթվելի մեռելներու կմախքներուն նման, հողմերու ժամուն, զիրա՜ր, զիրա՜ր, զիրա՜ր կջախջախեն...*(«Սովամահ»,74),«*Անոթի ենք, Տե՜ր, գթա՜, բնություն, գթա՜, մարդե՜ր, անոթի ենք մարդկությո՜ւն, անոթի ենք...*» («Սովամահ»,75), *Դիակնե՜ր և դիակնե՜ր, որոնց գլուխները միայն մոխիրներեն դուրս են ցցված՝ // Հունձքերուն վրա դիակնե՜ր, դիակնե՜ր ավազաններուն երեսը և դիակնե՜ր իմ սարսափահար ոտքերուս տակ...*(«Մենախոսություն», 61), *Ուրեմն ոտքի՛, նորեն ոտքի՛, նորեն ոտքի՛, Հայորդինե՜ր, Դյուցազուննե՜ր, Ազատաբերնե՜ր, // Ոտքի՛, և օդերուն մեջ թո՛ղ ցնդին, օդերուն մեջ թո՛ղ մոխրանան // Մեր դահիճներուն սա՛ պատժապարտ պալատներն արյունաթոր....* («Ահաբեկիչներ»,60)):

Տառապանքի ու հուսահատության խորությունն ու տևականությունն իրենց հետքն են թողնում անգամ Հաղթության վրա՝ ծնունդ տալով Սիամանթոյի գրչի տակից ծնված խոսուն օքսիմորոնի՝ *...Քու մտածումիդ մեջն էր, որ ծնավ կարմիր արևը հուսահատյալ Հաղթության...* («Կովկաս», 55):

Բնականաբար, մեկ հոդվածն ի զորու չէ լիարժեքորեն տալու երկու ան-ընդգրկելի մեծությունների բազմաշերտ ու հարուստ լեզվաշխարհն ու հոգին: Ամ-փոփելով կրկնենք. դաժան ու դժվարին ժամանակների համար ծնվեցին, պայքարեցին

ու նահատակվեցին երկու հսկաները, մնացին անմահ հայ ժողովրդի հիշողության մեջ, իսկ Վարուժանի մեծությունը տեսան ու գնահատեցին նաև օտարները: Ֆրանսիացի հայագետ Ֆրեդերիկ Ֆեյդին իրավացիորեն գրել է. «Վարուժանը պատկանում է նույնքան Արևմուտքին, որքան Հայաստանին»:

Իսկ 1958 թ. փետրվարի 8-ին Գենտում տեղի ունեցավ Վարուժանին նվիրված երեկո: Փետրվարի 9-ին համալսարանի մատենադարանի մեծ սրահում ամրացվեց հուշատախտակ՝ Վարուժանի դիմաքանդակով և հայերեն, ֆրանսերեն, ֆլամանդերեն արձանագրությամբ: Դիմաքանդակի տակ բանաստեղծի խոսքերն են.

Ի՜նչ փոյթ կեանքը մեռնող,
երբոր երազը կ՚ապրի,
երբոր երազն անմահ է:

*ПАРАЛЛЕЛИ ЯЗЫКОВОГО МЫШЛЕНИЯ СИАМАНТО И ДАНИЭЛЯ ВАРУЖАНА-**ЛИАНА САНТРЯН**-Виднейший представитель армянского символизма начала 20-го века Сиаманто и реалист-романтик Д. Варужан, будучи современниками, имели одинаковую судьбу, одинаковые переживания, но проявили разные виды темперамента и выбрали разные способы борьбы. Если Сиаманто оплакивал всеармянскую трагедию, глубоко сопереживая и всегда оставаясь в мрачной и страшной атмосфере, то Д. Варужан восставал даже против богов, призывая сражаться, надеяться и верить в светлое будущее.*

Эти гиганты отличались также применением разного словарного запаса: одна и та же лексика выступала в разных словосочетаниях, придавая словам разные значения и смыслы. По частоте употребления превалирует слово кровь (используется 180 раз Д. Варужаном и 134 раз Сиаманто), которому противопоставлено слово жизнь (92 раза у Сиаманто и 81 раз у Варужана).

Синонимы, антонимы, повторы, оксюморон послужили для создания образов.

Величие обоих писателей было оценено не только армянами, но и иностранцами.

***Ключевые слова:** геноцид, борьба, языковое мышление Сиаманто, языковое мышление Варужана, символ, присвоение нарицательных имен, частота использования, синонимичность, антонимичность, оксюморон, повторы.*

*PARALLELS OF LANGUAGE THINKING OFF SIAMANTO AND DANIEL VARUZHAN - **LIANA SANTRYAN**-The most prominent representative of Armenian symbolism of the early 20th century Siamanto and the romantic realist D. Varuzhan, being contemporaries, had the same fate, the same feelings but showed different types of*

temperament and chose different ways of struggle. If Siamanto mourned the pan-Armenian tragedy, deeply empathizing and always remaining in a gloomy and terrible atmosphere, then D. Varuzhan even rebelled against the gods, calling to fight, hope and believe in a brighter future.

These giants were also distinguished by the use of different vocabulary: the same vocabulary appeared in different phrases, giving the words different meanings. The word blood prevails in frequency of use (used 180 times by D. Varuzhan and 134 times by Siamanto), it is opposed to the word life (used 92 times by Siamanto and 81 times by Varuzhan).

Synonyms, antonyms, repetitions, oxymoron served to create images.

The greatness of both writers was appreciated not only by Armenians, but also by foreigners.

Key words: *genocide, struggle, Siamanto's language thinking, Varuzhan's language thinking, symbol, common naming, frequency of use, synonymy, antonymy, oxymoron, repetition.*

ԱՐՔՄԵՆԻԿ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՉՊԱՏՄԵԼՈՒ ՄԵՂՔԸ
(Անրի Գրիգորյանի «Դմբո Ջոյս» ժողովածուի առիթով)

Հոդվածում քննվում և վերլուծվում է ժամանակակից հայ երիտասարդ արձակագիր Անրի Գրիգորյանի «Դմբո Ջոյս» ժողովածուն՝ իր հատկանշական կողմերով: Հիմնական շեշտադրումները վերաբերում են պատմողի դիրքավորման, ներս-դուրս հարաբերություններին, և դրանցով պայմանավորված՝ պատմվածքի ժանրային փոխակերպումներին:

Բանալի բառեր՝ *տեքստ, դիրքավորվում, տեղ, ժանրային նկարագիր, պատում, ընթերցում:*

Անրի Գրիգորյանի պատմվածքները գրական տարբեր կայքերում, ժողովածուներում, պարբերականներում հրատարակվելով՝ արդեն իսկ որոշակի հետաքրքրություն էին առաջացրել երիտասարդ գրողի հանդեպ՝ հարցազրույցների, վիրտուալ տարածքում մեկնաբանությունների և կարծիքների տեսքով: Այդ պատմվածքների մեծամասնության կամ, գուցե, լավագույն մասի ի մի բերելը առանձին՝ «Դմբո Ջոյս» վերնագրով գրքում (Երևան, «Գրանիշ», 2017) ստեղծում է այս անգամ արդեն քննադատական սևեռումի դիտակետ: Մանավանդ որ՝ արդի հայ պատմվածքի գնալով լճացող ժանրային նկարագրի համապատկերին Անրի Գրիգորյանի պատմվածքները նաև անկման, փոփոխությունների և, ընդհանրապես, ժանրի վայրիվերումների վերաբերյալ են դիտարկումների հնարավորություն ընձեռում:

Բայց, թերևս, նախ՝ ***տեղի*** մասին, ավելի ստույգ՝ ***պատմելու դիրքավորման:*** Այն, որ Անրին ծնվել ու ապրել է Թբիլիսիում, կրթություն ստացել, աշխատել Լոնդոնում ու Բուդապեշտում, միայն առաջին հայացքից են սոսկ կենսագրական փաստեր: Ավելին՝ միայն առաջին հայացքից են գրական տեքստի վերլուծության համար անկարևոր փաստեր: Հարցն այն է, որ պատմելու դիրքավորումը ժամանակակից արձակում կարևոր գործառույթ ունի: Ընդ որում՝ խոսքը ոչ միայն հետահայաց և նմանատիպ այլ դիրքավորումների մասին է, որ շատ դեպքերում կարող է սոսկ պոետիկական հնարանք լինել, այլև, նախևառաջ, հեղինակի դիրքավորման, որն այս դեպքում նույնն է, թե՝ ապրելու տեղի ու վայրի: Եվ ճիշտ այնպես, ինչպես հետահայաց, հուշագրական պատումը հնարավորություն է տալիս պատմել բաներ, որոնք այլ դեպքում գուցե չպատմվեին, նույն կերպ՝ տեղն ու վայրն են նման դրդառիթներ ստեղծում:

Հայաստանում և Սփյուռքում ստեղծվող հայ գրականության էութային տարբերությունը հենց այդտեսակ ***դիրքավորման*** մեջ է: Զուգահեռն այս դեպքում էական է

նրանով, որ Անրի Գրիգորյանն էլ, վերը բերված կենսագրական փաստերի հուշմամբ, ըստ էության, Սփյուռքի հայ գրող է, մանավանդ որ՝ ԽՍՀՄ փլուզման հետևանքով ձևավորված Սփյուռքի նոր տարածական ընկալումների, վերջին տասնամյակների էմիգրացիոն երևույթների պատճառով ***արևմտահայերենը*** որոշիչ գործոն չէ այդ տարբերակման հարցում. լեզուն նույնպես ***դիրքավորման*** ձև է, ըստ էության[1]:

Հարցազրույցներից մեկում Անրի Գրիգորյանն այդ առումով շատ կարևոր մի բան է ասում. «Երբ ավարտեցի ուսումս Լոնդոնում և Բուդապեշտում, որոշեցի գալ Հայաստան, աշխատել ու ապրել իմ պատմական հայրենիքում: ***Մինչ այդ չէի ապրել Հայաստանում: Ինձ հաճախ էին հարցնում, թե ինչու եմ եկել, երբ մարդիկ հեռանում են երկրից: Պատասխանում էի, որ հոգնել եմ փոքրամասնություն լինելուց:*** Թբիլիսին, որտեղ տարբեր ազգեր են ապրել, ինչի շնորհիվ բազմամշակութային քաղաք է եղել, այժմ փոխվել է: Մերօրյա Թբիլիսիում ես ինձ փոքրամասնություն եմ զգում»[2] (ընդգծումն իմն է. – Ա. Ն.):

Ուստի կարելի է ասել, որ Անրի Գրիգորյանը ստեղծում է ***փոքրամասնության*** գրականություն՝ հավակնելով ***մեծամասնության*** ընթերցումի: «Դմբո Ջոյս» ժողովածուում այդ առումով հետաքրքիր նշագրումներ կան: Նախ՝ արտաքին, պարզ երևացող հատույթում. յուրաքանչյուր պատմվածքի վերջում նշված է դրանց ստեղծման տեղանքը: Առաջին հայացքից սոսկ ստեղծաբանական, գուցե ավելի շատ աշխատանոցային նշում լինելուց զատ, դրանք ***դիրքավորման*** տեսանկյունից էական նշագրումներ են: Թբիլիսի-Երևան-Բուդապեշտ-Լոնդոն աշխատանոցային «ուղևորությունը» միայն պատմվածքների «ծննդյան վկայականների» փաստագրում չէ, մանավանդ՝ որ առկա է նաև Երևան-Թբիլիսի տեղանքային զուգադրմամբ պատմվածք: Դրանցից յուրաքանչյուրը դիրքավորման տեսակ է, և ուշադիր ընթերցման դեպքում հստակ կարելի է տարբերակել հատկանիշներ, որոնք վերաբերում են այդ դիրքավորումներին:

Իհարկե, վաղուց քննարկման համար հասունացել է այն խնդիրը, թե արդյոք հայերեն գրելը հայ գրականություն ստեղծելու ցուցիչ է, այնպես, ինչպես, հաստատ, իսպաներեն գրելը դեռևս իսպանական գրականություն ստեղծելու ցուցիչ չէ: Իհարկե, մասշտաբներն ու բազմաթիվ այլ ներքին մասնավորություններ համեմատելի են այս դեպքում, բայց խնդիրը քննարկելի է: Գուցե հայալեզու գրականությո՞ւն:

Այնուամենայնիվ, դեռևս տիրապետող մտայնությամբ՝ Անրի Գրիգորյանը ստեղծագործում է արդի հայ արձակի համաձիրում: Բայց հենց այդ հատույթում առկա է ստեղծաբանական մի շատ կարևոր և հեղինակին միանգամից այդ հատույթից դուրս դնող, նվազագույնը՝ ինքնատիպացնող հանգամանք. Անրի Գրիգորյանը ***դրսից է***

[1] Այս առումով հատկանշական է արդի մեկ այլ երիտասարդ ու տաղանդավոր արձակագրի՝ Քրիստիան Բատիկեանի օրինակը: Դիրքավորման պարզ հատույթում գոնե նա և Անրի Գրիգորյանը նույն ***արարքի*** տարածության մեջ են: Բատիկեանի գրականության ***արևմտահայերենը*** նրա ***դիրքավորումը*** դուրս է բերում մեկ այլ մակարդակ: Դրան կանդրադառնամ մեկ այլ առիթով:

[2] «Գրականության մեջ պետք է բաց տարածք թողնել, որտեղ ընթերցողն իրեն թագավոր կամ թագուհի զգա. Անրի Գրիգորյան» (հարցազրույց): Տե՛ս https://armenpress.am/arm/news/918908/grakanutyan-mej-petq-e-bac-taratsq-toxnel-ortex-yntercoxn.html:

պատմում: Եվ, շեշտում եմ, սա ոչ միայն դիրքավորման տեղային ու վայրային տրամաբանությամբ: Անրին ընդհանրապես է դրսից պատմում՝ հոգեբանական տեսանկյունից հատկապես: Դա ենթադրում է նախևառաջ ***ներսի*** վատ ճանաչում ու վատ իմացություն, որը հաճախ հանգեցնում կա՛մ թերի պատկերացումների, կա՛մ ինչ-ինչ երևույթների գերագնահատման: Ուստի ***ներսի*** համար Անրին ***ստույգ*** չէ, ինչպես Անրիի համար ***ներսը ստույգ*** չէ: Սրա համաբանությամբ՝ Անրիի արձակը ***զարմացնող է, բարդությամբ՝որված է, անբարդություն է, ուրիշ է, օտար է, հարազատ է*** և այլն, բայց ***ստույգ*** չէ: Կրկնում եմ՝ ***ներսի*** համար: Եվ այդ ան***ստույգ***ությունը և՛ առավելություն կարող է դառնալ, և՛ ձախողումի պատճառ, կախված, թե հեղինակն ինքը որքանով է գիտակցում այդ իրողությունը:

Այն, որ Անրի Գրիգորյանի պատմվածքներում կոնկրետություն չկա (չխառնել՝ դա չի նշանակում, որ անորոշություն կա), հեղինակի մտածողության մեջ ***դրսի*** և ***ներսի*** գուցեև չգիտակցված բախման արդյունք է: Անրիի հերոսները նույն պատմվածքում կարող են հանդես գալ տարբեր անուններով կամ նրանց տարբեր անուններով կանչեն. «Բոլորը կարծում են անունս Կարեն է: Բայց իրականում Արշիլ է» («Բիգ Բեն», էջ 3), «Գրողը քեզ տանի, Գրեգ, էդպես էլ Ջոյս չդառար» («Դմբո Ջոյս», էջ 71):

Անգամ անունների ծաղրանմանակումը նույնպես այդ տիրույթում է.

«– Պուդրոն լավ տղա էր:

– Պեդրոն:

– Պիդրո, Պուդրո՝ նույնը չե՞ն» («Տուր վերարկուս, գնում եմ», էջ 81):

Կոնկրետության բացակայության ցայտուն օրինակ է «Դմբո Ջոյս» պատմվածքում Գրեգի մասին երեք աղջիկների՝ Մերիի, Հաննայի և Արսինեի տարբեր, մեկը մյուսին երբեմն հակասող պատկերացումները: Նրանցից յուրաքանչյուրի պատմությունը Գրեգի մասին, ըստ էության, ***ներսին*** հետաքրքրող կամ ***ներսին*** բավարարող պատմվածքի որոնում է: Հեղինակն այստեղ չի կողմնորոշվում, թե ո՞ր պատմությունը պիտի ներկայացնի իբրև ***պատմվածք***, ուստի ստիպված է երեքն էլ ներկայացնել: Գրեգի կերպարն այստեղ մարմնավորում է գրականությունը, երեք աղջիկները՝ Անրի Գրիգորյանի տարբեր մոտեցումները գրականության, պատմվածքի, սյուժեի, ոճի և այլնի մասին:

«– Նա ցինիկ էր,– ասաց Արսինեն,– շատերն էին էդպես մտածում: Ու երբեք չէր զսպում իրեն:

–Ուղղակի անտաղանդ էր,– Հաննան զգաց Մերիի հայացքը, աչքերը հատակից բարձրացրեց ու նայեց նրան:

–Նրան սիրողներն էդպես չէին մտածում,– Մերին իսկույն զղջաց ասածի համար» («Դմբո Ջոյս», էջ 64):

Այլ խոսքով՝ Անրին գիտի և՛ ***ինչ*** պատմել, և՛ ***ինչպես*** պատմել: Անրին չգիտի՝ ***ներսում*** ինչը և ինչպես ***արժե*** պատմել:

Ընդ որում, չափազանց կարևոր է այն հանգամանքը, որ Անրիի գրականության այդ, ըստ էության, ամենից հատկանշական կողմը ցուցանող «Դմբո Ջոյս» պատմվածքը

գրվել է ***Երևանում:*** Այսինքն՝ ամբողջովին ***դիրքավորման*** արդյունք է:

Կոնկրետության բացակայության առումով հետաքրքիր է նաև այն պարագան, որ Անրիի պատմվածքների մեծ մասը, ըստ էության, առնվազն երկու սյուժե ունեն, հաճախ՝ զուգահեռ ընթացող, հաճախ՝ մեկընդմեջվող: Դրանցից որևէ մեկի գերակայությունը, իբրև առանցք, Անրին զգացնել չի տալիս, երբեմն անգամ խնամքով խճողում է: Այդտեսակ պատմվածքներից լավագույնները՝ «Լայլան» և «Խատուտիկներ՝ Խաթունային» պատմվածքները, գրված են ***Բուդապեշտում:*** Կրկին դիրքավորման արդյունք: Բուդապեշտը չափազանց հետաքրքիր ***պատմելու տեղ*** է այս առումով, քանզի իրմով ներառում է ***Թբիլիսիում*** կատարված դեպքերի ու զգացողությունների պատմություն, որը պատմվում է ***Երևանում (Հայաստանում)*** ընթերցվելու համար:

«Լայլան» և «Խատուտիկներ՝ Խաթունային» պատմվածքների սյուժեներն իրենց բնույթով երևան են հանում Անրի Գրիգորյանի արձակին բնորոշ ևս մեկ կարևոր հատկանիշ. Անրին սովորաբար պատմում է գործած կամ չգործած մեղքի պատմություններ: Այս պատմվածքների զուգահեռ կամ ընդմիջարկվող սյուժեներում այդ առումով հետաքրքիր զուգադրումներ կան: Այդպես, սյուժեներից մեկում Անրին պատմում է ***չկատարած,*** բայց ***ձգտած մեղքը***, մյուսում՝ նախորդի նյութականացածը՝ այսինքն՝ ***գործած*** մեղքը: Պարադոքսն այն է, որ երկրորդ դեպքում այն արդեն մեղք չէ, բայց դրա հենքով՝ առաջին սյուժեում մեղք գործելու փորձն է ընկալվում որպես մեղք: Իր հերթին, սրա հուշմամբ՝ արդեն դրա մասին չպատմելն է դառնում մեղք: Ահա այս հանգամանքն է մղում հիմնականում երկու սյուժեով պատմվածքներ ստեղծելուն:

«Լայլան» պատմվածքում տատիկի պատմած Կոկրոճինայի հեքիաթն ու, ընդհանրապես, նրա կոլորիտային կերպարը ապահովում են մանկականության ու անմեղության որոշակի քող՝ տղայի «մեղավոր» ձգտումների համար: Դա ինքնին գեղեցիկ ու գունեղ պատմություն է, լա՛վ պատմություն է, առանձին վերցրած՝ լավ պատմվածք: Բայց դա ***փոքրամասնությանը*** հետաքրքրող պատմություն է զուցե: Ուստի Անրիի՝ պատմելու տեղի դիրքավորումը, զուցեև ներքին բարդույթը, ***ներսը ստույգ*** չիմանալու հանգամանքը, ***մեծամասնության*** ընթերցմանը ձգտելը մղում են դրան զուգահեռել մյուս պատմությունը՝ տղայի տենչանքը դեպի Լայլան՝ անսքող մանրամասներով:

«Խատուտիկներ՝ Խաթունային» պատմվածքում Անրին, այս առումով, ավելի հեռուն է գնում: Այստեղ չկա նախորդի՝ մանկականություն ի ցույց դնելու և անմեղության որոշակի քող ապահովելու խնդիր: Բայց, այնուամենայնիվ, կա տենչանք ունենալու՝ «Բերանս մոտեցրի Խաթունայի մեջքին ու լեզուս զգույշ հիշեցրի: Խաթունան ուսով հրեց դեմքս: Վախեցա, որ կքշի ինձ, կփախչի ինձնից, կանհետանա թաղից, այլևս չի կանչի ինձ, հետս չի խաղա, ու մենք խատուտիկներ չենք փչի: Աղջիկներին չեն լպստում: Աղջիկը պաղպաղակ չի, որ լիզես» («Խատուտիկներ՝ Խաթունային», էջ 54), կամ կիրքը բավարարելու՝ «Ստեի մատները իջեցրին վարտիքս ու անդամս բռնեցին: Անդամիս պնդանալու հետ նրա մատները նրբացան: Ստեն բռնեց մատներս ու տարավ-դրեց ծլիկին: Մատներս սայթաքեցին թացության մեջ: …Ստեի ծխախոտահամ

լեզուն մտավ բերանս, լեզվիս տակ: Ստեն կուչ եկավ գրկիս մեջ: Տնքում էր: Ձեռքերը փռել էր մեջքիս: Նա ուզում էր մարմնիս վրա լինել ամեն տեղ: Ստեն փոքրամարմին էր: Սիրուն էր տնքում: Ստեն շշնջաց, որ խփեմ հետույքին: Վերջում պառկեցի նրա վրա: Ստեն շշնջաց, որ մի քիչ էլ մնամ մեջը: Սիրուն էր շշնջում» («Խատուտիկներ՝ Խաթունային», էջ 55):

Այնուամենայնիվ, ստեղծագործական առումով կարևոր է այն, որ, ի տարբերություն «Լայլան» պատմվածքի, այստեղ սյուժեները նրբորեն միահյուսվում են՝ «Տեսնես Խաթունան հիշո՞ւմ է քեզ,– հարցրեց Ստեն՝ վառելով ծխախոտը» («Խատուտիկներ՝ Խաթունային», էջ 57): Սա ստեղծաբանական հարցում է, ըստ էության: Ի վերջո՝ տենչանքի պատմությո՞ւնն է գրականություն, թե՞ կրքի բավարարման պատմությունը: Անրիի արձակը, գոնե «Դմբո Ջոյս» ժողովածուի շրջարկում, նաև այս խնդրադրությունն ունի:

Դրսից պատմելու դիրքավորումն է գուցե, որ Անրի Գրիգորյանին հնարավորություն է տվել խուսափել վերջին մի քանի տարիների հայ պատմվածքին բնորոշ ***պատմության բացակայությունից*** ու որոշակի տարտամությունից, երբ հեղինակային մտորումն ու խոհը գերակշռում են պատմությանը, պատմողին, ընդհանրացմանը, և պատմվածքն, իբրև ժանր, պահում «անշարժ» ու տեղապտույտ գուժող վիճակներում: Անրի Գրիգորյանն իր պատմվածքներով ժանրին նորանալու հնարավորություն է ընձեռում:

Եվ, այնուամենայնիվ, Անրի Գրիգորյանի տեքստը ***դրսի*** տեքստ է, որ ձգտում է ***ներսում*** կյանք ունենալ: Դա տեքստի տեսակ է, որը գուցե միշտ այդպես էլ մնա սահմանազծին: Ու դրանով միշտ լինի հետաքրքիր:

*"ГРЕХ, О КОТОРОМ НЕ ГОВОРЯТ" (ПО СЛУЧАЮ СБОРНИКА АНРИ ГРИГОРЯНА "ГЛУПЫЙ ДЖОЙС")- **АРКМЕНИК НИКОГОСЯН**- В статье исследуется и анализируется сборник "Глупый Джойс" современного армянского молодого прозаика Анри Григоряна с его примечательными сторонами.Основной акцент ставится на позицию рассказчика,вход-выход отношений и,связанная с этим жанровая замена рассказа.*

***Ключевые слова**: текст, позиция, место, жанровое описание, повествование, чтение.*

*THE SIN OF NOT TELLING (On the occasion of the collection of Henry Grigoryan "Dmbo Joyce") - **ARQMENIK NIKOGHOSYAN**- The article examines and analyzes the collection of the modern Armenian young prose-writer Henry Grigoryan "Dmbo Joyce" with its distinctive features. The main focuses are related to the teller's positioning, in-out relationships, and the genre-based transformations of the story.*

***Key words** : text, positioning, place, genre description, cover, reading.*

ՏԱԹԵՎԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՊԱՏԿԵՐԱԿԵՐՏՈՒՄԸ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՄԻ ՇԱՐՔ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐՈՒՄ

Շիրակի հայրենի բնությունը, այդ աշխարհի մարդիկ՝ իրենց անխառն ու շիտակ բնավորությամբ, Ավետիք Իսահակյանի համար յուրահատուկ արժեհամակարգ էին: Ու հենց այդ արժեհամակարգն էլ գեղարվեստական արտացոլք գտավ Վարպետի պոեզիայում և արձակում՝ կերտելով Շիրակի անզուգական պատկերը հայ գրականության մեջ:

Շիրակը պատկերող պատմվածքներն Իսահակյանի ստեղծագործություններում առանձնանում են նրանով, որ հյուսում են պանդխտության ցույն առած գրողի՝ հայրենի եզերքի հանդեպ ունեցած մեծագույն սիրո և դրան միախառնված լացող կարոտի երգը: Եվ որքան գրականագիտությունը քննության առնի Վարպետի՝ հայրենիքից հեռու ապրելու և արարելու տարիները, այնքան Շիրակի պատկերակերտման իսահակյանական մոտիվը մնալու է արդիական:

Բանալի բառեր՝ *կարոտ, վերհուշ, մանկություն, երիտասարդություն, Ալագյազ, Շիրակի բնություն, հայրենի եզերք, անխառն ու շիտակ բնավորություն, ըմբոստ ու աշխարհաթող գյուղացի, բացառիկ անմիջականություն, պանդխտության ցույց, բնության արարում, պատմվածքային հուշագրություն, բանաստեղծական հոգեկերտվածք, աղքատության բնորոշում, չքավոր մարդու հոգեբանություն:*

Յուրաքանչյուրն ունի այնպիսի վայրեր, որոնց մասին մոռանալը հնարավոր չէ թեկուզ այն պատճառով, որ օդն այնտեղ հիշում է մեր երջանիկ շնչառությունը: Թերևս Ռեմարկի այս տողերով սկսենք ներկայացնել Ավետիք Իսահակյանի այնքան սիրելի Շիրակի արտացոլքը իր իսկ պատմվածքներում: Որովհետև Վարպետը ոչ միայն չմոռացավ, այլև անընդհատ և ամենուր շարունակեց ապրել Շիրակում՝ զգալով ու կրելով իր մեջ հայրենի բնության սրտի հարատև բաբախյունը, և չվարանենք ասել՝ հետագայում դառնալով նաև այդ բաբախյունի անփոխարինելի և անմնացորդ երգիչն ու նվիրյալը: Ազատագրական շարժման հայրենասիրական խմբակներում, Թիֆլիսի հայ գրական շրջաններում, հայրենի Շիրակի ըմբոստ և «աշխարհաթող» գյուղացիների միջավայրում, Լայպցիգում և Ժնևում ուսումնառության տարիներին, ու նաև Երևանի, Ալեքսանդրապոլի, Թիֆլիսի բանտերում անգամ Իսահակյանը շարունակեց մնալ այն պարզ ու շիտակ շիրակցին, որի գրիչը մշտապես պատկանում էր հայրենի եզերքին: Տարիների հորձանքում օտար ափերում թրծված մեծ հայը, մոր պատգամածի

համաձայն, շարունակեց սիրել աշխատավոր մարդուն, հայրենի երկիրն ու նրա բնությունը: Ու այդ երկիրը, այդ բնությունը դարձան անսպառ թեման նրա բանաստեղծության և արձակի, որոնցից յուրաքանչյուրը գաղափարական ընդհանրացումներով որքան տարբեր, նույնքան նման է մյուսին զգացած կարոտը, բնաշխարհի և այդ բնաշխարհին պատկանող մարդու պատկերումը կերտելու վարպետի կատարյալ հմտությամբ: Եվ, իրոք, Ավետիք Իսահակյանի թողած գրական ժառանգության մեջ Շիրակի և հայրենի բնության պատկերներն առանձնանում են բովանդակային խորությամբ, պատկերներն ու կերպարները ներկայացնելու բացառիկ անմիջականությամբ, ինչու չէ՝ նաև դրանց միջոցով հենց ինքն իրեն բացահայտելու անթաքույց մղումով, որովհետև անհնար է չնշել, որ հայրենի բնությունն և այդ եզերքի մարդուն այդչափ հմտորեն գրականություն բերելուն նպաստել է նաև Վարպետի մշտական ուղեկից «պանդխտության ցուպը»: Այդ է պատճառը, որ թե՛ պոեզիայում (հատկապես Ալագյազի մանիներ»-ում), թե՛ արձակում ներկայացված գեղեցիկ պատկերներին միախառնված է նաև «Կարոտը» դեպի հայրենի եզերք, ինչն էլ արարումը հասցնում է կատարելության:

Գրականագետ Ավիկ Իսահակյանը նկատում է, որ դասական արձակի ավանդներով ստեղծված այս ստեղծագործություններում խոհերն ու միտումները սերտորեն կապված են ժողովրդական մտածելակերպի, կենսահայեցողության հետ: Նրանց առավել հատուկ է իրականության ռեալիստական պատկերումը:

Առանձնացնենք Իսահակյանի Շիրակն ու հայրենի բնաշխարհը պատկերող ստեղծագործությունների ևս մի բնորոշ գիծ: Դա, մեր կարծիքով, բնության, այդ բնության արարումի՝ մարդու և նրա աշխարհընկալման համաձույլ արտացոլանքն է, ինչն ակնբախ է թե՛ «Ալագյազի մանիներ»-ում, թե՛ Շիրակի պատկերը ներկայացնող պատմվածքներում: Ավելին, ժամանակագրական առումով «Ալագյազի մանիներ»-ը եղավ այն ամուր և արժանի հողը (հիմքը), որի վրա մի քանի տարի անց վեր խոյացավ Շիրակի հայրենի բնությունը պատկերող՝ Իսահակյանի պատմվածքների շարքը: Այսինքն, այստեղ առավել քան նկատելի է Վարպետի արձակի և համաբնույթ չափածոյի ընդհանրությունը: Բայց եթե «Ալագյազի մանիներ»-ում ներկայացվում է հայրենի քաղաքում ապրող և ուսանող պատանու՝ երանությամբ տոգորված վերհուշը, ապա Շիրակի բնությունը պատկերող պատմվածքներում այդ երանությանը միախառնվում է բանտարկության և աքսորի միջով անցած, հայրենիքից վտարանդի բանաստեղծական հոգու թախծագին կարոտը: Եվ պատահական չէ, որ այս պարագայում մենք Վարպետի ծննդավայրին և մանկությանն առնչվում ենք՝ որպես վերհուշ, իսկ համաբնույթ պատմվածքներում նկատում հուշագրության մոտիվացիան:

Ալբերտ Մուշեղյանն իր «Ավետիք Իսահակյան. վաղ տարիներ» մենագրության մեջ այդ առթիվ նշել է. «Բանաստեղծն անանց սիրով է մտաբերել իր «ոսկեփայլ» մանկությունը, «ոսկե ամպի» պես անցած երիտասարդությունը: Մանկության նվիրական վայրերը և հատկապես Ղազարապատ գյուղը՝ մերձակա Ախուրյանով, խոսել են բանաստեղծի հոգու հետ, և լուսեղեն թախիծով է նա միշտ մտաբերել «…այն

գյուղը, ուր ջրաղաց ունեինք և ընդարձակ հողեր…»»:

Իսկ մենք կշարունակենք. Վարպետի պարագայում մտաբերելն արարելն էր, որովհետև յուրաքանչյուր մտաբերում, ասել է թե՝ վերհուշ, նոր գլուխգործոցի ծնունդն էր ազդարարում:

Շիրակի պատկերը ներկայացնող պատմվածքների և «Ալագյազի մանիներ»- ի համեմատության համատեքստում անդրադառնանք մի շատ կարևոր ընդհանրության ևս: Այն է՝ վերհուշի միջոցով ներկայացվող հրաշագեղ բնապատկերներին, կերպարների հոգեբանական առանցքի բացահայտմանը միաձույլ ներկայացված սիրո անթաքույց դրսևորումը: Այս առումով ուշագրավ է պոեմի բնաբանը.

Բարեւ կուտամ, չես առնի,

Ոտքիդ կոխած հողն եմ, յա՛ր.

Սիրտըս անխիղճ մի՛ ճմլի,

Չե՞ որ միջին դուն ես, յա՛ր:

Սա այն արժանի սկիզբն է, որին հաջորդում են մերժված սիրահարի անհանգստությունը, բանաստեղծի հոգեկերտվածքը կատարելության հասցրած Շիրակի բնության նկարագրությունը, Ալագյազի ու Արագածի անզուգական պատկերները, «Մանթաշի երազ-հովիտ»-ների գովքը, «Ալմաստ առվի» քչքչոցն ու «անուշ նանի»-ի օրորը, «կտրիճ հովիվների», «գառնարած տղերքի» ու «ժրաջան կանանց» առօրյան և այդ ամենի մեջ մեզ պատկերացող գեղեցկուհի Զարոն:

Արևի պես, սիրո՛ւն Զարոս,

Շափաղ տալով դուն կուգաս,

Էն մութ ձորին, իմ խոր սրտին

Շողեր տալով դուն կուգաս:

…….

Արի՛ մոտս, եղնի՛կ աղջիկ,

Արար աշխարհ թո՛ղ, արի՛,

Նազ մի՛ անիր, նազի՛դ մատաղ,

Անսեր սրտեն վա՛զն արի:

Նույն կենսախինդ ու աշխարհին սիրահարված երիտասարդի կերպարը մենք տեսնում ենք նաև «Հովվերգություն» (1923թ.), «Հայրենի հուշեր», (1933թ.), «Հին գյուղը» (1934թ.) պատմվածքներում՝ բնորոշ ինքնակենսագրական պատումով, որը կարելի է կոչել պատմվածքային հուշագրություն: Դրանցից յուրաքանչյուրը Վարպետի կյանքի մի կտորն է, երանությունը, որ ապրեցրել է նրան: Որպես ասվածի ապացույց՝ «Հովվերգության» մեջ կարդում ենք. «Ես պիտի պատմեմ իմ հովվական օրերից մի օր, մի գիշերվա կյանք: Անհուն քաղցրությամբ ապրած մի գիշեր՝ բնավ չկրկնվող: Անխառն ու անթերի մի գեղեցկություն»:

...16 տարեկան Ավոն հովվում էր հոտը քսան-քսանմեկ պատանիների հետ: Ավագը Սումբատն էր, ու բոլորը պարտավորվում էին «հպատակվել» նրան: Նրանցից յուրաքանչյուրը մի անբիծ կերպար է, որ իրենում ընդհանրացնում է գյուղացու հոգեբանությունն ու առօրյան: Այստեղ ամեն ինչ ընդհանուր է, ամեն ինչ բոլորինն է, թե՛ հայթհայթած սնունդը, թե՛ ունեցած ապրումները, թե կորստյան ցավը: Հոտին մոտիկ հավաքված՝ նրանք Իսահակյանի գրչի ուժով ստեղծել էին պատկեր, որն իր մեջ եղած երանությամբ, պարզությամբ ու խորությամբ արտացոլում է իրական երջանկությունը: Աշխարհը նրանց համար «յափունջիների կամ թաղիքների վրա» պառկելն ու հայրենի բնությանը ունկն դնելն է: Պառկելն ու «ապագայի ոսկետառ գիրքը» կարդալն է, իսկ «կյանքը, իրականապես, թվում էր մի կախարդական ճանապարհ, որի դռանը վրնջում էր ոսկեսանձ նժույգը»:

Շիրակի կախարդական բնության գրկում բանաստեղծի երազող հոգին թևածում է անծայրածիր հեռուներում: «Ուզում էի գրկել և համբուրել և՛ ընկերներիս, և՛ բոլոր մարդկանց, և՛ ոչխարներին, և՛ քարերն ու սարերը: Եվ տիեզերքի բոլոր աստղերը համբուրել էի ուզում»:

Ու ծավալվում է զրույցը գեղջուկ պատանիների միջև, որոնցից յուրաքանչյուրի սիրտը բռնկված էր երկու բանով միայն՝ սիրով ու քաջությամբ, որովհետև նրանցից ամեն մեկն ուզում էր առնել իր սրտով սիրածին ու դաչաղ դառնալ, ապրել այնպես, որ անուն թողնի աշխարհում: Եվ խոհերին միահյուսվում է պարզ ու հարազատ հարաբերությունների շղթան: Վերադառնում է Հովակը, որ Սենոյի հետ գնացել էր տղերքի համար ուտելիք հայթայթելու: Իսկ ուտելիք հայթայթում էին «գողությամբ», գյուղի բոստաններից մի բան «թռցնելով»: Դա սովորական բան էր նրանց համար, եթե կուզեք, «ճարպկություն, շնորհք ու պարծանք», որ հովվական կենցաղի անբաժանելի հյուլեն էր դարձել: Այս անգամ ավարը մատղաշ վարունգներն էին, որ տավարջուղներից հանած պանրի, սոխի ու հացի հետ ընթրիք դարձավ: Իսկ հետո... հետո կուշտ կերած և ունեցած մեկ-երկու բաժակով հերթով ծուխ առած թեյը խմած դեռ անհոգ տղերքը զրուցել սկսեցին, Քյոռողլի երգեցին, դաչաղ Քյարիմի Գյոկչեցի Ղազարի ու գող-Եղիկի քաջ արկածներից պատմեցին, շուտով Սումբատի հրահանգով Ղազարը սրինգ էր նվագում, և Ավոյի աչքին սրինգի անուշ փողից լուսնի շողերն էին կաթում, իսկ այդ նվագին միահյուսվում էին աղբյուրի կարկաչը, հովերի շնկշնկոցը, մի յուրօրինակ հարազատությամբ հասնում մեզ, թափանցում մեր էության

անծայրածիր խորքերը ու գտնում այնտեղ խնամքով փայփայած սերն ու կարոտը,,,

«Գյուղական պարզ հովիվների ուրույն փիլիսոփայությունը բխում է փոքրաթիվ ժողովրդի դարավոր կենսափորձից և հանգում է աշխարհի հզորների բիրտ ուժին դիմակայելու, ազատությունն ու անկախությունը սեփական ուժերով նվաճելու և պաշտպանելու գաղափարին», - Արամ Ինճիկյանն է բնութագրում գեղջկական փիլիսոփայությունը կրող հեռսների երանելի պարզությամբ լցված ներաշխարհը:

… Այդպես էլ հովիվ Սողոմոնը այդ հնչյունների ներքո երազել է սկսում իր Ծովինարին: Պատկերավորության յուրահատուկ գույներով Վարպետը, հովվական առօրյային միաձույլ, ներկայացնում է նաև Շիրակում տարածված և այս կամ այն ձևով իր հերոսների կերպարային առանձնահատկությունների հետ ասոցացվող ավանդույթները, լեգենդներն ու զրույցները: «Հովվերգության» մեջ այդպիսի գործածություն է Գալոյենց Մոսեսի մասին զրույցը, որ հիշում է Սումբատը՝ սիրահարված ընկերոջը՝ Սողոմոնին ծաղրելիս:

Մոսեսը սրտով սիրած յար ուներ: Եկավ ժամանակը, մեկնեց ծառայության: Գյուղից հեռանալիս նա հավատարմության խոստում առավ սիրած աղջկանից, իսկ երբ վերադարձավ, վերջինս արդեն ամուսնացած էր: Մոսեսը խելագարվեց վայրկյանների ընթացքում, վերցրեց գերանդին ու սկսեց հնձել կանաչ, հասած արտերը: «Եվ մինչև վերջն էլ նա խելագար մնաց, հաճախակի կրկնելով սիրած աղջկա անունը»:

...Ու կրկին շարունակվում է ստեղծագործության մեջ կարմիր թելի պես ձգվող փողի նվագը, բայց այս անգամ՝ «խաղի ու երգի սիրահարվածի» համար. «Ժամանակով մի տղա է եղել, ջահել, սիրուն մի տղա: Էս երիտասարդ տղեն շատ է սիրում եղել խաղ ու երգ, աշուղ ու սազանդար, սազ ու թառ, շվի ու բլուլ»:

Իր անվան հետքը չթողած երիտասարդի՝ երազկոտ ու կենսասեր խառնվածքի մասին, սակայն, զրույցներ են հյուսվել, դարձել կյանքին ու աշխարհքին սիրահարված ու դրանց ամենանվիրական պահերը երգի վերածել ցանկացող մարդու ապրելակերպ: Այն մարդու, որ ունեցած վերջին գրոշն անգամ չի խնայի՝ հանուն փողի մի հնչյունի վայելքի: Ու նրա՝ կյանքը երաժշտության վերածելու մոլուցքը՝ միահյուսված երգի վերածված հովվերգության հետ, դառնում է Մարդու կենդանության առաջին նախանշանն ու վկան:

Երգը դադարում է, մարում է նվագը, բայց… նրանից ծնված երազը շարունակում է ապրել անբիծ հոգիներում... Ու փայլատակում, այս անգամ արդեն հայրենի հուշերի՝ կարոտախտով տոգորված վերարտադրությամբ, որ կարծես թե շաղախված է խոհական փիլիսոփայությամբ:

Հայրենի Շիրակի դաշտերը, ջրաղացը, Ախուրյանի ափը, բարդիներն ու ուռիները, վարդերի պարտեզները կախարդական գրչով դառնում են բանաստեղծություն. «Նվիրական վայրե՛ր, ուր անցան իմ մանկությունը և պատանեկության առաջին տարիները, ուր խաղացի ընկերներիս հետ, և մենակ թափառեցի երազներով թևավոր, ուր զգացի առաջին սիրո սրբությունը և նրա քաղցր վիշտը... »:

Եվ ահա պատմվածքի առանցքը՝ մի նախադասություն, խորհրդանշական մի քանի բառեր, որոնք էլ իրար են շաղկապում Իսահակյանի մանկությունից մնացած «Հայրենի հուշերի» առանձին դրվագներ՝ բովանդակային առումով դառնալով ստեղծագործության ոսկե շղթան. «Ձիուս սմբակների տակից բարձրանում է ճանապարհի փոշին, և փոշու նման բարձրանում են հուշերս – բարձրանում են ապրած օրերից և զգացած վայրերից: Հոգուս մեջ տեսնում եմ ապրած իմ քաղցր օրերը այս նվիրական հողերի վրա, նվիրական Ախուրյանի ափին»:

Առաջին հուշը, որ պատկանում է ձիավորին, հոր և մոր տեսքով է. լուրջ դեմքով, բարի ու պատկառելի հայրը և սրբուհու արտաքինով անուշ մայրը նորից մանկանալու ցանկություն են արթնացնում նրա մեջ: Տարիների հասունությունից դարդոտված հոգու կարոտը մեզ համար դառնում է հանճարեղ հայտնություն, որովհետև միմիայն այդ հոգու երգն է, որ կարող է վերհուշը ներկայացնել այդչափ պատկերավոր... Հոր առավոտյան Սաղմոս կամ Նարեկ կարդալը, ընթերցումն ավարտելուց հետո ջրաղաց այցելելը, անգամ իր ձեռքով կանաչեղեն քաղելը մոր պատրաստած ճաշի համար գալիս են նորից ու կրկին հաստատելու, որ այստեղ ամեն ինչ շնչում էր մարդկային ջերմությամբ, իսկ հիմա արդեն՝ երանությամբ: Ճաշից հետո էլ, ինչպես ընդունված էր հին հայկական ընտանիքներում, հոր շուրջն էին հավաքվում բարեկամները, բոլորն էլ՝ հետաքրքիր զրուցընկերներ: Եվ «հնից ու նորից», «անցած դեպքերից», «վաղեմի օրերից», «նշանավոր անձերից» պատմող նրանց խոսքում բացահայտվում են կերպարային առանձնահատկությունները՝ զրուցասիրությունը, միամտությունը, լավատեսությունը, այս ամենի հետ, ինչու չէ, նաև ապրած ու արարած մարդու՝ կյանքից ծնված իմաստնությունը (Դիվանա Պահլուլի առակը): Բոլոր հեռու-մոտիկ բարեկամների մեջ, սակայն, Ավոյի հոգու մի անկյունում հատուկ տեղ ուներ աշուղ Գալուստը, ով ամեն շաբաթ իր սազով հյուրընկալվում էր նրանց տանը. «Լավ սազ էր նվագում, անուշ թավ ձայն ուներ՝ սրտից խոսող, շատ հեքիաթներ գիտեր: Պարսկական, թրքական, հայկական անթիվ հեքիաթներ: Իր սիրո վեպն ուներ՝ արևելքի հեքիաթների տարրերով ու գույներով հյուսած»:

Նա իր հետ կարծես նոր, կախարդական մի շունչ էր բերում, նրա նվագն ու գեղեցիկ լեզուն փոխում էր շուրջն ամեն ինչ՝ վերածելով հեքիաթի. փոքրիկ կտրիճին զինում էին ու նժույգ տալիս, իսկ նա սլանում էր՝ անմահական խնձորը բերելու:

Ձիու սմբակների տակից բարձրացած արևակեզ հողերի փոշին կարոտակեզ հոգում արթնացնում է նաև հայրական տան դիմաց եղբոր ընկերների սարքած վրանի հիշողությունը: Եվ հատկանշականն այն է, որ հայրենի հուշերն ընդհանրանում են նրանց բերանով հայրենիքի քաղցրության, հայրենի հողի նվիրականության, խորհրդավորության և անբացատրելի հզորության հավաստումով. «Հայրենիքը հող է, հողը ավանդապահ է, հողն է ստեղծում և կաղապարում ազգությունը, երբ հողը կորսվի, ամեն ինչ կորսված է: Մեր պապերը ծնվել են այդ հողից, և նորից վերածվել են այդ հողին: Մենք ինքներս էլ ծնվել ենք այդ հողից, սնվել ենք այդ հողով, այդ հողով են շինված ու զանգված մեր ոսկորը, մեր արյունը, մեր հոգին: Մեր բյուրավոր

նախահայրերի հողն է մեր մեջ: Հայրենիքը մեր նախնիքն են, մեր ծնողներն են, մենք ենք՝ հող դարձած: Եվ ինչքա՜ն դժբախտ է այն մարդը, որ կմեռնի օտար հողում և բախտ չի ունենա խառնվել իր ծնողների հողին...»:

Սա է հայրենի հողի իսահակյանական ընկալումը, որ ընդհանրական է հայրենի եզերքի ամեն մի անկյունը անձնուրաց սիրով ու նվիրումով զգացող յուրաքանչյուր հայի համար:

Այդ հողի հանդեպ սերն ու կապվածությունը դրսևորվում է նաև «Հին գյուղը» պատմվածքում, որը ևս Իսահակյանի մի հիշողությունն է, գողտրիկ Շիրակի գյուղերից մեկի առօրյան, վարքուբարքը, և դրանց կենտրոնում այդ գյուղի՝ հոգսից կորսվող արժեհամակարգի ու խեղված հոգեբանության տեր մարդուն հայելու ճշտությամբ արտացոլելու Վարպետի կարողությունը:

Աթոյի հարսի մեռնելու մասին բոթը շանթում է գյուղը, և մենք ականատեսն ենք դառնում իսկական քաոսի. «մարդկային ոտքերի շփոթ դոփյուններ», «հրացանի երկու պայթյուն», գիշերվա խավարում լսվող ձայներ. բոլորը շարժվում են դեպի թոնրատուն, որտեղ ծանր ծննդաբերությունից հետո մահանում էր կինը: Եվ այստեղ տիրող մթնոլորտը բացահայտում է գեղջկական խավարամտության և այդ խավարամտությունից ծնված անկարողության ու թշվառության ծանրագույն էությունը:

Ոչ մեկը ոչնչով օգնել չէր կարողանում դժբախտ կնոջը: Իսկ ամուսնու՝ Ավագի՝ մեռնող հարսի ականջներից ուժգին քաշելու և ապա խեղճին ապտակելու արարքը միաբերան արդարացրեցին, թե միգուցե ցավից ուշքի գա, նույնիսկ «երկու անգամ թվանք էր կրակել», դրանց ձայնն էլ չէր օգնել:

Այդ իրարանցման մեջ մահանում է նորածինը, որին դրել էին մի կողմ: «Դրել էին ու մոռացել: Աղջիկ էր եղածն էլ»:

Ու քաղաքից այս հին գյուղում մանկության ընկերոջը հյուրընկալված Ավոյի՝ նրան տված հարցից, թե ինչու՞ գյուղերը չեն միանում, բժիշկ պահում կամ մի փոքր հիվանդանոց, բացահայտվում է մի ամբողջ ժամանակաշրջան ու դրան գերի դարձած գյուղացու ճակատագիրը. «Ի՞նչ ես կորցրել, ի՞նչ ման կուգաս, մեր գյուղացիք աղքատ են և, մանավանդ, չափազանց տգետ, ու՞մ խոսք հասկացնես: Էդ բանը կառավարությունը պիտի գլուխ քաշի, բայց էս մեր ռուսի կառավարությունը սատանի պես ամեն լավ բանի հակառակ է, մենք ուզենանք էլ, նա պիտի խանգարի: Նրա ուզածն ու արածն է - հայությունը փչացնել, խավար ու աղքատ պահել, ցավ ու չոռի մեջ, և կամ ռուս դարձնել, այսինքն՝ ուրիշ տեսակով փչացնել»:

Մահանում է Աթոյի հարսը՝ հենց այդ խավարին ու աղքատությանը զոհ դառնալով: Նրան թաղում են լուսադեմին՝ երեխան գրկին: Պատարագի ու հոգեհացի ժամանակ չկար, որովհետև «գեղը կալուկուտով է զբաղված»:

Իսկ որդու և ամուսնու ողբին միահյուսված Իսահակյանի խոհը, է՛լ ավելի ամբողջական է դարձնում խեղճ գյուղացիների, թշվառ, տգետ, անտեր մարդկանց կորստյան մատնված ճակատագիրը:

Պատկերն ամբողջանում է, երբ նույն օրը՝ հարազատի մահից ու թաղումից մի

քանի ժամ անց, հանդում աշխատողների մեջ նշմարվում են Ավագն ու նրա պատանի որդին՝ ցավն ու արցունքները խեղդած. «Աղքատությունը սևերես է: Ի՜նչ անեն, հաց պետք է, մեռնողը՝ մեռավ, ապրողը պետք է ապրի: Ո՞վ պիտի աշխատի նրանց տեղը: Գեղացու մեռնել-ապրելու օրերն են: Իրանք էլ միջոց չունեն մշակ բռնելու: Չունևոր մարդու օրոցքը կոտրի, լացի համար էլ ժամանակ չունի... Սուգ անելու համար էլ փորդ կուշտ պիտի լինի»:

Ահա աղքատության կատարելագույն բնորոշումը, չքավոր մարդու՝ արցունքով շաղախված հոգեբանությունը, միևնույն ժամանակ՝ երկրի երեսին գոյությունը քարշ տալու համար մղվող պայքարը, որ կյանքի մի շրջափուլում թեկուզ այլ դրսևորմամբ այնքան մոտիկից զգացել է նաև Իսահակյանը:

*ОБРАЗОТВОРЕНЬЕ ШИРАКА В РАССКАЗАХ АВЕТИКА ИСААКЯНА-**ТАТЕВИК ПОГОСЯН**-Родная природа Ширака, его народ с простым и стойким характером, являлись уникальной системой ценностей для Аветика Исаакяна. И именно эта система ценностей нашла художественное отражение в поэзии Мастера, создав уникальный образ Ширака в армянской литературе.*

В рассказах о Шираке Исаакяна, находящегося вдали от Родины, переплетаются большая любовь писателя к родному краю и грустная ностальгическая песня. И чем больше литературные критики будут изучать годы жизни и творчества писателя вдали от Родины, тем больше в образе Ширака будет оставаться актуальным исааковский мотив.

***Ключевые слова**: Тоска, воспоминание, детство, юность, Алагяз, природа Ширака, родина, открытый и стойкий характер, непокорные и “кочующие” сельчане, исключительная непосредственность, “посох странника”, творение природы, исторические мемуары, поэтическое настроение, показатель бедности, психология бедных.*

*THE DEPICTION OF SHIRAK IN AVETIK ISAHAKYAN'S STORIES-**TATEVIK POGHOSYAN**-Shirak's native nature and the simple, straightforward people of that world were a unique value system for Avetik Isahakyan.*

And this very value system has reflected on the Master's poetry and prose, creating a unique image of Shirak in Armenian literature.

The stories describing Shirak in Isahakyan's works are peculiar; they tell about the writer, a refugee cane in hand, and the song about his endless love for Motherland intermingled with homesickness.

And the more the literary criticism examines the Master's years of living and creating far from Motherland, the more Isahakyan’s motive for creating the image of Shirak will remain relevant.

***Key words**: Nostalgia, recollection, childhood, youth, Shirak’s nature, Alagyaz, native land, simple and straightforward nature, rebellious villagers living ‘a solitary life’, exceptional simplemindedness, a refugee cane, creation of nature, narrative memoir, poetic mentality , characterization of poverty, psychology of the poor.*

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԿԱՏՅԱՆ՝ ԻԲՐԵՎ ՄԱԿԳԱՖՖԻՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ՀԱՄԱՆՈՒՆ ՊԱՏՄՎԱԾՔՈՒՄ

Հոդվածում քննության է առնվում Համբարձում Համբարձումյանի «Կատյան» պատմվածք համանուն հերոսուհու՝ որպես հանգույց-խորհրդանիշների կիրառությունը: Փորձ է արվում շրջանառության մեջ դնել հանգույց-խորհրդանիշի հասկացությունը հայ գրականագիտության մեջ՝ մակգաֆֆին տերմինով: Տրվում է տերմինի բացատրությունը, փորձ է կատարվում սահմանել դրա էությունը: Որոշակի անդրադարձ է կատարվում խորհրդանիշի բացատրությանը, հանգույցների կիրառություններին, և հակադրության միջոցով բացատրվում են դրանց՝ խորհրդանիշ-հանգույցի հետ ունեցած տարբերությունները:

Բանալի բառեր՝ *հանգույց, խորհրդանիշ, սիմվոլ, տերմին, հակադրություն, տարբերություններ, նկարագրություններ, արձակ, Համբարձում Համբարձումյան, Կատյա, մակգաֆֆին, պատկեր, հասկացություն, նարատոլոգիա, պատում, պատմվածք, կինեմատոգրաֆիա:*

Նախ և առաջ անհրաժեշտություն կա նշելու և սահմանելու մակգաֆֆին տերմինը, անդրադառնալու դրան հարող, սակայն մեզ արդեն հայտնի այլ տերմիններին, և, ի վերջո, Համբարձում Համբարձումյանի պատմվածքի քննությամբ իրացնել այդ տերմինը:

Մակգաֆֆին[1] տերմինը առաջին անգամ օգտագործվում է կինեմատոգրաֆիայում, մասնավորապես կինոսցենարիստ Անգուս Մակֆայլի գործերում, սակայն մեծացնում է իր իրացման սահմանները՝ դրսևորվելով նաև նարատոլոգիայում: Կինեմատոգրաֆիայում մակգաֆֆինը օգտագործվում է բացակայություն, բացակա-ներկայություն երևույթների բնութագրման համար՝ աբսուրդի պոստմոդեռնիստական ընկալման և դրսևորման ենթատեքստով: Ավելի պարզ, մակգաֆֆինը մի իր է, առարկա, անձ, որի գոյությունը կարևոր չէ, կարևորը այն է, որ բոլորը հետաքրքրված են դրանով: Ինչպես նշեցինք, մակգաֆֆինը գործածվում է նաև նարատոլոգիայում, սակայն չունի իր հայերեն համարժեքը: Այն բացատրելու համար

[1] Տե՛ս
https://ru.wikipedia.org/wiki/%D0%9C%D0%B0%D0%BA%D0%B3%D0%B0%D1%84%D1%84%D0%B8%D0%BD
https://en.wikipedia.org/wiki/MacGuffin
https://www.writingclasses.com/toolbox/articles/what-is-a-mcguffin
https://posmotre.li/%D0%9C%D0%B0%D0%BA%D0%B3%D0%B0%D1%84%D1%84%D0%B8%D0%BD

նախ պետք է հասկանալ, թե ինչ են **հանգույցը** և **խորհրդանիշը**: Հանգույցը գրական երկի, սյուժեի բաղադրամասերից մեկն է: Հանգույցը երկի գլխավոր վիճակների, իրադարձությունների, հարաբերությունների այն շղթան է, որից սկիզբ է առնում գործողությունը[2]:

Խորհրդանիշը (սիմվոլ) պայմանականորեն որևէ գաղափար է՝ ապրում և այն ներկայացնող գեղավետական պատկեր կամ կերպար»[3]:

Մակգաֆֆինը, ըստ էության, այս երկուսի համակցումն ու զուգադրումն է, հանգույց-խորհրդանիշը, որի շուրջ պտտվում են գործողությունները, դեպի որը ձգտում են հերոսները: Սակայն ի տարբերություն հանգույցի՝ այն ունի որոշակի պայմանական գաղափար:

Այս ամենի մասին վերը նշված աշխատանքում արդեն խոսվել էին և առավել մանրամասն, օրինակների միջոցով սահմանվել այս երեք տերմիններն ու դրանց տարբերությունները:

Համբարձում Համբարձումյանի արձակի տարբերակիչ հատկանիշներին և, մասնավորապես, այս պատմվածքին անդրադարձել է գրականագետ Հայկ Համբարձումյանը՝ տալով նրա արձակի հստակ բնորոշումները, որոշ վերլուծություններ կատարելով նրա պատկերակերտման հմտությունների մասին[4]: Համբարձում Համբարձումյանի արձակը, ըստ էության, կարելի է բնորոշել հետևյալ կերպ. ճշմարիտ պատմություններ, առանց ոճական խաղերի և հնարանքների, ստույգ պատում, ուղիղ, շատ ժամանակ նաև խոսակցական լեզվով գրված պատմություններ՝ առանց ներտեքստային փորձարկումների:

Բայց այս ամենը՝ միայն առաջին հայացքից, քանզի ուսումնասիրության արդյունքում տեսնում ենք, որ շատ արտատեքստային երևույթներ կան, որոնք կարող ենք բացել, և որին էլ միտված է այս ուսումնասիրությունը: Նախ փորձենք հասկանալ՝ ինչպես է սկսվում «Կատյան»[5] պատմվածքը, և երբ է մեր քննության առարկան՝ հերոսուհին, հայտնվում ու ինտեգրվում անսեթևեթ սյուժետային այս պատումում.

«Թաղի ջահելները փողոցում քարերով դարպասներ էին դրել ու ֆուտբոլ էին խաղում»:

Այս նկարագրությանը հաջորդում են փողոցային անցուդարձը, այնտեղ հայտնված մարդկանց ինչով զբաղվելը: Համաձայնեք՝ առօրեական մի պատկեր, որը անմիջապես խաթարվում է, երբ հայտնվում է պատմվածքի հերոսուհին՝ Կատյան. «Մեքենայի դուռը բացվեց, և նրա միջից դուրս եկավ կիսամերկ, լայն, համարյա ծածկոցի չափերի հասնող սրբիչով փաթաթված Կատյան, և բոլորի՝ Վալոդի, բլոտողների, ֆուտբոլ խաղացող պատանիների, բուրդ չիփխող Գյուլնարի, բացակա հարևանուհիներից բամբասող կանանց աչքի առաջ գրկեց Գեղամին ու համբույրներով

[2] Հայկական սովետական հանրագիտարանից (հ. 6, էջ 217):

[3] Զրբաշյան Է.Մ., Մախչանյան Հ.Մ., Գրականագիտական բառարան, Երևան, «Լույս», 1980, էջ 352:

[4] Համբարձումյան Հ., Զուգահեռ ընթերցումներ, Երևան, «Գրական էտալոն», 2012, էջ 191-194:

[5] Համբարձումյան Հ., Կորեական դելիկատես, Երևան, «Անտարես», 2018, էջ 32-46:

ծածկեց երեսը»:

Ահա և Կատյայի կերպարի ամբողջ նկարագրությունը՝ «… կիսամերկ, լայն, համարյա ծածկոցի չափերի հասնող սրբիչով փաթաթված», որը, համաձայնեք, այնքան էլ լայն պատկերացում կազել չի թողնում կերպարի մասին, սակայն անհրաժշտ է հիշել, որ կերպարին նկարագրելու համար կա երկու ձև. նախ հեղինակային խոսքը, ապա նաև պատումում գործող մնացած կերպարների խոսքը, պահվածքը, արձագանքը կերպարի վերաբերյալ: Հեղինակային նկարագրության այս սակավությունը լրացվում է հերոսների արձագանքով, որին ականատես կլինենք պատմվածքում:

Այս գեղարվեստական նկարագրության՝ իբրև հնարքի իրացմանը կարող ենք ականատես լինել նաև, դիցուք, Հոմերոսի «Իլիականում», որտեղ հեղինակը չի նկարագրում Հեղինեին՝ իբրև գեղեցիկ կնոջ, չի խոսում նրա արտաքին գեղեցկության մասին, սակայն մենք նրան համարում ենք գեղեցկուհի. հարցը, թե ինչու՞, ունի ճշգրիտ պատասխան. տրոյացիների արձագանքը մեզ հուշում է դրա մասին, երբ տեսնում են նրան:

Եվ այս օրինակով փորձենք հասկանալ, կա՞ արդյոք նմանապիսի արձագանք այս պատմվածքի հերոսների կողմից. անշուշտ:

«Բլոտ խաղացող Էդոն թերզը մոռացավ ասել ու տակ տվեց, Գոնչի խմած գարեջուրը կոկորդին մնաց, ու նա սկսեց խեղդվելով հազալ: Գեղամի քեռու տղան՝ Կարենը, գնդակը դարպասի մոտ կանգնեցրեց ու գոլ խփելու հարմար պահը ձեռքից բաց թողեց: Հակառակորդ թիմի խոշորամարմին, բարձրահասակ Արայիկը, որն արդեն իններորդ էր փոխադրվել, բայց դեռ բեղերն էլ չէին աճել, գնդակը Կարենի առջևից տարավ, արագ անցավ ֆուտբոլիստների միջով, ձեռները ջեբը դրած դարպասապահի ոտքերի կողքով գնդակը դարպասը գլորեց ու գո՛լ գոռաց»

Հետևաբար, հասկանում ենք, որ Կատյայի հայտնվելն այդ միջավայրում արդեն իսկ փոփոխություն մցրեց այս հերոսների կյանքում, բոլորի ուշադրությունը մեկ րոպեով կտրվեց իրենց առօրեական գործերից, ու շատերի մոտ հետագայում առաջացրեց հիացմունք, այլ հարց է, թե այդ հիացմունքն ինչպես դրսևորվեց. «–Աուուուուու՛, Մաշինկա՛, – դունչը վերև տնկելով՝ քաղցած գայլի պես ոռնաց Գոնչն ու ասաց, – Մաշան վատը չի, ափսոս մերը չի»:

Պատմվածքի այս սկզբնական հատվածն ասումնասիրելիս ականատես եղանք, կարելի է ասել, դասական հանգույցի, որը խոստանում է հետաքրքիր սյուժետային զարգացումներ, սակայն սյուժետային այդ զարգացումների ընթացքում հանգույց Կատյան ստանում է խորհրդանշական իմաստ, որն էլ թույլ է տալիս պնդել, որ սա հենց մակգաֆֆին է:

Կատյայի՝ իբր խորհրդանիշի առաջին իրացմանն ականտես ենք լինում այն դրվագում, երբ հերոսներից Վալոդը, ոչ ուղղակի, այլ հեղինակային խոսքի միջոցով, պատմում է բակում հայտնված մնացյալ հերոսներին, թե ինչպես է գտել Կատյային և բերել Գեղամի մոտ. «Առավոտյան Վալոդը արթնացել, տեսել էր իր մեքենայի ետևի

նստատեղին մի ջրահարս, մի ճերմակամորթ մարալ է պառկած: Կարծել էր՝ սպիտակ տենդի մեջ է կամ երազ է տեսնում, բայց երբ սթափվելու և ստուգելու համար ձեռքն ազդանշանին էր դրել, ու Կատյան արթնանալով նրան բարևել էր, նոր միայն հավատացել էր աչքերին»:

Այստեղ կարող ենք համոզվել, որ նախ Կատյան չտեսնված գեղեցկուհի է, քանզի Վալոդի անուղղակի խոսքում համեմատվում է ջրահարսի հետ, այսինքն թե, ինչ-որ առումով նույնանում է ջրահարսի հետ, և երկրորդ, որ Կատյայի կերպարը վերածվում է գեղեցկության խորհրդանիշի, սիմվոլի:

Հետագայում Կատյան այլ խորհրդանշական իմաստներ է ձեռք բերում պատմվածքի այլ հերոսների աչքերում: Օրինակ՝ Կարենի համար, ով շարունակաբար հետևում էր Կատյային, Գեղամի և Կատյայի կենակցումներին, Կատյան վերածվում է երազանքի. «Մեծ լուսատախտակին խոշոր տառերով իր անունն է գրվում: Գժի պես վազում է, ու բրազիլացի խաղընկերները չեն կարողանում ետևից հասնել: Հանդի-սատեսների դեմքերը լղոզված են, և բոլորն իրար նման են: Միայն Կատյային է պարզ-որոշ տեսնում»:

Սա պատմվածքի այն հատվածն է, երբ Կարենը երազում է իր ֆուտբոլային հրաշալի խաղի մասին, և թե ինչ է լինելու, երբ ինքը գոլ խփի: Տեսարանների այսպիսի նկարագրությունները շարունակաբար գալիս են մեզ հուշելու, թե ինչի է վերածվել մնացած հերոսների համար Կատյան: Իսկ այս երևույթը մեզ համար բավարար փաստ է պնդելու, որ Կատյան հենց մակգաֆֆին է, որովհետև բոլորը ձգտում են հասնել այդ անհասկանալի, այսպես ասենք, երևույթին, բոլորը ցանկանում են տիրանալ և որևէ կերպ հարաբերվել նրա հետ: Նաև անհրաժեշտ է նշել, որ մակգաֆֆինը կարող է նաև լինել ոչ ցանկալի երևույթ այն հերոսների համար, որոնք ինչ-որ առումով հակադրված են իրար. «Կատյայի գալուց հետո թաղի կյանքը փոխվել էր: Մինչ լուսաբաց Գեղամի տնից քեֆ–ուրախության ձայներ էին գալիս, տղամարդիկ տուն չէին գնում, կանայք սպառնում էին բաժանվել, ու մի երկուսն էլ արդեն հայրենադարձ էին եղել»: Եվ այսպես, Կատյայի հայտնվելն այդ միջավայրում որոշ հերոսների համար ուրախության, որոշ հերոսների տխրության և կամ կատաղության պատճառ էր դարձել, շատ հերոսների պարագայում միջանձնային հարաբերությունների լարման էր տարել և ընդհուպ՝ վեճերի առիթ դարձել: Այստեղ արդեն ականատես ենք լինում մի երևույթի, ըստ որի միևնույն առարկան/երևույթը տարբեր հերոսների մոտ տարբեր կերպ է ընկալվում, և մենք էլ գործ ենք ունենում արդեն մի առարկայի/երևույթի հետ, սակայն միևնույն ժամանակ երկու տարբեր մակգաֆֆինների, այսինքն թե, մակգաֆֆինն ու առարկան/երևույթը չեն նույնանում: Այսպես, արական սեռի հերոսների համար Կատյան իբրև երազանք, գեղեցկություն է ընկալվում, իսկ իգական սեռի հերոսների համար՝ չարիք: Այս է պատճառը, որ ականատես ենք լինում վրեժխնդրության տեսարանի. «Ամբողջ թաղը ծխի մեջ կորել էր, Վլեի պլանի պլանտացիան էր վառվում: Վլեն տանը չէր, և նրա մայրն ու կինը պլանի քոլերը արմատից հանել, մի քանի ժամ արևի տակ թողել էին ու չորացած պլանը վառում էին»:

Ըստ էության, կարող ենք նաև սահմանել, որ մակգաֆֆինի առկայությունը փոխում է ամբողջ ստեղծագործության տրամաբանությունը, իսկ մակգաֆֆինի՝ սյուժետային զարգացման որևէ հատվածում անհետանալն ազդարարում է, որ ստեղծագործությունը մոտենում է ավարտին, կամ էլմակգաֆֆինը վերստին կհայտնվի որևէ տեղից. «Կատյային պլանի հետ փոխել ու հետ էին եկել»: Վերը մեջբերված հատվածում պատմվածքի հերոսները Կատյային իբրև առք ու վաճառքի առարկա են դիտարկել և արդեն կարծես թե ազատվել են նրանից, սակայն պատմվածքը շարունակվում է, ինչն էլ նշանակում է, որ մակգաֆֆին Կատյան դեռ կհայտնվի. «Մի շաբաթ անց Կատյան վերադարձավ: Սեքսի ժամանակ սրտից թույլ բառիգը մահացել էր, և Կատյան նորից Շենգավիթ էր եկել»: Ահա մակգաֆֆին Կատյայի՝ գործողությունների էպիկենտրոն վերադառնալը մեզ հուշում է, որ գործողությունները կամաց-կամաց մարում են, և պետք է տեսնենք մակգաֆֆինի վերջնական իրացում, պետք է ի վերջո ընդգծվի, թե Կատյան ավելի շատ ո՞ր խորհուրդը պիտի կրի իր մեջ՝ իբրև մակգաֆֆին. եթե ընդհանրացնելով ասենք՝ գեղեցկությա՞ն, ատելությա՞ն, թե՞ երազանքի:

Կատյա հերոսի վերջին գործողությունը լինում է նրա ընտրությունը՝ վերջին գիշերը ում հետ անցկացնելու վերաբերյալ: Նա ընտրում է Կարենին, այն հերոսին, ով բոլորից շատ էր ձգտում, բոլորից շատ էր ցանկանում որևէ կերպ հարաբերվել իր հետ: Այսպիսով, գրողը իրացնում է այս մակգաֆֆինը հենց երազանքի խորհրդով, որն, ինչ-որ առումով տրամաբանական է:

Պատմվածքում նկարագրված այդ վերջին գիշերվանից հետո հերոսները Կատյային ուղարկում են տուն՝ Ռուսաստան, որից հետո այդ բակը կարծես վերագտնում է իր առօրեականությունը՝ չկորցնելով Կատյայի մասին իր հիշողությունը, և հենց այդ հիշողության նկարագրությամբ էլ ավարտվում է պատմվածքը. «Բալենու տակ նստած խմում էին և բալենուց Կատյայի հոտն էին առնում: Լիտրերով խմում էին ու չէին հարբում, և որքան խմում, այնքան ավելի սուր էին զգում Կատյայի հոտը: Ամեն ինչ նրան էր հիշեցնում՝ տունը, այգին, պատի մոտ ընկած Կատյայի լողանալու տաշտը, որով նա նաև ջրում էր բալենին… Սրբիչը Կատյան տարել էր իր հետ»:

Այսպիսով, ուսումնասիրելով Համբարձում Համբարձումյանի «Կատյան», ևս մեկ անգամ կարող ենք վստահաբար փաստել, որ ժամանակակից գրականագիտության մեջ խորհրդանիշի և հանգույցի միաձուլումից առաջ է գալիս նոր տերմին՝ այս երկուսի զուգակցումը, որն անվանվում է մակգաֆֆին: Ի վերջո, իբրև այս վերլուծության ամփոփում, անհրաժեշտ է բացատրել, թե ինչու է Կատյայի կերպարն այստեղ մակգաֆֆին, այսինքն թե, միաժամանակ թե՛ հանգույց, թե՛ խորհրդանիշ:

Մեջբերված հատվածների միջոցով արդեն տեսանք և համոզվեցինք, թե ինչպես և ինչ շրջադարձում մտցրեց Կատյայի հայտնվելը սույն պատմվածքի սյուժեում, հասարակ բակի առօրեական նկարագրությունն ինչպես հանկարծ փոխվեց, ինչպես խաթարվեցին բոլոր հերոսների հարաբերությունները. այս ամենը ներտեքստային ընթերցանության ժամանակ մեզ պարզ է դառնում: Հստակ կարողանում ենք

զգալ, որ այս պատմվածքի կարևորագույն կետը, երբ տեղի է ունենում բախումը, հենց Կատյայի հայտնվելն է այդ հերոսների միջավայրում: Սա հանգույցի իդեալական օրինակ կարող է թվալ, սակայն գործողությունների արդյունքում սկսում ենք հասկանալ, որ դասական հանգույցի հասկացության և այս պատմվածքի հանգույցի միջև էական տարբերություններ կան: Կատյան գնալով վերածվում է խորհրդանիշի՝ գեղեցկության, երազանքի, մաքրության, հետագայում նաև չարիքի (կանանց համար), կեղտոտության, կենսական ապահովության միջոցի (երբ իբրև ապրանք փոխանակում են) և այլն:

Ի վերջո, ունենալով դասական պատմվածքի բոլոր փուլերը՝ բախում, կուլմինացիա, ավարտ, պատմվածքը փակում է բացված հանգույցի կապերը՝ մակ-գաֆֆինը գործողություններից հեռացնելով:

Կատյան, ըստ էության, այդպես էլ պատմվածքի հերոս չի դառնում, նա այդպես էլ որևէ գործողությամբ աչքի չի ընկնում, որևէ խոսք, որպես այդպիսին, չի ասում: Կատյան ուղղակի ապահովում է մնացած բոլոր հերոսների գործողությունները և խոսքը: Հենց դա է մակգաֆֆինի իրացումը՝ որևէ կերպ որևէ գործողությամբ աչքի չընկնել, գործողությունների շղթան հավաքել իր շուրջը, պայմանավորել այդ իսկ գործողություններն իրենով և կրել խորհրդանշական իմաստ:

КАТЯ КАК МАКГАФФИН В ОДНОИМЕННОМ РАССКАЗЕ АМБАРЦУМА АМБАРЦУМЯНА- ***ОВАНЕС ОВАКИМЯН-*** *В статье рассматривается использование героини в качестве макгаффина в рассказе Амбарцума Амбарцумяна. Сделана попытка вводить концепцию макгаффина в Армянскую литературную теорию. Объясняется термин макгаффин, определяется его сущность. В статье также обсуждаются различия между символом и макгаффином.*

Ключевые слова : *Макгаффин, символ, Амбарцум Амбарцумян, образ, термин, нарратология, фабула, рассказ, кинематография, проза, картина, узел.*

*KATYA AS MACGUFFIN IN HAMBARDZUM HAMBARDZUMYAN'S NAMESAKE STORY-****HOVHANNES HOVAKIMYAN-****The article discusses the use of the heroine as a MacGuffin in the story of Hambardzum Hambardzumyan"Katya". An attempt is made to introduce theconcept of MacGuffininto the Armenian literary theory. The term MacGuffin is explained, its essence is defined. The article also discusses the differences between a symbol and MacGuffin.*

Key words: *MacGuffin, symbol, term, contrast, differences, descriptions, prose, Hambardzum Hambardzumyan, Katya, image, concept, narratology, narration, story, cinematography.*

ԱՆԻ ՇԻՐԻՆՅԱՆ

ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ. ԲՆԱՇԽԱՐՀԻԿ ՀԵՐՈՍՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱԿՐԹՎԱԾ ԱՇԽԱՐՀԻ ԲԱԽՈՒՄՆ ՈՒ ՀԱՆԳՈՒՅԱԼՈՒԾՈՒՄԸ

Հոդվածում անդրադարձ է կատարվում Հրանտ Մաթևոսյանի ստեղծագործությանը՝ բարոյական իր ուրույն աշխարհով, Ծմակուտով, ուր ապրող մարդը ևս օժտված է իրեն ծնող միջավայրի վեհությամբ ու խորությամբ:

Հանրային զարգացման ընթացքում փոխվում են մարդու ճանաչողական հնարավորությունները, լայնանում են անհատի շուրջ գծված բարոյականության և վարվեցողության սահմանային եզրագծերը: Աշխարհը բեկվում է ծմակուտցիների հոգեբանության և ընկալումների մեջ: Մաթևոսյանը շոշափում է մարդու և հասարակության ամենակենսական հարցերը: Քաղաքակրթության վազքի թափից շփոթված՝ մարդը հեռանում է արմատներից, իսկ հետդարձի ճամփաներն աննշմար են: Մաթևոսյանը մոռացվող արահետների մշտարթուն պահապանն է, որ օգնում է մեզ՝ գտնելու տունդարձի ճանապարհը:

Բանալի բառեր՝ *բնաշխարհիկ հերոսներ, մարդ, բնություն, ազգային հոգեբանություն, հիշողություն, կարոտ, քաղաքակրթված աշխարհ, բարոյական անկում, հեռացող արժեքներ, ազգային արժանապատվություն, բանականություն, սուրբ տարածք, սերունդների կենսագրություն:*

Հրանտ Մաթևոսյանը գրականություն մտավ հարուստ կենսափորձով, կյանքի զարմանալի ճանաչողությամբ: Նրա առաջին խոսքը գյուղի, այնտեղ ապրող մարդու գոյապայքարի, ազգային ու սոցիալական տագնապների մասին էր: Նա հայրենի հողը համարում է ոչ միայն կեցության, այլև բարոյական մնայուն արժեքների, սերնդակցական հաստատուն կապերի հիմք ու հենարան: «...Մարդկանց հիշողությունը եթե հանկարծ խաթարվեր, ազգականներիս ու երկրացիներիս այն օրերի վարքից կարող էի նորից ժողովել մարդկային բարոյականության օրենսգիրքը»[1],- հավատացնում է գրողը:

Անզարդ գույներով ներկայացնելով գյուղացու առօրյան՝ գրողը բացահայտում է իր հերոսների իսկական արժեքը: Մի կողմից մարդիկ տառապում էին գյուղական կյանքի դժվարություններից՝ ձգտելով պահպանել իրենց բարոյական արժեքները, մյուս կողմից հեշտ կյանքի ձգտումը աղավաղում էր մարդկանց հոգիները՝ դարձնելով նրանց սպառողներ, ովքեր մտածում էին միայն վայելելու, բայց ոչ ստեղծելու մասին:

[1] Մաթևոսյան Հ. Ի., Երկեր, հ. 1, «Սովետական գրող», 1985, էջ 5:

Այս երկու իրողությունները բախվում էին, ինչը և արտացոլված է Մաթևոսյանի գլխավոր երկերում: Հիմնական խնդիրն այդ բախման մեջ վերաբերմունքն է աշխատանքի նկատմամբ և բարոյական արժեքների պահպանումը: Աշխատելն ու չարչարվելն ամենամեծ բարոյականությունն է ազնիվ մարդու համար, խիղճը՝ այդ բարոյականության առանցքը:

Մարդը, նրա կյանքն ու տառապանքները՝ ահա Մաթևոսյանի վիպակների ու պատմվածքների առանցքը: Ասպարեզ էր մտնում մեծ մտահոգությունների տեր, անուրանալի ձիրքով օժտված մի նոր գրող: «Մաքրագույն ու մաքրակրոն մարդ էր, որ դիմացինից պահանջում էր նույն մաքրությունն ու վստահությունը»[2],-նշում է Դ. Գասպարյանը:

Մաթևոսյանի հերոսը հասարակ մարդն է, որի հետ հանդիպելու համար պետք է բարձրանալ լեռնային Ծմակուտ գյուղը: Իսկ դրա համար պետք է իջնել նեղ կիրճում կամրջված կայարանում, որ հենասյուներով կախվել է գետի վրա: Մարդկանց կյանքն այստեղ դժվար է, և պետք է մեծ ջանքեր գործադրել՝ տուն ու ընտանեկան օջախ ստեղծելու համար: Գրողը համոզված է, որ ատելությունն ու դաժանությունը երբեք հաղթանակ չեն ունենալու, և բարոյականության հետ հարաբերվելու մի եզր միշտ էլ կա:

Ովքե՞ր էին Մաթևոսյանի բնաշխարհիկ հերոսները: Նա ուզում էր ճշմարիտ վերծանողը լինել նրանց ճակատագրի, ովքեր անհատականություն են, բայց կորուստների ու նվաճումների ամփոփագիր են մտնում որպես անդեմ-անանուն-անցավ սոսկական միավոր, մեծ ողբերգություններում միայն համր ֆոն են և վատ գրողների անզոր գործերում ամբոխ են կնքվում:

Մաթևոսյանի ստեղծագործությունները ոչ թե ներկայացնում են 20-րդ դարի անխռով, բնապաշտական հովվերգությունը, այլ՝ այդ հովվերգության փլուզումը:

Հիրավի, աշխատանքով ու տառապանքով է լցված «բեռնաձիերի» առօրյան. նրանց կյանքի արևը միայն մի ակնթարթ է երևացել՝ ձգելով լույսի ու երջանկության մի շող, և վերստին անհետացել՝ թողնելով այդ լույսի ու երջանկության շողի հիշողությունը... Նրանց հակադիր տեսնում ենք որդիներին, ովքեր իրենց կյանքի միակ նպատակը համարում են վայելքները: Իրենց ծնած ու սնած հայրը, ոչինչ, հեռվից ուղարկած մի բարևով էլ կապրի, իսկ երբ գառ ու ոչխար է պետք լինում, աղվես Գիքորի որդին՝ Հենրիկը, հորն է հիշում... վերստին մոռանալու պայմանով:

Կարևոր է դառնում ելումուտը՝ գյուղ-աշխարհ-գյուղ երթուղով: Որոշակիանում ու հստակվում են քաղաքակրթության ներկայության առանձնահատկությունները, գուշակվում հետևանքները: Ճանապարհորդների թվում են Գիքորն ու Ալխոն, Արայիկը, դատարան գնացող հովիվները:

Ղազախ ցորենի գնացած Գիքորը տեսնում է փոխակերպված «հեշտ կյանքը». մարդիկ փոխված են, ավելի շատ՝ պարապ, աշխատանքը քչացել է, հացը, չնայած սրան, շատացել: Անհասկանալի է և վճռականորեն անընդունելի: Բայց առաջին

[2] Գասպարյան Դ. Վ, Երկնային շուշան, Եր., «Զանգակ -97», 2004, էջ 299:

ճամփորդը Զավենն է, նրանն են առաջին միանշանակ և անբեկանելի եզրահանգումները: «Օթելլոյի ցերեկային ներկայացումից» ավելի քաղաքում նրա համար տպավորիչը Ծառուկյանն է, նրանով ներկայացող «նորը». «Ծառուկյանի հինգ թիզ հողը քիչ առ քիչ, նարդու տախտակի չափերով, տրված էր կոտեմիկին, սամիթիկին, թարխունիկին... Այդ հողակտորին նայելով՝ մարդ մտածում էր, որ սանտիմետրերը դառնում են հեկտար»[3]:

Բնության և մարդու խորին մերձավորությունն անհետացել է, նոր մարդու նպատակը տիրապետելն է: Քաղաքակրթված աշխարհի միջամտությունն իր հաշիվն է պարտադրում մարդկային բարոյական հարաբերություններին: Ավարտուն բնությանը հաջորդում է բնության ավարտը: Բնության իսկությունը փոխարինվում է հաշվով, ինչպես մարդը՝ կենսագրությամբ: «Հաշվապահ եք, հաշվապահ... Ձեզ հետ գլուխ դնել չի լինի, մեդալ եք հավաքում, պատվոգիր եք հավաքում...» և առավել անհասկանալին՝ «կենսագրություն եք հավաքում ու դառնում տեր»[4]: Կյանքի նախագիծը իշխանության նախագիծ է:

Հարցազրույցներից մեկում (1994թ.) Մաթևոսյանը նշում է, որ իր աչքի առաջ այդ ամբողջը փլուզվեց իր գուրգուրած կերպարների վրա, որոնցից մեկն իր հայրն էր, իր խեղճ գյուղը, և դրա համար իսկապես քիչ է մնում ուղղակի ողբասաց դառնալ ավանդական հայ գյուղի վրա: Որը, եթե ճիշտ ասենք, շուտ էր մեռել:

Մաթևոսյանը նկարագրում է այն անապական միջավայրը, երբ դեռ մարդու և բնության մեջ գոյություն ուներ անբացատրելի ներքին կապ, երբ մարդկային հարաբերությունները չափորոշվում էին քաղաքակիրթ աշխարհին ոչ հարիր չափանիշերով: Մաթևոսյանը գրականություն բերեց չաղավաղված մարդուն՝ չաղավաղված բնության մեջ:

Արվեստագետի համար անքակտելի է արմատների հետ ունեցած կապը (ահնիձորյան բարձրաբերձ սարեր, սաղարթախիտ անտառներ, անսպասելի անձրևից հետո անսպասելի բացված արև), կապվածությունն այն մարդկանց հետ, որոնք նախատիպն էին արձակագրի հետաքրքիր հերոսների, որոնցից յուրաքանչյուրը մի անհատ է իր ներքնաշխարհով. «Շատերն իմ հիշողության գյուղից են գալիս: Ինչ որ գրել եմ՝ իմ աշխարհի, իմ ճանաչած մարդկանց մասին է: Ինձ համար յուրաքանչյուր իրական մարդ ավելի թանկ է, քան բոլոր տեսակի վերացարկումները: Յուրաքանչյուր իրական մարդ դարերի աշխատանք է, հազար տարվա գոյացություն, ծմակուտցի ցանկացած մարդու մեջ շեքսպիրյան ողբերգություն կա, շիլլերյան ճախրանք, տոլստոյական մաքրություն, էլ ինչու՞ պիտի մարդ հորինեմ, կյանք հորինեմ: Ես իմ երկրի լուսանկարիչն եմ, վավերագրողն եմ, և ինձ լիուլի բավարարում է եղած կյանքը»[5],-ասում է գրողը Անժելա Հովհաննիսյանի հարցազրույցում:

[3] Մաթևոսյան Հ. Ի., Երկեր, հ.1, Ե., «Սովետական գրող», 1985, էջ 128:
[4] Նույն տեղը, էջ 140-141:
[5] Մաթևոսյան Ի. Հ., «Ի սկզբանե սքանչելի է մարդը», «Սովետական Հայաստան», 22.11.1984:

Մաթևոսյանը լավ է ճանաչում իր հերոսներին, այնքան խորն է ընկալում նրանց մտածողությունը, աշխարհայացքը, որ, իր խոսքով ասած, ոչ թե պատմում է նրանց մասին, այլ խոսում է նրանց ներսից. «Յուրաքանչյուր անձ, ամեն մի իր սեփական բովանդակությունն ունի, և գրողի քո պարտականությունն է նրանից կորզել իր բովանդակությունը, բացահայտել իր բարոյականությունը:

...Յուրաքանչյուր կնոջ մասին պետք է էնպես գրել, որպես թե մորդ մասին ես գրում: Յուրաքանչյուր մարդու մեջ Աստված կա, ու յուրաքանչյուրի Աստվածն ամենախոր հարգանքի է արժանի: Կողքինիդ մեջ փնտրիր Աստծուն»[6]:

Ծմակուտցին փորձում է յուրացնել այն, ինչ մինչև այդ խորթ էր իրեն, փորձում է յուրացնել օտարը, իրեն ոչ սազականը: Այս զարհուրելի ալիքից Ծմակուտն անհրաժեշտ է պաշտպանել: Ծմակուտցիներն ունեն իրենց դիմագիծը, որ ժառանգել են որպես ազգային հիշողություն, ժառանգել են հայի իրենց տեսակը՝ պարզ ու բարի, արարող ու ինքնուրույն: Եվ այդպես էլ մաքրագործված այդ դիմագիծը պետք է անցնի սերունդներին: Քաղաքակրթություն ասվածն այստեղ կարելի է նաև հարաբերականորեն հասկանալ: Դժվար է ասել, որ եթե քաղաքակրթությունը ոչնչացնում է բարոյական արժեքները, ապա մի՞թե նախամարդն ավելի բարի ու բարո էր, քան ժամանակակից մարդը: Մի՞թե քաղաքակրթությունն է, որ բարոյապես դիմափոխում է մարդկային զանգվածը, մի՞թե նա է հոգևոր տաճարի պատերը քանդողը:

Արդի գրականության նպատակներից մեկն էլ մարդուն մոտեցնելն է կատարելությանը: Իսկ դեպի կատարելություն տանող ուղին գիտությունն է, որի այս առաջընթացին պետք է համապատասխանի նաև ժամանակակից մարդը, նաև երեկվա ահնիձորցին ու ծմակուտցին: Երեկվա ահնիձորցին ստեղծել է ժամանակակից մարդուն, իսկ սա էլ իր հերթին նոր քաղաքակրթության ստեղծողն է լինելու: Սակայն երբ մարդն այսօր շարունակում է հոշոտել իր նմանին, ուրեմն մարդկությունը մի ոտքով դեռ նախնադարյան վայրենի բնազդների մեջ է:

Հրանտ Մաթևոսյանը գլխավորը չի ասում, բայց ամբողջը գլխավորի մասին է. «Թող մեր այսօրվա վարքը այնպես լինի, որ վաղը օդը հստակված և հայոց մեր երկինքը բաց լինի: Կարողանանք միմյանց աչքերի շիտակ նայել, չտրորենք անտրորելին. և այսօր, և վաղը մենք միմյանց ենք պատկանում»[7]:

1980-ականների սկզբին գրաքննադատներից ոմանք Մաթևոսյանին մեղադրում էին գեղարվեստական նահանջի մեջ, նահանջ այն ամենից, ինչ ձեռք է բերվել տարիների ու տասնամյակների մաքառման գնով: Մամուլում պայքար էր ծավալվել հանուն և ընդդեմ Հրանտ Մաթևոսյանի: Արձակի հարցերի գլխավոր բանախոս Կարլեն Դանիելյանը կշտամբանքի հիմնական բաժինը վերապահել է Հրանտ Մաթևոսյանին. «...հնօրյա մեր գյուղագիրների նման առաջ քաշելով մանր մարդկանց, Ծմակուտի խելապակաս, դանդաղամիտ և մի սովորական միտք ձևակերպել չիմացող

[6] Մաթևոսյան Հ. Ի., Ես ես եմ, Հարցազրույցներ, «Ոսկան Երևանցի», Եր., 2005:
[7] Մաթևոսյան Հ. Ի., Ես ես եմ, Հարցազրույցներ, «Ոսկան Երևանցի», Եր., 2005:

ու չկարողացող հերոսներին՝ գրողը փորձում է հասնել մի բնականության ու ճշգրտության, որի սահմանները խրվում են կենցաղագրության սովորական հունը: Ո՛չ մի բանաստեղծություն, գեղեցկություն, շունչ, որ կարող է շոյել քեզ, հոգևոր մի դիրքորոշում, որ կարող է շահախնդրել, մտքեր, գաղափարներ, տեսակետներ, որոնք կապում-կապակցում են այդ գյուղացիներին գոյության երջանկության կամ բախտավորության զգացումներով: Գեղեցկություն չկա ոչ միայն այդ հերոսների մեջ, այլև նրանց կյանքում»[8]:

Գրողին ոչ միայն չէին հասկանում, այլև ձևախեղում էին նրա ստեղծած արժեքներն ու ձևավորում թյուր պատկերացում, որից խոցվում էր նա՝ դառնալով է՛լ ավելի նյարդային ու փակ: Սակայն աշխարհից խռով, շրջապատից նեղացած, ինքն իր մեջ փակված, հազվադեպ միայն իր ներսը բացող, ինքն իրեն մեկուսացրած բարդ նյարդերի մի կծիկ՝ Հրանտ Մաթևոսյանը լավ գիտեր իր առաքելությունը. «Այս սիրելի-սարսափելի, խելացի-խելագար աշխարհում դաժան բան է մերկ լինել, լինել աշխարհի մերկացած նյարդը՝ գրող: Սպիտակ թղթի առջև ամեն րոպե կարելի է կաթվածահար լինել»[9]:

Գրականության բնապաշտությունը հանդես է մտնում գյուղագրության տարազներով: Գյուղագրությունը մեզանում և ամենուր երբևէ եղել է գյուղական խավարի և թշվառության նկարագրություն՝ սոցիալական հեղաբեկման ներքին կամ բացահայտ պահանջով: Այդ հարցը տարբեր կերպերով դուրս է մղվել օրակարգերից, և գյուղագրությունը ձեռք է բերել նոր բովանդակություն՝ բնապաշտության բովանդակությունը:

Մարտիրոս Սարյանը նշել է. «Մարդը ծնվում է բնական, հետո քաղաքակրթությունը շերտ առ շերտ նստվածք է տալիս մարդու մեջ, մարդն աղավաղվում է»[10]: Քաղաքակրթությունը մարդուն պատում է ժանգով: Միջուկին հասնելու համար հարկ է քերել արտաքին շերտերը: Հենց սա էլ անում է Հրանտ Մաթևոսյանն իր ողջ ստեղծագործությամբ: Գրողի ճանապարհը մարդկային հոգու խորխորատները գնացող անշեղ ընթացք է:

Մաթևոսյանը գրականությունը համարում է աշխարհի ազնվանալուն ուղղված տառապալից ճիգ, որը և եղել է համաշխարհային գրականության կոչումն ի ծնե: Մաթևոսյանի արձակը խորապես ազգային է՝ կերպարների մտածողությամբ ու հոգեբանությամբ, ազգային պատմության մշտարթուն հիշողությամբ: Այն նաև համամարդկային է՝ նախ ազգային խոր ներթափանցումների, ապա՝ մարդկային զեղեցիկ ու ներդաշնակ կյանքի երազի համար: Պատկերելով կենսական նոր հարաբերությունների մեջ հայտնված գյուղը՝ Մաթևոսյանը ստեղծել է ազգային ու ժողովրդային գրականություն: Տոհմի կանչին ունկնդիր և երկրի ջիղը լինելու իրենց կոչմանը

[8] «Գրական թերթ», 8 հուլիսի 1983, թիվ 29:

[9] Մաթևոսյան Հ. Ի., Սպիտակ թղթի առջև, «Գրական թերթ», 14 հոկտեմբերի 1996թ.:

[10] https://hrantmatevossian.org/hy/works/id/ayspes-kochvac-gyugagrutyan-masin

հավատարիմ՝ մաթևոսյանական կերպարները հայ գրականության մնայուն արժեքներից են: Նա ստեղծել է այնպիսի մի արձակ, որ իրենից առաջ դեռ չէր եղել: Նա ստեղծել և գտել է իր ընթերցողին, որ վստահում է իրեն առանց ավելորդ բացատրականի: Գրողի մղումն ավելին էր, քան պարզապես գյուղը նկարագրելը: Նա ուզում էր գրել ոչ թե գյուղի մասին, որ իրենից առաջ ուրիշներն արել էին, այլ գյուղի ներսից: Նա հասկանում էր, որ երկրին, հողին, քարին պետք է վերաբերվել տիրո՛ջ իրավունքով. «Ես իմ առաքելությունը տեսնում եմ մարդու հանդեպ, յուրաքանչյու՛ր մարդու, կոնկրե՛տ մարդու հանդեպ հարգանք հարուցելու մեջ: Ի սկզբանե սքանչելի, ողբերգական, հերոսական մարդու հանդեպ»[11]:

Մաթևոսյանի ստեղծագործությունը ստիպում է սիրել, լինել բարի, դուրս է մղում ատելություն ու թշնամանք հասկացությունները, ստիպում է ճշգրտորեն գնահատել այն մանրուքները, որոնք, մարդկային կյանքի բաղադրիչ լինելով, արժեքավորում են այն: «Աշխարհի հազարամյա երկնքի տակ այս մարդը դատապարտված է լինել իր ցեղի հանճարը, որովհետև առանց նրա ցեղը կկորցնի իր ճանապարհը, իր հոտը, իր գույնը, իր հիշողությունը, իր սահմանների մեջ չտեղավորվող իր պատմությունը...»[12],- այսպես է բնութագրել Մաթևոսյանին Անահիտ Ադամյանը:

Մաթևոսյանն այսօրվա մեջ է տեղափոխել երեկն ու վաղը: Նրա խոսքը, հոգին, ամեն, ամեն ինչը մեր հիմքն են, հենքն են, ապրելու մեր իրավունքի բարոյականությունը: Փոխվե՞լ է միթե Ծմակուտի շունչը: Բնաշխարհը պահում ու փոխանցում է օդը, լույսը, երանգներն ու ձայները, սերմն ու արմատը: Այս ամենը կարողանում են պահպանվել ու փոխանցվել, քանի որ ունեն ամուր հիշողություն: Ծմակուտցիների արյունը, նրանց յուրաքանչյուր բջիջ նույնպես ունեն հիշողություն: Այնտեղ հիշողություն ունի ամեն կենդանի բան. դաշտը, օդը, ձին, շունը, արջը, հովիվը, կաղնին, առվակը...

Ծմակուտյան նրբին հոգեբանությունը մարդուս դարձնում է ավելի հանդուրժող ու բարի, ավելի ստեղծող ու բնական, ավելի մարդ: Ինչպե՞ս ետ բերել հեռացող արժեքները դեպի նոր ժամանակներ, և արդյոք հարկավո՞ր է դա նոր ժամանակների մարդուն: Մեզնից հեռացվող, մեզնից օտարվող այդ աշխարհի տագնապն իսկապես մեզանում կա, կար շատ-շատ վաղուց: Մարդը տրվելու՞ է այս խուճապին, թե՞ մարտիրոսվելու է:

Գերժամանակակից պրոբլեմները պատռտում են գեղջկական հագուստը, գեղջկական գործոնը չի դիմանում, ճաքեր է տալիս, առաջանում է խզում: Այսօր, առավել քան երբևէ, մենք կարիք ունենք մաթևոսյանական դաստիարակության: Դաժան բարքերի, անմարդկային հարաբերությունների մերկ ու խելագար այս աշխարհում

[11] Մաթևոսյան Հ. Ի., «Սովետական Հայաստան», 22.11.1984 թ.:

[12] Ադամյան Անահիտ, «Մարդ, որ անվանում է ժամանակը», «Հայաստանի Հանրապետություն», 8.06.1996 թ.:

լուսավոր ու վճիտ փարոսներ են Մաթևոսյանի նեկտարածաղիկները, Ալխոն... Բայց մի՞թե այն ազատության մեջ վազող ձիերին այլևս վերադարձ չկա, էլ բեռան տակ տնքացող Ալխո չկա... «Եթե մեր ժողովուրդը թանձր չէ գյուղերում, ուրեմն չունենք գյուղացիություն: Եվ եղածի էլ տեղը տեղ չի. աշխարհը վստահության և ճոխության շքերթի մեջ, գյուղացին իր աղքատ լանջերում դեռ իր բահ ու բրիչին է: ...Իմ ծնողները գյուղացի հայ մարդիկ են՝ մի օր հավատացյալ են, երկու օր՝ ոչ»[13]:

Մաթևոսյանն ընթերցողին սովորեցնում է՝ ինչպես լսել լռությունը, ինչպես զանազանել ցավի հիշողությունը հիշողության ցավից, ինչպես գուրգուրել, դողալ հայրենիքի, հողի, ցորենի, ծնողի ու զավակի համար, տերը լինել սեփական ինքնության... Թե ինչպես արմատներով միահյուսվել երկրի ջղին, որպեսզի չընդհատվի մեծ ճանապարհի մեր վազքը, նա՛ է սովորեցնում, նա, Ռևազը, Պավլեն, Իշխանը, Աղունը...

Մաթևոսյանի գրականությունն այն ծանրությունն է, որով բացվում է ժանգոտ փականի տակ գտնվող բանականության ակունքը, և չի ուզում, չի թողնում, որ մեր վարքը օտար ձիու պես մեր տակից փախչի:

Իր տաղանդի շնորհիվ Մաթևոսյանը ոչ միայն կարողացել է բարձրանալ օրվա ունայնությունից ու այն ամենից, ինչ կոչվում է «պայքար կենսական խնդիրների համար», այլ նաև մեզ ստիպում է մտածել՝ ով ենք մենք և ուր ենք գնում, ստիպում է ձեռք բերել և զգալ մեր ինքնությունը: Եվ եթե բարոյականությունը ժամանակի հետ մաշվում ու փլուզվում է, ապա սարսափելի է նույնիսկ մտածել, որ կգա ժամանակ, որ այդ բարոյականությունից հյուլե անգամ չի լինի, որ գոնե... փլուզվի: Իսկ Մաթևոսյանի ուղերձն է՝ տեր լինել երկրին, տեր լինել մարդ միավորին, տեր լինել և կառավարելի դարձնել մեր ընթացքը: Ուստի այսօր պետք է պահպանենք ու խնամենք, սիրենք ու հարգենք այդ սուրբ տարածքը, որ չի փոխվում ոչ մի ժամանակ, որ բոլոր ժամանակներում էլ նույնն է եղել:

Մաթևոսյանն անվերջ վերընթերցման կարիք ունի. ամեն տարիքում ընկալվում է յուրովի: Նրա ստեղծագործության հետ լեզու գտնելու խնդիր կա, որպեսզի այն մեր առաջ մերկանա ամբողջությամբ, տրվի անմնացորդ...

Մաթևոսյանը չի դադարում մնալ 20-րդ դարավերջի հայ ամենաազգային վիպագիրներից լավագույնը: Կարելի է ասել՝ Մաթևոսյանը հասավ իր երազանքին՝ կրկնելով Օհանես պապի փորձը. հիմնեց իր Ահնիձոր-Ծմակուտը գրականության մեջ: Նա միանգամից գրականություն մտավ որպես դասական և իր տեղը նվաճեց անմահների շարքում:

Մաթևոսյանի գրականությունը մասնակցել ու մասնակցում է ազգային ոգու շինարարությանը: Այսօր մեզ պետք է հասկանալ, որ անժառանգ մարդիկ չենք, որ մեր ետևում կան սերունդների կենսագրություն, սերունդների տքնանք, և պարզապես կոչված ենք դա պահպանելու, սիրելու, իմաստավորելու և շարունակելու:

Երբ Օհանես պապը վարում էր հողը, խոփը դեմ էր առնում քարի... Եվ կյանքի

[13] «Լուսավորիչ», Հարցազրույց Էդիկ Բաղդասարյանի հետ, 04.12.1990 թ.:

այդ հետքերը (խաչ, կարաս, կալատեղի ու գերեզմանոց) նրան պատմում էին երբեմնի գոյություն ունեցած բարոյական արժեքների մասին:

Այսօր պետք է պահպանել դրանք և ապրել այնպես, ստեղծել այնպիսի բարոյական արժեքներ, որ երբ ապագայում մեր սերունդների «խոփը դեմ առնի քարի...», պարծենալու և հպարտանալու, ընդօրինակելու բան ունենան: Լիահույս ենք, որ կմնան որոշ բարոյական տարածքներ և կբախվեն նորանոր քաղաքակրթություն-ների հետ:

*ГРАНТ МАТЕВОСЯН. СТОЛКНОВЕНИЕ КОРЕННЫХ ГЕРОЕВ С ЦИВИЛИЗОВАННЫМ МИРОМ И ЕГО РАЗРЕШЕНИЕ-**АНИ ШИРИНЯН***- В статье автор затрагивает произведение Гранта Матевосяна с его своеобразным и нравственным миром, Цмакутом, где живущий человек также наделён величием и глубиной родившей его среды. В процессе общественного развития меняются познавательные возможности человека, расширяются границы морали и поведения вокруг личности. Мир прорывается в психологию и восприятие цмакутцев. Матевосян затрагивает бытовые вопросы человека и общества. Смущённый темпом бега цивилизации, человек отдаляется от корней, а пути возврата невидимы. Матевосян – бдительный хранитель забытых тропинок, который помогает нам найти дорогу домой.

Ключевые слова: *коренные герои, человек, природа, национальная психология, память, тоска, цивилизованный мир, моральный упадок, уходящие ценности, национальное достоинство, остроумие, священное пространство, биография поколений.*

*HRANT MATEVOSYAN: CLASH AND RESOLUTION OF THE ABORIGINAL HEROES AND THE CIVILIZED WORLD-**ANI SHIRINYAN**-The article represents the work of Hrant Matevosyan with its own moral world, with "Tsmakut", where a humane being is also endowed with grandeur and depth of the environment that gave birth to him. In the process of social development, the cognitive abilities of a person change, the boundaries of morality and behavior around an individual expand. The world is assembled in the psychology and perception of the people from Tsmakut. Matevosyan touches upon the most vital issues of human and society. Confused by the pace of civilization's run, man moves away from his roots, and the paths of return are unnoticeable. Matevosyan is a constant protecter of forgotten paths, that helps us find our way home.*

Key words: *Aboriginal heroes, man, nature, national psychology, memory, longing, civilized world, moral decline, departing values, national dignity, intelligence, sacred space, biography of generations.*

ՄԱԼԻԿ ԹԵԼՈՒՆՑ

ՄԱՐԴՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ՝ ԸՍՏ «ՈՐՈԳԱՅԹ ՓԱՌԱՑ»-Ի

Հոդվածում հեղինակն անդրադառնում է XVIII դարի 70-80-ական թվականներին ձևավորված հայ իրավունքի հուշարձաններից մեկում՝ «Որոգայթ փառաց»-ում նախատեսված մարդու հիմնական իրավունքների և ազատությունների համակարգին: Միաժամանակ պատմաիրավական, իրավահամեմատական եղանակով համառոտ ձևով անդրադառնալով այդ ինստիտուտի փաստական իրական վիճակին՝ ՀՀ օրինակով, այն հիմնական հետևության է հանգում, որ ժամանակակից սահմանադրական և այլ իրավական ակտերում ամրագրված մարդու իրավունքներն ու ազատությունները կարող են առավել կամ պակաս չափով իրացվել, երբ դրանք երաշխավորվեն ամբողջ սոցիալ-տնտեսական, պետաիրավական արդարացի ժողովրդավարական ***համակարգերով:***

Բանալի բառեր՝ *պետություն, իրավունք, մարդու իրավունքներ և ազատություններ, հավասարություն, օրենքի գերակայություն, Սահմանադրություն, «Որոգայթ փառաց», Հովսեփ Էմին, Մովսես Բաղրամյան, Շահամիր Շահամիրյան, Լուսավորականության դարաշրջան:*

ՄՈՒՏՔ

18-րդ դարը, որն իր առաջադեմ աշխարհայեցողությամբ, առաջադեմ գաղափարներով, որի կրողներն էին Մոնտեսքյոն, Ռուսոն, Վոլտերը և ուրիշներ, հայտնի էր ոչ միայն որպես լուսավորականության, այլ նաև սոցիալական բեկումնային շարժումների դարաշրջան: **Ֆ.Էնգելսի** բնութագրմամբ՝ Ֆրանսիայի օրինակով, դա մի ժամանակաշրջան էր, երբ ժամանակի լուսավոր գլուխները «…ոչ մի արտաքին հեղինակություն չէին ճանաչում: Կրոնը, բնության վերաբերյալ հայացքները, հասարակությունը, պետական կարգը - ամեն ինչ նրանց անխնա քննադատությանն էր ենթարկվում, ամեն ինչ բանականության դատարանի առաջ էր կանչվում և անհետացման էր դատապարտվում, երբ չէր կարողանում իր բանական լինելն ապացուցել: Բանականությունը դարձավ գոյություն ունեցող ամեն բանի միակ չափանիշը»[1]:

[1] **Էնգելս Ֆ.**, Անտի-Դյուրինգ, Քաղաքական գրականության հրատ., Երևան, 1940, էջ 21-22:

Լուսավորականության դարաշրջանն իր արձագանքներն ունեցավ նաև հայ իրականության մեջ՝ հրապարակ բերելով առաջադեմ մտածողների, նաև ազատագրական շարժման մի այնպիսի փայլուն համաստեղություն, ինչպիսիք էին **Հովսեփ Էմինը** (1726-1809), նրա արցախցի զինակից **Մովսես Բաղրամյանը** (ծննդյան և մահվան թիվը հայտնի չէ), **Շահամիր Շահամիրյանը** (1723-1797):

Նրանց առաջադեմ՝ բնաիրավական, ժողովրդաիշխանական, իրավաքաղաքական գաղափարները, ազատագրական գործունեությունը հիմնականում արտացոլվեցին 1792թ. Անգլիայում և 1918թ. Կալկաթայում լույս տեսած՝ Էմինի հուշերում, 1772թ. Մադրասում լույս տեսած՝ Բաղրամյանի «Նոր տետրակ, որ կոչի Յորդորակ» հայ առաջին համակարգված իրավաքաղաքական երկում, 18-րդ դարի 70-80-ական թվականներից սկզբնավորված և նույն դարի 80-ական թվականներին լույս տեսած՝ Շահամիրյանի նշանավոր «Որոգայթ փառաց» օրենքների հավաքածուում[2]:

«Որոգայթ փառաց»-ը[3] բաղկացած է տեսական և օրենսդրական մասից՝ 521 հոդվածից: Տեսական մասում Շահամիրյանը ներկայացնում է մարդկանց հավասարության անխախտ սահմանումը՝ «… բնութիւն մարդոյ ի յերեսս երկրի բնականապես հաւասարած ծնանի…», ապա հիշեցնում օրենքի գերակայության[4]՝ իրավական-ժողովրդաիշխանական պետության, իրավունքի և պետության իրավականության, ազատության՝ որպես անանց արժեքի մասին՝ «… քանզի ոչ զոյ ի յերեսս երկրի ոչ ոք առաւել քաղցրութիւն ի թոշակս մարդոյ քանթէ ազատութիւն…»[5], և այլ առաջադեմ գաղափարներ[6]: «Որոգայթ փառաց»-ի օրենսդրական մասի (ըստ իրավունքի ճյուղերի) առայժմ միակ համակարգումը կատարվել է տողերի հեղինակի կողմից*: Ըստ այդ համակարգման՝ «Որոգայթ փառաց»-ի սահմանադրական մասը՝ բաղկացած է 154 հոդվածից[7], որն իր ամբողջության մեջ կարելի է դիտել որպես հայկական առաջին Սահմանադրության նախագիծ:

---

[2] Այդ մասին մանրամասն տե՛ս՝ **Թելունց Մ.Մ.,** Հայ ազգային-ազատագրական շարժումը XVIII դարի երկրորդ կեսին և իրավաքաղաքական միտքը, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 1995: Հեղինակն այդ աշխատությունում առաջին անգամ կատարել է «Որոգայթ փառաց»-ի օրենսդրական մասի համակարգում՝ ըստ իրավունքի ճյուղերի: Տե՛ս նաև նույն հեղինակի՝ Հայկական առաջին Սահմանադրությունը. «Որոգայթ փառաց»-ը և ՀՀ 1995թ. Սահմանադրությունը: ՀՀ Սահմանադրության նոր նախագծեր, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2001, Շահամիր Շահամիրյանի իրավաքաղաքական հայացքները և «Որոգայթ փառաց» օրենքների հավաքածուն, «Ճարտարագետ» հրատ., Երևան, 2008, Հայաստանի Պետության և իրավունքի պատմություն, «Կոմպ Թրավլ» հրատ., Գորիս, 2015 և այլն:

[3] Ի դեպ, 2016թ. լրացել է Հովսեփ Էմինի ծննդյան 280-ամյակը, 2013-ին լրացավ Շ. Շահամիրյանի ծննդյան 290-ամյակը, իսկ 2017թ.՝ «Որոգայթ փառաց»-ի ստեղծման՝ տպագրման 230-ամյակը:

[4] Տե՛ս՝ **Շահամիրեանց Յ.**, Որոգայթ փառաց, Յակոբ Շահամիրեանից տպ., Մադրաս, 1773, նույնը՝ Էլէքտրատպ. օր. Ն. Աղանեանցի, Թիֆլիս, 1913, էջ 102 (հղումները կատարում ենք Թիֆլիսի հրատարակությունից. այսուհետև՝ Որոգայթ փառաց):

[5] Որոգայթ փառաց, էջ 138:

[6] Մանրամասն տե՛ս՝ Որոգայթ փառաց և Մ.Մ.Թելունցի նշված աշխատությունները:

* Այդ թեմայով աշխատությունները մատնանշեցինք ստորև:

[7] Տե՛ս՝ **Թելունց Մ.Մ.**, Հայկական առաջին սահմանադրությունը. «Որոգայթ փառաց»-ը և ՀՀ 1995թ. սահմանադրությունը, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2001, էջ 121-153:

«Որոգայթ փառաց»-ում Շահամիրյանը ներկայացնում է ապագա հայկական պետության մոդելը՝ կառավարման հանրապետական ձևով, իշխանությունների՝ գործառույթների տարանջատման՝ օրենսդիր, գործադիր և դատական հիմքի վրա: «Որոգայթ փառաց»-ում նշանակովի պաշտոն չկա: Իշխանության թևերը կազմող բոլոր 688 անձինք՝ 344 փոխանորդ՝ օրենսդիր՝ պատգամավոր, 344-ը՝ գործադիր, դատական, ռազմական և այլն, իշխանության կրողներ: Բոլորն էլ սկզբնական փուլում ընտրվում են ապագա հայկական պետության տարածքի մեջ մտնող 12 հազար տուն ունեցող յուրաքանչյուր գավառի մեջ մտնող յուրաքանչյուր գյուղից բաց քվեարկությամբ՝ երկու թեկնածուներ ընտրելով, որոնցից հետագայում վիճակահանությամբ ընտրվում են վերը նշված պաշտոնյաները՝ 3 տարի ժամանակում, օրենքով նախատեսված կարգով վաղաժամկետ ետ կանչման հնարավորությամբ, եթե նրանք խախտում են օրենքը, չեն արդարացնում ժողովրդի, ընտրողի վստահությունը: Պառլամենտը՝ խորհրդարանը, հորջորջվում է **Հայոց տուն:** Բոլոր 688 անձանց լիազորություն է տալիս, նրանց գործունեությունը հսկում է Հայոց տունը (ծավալի առումով այդ և մի շարք այլ հարցերի մանրամասնորեն չենք կարող անդրադառնալ սույն հոդվածում, ուստի անցնենք գլխավոր խնդրին):

Նշենք, որ «Որոգայթ փառաց»-ը հայ իրավունքի հուշարձաններից առաջին և առայժմ հայտնի միակ աղբյուրն է, որում ներկայացված է մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների համակարգը:

ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչպես արդեն ակնարկել ենք, «Որոգայթ փառաց»-ի մի շարք նորմեր վերաբերում են մարդու և քաղաքացու ազատություններին, իրավունքներին ու պարտականություններին: Նախ բոլոր մարդկանց՝ անկախ ռասայից, ազգությունից, սեռից, դավանանքից, ի բնե հավասար ու ազատ ծնվելու ու հավասարապես կյանքի գոյատևման իրավունքից օգտվելու սկզբունքը «Որոգայթ փառաց»-ի անկյունաքարն է:

«Որոգայթ»-ի պետական համակարգի հիմքում, ինչպես արդեն նշել ենք, ընկած է ժողովրդաիշխանության, ժողովրդավարության գաղափարը: Ընդ որում, այն հռչակագրային չէ: Հայաստանում, ըստ «Որոգայթ փառաց»-ի սահմանադրական մասի, չկա մի գյուղ, բնակավայր, որը չմասնակցի իշխանության նրա մարմինների ձևավորմանը: Հայաստանի յուրաքանչյուր բնակավայրից՝անկախ բնակչության թվից, ընտրվող մեկական անձինք ընտրվում են բոլորի կամքով: Դժվար չէ պատկերացնել, որ ամբողջ գյուղը կամ առնվազն նրա բոլոր չափահաս անդամ-բնակիչները (18 տարեկան) հավաքվում և ընտրում են փոխանորդի՝ ապագա օրենսդիր, գործադիր և դատական մարմինների բարձրագույն պաշտոնատար անձանց թեկնածուներ: Հետագայում՝ միայն ու միայն սկզբնական փուլում, անմիջապես ժողովրդից ընտրված անձանցից է կազմավորվում բարձրագույն (և ոչ միայն բարձրագույն) օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունը:

Ընտրելու իրավունք ունեն բոլորը. համենայն դեպս, ըստ «Որոգայթ»-ի տեքստի՝ բոլոր 18 տարեկան դարձած անձինք: Որոշակի համոզմունքով կարելի է ասել, որ 18 կամ 21 տարեկան դարձած անձինք օժտված են նաև ընտրվելու իրավունքով: Ցավոք, այնուամենայնիվ, չձերբազատվելով Շահամիրյանի ժամանակաշրջանի բուրժուական պետություններին հատուկ սահմանափակումներից՝ «Որոգայթ»-ը կանանց ընտրվելու իրավունք չի վերապահում՝ բացառությամբ ժառանգական նախարարի նախադեպի: Գործում է նաև ազգային և կրոնական ցենզը. ընտրվողը պետք է լինի հայ. ըստ որում՝ հայ առաքելական եկեղեցու դավանանքի: Մադրասի համայնքի կանոնադրությունից՝ «Նշաւակ»-ից, հայտնի է դառնում, որ կառավարման գործառույթ իրականացնող պաշտոնատար անձանց ընտրության համար սահմանվում է նաև գույքային ցենզը: Այդ անձինք պետք է լինեն. «…արքս տէր ընչից և Պատւոյ, և սեբիական յազգէն Հայոց և Դաւանութեաբն Հայաստանեաց սբ Եկեղեցւոյ»[8]: Գույքային ցենզի կոնկրետ չափերը սահմանված չեն: Հայտնի է, որ գույքային սահմանափակումներ՝ ցենզեր, նախկին՝ ՀԽՍՀ օրենսդրությամբ սահմանված չէին, այդպիսիք մտցվեցին ՀՀ Երրորդ հանրապետության օրենսդրությամբ, մի բան, որը, մեր կարծիքով, մարդու իրավունքների էական՝ անբնական և անբանական սահմանափակում է, թեպետ այն տվյալ տիպի պետության բնույթից է բխում: Ուշագրավ է, որ «Որոգայթ»-ը ընտրվելու համար պահանջում է, որ պատգամավոր-փոխանորդ, կառավարության անդամ և այլն, ոչ միայն ազգությամբ հայ լինեն, այլ նաև ծնված լինեն Հայաստանում (հոդվ., «ԺԴ» (12), «ԽԹ» (49), «ԼԳ» (33): Այսպես, օրինակ, «ԼԳ» (33) հոդվածը սահմանում է. «Ամենայն ծայրագոյն պաշտօն յատկապէս տանուտէր, նախարար, դատաւոր, իշխան, սպարապետ, ասպէտ հանդերձ խորհրդակցօք, դպրօք, ատենաբանիւք և ամենայն զօրագլխօք մի՛ ոք ստանայցէ, բայց ի սեպհական ազգէն հայոց, ծնունդ հայաստանեաց մկրտեցեալ ի Քրիստոս աւանդութեամբ Սուրբ Եկեղեցւոյ Հայաստանեաց»[9]: Մենք որոշակի հավանությամբ ենք վերաբերվում «Որոգայթ-ի նման սահմանափակմանը, (բուն Հայաստանում ծնված լինելու ընտրապայմանի առումով), քանզի եթե մի կողմ թողնենք բացառությունները և որոշ հակառակ փաստարկներ, ապա ակնհայտ է, որ անձի, տվյալ դեպքում հայի՝ բուն երկրում՝ Հայաստանում, որտեղ նա բարձր, պատասխանատու պաշտոն պետք է զբաղեցնի, ծնված լինելը, բնականաբար, նաև ի սկզբանե այնտեղ ապրելը, գործելը նրան ավելի ամուր են կապում հողի՝ հայրենիքի հետ, ավելի իրազեկ դարձնում հայրենի ժողովրդի ազգային-պատմական սովորույթներին, կենցաղին, ապրելակերպին, հոգսերին և այլն: Չպետք է անտեսել նաև (սահմանափակումների առումով), որ «Որոգայթ փառաց»-ի ստեղծման ժամանակաշրջանում (նաև հետագայում), Հայաստանի թե՛ արևմտյան և թե՛ արևելյան հատվածներում՝ բնիկ հայկական տարածքներում, օտարազգիները, հատկապես մահմեդականները, նկատելի թիվ էին կազմում, իսկ առանձին վայրերում իրենց

[8] Տետրակ, որ կոչի նշաւակ, Հակոբ Շահամիրյան տպարան, Մադրաս 1783, էջ 7-8:
[9] Որոգայթ փառաց, էջ 159:

քանակով նույնիսկ գերազանցում բնիկներին՝ հայերին: Ուստի ընտրովի բարձրագույն պաշտոններում անպայման հայ լինելու ընտրապայմանը ևս հայտնի չափով հասկանալի է: Մյուս բոլոր հարցերում՝ Հայաստանում թե սփյուռքում ծնված հայ լինի, թե ազգությամբ օտար, կարող է ազատորեն ելումուտ անել Հայաստան, հող, գույք, սեփականություն ձեռք բերել (հողի հարցում որոշ սահմանափակմամբ), ազատ տնտեսական ձեռնարկատիրական գործունեություն ծավալել, ընտրելու ակտիվ իրավունքից օգտվել և այլն: Այս բոլորը և բազմաթիվ այլ հնարավորություններ «Որոգայթ փառաց»-ը՝ Հայոց առաջին Սահմանադրությունն է ընձեռում:

«Որոգայթ»-ի «Գ» (3) հոդվածը սահմանում է, որ ամեն ոք՝ լինի հայ թե այլազգի, արական թե՛ իգական սեռի, Հայաստանում ծնված կամ ուրիշ երկրից գաղթած (հնարավոր է նկատի ունի նաև քաղաքական ապաստան խնդրած), Հայաստանում ազատ է, օգտվում է հավասար իրավունքներից և պարտականություններից: Այսինքն՝ ամրագրվում է բոլոր մարդկանց, քաղաքացիների իրավահավասարության ժամանակակից սահմանադրական սկզբունքը: Ընդ որում, հոդվածից բխում է, որ նշված անձանց համար հավասար չափով ապահովվում է գործարարության՝ տնտեսական գործունեության ազատությունը:

«Ե» (5) հոդվածը հռչակում է անկախ ազգությունից բոլորի (ոչ միայն հայերի) համար խղճի և դավանանքի ազատության սկզբունքը: Դրա հետ մեկտեղ «Զ» (6) հոդվածը սահմանում է, որ եթե հայը ուրանում է քրիստոնեական հավատքը (եթե նա մկրտվել և ընդունել է այն), ապա մահվան պետք է դատապարտվի, և նրա ունեցվածքը բռնագրավվի հօգուտ եկեղեցու: Այս երկու հոդվածների համադրումից ակնհայտ է դառնում, որ ցանկացած անձ ազատորեն կարող է դավանել իր հավատքը, իր աստծուն, և ոչ ոք իրավունք չունի այդ հարցում հարկադրանք կիրառել նրա նկատմամբ, սակայն քրիստոնյա հայը իրավունք չունի փոխել իր դավանանքը:

«Ը» (8) հոդվածը որպես մասնավոր սեփականություն թույլատրում է գնել ու վաճառել հող (Հայաստանում) միայն հայազգի՝ հայ քրիստոնյա հավատքի անձանց: Այսինքն՝ Հայաստանում հողի նկատմամբ օտար քաղաքացիների համար մասնավոր սեփականության (բայց ոչ օգտագործման) իրավունքը բացառվում է: Օտար քաղաքացիները, ինչպես երևում է նաև հաջորդ՝ «Թ» (9) հոդվածից, կարող են հող (երկիր) և տուն ունենալ վարձակալությամբ՝ օգտագործման իրավունքով:

Մնացած գույքային հարցերում իրավունքի սահմանափակում օտարազգիների համար չկա (հոդ. «Ժ» (10): Ուշագրավ է, որ Հայաստանում հողի նկատմամբ օտարազգի քաղաքացիների սեփականության իրավունքն արգելված է նաև «Հայաստանի Հանրապետությունում սեփականության մասին» ՀՀ 31.10.1990թ. օրենքով, որի 56-րդ հոդվածը ուղղակիորեն սահմանում է. «Հողի նկատմամբ օտարերկրյա քաղաքացիների սեփականության իրավունքը բացառվում է»[10]: Իհարկե,

[10] Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995թթ.), ՀՀ Գերագույն խորհրդի հրատ., Երևան, 1995, էջ 37:

«Որոգայթ»-ում քաղաքացի հասկացությունը չկա, այն (հոդ. «Թ» 9) հողի (և բնակարանի) նկատմամբ մասնավոր սեփականության իրավունքը՝ գնելու և օտարելու (նաև ժառանգելու) առումով բացառում է թե՛ Հայաստանում ծնված օտարազգիների, թե՛ այլ երկրում ծնված և Հայաստան գաղթած օտարազգիների համար: Ինչպես արդեն նշեցինք, 18-րդ դարում՝ «Որոգայթ»-ի ստեղծման ժամանակաշրջանում, երբ Հայաստանի ազգային-պատմական տարածքը՝ թե՛ արևելյան, թե՛ արևմտյան, ողողված էր օտար, քոչվոր թուրք-թաթարական, պարսկական և այլ մահմեդական կրոնի բնակչությամբ: «Որոգայթ»-ի նման սահմանափակումները, նաև հիշատակված հարցով, պետք է որ հայտնի չափով հասկանալի լինեն:

«ՃԻԸ» (128) հոդվածը սահմանում է, որ օտարազգի և այլազգի (ոչ քրիստոնյա) անձը կարող է գալ և բնակվել Հայաստանում, գործել՝ աշխատել, հարկ մուծել, և ցանկացած ժամանակ իր գույքով մեկնել Հայաստանից:

«ՃԽԱ» (141) հոդվածը բոլոր քաղաքացիներին վերապահում է գանգատով (բողոքով) դատարան դիմելու իրավունք: Սա, ըստ էության, ՀՀ գործող (1995թ.) Սահմանադրության 38-րդ հոդվածի նախատիպն է: Ընդ որում, նույնը («ՃԽԱ» 141 հոդվածում սահմանված) ավելի է հստակեցվել «ՃԽԳ» (143) հոդվածում՝ սահմանելով, որ Հայաստանի բոլոր քաղաքացիները, Հայաստանի բոլոր բնակիչները («ամենայն ոք բնակեալք ի ներքոյ հովանաւորութեան հայոց…») ազատորեն կարող են դատարանում գանգատ բերել ցանկացած պաշտոնյայի՝ նախարարի (վարչապետի), տանուտերի (օրենսդիր օրգանի անդամի), դատավորի, իշխանի, ինչպես նաև հասարակ քաղաքացու գործողությունների դեմ:

«ՃՁԵ» (185) հոդվածը սահմանում է բնակարանի անձեռնմխելիության սկզբունքը: Միայն օրենքով համապատասխան թույլատվությամբ կարելի է մտնել բնակարան մեղավոր անձին կալանավորելու, ձերբակալելու համար և ընդհանրապես՝ ջարդել բնակարանի դուռը և մտնել բնակարան չի թույլատրվում:

«ՅԿԷ» (367) և «ՅԿԸ» (368) հոդվածները Հայաստանի թե՛ հայ և թե՛ օտար քաղաքացիներին իրավունք են տալիս ազատորեն՝ իրենց գույքով և ընտանիքով, մեկնել Հայաստանից (ՀՀ 1995թ. Սահմանադրության 22-րդ հոդվածի նախատիպը), բացառություններ են նախատեսվում հանցագործություն կատարելու համար երկրից փախչողների նկատմամբ և պատերազմական ժամանակներում՝ Հայաստանի թշնամի, Հայաստանի հետ պատերազմի մեջ գտնվող երկիր մեկնելու դեպքում: Մեկնումը՝ Հայաստանից հեռանալը, կատարվում է անձի բնակության վայրի՝ գավառի, քաղաքի, իշխանությունների թույլտվությամբ: Ընդ որում՝ վերջիններս իրավունք չունեն նման թույլտվություն չտալու՝ բացառությամբ հիշատակված դեպքերի:

«Շ» (500) հոդվածը սահմանում է խոսքի, մտքի և գործելու ազատություն՝ անձամբ պատասխանատվություն կրելով իր սխալի կամ ճիշտ գործողության, բարի կամ չար գործելակերպի համար:

Հայոց Տան ընդունած օրենքները պահպանելու պարտականությունը ընդգծվում է «Որոգայթ փառաց»-ի բազմաթիվ հոդվածներում: Ապագա Հայաստանի բոլոր

քաղաքացիները, բոլոր պաշտոնատար անձինք՝ ամենաբարձրից մինչև ամենաստորին պաշտոնյան, պարտավոր են ենթարկվել օրենքին և պահպանել օրենքը:

Իսկ «ԺԶ» (16) հոդվածը (նաև «ՄԼԵ» (235) հատուկ սահմանում է, որ օրենքները պետք է ընդունվեն բոլորի՝ ամբողջ հայ ազգի կամքով և հավանությամբ, և բոլորը պետք է ենթարկվեն օրենքին՝ որպես իրենց միակ տիրոջը, թագավորի, առաջնորդի: Ընդգծվում է չափազանց կարևոր արդիական հանգամանք. օրենքը գերիշխող է, եթե այն ամբողջ ազգի կամքն ու շահերն է արտահայտում. ընդունվել է ամբողջ ազգի կամքով: Օրենքների պահպանության պարտականությունը սահմանված է նաև ՀՀ 1995թ. Սահմանադրությամբ (հոդված 48): Ընդ որում, ի տարբերություն ՀՀ Սահմանադրության, որը չի նախատեսում օրենքները մեկնաբանող որևէ մարմին, «Որոգայթ»-ը օրենքների մեկնաբանության խնդիրը վերապահում է Հայոց Տանը՝ խորհրդարանին: 106 («ՃԶ») հոդվածը սահմանում է բոլորի հարկը ժամանակին, պարտաճանաչ ձևով մուծելու պարտականությունը (նույնը տես ՀՀ 1995թ. Սահմանադրություն, հոդվ. 46):

Զինվորական պարտականության հետ կապված «ՃԺԸ» (118) հոդվածը պարտավորեցնում է բոլոր քաղաքացիներին՝ ծնողներին, իրենց 12 տարեկան տղաների համար ձեռք բերելու մեկ հրացան և մեկ սուսեր և պարտադրել նրանց սովորելու զինվորական գործը: 411 («ՆԺԱ») հոդվածը, սակայն, հետաքրքիր կարգ է սահմանում զինվորական ծառայության համար. Նախ՝ այն կամավոր պետք է լինի (քանզի հայրենիքի պաշտպանությունը յուրաքանչյուրի պարտքն է), իսկ եթե կամավորության սկզբունքը արդյունք չի տալիս, ապա յուրաքանչյուր գավառի 100 զինապարտից վիճակահանությամբ ընտրվում է 5 հոգի՝ 7 տարվա զինվորական ծառայության ժամկետով: Զինվորները «ռոճիկ» են ստանում պետության հաշվին: Հայոց բանակի թիվը 90.000[11] է (ըստ Փավստոս Բուզանդի՝ Պապ թագավորի (369-374) ժամանակ հայկական բանակը ունեցել է 90.000 թվաքանակ):

«Որոգայթ»-ում նախատեսված են նաև այլ պարտականություններ, օրինակ՝ բոլոր քաղաքացիները պարտավոր են մշակել իրենց հատկացված հողերը, հակառակ դեպքում դրանք ետ էին վերցվում:

Մարդու և քաղաքացու իրավունքներին ու ազատություններին առնչվող «Որոգայթ փառաց»-ի շատ սկզբունքներ ու կանոններ (ոչ միայն մեր կողմից նշված) իրենց արտացոլումն ու զարգացումն են ստացել միջազգային հայտնի իրավական ակտերում[12]: Իհարկե, «Որոգայթ»-ում արտացոլված այս կարևորագույն ինստիտուտի մասին կարելի է ավելի մանրամասն խոսել, սակայն կարևորն այն է, որ մարդու, քա-

[11] Տե՛ս նաև՝ **Համբարձումյան Հ. Ռ,** Հայոց բանակի գաղափարը «Որոգայթ փառաց»-ում, «Բանբեր Երևանի համալսարանի», 1998, 3, էջ 145-149: Ի դեպ, չգիտես ինչու, Ռ.Հ. Համբարձումյանի այդ ուշագրավ հոդվածի ռուսերեն ամփոփման մեջ «Որոգայթ փառաց»-ը համարվել է «առաջին հայկական սահմանադրությունը Թուրքիայում:

[12] Տե՛ս, օրինակ, ՄԱԿ-ի 1948թ. դեկտեմբերի 10-ի «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր»-ը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական (Եվրոխորհուրդ) կոնվենցիան (Հռոմ, 04.11.1950թ.) և այլն:

դաքացու հիմնարար իրավունքներն ու ազատություններն ապահովվում են ոչ միայն կոնկրետ իրավանորմերով, այլև ամենից առաջ «Որոգայթ փառաց»-ում ամրագրված ամբողջ պետական համակարգով ու այդ համակարգի ստեղծման հիմքում դրված սկզբունքներով՝ այն ազնիվ ու մարդկային՝ հումանիստական մղումներով, որոնցով առաջնորդվել են «Որոգայթ»-ի՝ Հայոց առաջին Սահմանադրության ստեղծողները:

ԱՄՓՈՓՈՒՄ

Եզրափակելով նշենք, որ մարդու իրավունքների ու ազատությունների կամ հիմնական իրավունքների և ազատությունների ապահովման հիմնախնդիրը, որն իր ամրագրումն է ստացել նաև ինչպես ՀՀ, այնպես էլ ԱՀ Սահմանադրություններում, այսօր էլ մնում է որպես կենսական հիմնախնդիր ոչ միայն իր **փաստական իրացման**, այլ նաև իրավական ձևակերպման առումով, նաև սրանով են պայմանավորված թեմայի **արդիականությունը, հրատապությունը և հետազոտության նպատակը:** Մյուս կողմից, անշուշտ, հիմնախնդրի առումով կարևոր է մեր ազգային-պատմական արժեքներին անդրադառնալը կամ վերստին անդրադառնալը՝ ընդգծելով, որ այս հիմնախնդիրը իր տեղն է գտել դեռևս մեր իրավունքի, իրավաքաղաքական մտքի այնպիսի հուշարձաններում, ինչպիսին 18-րդ դարում ստեղծված «Որոգայթ փառաց»-ն է, որտեղ առաջին անգամ այդ ինստիտուտը ներկայացվում է առավել կամ պակաս չափով **համակարգային ձևով՝ որոշակի համակարգով:**

Պատմական փորձը, բնականաբար, նաև հայ իրավունքի իրավաքաղաքական մտքի ուսումնասիրությունը, նաև ժամանակակից իրավաքաղաքական, պետաիրավական ակտերի՝ Սահմանադրություն և այլն, ցույց է տալիս, որ մարդու իրավունքների և ազատությունների հիմնախնդիրներն ինքնին առանձին կամ պակաս չափով դրական լուծում չեն կարող ստանալ, եթե դրանք չեն ապահովվում տվյալ պետության, տվյալ հասարակության **ամբողջ սոցիալ-տնտեսական, պետաիրավական համակարգերով:** «Որոգայթ փառաց»-ում այդպիսի առավել կամ պակաս չափով նման հաջող փորձ է արվում: Օրինակ՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության բարձրագույն և միջին օղակի բոլոր պաշտոնյաները՝ որպես թեկնածուներ, սկզբնապես ընտրվում են անմիջապես ժողովրդի կողմից՝ որոշակի ժամկետով (3 տարով) և ենթակա են վաղաժամկետ ետ կանչման ընտրողի կողմից՝ «Որոգայթ փառաց»-ում նախատեսված հիմքերով:

Բայց սա պարզապես հարցի միայն մեկ ասպեկտն է: Հայտնի է, օրինակ, որ հետխորհրդային բոլոր հանրապետություններում ստեղծված նոր կարգերն ու հարաբերություններն իրենց հետ բերել և շարունակում են բերել ներսոցիալական անբնական ու անբանական գույքային շերտավորում՝ ներսոցիալական միասնությունը խարխլող, դրա արդյունքում աղքատություն, գործազրկություն, մեզանում նաև զանգվածային և պարբերաբար շարունակվող արտագաղթ և այլ բացասական երևույթներ: Եվ սա այն պայմաններում, երբ հիմնական և մյուս օրենքներում հռչակվում է պետության իրավական, սոցիալական բնույթը, մարդու իրավունքները՝

որպես բարձրագույն արժեք:

Վերցնենք, օրինակ, ՀՀ 1995թ. Սահմանադրությունը՝ 2005թ.-ի փոփոխություններով, և 6.12.2015թ. ընդունված Սահմանադրությունները: Դրանցում (նաև Արցախի Հանրապետության 10.12.2006թ. ընդունված Սահմանդրության 2-րդ գլխում) նախատեսված են մարդու հիմնական իրավունքները և ազատությունները: Ընդ որում, վերջին «օրինակում», ի տարբերություն նախորդի 41 հոդվածի, այդ հարցին նվիրված է 59 հոդված (թեպետ վերջինիս դեպքում սահմանափակումներն ավելի շատ են. նույնիսկ ազատորեն կարծիք հայտնելու իրավունքի սահմանափակման հնարավորություն է նախատեսվել՝ 42 հոդված), բայց դրանից, փաստորեն, ոչինչ չի փոխվել՝ ո՛չ աշխատանքի երաշխավորված իրավունք է ապահովվել, ո՛չ մարդու արժանապատիվ գոյատևման կամ գոնե սոցիալ-տնտեսական հարաբերական՝ փաստական հավասարություն է ստեղծվել, ո՛չ գործազրկությունն ու աղքատությունն են վերացվել և ո՛չ էլ հիմնականում սոցիալ-տնտեսական պատճառներով անկախ երկրից շարունակվող արտագաղթը… **Ինչու, որովհետև այդ իրավունքներն ապահովված չեն արդարացի, իրոք ժողովրդաիշխանական, սոցիալ-տնտեսական, պետաիրավական համակարգով: Եվ պատահական չէ, որ նույնիսկ դասագրքերում է ստեղծված վիճակը՝ նաև մարդու հիմնական ազատությունների տեսանկյունից**, քննադատության արժանանում[13]:

Ուրեմն այդ իրավունքները, առավել կամ պակաս չափով, փաստորեն կարող են իրացվել միայն նման ամբողջական համակարգի պայմաններում: Եվ պատահական չէ, որ առաջադեմ շատ մտածողներ ընդգծել են, որ պետական-իրավական ձևերը, իրավական հռչակումները, որքան էլ դրանք «գեղեցիկ» հնչեն, ոչինչ են, եթե այդ ձևերի հռչակումների հիմքը սոցիալ-տնտեսական արդարացի կարգը չէ:

Դեռևս 19-րդ դարի առաջադեմ մտածողները, այդ թվում հայ՝ **Միքայել Նալբանդյանը** (1829-1866), **Հարություն Սվաճյանը** (1831-1874), **Մատթեոս Մամուրյանը** (1830-1901) և այլք, հետագայում շատ ավելի հստակ՝ մատերիալիստական ուղղության հայ մտածողներ **Բոգդան Կնունյանցը** (1878-1918), **Ստեփան Շահումյանը** (1878-1918), **Ալեքսանդր Մյասնիկյանը** (1886-1925) և ուրիշներ, քանիցս անդրադառնալով պետական ձևերին, համոզիչ ձևով նշում էին, որ պետությունը, պետական ձևերը, կառուցվածքները չեն կարող լինել իրավական, սոցիալական և ժողովրդաիշխանական, իսկ մարդու իրավունքներն **իրացվող**, եթե պետության սոցիալ-տնտեսական կառուցվածքն արդարացի չէ՝ ծնում է գույքային աննորմալ բևեռացում, անհավասարություն մի փոքրաթիվ խումբ անձանց՝ հարուստների և հսկայական չունևոր զանգվածների միջև, աղքատություն, գործազրկություն և այլ բացասական երևույթները[14]:

Կառավարման ձևերը, անշուշտ, կարևոր են, նշում էր Նալբանդյանը, սակայն

[13] Տե՛ս, օրինակ, ՀՀ Սահմանադրական իրավունք, ԵՊՀ հրատ., Երևան, 2008:

[14] Մանրամասն տե՛ս, օրինակ, **Նալբանդյան Մ.,** Երկեր, «Սովետական գրող» հրատ., Երևան 1985, էջ 464, 614-623 (այսուհետև՝ Նալբանդյան 1985):

առաջնայինն **արդարացի տնտեսական հիմքերն են**. «Եվ քանի որ տնտեսական խնդիրը - այն բազմակնճիռ Գորդիասի կապը լուծված չէ, հասարակությունը յուր՝ ընկերական և ընտանեական հարաբերությանց մեջ ազատ չէ, թող քառասուն անգամ, եթե կամենան, փոփոխեն կառավարության ձևը, բայց քանի որ հասարակության մի մասը տիրապետել է հողին (տնտեսապես տիրապետող է - Մ.Թ.), իսկ մյուս մասը մնում է մուրացիկ, այնտեղ թագավորում է բռնությունը[15]:

Մատթեոս Մամուրյանը գրում է. «Թող հայ օրենսդիրները օրենքներ գրեն, բարձր գլուխները թող վերև թռին, թող երևելի գիտուններ բնությունը վերլուծեն, նշանավոր քաղաքագետներ տերություններ վարելու չափ ճարտար լինեն, բայց ասոնք ամենն ալ մեր ազգին համար երկրորդական կարևորություն ունեցող բաներ կդառնան՝ եթե նույն ազգին ներսը մտնելով՝ նրա վերքերն ու անմիջական պիտույքը քննելով՝ պետք եղած ազդու դարմանները գործնականապես չմատակարարվին»[16]: Ավելին, ապրելով, նաև կրթություն ստանալով Եվրոպայում, իրազեկվելով, ծանոթանալով նրա «առաջադիմական կարգերին», թափանցելով դրանց բովանդակության մեջ՝ Մամուրյանը «Անգլիական նամականի»-ում զայրույթով գրում է. «Կդիտեի, որ Եվրոպայի քաղաքակրթություն կոչվածն, հարստությունն ու երջանկությունը միայն դաս մը մարդիկ կվայելեն, իսկ մյուսները դժբախտ ստրուկներ են, որ ոչ միայն կրթությամբ, այլև **ապստամբությամբ** պիտի վերածնին և իրենց շղթաները քակելու պիտի հաջողին»[17]:

Իհարկե, մեջբերումները կարելի է շարունակել[18], սակայն նշենք միայն, որ հետխորհրդային երկրներում ստեղծած կապիտալիստական կամ այսպես կոչված շուկայական կարգերի գաղափարախոսներն անգամ դրանք անվանում են անհուսալի, ժամանակավրեպ, և ոչ հազվադեպ՝ այն անվանելով նեոֆեոդալիզմ իր փաստական բովանդակությամբ՝ նաև մարդու իրավունքների իրական պաշտպանության տեսանկյունից՝ ընդսմին մատնանշելով այդ կարգերի բերած աղետալի հետևանքները նաև ՀՀ-ում[19]:

Հեղինակներից շատերն իրավացիորեն նկատում են, որ հետխորհրդային հասարակական-տնտեսական, պետահիրավական կարգերը պետք է լինեին անհամեմատ կատարյալ և ոչ թե այնպիսին, ինչպիսին կան «դասական» կապիտալիզմի և

---

[15] Նալբանդյան 1985, էջ 474:

[16] **Մամուրյան Մ.,** Երկեր, «Հայաստան» հրատ., Երևան, 1966, էջ 391 (այսուհետև՝ Մամուրյան 1966):

[17] Մամուրյան 1966, էջ 136-137:

[18] Ավելի մանրամասն տե՛ս՝ **Թելունց Մ.Մ.**, Միքայել Նալբանդյան (Հասարակական-իրավաքաղաքական հայացքները: Նալբանդյանը և նրա ժամանակը), «Էդիտ Պրինտ» հրատ., Երևան, 2006 և ուրիշ:

[19] Տե՛ս, օրինակ, Общая теория государства и права в двух томах, том 1, изд. “Зерцало”, Москва,2000, с.110, **Телунц М.**, Какая конституция нужна народу, «Օրենք և իրականություն», 2002, N6 (44) ст. 34-36, **Jane D**., The Rise and Fall of state socialism Oxford, 1996, p. 188-201, **Ներսիսյան Վ.,** Իրավունքի և պետության տեսություն, Երևան, 2001, էջ 124, **Մինասյան Է.**, Հայաստանի Երրորդ հանրապետության պատմություն, ԵՊՀ հրատ., Երևան, 2014, **Խոջաբեկյան Վ.**, Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում և XXI դարի շեմին, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2001, և ուրիշներ:

դրա առավել խեղաթյուրված, խճողված ձևերով:

Յուրաքանչյուր հասարակության, պետության ամրության հիմնական երաշխիքը ներսոցիալական միասնությունն է, որը հնարավորություն կտա լուծելու իր առջև դրված խնդիրները, իսկ դա հնարավոր է միայն պատմական փորձի մանրազնին հաշվառմամբ հնարավորինս արդարացի սոցիալ-տնտեսական, պետաիրավական կարգերի ստեղծմամբ, որը ոչ միայն չի խախտի հասարակության սոցիալական միասնությունը, այլև կամրապնդի այն:

СИСТЕМА ОСНОВНЫХ ПРАВ И СВОБОД ЧЕЛОВЕКА ПО «ЗАПАДНИ ЧЕСТОЛЮБИЯ» - ***МАЛИК ТЕЛУНЦ-*** *В статье автор представляет систему Основных прав и свобод человека в «Западни честолюбия»: один из историкоправовых памятников армянского права и политико-правовой мысли. На основе историко-правовом, сравнительно правовом анализе автор сделав исторический переход к современной действительности, в частности институту прав и свобод человека, закрепленных в современных конституционных актах, автор делает свой основной вывод о том, что права и свобода человека могут быть фактически реализованы только тогда, когда они обеспечены всей справедливой и действительно народовластной социально-экономической, государственно-правовой общей системой.*

Ключевые слова: *государство, право, права и свободы человека, равенство, верховенство закона, конституции, «Западни честолюбия», Джозеф Эмин, Мовсес Баграмян, Шахамир Шахамирян, Эпоха Просвещения.*

THE MAIN SYSTEM OF HUMAN RIGHTS AND FREEDOMS ACCORDING TO 'SNARE OF GLORY' – ***MALIK TELUNTS*** *- In the following article the author refers to'Snare of glory', a real monument of Armenian right representing the main system of human rights and freedoms which originated in the 1970s and 1980s of the XVIIIth century. Meanwhile referring to the actual state of that institute in a historical-legal and legal-comparative way the author comes to the conclusion that the human rights and freedoms stated in the modern Constitution and legal acts can become more or less realizable provided they are guaranteed by fair and democratic, social-economic and state-legal systems*

Key words: *state, right, human rights and freedoms, equality, rule of law, Constitution, «Unare of glory», Joseph Emin, Movses Baghramyan, Shahamir, Shahamiryan, The Age of Enlightenment.*

АРТЁМ ДЕРЯГИН

ПАДЕНИЕ УРОВНЯ ДОВЕРИЯ К ТЕЛЕВИДЕНИЮ В АРМЕНИИ И РОССИИ

В данной статье мы рассматриваем причины снижения уровня доверия к телевидению в росскийском и армянском обществе. Тенденция снижения рассматривается по результатам социологических исследований с 2017 по 2019 годов. Анализ проводится на основе двух подходов для понимания уровня доверия в обществе, первый - на основе понятия доверия, как результат общественного явления; второй – результаты социологических исследований таких центров, как Левада-Центр, ФОМ, Media Initiatives Center, CRRC-Armenia. На основе изучения результатов мы допускаем возможность снижения уровня доверия к телевидению, первым делом принимая во внимание дифференцированный отбор – обращение аудитории к менее предвзятым источникам информации (Интернет). Мы предполагаем, что если медиаконтролеры не поменяют политику ведения программ, то под риском разрушения будет институт телевидения.

Ключевые слова: *доверие, телевидение, кризис, аудитория, интернет, социологический подход, метод, современное телевидение.*

В XXI веке, в частности под конец второго десятилетия, наблюдается смена коммуникационных парадигм. Интернет занимает крепкую позицию в повседневной жизни общества, который удовлетворяет сразу несколько потребностей: коммуникационную, информационную и рекреативную. Смена коммуникационной модели не могла затронуть и работу СМИ, которая является мостом между политическими институтами и общественностью. Результаты регулярного мониторинга Фонда «Общественное Мнение» показывают, что в 2020 году суточная аудитория Интернета стала составлять 70% взрослого населения России [1]. Конечно же, одним из аспектов, которое определяет силу влияния, является доверие, это то, насколько правдивой считает аудитория воспринимаемую информацию.

Телевидение занимает особое место в жизни современного общества, является уникальным инструментом в социальной жизни. Телевидение представляет из себя одним из важнейших инструментов формирования социального пространства.

Нынешний потенциал воздействия СМИ на массовое поведение далеко не так силен, как представляется. Проблема заключается в доверии аудитории. Значительная

часть общества уже не доверяет СМИ. Причем следует отметить, это касается как телевидении, так и всему институту СМИ.

А. Брокгауз и А. Ефрон в своем «Энциклопедическом словаре» дают следующее определение понятию доверия - «психическое состояние, в силу которого мы полагаемся на какое-либо мнение, кажущееся нам авторитетным, и потому отказываемся от самостоятельного исследования вопроса, могущего быть нами исследованным» [2]. С. И. Ожегов в «Толковом словаре» расширяет определение понятия доверия, делая акцент на то, что это «уверенность в чьей-нибудь добросовестности, искренности, в правильности чего-нибудь и основанное на этом отношение к кому-, чему-нибудь» [3].

Особое место получил феномен доверия общества в работах Ф. Фукуямы. В своей работе «Доверие: социальные добродетели и путь к процветанию» Фукуяма подразделяет общества с низким и высоким уровнем доверия, подкрепляя мнением, что если для американского общества характерен кризис доверия, то для российского общества присуще формирование «новой культуры доверия», основанной на либерализации как материальных, так и духовных ценностей [4]. Что также подходит и для армянского общества, после «бархатной революции».

Разные исследователи склонны к мнению, что индивиды на основе социально-демографических характеристик склонны доверять медиа с точки зрения пола и образования.

Институт доверия строится на взаимодействии 3-х сторон: государства, общества и СМИ. Примечательно, что ключевую роль в этом процессе занимает институт СМИ, иначе «проявление недоверия к СМИ порождает угрозу нарушения коммуникативной связи между обществом и властью, а также дефицит доверия к последней. Такое развитие событий в перспективе может способствовать росту протестных настроений или гражданского абсентеизма и даже привести к дестабилизации социально-политической обстановки в государстве» [5].

В контексте доверия к СМИ важны три основных момента:

1. уровень доверия в целом;
2. динамика его изменения во времени;
3. факторы, объясняющие поведение показателя [6].

Так же не мало важными являются такие вопросы как: кто доверяет; каким СМИ доверяют больше, а каким меньше; значение, которое имеет показатель доверия к СМИ для самих СМИ и для общества вообще.

Для телевидения важно учитывать особенности восприятия программ аудиторией. Несмотря на то, что в целом аудитория телевидения состоит из миллионов зрителей, у экрана обычно собирается небольшая, чаще всего семейная группа людей, причем просмотр проходит, как правило, в домашних условиях. Это очень важное обстоятельство. Если газеты, журналы, книги изначально предназначены для чтения в

одиночку и в самых разных условиях, а прослушивание радиопередач возможно практически в любых условиях и преимущественно индивидуально, то телевидение требует умения обращаться одновременно и к миллионной аудитории, и к малой группе людей, контакт с которой должен происходить на высоком уровне доверительности. Массовая аудитория обращается к телевидению преимущественно в свободное время, чаще всего вечером после рабочего дня или в дни отдыха, что требует от журналистов умения сочетать информационную насыщенность с высоким уровнем увлекательности и способностью вписать передачи в часы отдыха и подготовки к следующему рабочему дню [21].

В США и Европе проблема доверия СМИ изучается на протяжении многих лет. Результаты исследований выявили одинаковую закономерность: стабильное падение уровня доверия ко всем видам СМИ. В России проблема доверия к СМИ изучена не так хорошо, как в Западных странах, однако имеются достаточные сведения для констатации тенденции спада доверия к СМИ в российском сегменте. Крупными аналитическими центрами в России являются: «ВЦИОМ»; «Левада-Центр», Фонд «Общественное мнение». Аналогичного рода исследования также проводятся в Армении. В своей работе мы рассматривали данные совместных исследований 2 центров: Media Initiatives Center, CRRC-Armenia.

По результатам опроса Левада-Цент в 2019 году информацию по телевизору получало 72% россиян [7], в 2018 – 85% [8], 2017 – 87.5% [9]. Уровень доверия к телевизионным новостям у россиян составил: в 2019 году – 54%, 2018 – 51%, 2017 – 47%. Зачастую уровень доверия к телевидению связан с одобрением деятельности руководства страны и внутренним положением дел. Как показывает отчет социологических исследований в 2019 году, доверие россиян к интернету и социальным сетям вырос. Около 72% россиян пользуется интернетом “ежедневно, практически ежедневно” и “несколько раз в неделю”; в 2018 году – 60%; а в 2017 – 47% [10]. Основываясь на результатах исследования Левада-центра в 2019 году, телевидение все еще остается главным источником информации.

А теперь сравним данные аналогичного опроса, который провел ФОМ. Результаты исследования показали, что главными источником информации для россиян в 2019 году является телевидение, так считает 71% респондентов [11]. Данный показатель в 2018г. составлял 72% [12], а в 2017 – 78% [13]. Интернет, как источник новостей, показал следующую динамику: 2019 г. – 44%, 2018 – 40%, 2017 – 41%. В плане вопроса о доверии СМИ телевидение пока еще занимает лидирующие позиции, за ним идет интернет. Примечательно, что в процентном соотношении разница между ними не столь велика. И так, в 2019 году телевидению доверяло 36%, интернету – 24.4%, 2018г: телевидению – 46, интернету– 24,5%; 2017г.: телевидению – 49, интернету – 32.25.

В Армении результаты исследования, которые были проведены Media Initiatives Center совместно с CRRC-Armenia, выявили следующую картину: в 2019 году,

телевидение, как основной источник информации, отметили 72% населения; в 2017 – 74%, а в 2015 – 82% [14]. Довольно резкий скачок зарегистрирован у Интернета. Так, в 2019 году Интернет как основной источник информации отметили 57%; в 2017 – 45%, а в 2015 – 32%. В вопросе о доверии СМИ ответы респондентов имеют такой вид: телевидение – 9% отметили, что «очень доверяют», 69%-«больше доверяют, чем нет», 20%-«больше не доверяют, чем да» и 2 %-процентов «не доверяют»; Интернет – 4% отметили, что «очень доверяют», 55%-«больше доверяют, чем нет», 36%-«больше не доверяют, чем да» и 6%-процентов «не доверяют». Данные относятся к 2019 году [15]. Сравнивая результаты исследований как в России, так в Армении, мы можем заключить, что в обеих странах главным источником информации является телевидение. Однако, сравнивая динамику роста доверия к интернету и спада телевидения, в скором времени основным источником информации будет именно интернет.

Прежде чем выявить причины недоверия к телевидению, следует отметить, что термин «доверие» разные исследователи определяют по-разному. Проанализировав несколько точек зрения, мы можем заключить, что есть два подхода к пониманию доверия:

1. Некая характеристика общества, которая передается каждому индивиду через культуру. При том, что индивид в данном процессе является пассивным субъектом [16].

2. Представляется в виде мировоззренческой установки, которая формируется у индивида на основе познавательной деятельности [17].

Исходя из двух определений понятия доверия, мы можем прийти к выводу, что недоверие может быть определено либо социальной ситуацией, либо результатом собственных суждений. Но все же данный аспект не раскрывает социал-психологические причины и последствия снижения уровня доверия к телевидению.

Растущее недоверие к телевидению, с точки зрения первого пункта – это результат снижения недоверия в самом обществе, где репутация общественных институтов не слишком велика [17]. Недоверие является причиной снижением эффективности работы политических и экономических институтов. По мнению Ф. Фукуяма: «доверие является фактором, обуславливающим темпы формирования социального капитала и влияющим на экономическое развитие общества» [18].

По мнению исследователей, которые придерживаются второй точки зрения, недоверие к телевидению является признаком увеличение сознательности людей при снижении качества новостной продукции. По мнению Серебрякова, «люди, склонные не доверять массмедиа, как правило, являются хорошо информированными гражданами, неравнодушными к важным проблемам общества. Их доверие или недоверие источникам новостей строится на критическом анализе информации, полученной из нескольких альтернативных источников.

Еще одна причина, которая влияет на увеличение недоверия к телевидению, связана со значительным сокращением со стороны аудитории потребления общественно-политических программ. Аудитория стала дифференцированным по характеру взаимодействия, и различные социальные группы по-разному реагируют на информационное воздействие.

Подытоживая, можно сказать, что вопрос доверия общества к телевидению требует дальнейших социологических исследований. Институт доверия в условиях информационного общества представляет из себя систему дифференцированного отбора. Аудитория все больше начинается получать информацию из менее предвзятых источников, которые предлагают альтернативные мнения.

Несмотря на то, что телевидение все еще остается доминирующим каналом распространения информации, социологические данные разных организаций свидетельствуют о снижении уровня доверия к нему. Можно сказать, что, если «руководители телеэфира» не поменяют политику составления телевизионных программ, произойдет разрушение института доверия общества к телевидению.

*ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ – **ԱՐՏՅՈՄ ԴԵՐՅԱԳԻՆ**-Այս հոդվածում մենք անդրադառնում ենք հայկական և ռուսական հեռուստատեսության հանդեպ վստահության անկման պատճառներին: Անկման միտումը դիտարկվում է 2017-ից 2019 թվականների սոցիալական հետազոտությունների արդյունքների հիման վրա: Վերլուծությունն իրականացվում է հասարակության մեջ վստահության մակարդակը հասկանալու երկու մոտեցումների հիման վրա, առաջինը՝ վստահության հասկացությունը՝ որպես հասարակական երևույթի արդյունք, երկրորդը՝ Լևադա կենտրոնի, ՖՈՄ - ի, Media Initiatives Center – ի, CRRC Հայաստանի սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքների հիման վրա: Արդյունքների ուսումնասիրության վրա հիմնվելով՝ մենք թույլ ենք տալիս նվազեցնել հեռուստատեսության նկատմամբ վստահության մակարդակի նվազեցման հնարավորությանը՝ առաջին հերթին հաշվի առնելով տարբերակված ընտրությունը՝ լսարանի վերաբերմունքը տեղեկատվության ոչ կողմնակալ աղբյուրներին (ինտերնետ): Մենք կարծում ենք, որ եթե մեդիավերահսկողները չփոխեն ծրագրեր վարելու քաղաքականությունը, ապա փլուզման վտանգի տակ կհայտնվի հեռուստատեսության ինստիտուտը:*

Բանալի բառեր՝ *վստահություն, հեռուստատեսություն, ճգնաժամ, լսարան, ինտերնետ, սոցիոլոգիական մոտեցում, մեթոդ, ժամանակակից հեռուստատեսություն.*

THE FALL IN THE LEVEL OF CONFIDENCE IN TELEVISION IN ARMENIA AND RUSSIA- ***ARTYOM DERYAGIN*** - *In this article, we consider the reasons for the decrease in the level of trust in television in the Russian and Armenian society. The downward trend is considered based on the results of sociological research from 2017 to 2019. The analysis is based on two approaches for understanding the level of trust in society, the first-on the basis of the concept of trust as a result of a social phenomenon; the second-on the results of sociological studies of such centers as Levada Center, FOM, Media Initiatives Center, CRRC-Armenia. Based on the results, we assume the possibility of reducing the level of trust in television, first of all taking into account the differentiated selection-the appeal of the audience to less biased sources of information (the Internet). We assume that if the media controllers do not change the program management policy, the television Institute will be at risk of destruction.*

Key words: *trust, television, crisis, audience, Internet, sociological approach, method, modern television.*

ՄՀԵՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՇՈՒՇԻԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ (1920 Թ.) ՁԱԽՈՂՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ [1]

Սույն հոդվածի նպատակն է 1920 թ. մարտի 23-ին Շուշի քաղաքի ինքնապաշտպանության ձախողման պատճառների վերաբերյալ հայ պատմագրության գնահատականները քննական վերլուծության ենթարկելը և համապատասխան ու անհրաժեշտ եզրահանգումներ կատարելը:

Գիտական նորույթը հիմնախնդրի հարցադրման և շրջանառվող ու նորահայտ փաստերի ռազմագիտական-քննական վերլուծության հիման վրա միանգամայն նոր եզրահանգումների և հետազոտական արդյունքների մեջ է:

Ամենահրատապ խնդիրը այսպես կոչված «ապստամբության» առասպելի տարփողմամբ հայկական կողմին նախահարձակ ներկայացնելու աղրբեջանական նենգափոխման բացահայտումն է: Այս խնդրին վերստին անդրադառնալը հրատապ է այն ցավալի իրողության առումով, որ թեև մեր գիտական հրապարակումներում բազմիցս ցույց ենք տվել «ապստամբության» առասպելի անհարկի շրջանառության ռազմաքաղաքական ու գիտաճանաչողական բացասական հետևանքները, սակայն հայ պատմագրության մեջ համառորեն շարունակում են նախորդների սխալների վերարտադրության ակամա կամ միտումնավոր փորձերը:

Շուշիում արմենոցիդի լուսաբանման հիմնահարցերի քննությունը ցույց է տալիս, որ դրանց մի մասը, և հատկապես «ապստամբության» առասպելը հայ պատմագրությունն իներցիայով շրջանառում է՝ ակամա հայտնվելով ցեղասպանության քաղաքականությունն ուրացող մեր հակառակորդների նենգափոխումների սարդոստայնում:

Բանալի բառեր՝ *հայ պատմագրություն, Շուշիի ինքնապաշտպանություն, քննական վերլուծություն, նոր եզրահանգումներ, աղրբեջանական նենգափոխում, ռազմաքաղաքական հետևանքներ, «ապստամբության» առասպել, ցեղասպանության քաղաքականություն:*

---

[1] Հետազոտությունն իրականացվել է ԱՀ ԿԳՍ նախարարության տրամադրած ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № 18 AK-007.«Ռազմարվեստի զարգացման արդի փուլի առանձնահատկությունները Արցախում» գիտական թեմայի շրջանակներում:

Իրավամբ Այսրկովկասի մարգարիտը համարված Շուշի քաղաքը 1920 թ. մարտի 23-ին դարձավ ինքնահռչակ Ադրբեջանի դեմոկրատական հանրապետության (այսուհետև՝ ԱԴՀ) կանոնավոր զորքերի և թուրք-քրդական զինված հրոսակախմբերի ռազմական հանցագործության զոհը: Մի քանի օրում հրո ճարակ դարձան Շուշի քաղաքի ոսկեդարի ընթացքում արարված համամարդկային նշանակություն ունեցող արժեքները, հայ ժողովրդի մշակութային ժառանգության բացառիկ գոհարներ, ճարտարապետական կոթողներ, իսկ այդ ամենն արարած հայ ազգաբնակչությունը ցեղասպանության ենթարկվեց. գազանաբար հոշոտվեցին հազարավոր խաղաղ քաղաքացիներ, առևանգվեցին և հետագայում մահմեդականացվեցին հարյուրավոր աղջիկներ ու երեխաներ, զնդաններ նետվեցին և սրի քաշվեցին հազարավոր անմեղ մարդիկ: Թեև մեկ դար է անցել մարդկության դեմ իրագործված այդ ոճրից ու ռազմական հանցագործությունից, սակայն հայ պատմագրությունը դեռևս սպառիչ պատասխաններ չի տվել Արցախում 1920 թ. ռազմաքաղաքական զարգացումների և թուրք-ադրբեջանական զավթիչների դեմ պայքարի, Ալեքսանդր Խատիսյանի կառավարության քաղաքականության, ընդհանրապես Արցախի և, մասնավորապես, հայ դիմադրական շարժման կենտրոն Շուշիի ինքնապաշտպանության հետ առնչվող բազմաթիվ հարցերի:

Սույն հոդվածի նպատակն է 1920 թ. մարտի 23-ին Շուշի քաղաքի ինքնապաշտպանության ձախողման պատճառների վերաբերյալ հայ պատմագրության գնահատականները քննական վերլուծության ենթարկելը և համապատասխան հետևություններ ու անհրաժեշտ եզրահանգումներ կատարելը:

Այդ նպատակն իրագործելու համար հետամուտ ենք եղել հետևյալ խնդիրների լուծմանը.

ա) ներկայացնել թեմայի ուսումնասիրության աստիճանը, ինչը թույլ կտա նաև որոշարկել սույն հոդվածի հեղինակի տեղն ու դերը հիմնախնդրի ձևակերպման ու գիտականորեն պարզաբանման գործում,

բ) սահմանել Շուշիի ինքնապաշտպանության ձախողման պատճառների շուրջ հայ պատմագրության առաջադրած գաղափարների ու տեսակետների վերլուծության ռազմագիտական բաղադրիչները,

գ) վերհանել թույլ տրված սխալների ու բացթողումների իրական, հաճախ լռության մատնված, չքաղաքականացված ու չնենգափոխված պատճառները՝ պատմության դասերը սերունդներին ավանդելու, հետևաբար՝ պատմագիտության հիմնական գործառույթներից մեկն իրականացնելու նպատակով:

Գիտական նորույթը հիմնախնդրի հարցադրման և շրջանառվող ու նորահայտ փաստերի ռազմագիտական-քննական վերլուծության հիման վրա միանգամայն նոր եզրահանգումների և հետազոտական արդյունքների մեջ է:

Տարիներ առաջ հիմնախնդրի երկարատև ուսումնասիրությունների արդյունքում մենք հանգել էինք այն եզրակացությանը, որ Շուշիի մարտյան եղեռնագործությունը պետք է դիտարկել արևմտահայության զգալի մասի

բնաջնջումից կամ իր բնօրրանից՝ Արևմտյան Հայաստանից նրա դեպորտացիայից հետո նաև Արևելյան Հայաստանում և Այսրկովկասի հայաբնակ այլ վայրերում հայ ժողովրդի ցեղասպանության՝ Թուրքիայի շարունակական քաղաքականության համատեքստում[2]: Հետագայում այդ միտքը դարձել է առանձին հոդվածների վերնագրեր[3]:

Թեև Շուշիի մարտյան եղեռնագործության թեման անկախության շրջանի հայ պատմագրության ուշադրությանն է արժանացել, սակայն Շուշիի ինքնապաշտպանության գործում լուրջ թերացումների ու կոպիտ սխալների, ժամանակի քննությանը չդիմացած մարտավարության ողբերգական հետևանքների և հարակից այլ հարցերի մասին առանձին ու ընդհանրացված գիտական ուսումնասիրություն դեռևս չկա:

Արցախյան շարժման տարիներին հակամարտության ակունքների հանդեպ հետաքրքրության աճին զուգընթաց ստեղծված մեծածավալ գրականության էջերում արծարծվել են 1918-1921 թթ. իրադարձությունների ամենատարբեր կողմերն ու տեսանկյունները[4]: Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Խիկար Բարսեղյանը ավելի քան երեք տասնամյակ առաջ էր նշել Շուշիի եղեռնագործությունն ուսումնասիրելու անհրաժեշտության մասին՝ գրելով, որ այն «իհարկե, սպասում է իր գիտակ հետազոտողին[5]: Թեև Շուշիի ողբերգությանը հաջորդած տարիներին և մինչև Արցախյան շարժման քաղաքական փուլի մեկնարկը ևս անդրադարձներ եղել են 1920 թ. մարտյան ոճրագործությանը, սակայն մնալով 1918-1921 թթ. իրադարձությունների ետնախորշում՝ այն առանձնահատուկ ուշադրության չի արժանացել:

Ականատեսների՝ պարբերական մամուլում հրապարակված հավաստի վկայությունները որոշակի լույս են սփռել 1920 թ. մարտյան դեպքերի վրա[6], սակայն շրջանցել են Շուշի քաղաքի ինքնապաշտպանության հիմնախնդիրները, դրանց

---

[2] Հարությունյան Մ., Արմենոցիդի քաղաքականության ուրացումը և ապստամբության առասպելը, «Լրատու» (գիտական հոդվածների ժողովածու), Ստ., 2008, հմ. 1, էջ 71-78, նույնի՝ Շուշիի մարտյան ողբերգության պատմագրության հիմնահարցերը, «Ադրբեջանի պետական ահաբեկչությունը և էթնիկական զտումների քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի դեմ», 2010 թ. մարտի 21-24-ը Ստեփանակերտում և Շուշիում կայացած միջազգային գիտագործնական կոնֆերանսի զեկուցումներ: Խմբ. Մ. Ա. Հարությունյանի «Կաճառ» տարեգիրք, գիրք 4 (47-58), Շուշի, «Կաճառ» գիտ. կենտրոնի հրատ., 2010, էջ 45:

[3] Տես Բալայան Վ., 1920 թ. մարտի 23-ի Շուշիի ջարդերը որպես 1915 թ. Հայոց ցեղասպանության անպատժելիության հետևանք, «Հայագիտական ուսումնասիրություններ», Ս., ԱրՊՀ հրատ., 2015, № 6, էջ 31-42, Balayan V., The Massacre of the Armenians of Shushi on March 23, 1920 as a Consequence of Impunity of the Armenian Genocide in 1915, Journal of Armenian Studies (International Review of Armenian Studies), Y., Printing House of the NAS RA, 2016, № 2, p. 95-105:

[4] Այդ շրջանի համապատասխան գրականության տեսությունը տես Հարությունյան Մ., Արցախյան շարժման պատմագրության հիմնահարցերը, մաս 1-ին, Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատ., 2019, էջ 44-47, 169-184:

[5] Բարսեղյան Խ., Պատմությունն անհնար է կեղծել...(Գրախոսության փոխարեն: Փաստեր, մտորումներ), «Սովետական Հայաստան», 9 ապրիլի 1989 թ., էջ 3:

[6] Դէպքերը Ղարաբաղում. Շուշու կոտորածը, «Մշակ», 1920 թ., № 9, Շուշու տրագեդիան. խուճապ, «Մշակ», 1920 թ., № 37 (արտատպություն «Սիւնիք» թերթից), Հովհաննիսյան Բ., Շուշվա կոտորածը ականատեսի աչքերով, «Ավանգարդ», 1990 թ., № 45, Տեր-Սարգսյան Մ. (Միտսար), Լեռնային Ղարաբաղ, «Ավանգարդ», 1991 թ., №№ 34-35 ևն:

հետևանքով ունեցած անհաջողությունների խորքային պատճառները:

Դրանք առանձին ուսումնասիրության նյութ է դարձրել տողերիս հեղինակը[7]: Այնուհետև անդրադարձներ են եղել պարբերական մամուլում[8]: Ինքնապաշտպանության կազմակերպման թերությունները և հատկապես «ապստամբության» առասպելի խնդիրը քննվել ու արդյունքները հրապարակվել են նաև գիտական հրատարակություններում[9]: Իհարկե, մինչ այդ էլ հրապարակումներ եղել են, սակայն դրանցում, ակներևաբար, կոնկրետ հարցադրումների պատասխանները դժվար է գտնել[10]:

Քննարկվող թեմայի լուսաբանման համար առավել արժեքավոր հրատարակություններից հատկանշելի են Հայաստանի Ազգային արխիվի լույս ընծայած փաստաթղթերի ժողովածուները[11]: Թեմային առնչվող հետաքրքիր փաստաթղթեր ու նյութեր կան Արցախի թեմին նվիրված «Վավերագրեր հայ եկեղեցու պատմության» մատենաշարի իններորդ գրքում[12]: Մեզ հետաքրքրող հարցերի լուսաբանման համար հետաքրքրություն ներկայացնող առանձին փաստաթղթեր հրապարակվել են տարբեր պարբերականներում[13]:

Զգալի փաստական նյութ են պարունակում դեպքերի մասնակիցների և ժամանակակիցների օրագրությունների ու հուշագրությունների հիման վրա կազմված

---

[7] Տե՛ս Հարությունյան Մ., Շուշիի մեծ ողբերգությունը (1920 թ. մարտ), դիպլոմային աշխատանք, Ս., 1994 (այժմ պահվում է «Կաճառ» գիտական կենտրոնի արխիվում, ֆ. № 34, գ. № 5):

[8] Հարությունյան Մ., Խորհրդածություն Շուշիի մեծ ողբերգության շուրջ, «Ազատ Արցախ», 23 մարտի 1999 թ., № 33, էջ 4,7, նույնի, ... Թե ով է հանիրավի մեղադրանքի հեղինակ, «Ազատ Արցախ», 24 օգոստոսի 1999 թ., № 99, էջ 3, նույնի, Շուշիի ողբերգության մի քանի պատճառների մասին, «Մարտիկ», 20-24 մարտ, 2000 թ., № 12, էջ 3, նույնի, Արմենոցիդի քաղաքականության ուրացումը և ապստամբության առասպելը (Շուշիի մարտյան ողբերգության 85-րդ տարելիցի առթիվ), «Ազատ Արցախ», 24 մարտի 2005 թ., № 34, նույնը տե՛ս նաև՝ «Մարտիկ», 19-26 մարտ 2005 թ., № 11, էջ 4, Отступление от политики арменоцида и миф о восстании (К годовщине мартовской трагедии в Шуши), “Азат Арцах”, 26 марта 2005 г., № 20, с. 4:

[9] Հարությունյան Մ., Արմենոցիդի քաղաքականության ուրացումը և ապստամբության առասպելը, «Լրատու» (գիտական հոդվածների ժողովածու), Ս., 2008, № 1, էջ 71-78, նույնի՝ Հայաստան-Արցախ. պատմության և արդիականության զուգահեռներում, հոդվածների ժողովածու, գիրք առաջին, Ս., 2009, էջ 135-146, 215-220, նույնի՝ Անցյալը մեզ հետ է. վերագնահատումներ, խորհրդածություններ, Շ., «Կաճառ» գիտական կենտրոն, 2015, էջ 37-51 ևն:

[10] Աբրահամյան Հ., Հայոց Շուշին հրե բոցերի մեջ, «ԼՂ Հանրապետություն», 1995 թ., № 4, էջ 3, № 7, էջ 3 (նույնը տե՛ս նաև՝ «ԼՂ Հանրապետություն», 1997 թ., № 11, էջ 4), նույնի՝ Ինչու՞ Շուշին հանձնվեց թուրք զավթիչներին, «ԼՂ Հանրապետություն», 1996 թ., № 159, էջ 5, 8, նույնի՝ Թե ինչու Զորավար Անդրանիկը չմտավ Ղարաբաղ, «ԼՂ Հանրապետություն», 10 սեպտեմբերի 1996 թ., Ավագյան Ս., Ղարաբաղ. փաստերի տրամաբանությունը (պարբերական մամուլի նյութերով), «Երեկոյան Երևան», 4.12.1989 թ., էջ 3, Բաղդասարյան Մ., Գազանաբար խոշտանգված թագուհին (Շուշիի 1920 թ. մարտյան եղեռնի 75-ամյակի առթիվ), «ԼՂ Հանրապետություն», 1 ապրիլի 1995 թ.:

[11] Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում. 1918-1920 թթ.: Պատաս. խմբ.՝ Վիրաբյան Ա., կազմ.՝ Միրզոյան Ս., Ղազիյան Ա., Ե., ՀՀ պատմութ. արխիվ, 2003, Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում. 1918-1920 թթ., փաստաթղթերի ժողովածու, գիրք II, պատաս. խմբ.՝ Վիրաբյան Ա., կազմ.՝ Միրզոյան Ս., Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2012:

[12] Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան. գիրք Թ, Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1813-1933), կազմ. և առաջաբանը գրեց Սանդրօ Բեհբուդեանը, Ե., 2001:

[13] Արցախի և Զանգեզուրի պաշտպանությունը 1920 թ., «Երկիր», 7 հոկտեմբերի 1994 թ., Газиян А., ”... Но в Карабахе войн не станет меньше“ - свидетельствуют письма убийц и мародеров после Шушинской резни 1920 г., ”Голос Армении“, 30 марта 2004 г.,№ 32, с. 1-2:

հրապարակումները պարբերական մամուլում և վերջին երկտասնամյակի ընթացքում լույս ընծայված կամ վերահրատարակված գրքերը[14]:

Վիճահարույց հարցերի պատասխանների բազմազան տարբերակների ու առանձին վարկածների կարելի է հանդիպել 1918-1921 թթ. իրադարձությունների մասին պատմող տարաբնույթ հրապարակումներում, երկերում ու գրքերում[15]:

Հայ պատմագրության մեջ այս կամ այն կերպ արծարծված, բայց դեռևս միասնական կարծիքի չարժանացած հիմնահարցերը քիչ չեն[16]: Սակայն, մեր կարծիքով, ամենահրատապ խնդիրը այսպես կոչված «ապստամբության» առասպելի և հայկական կողմին նախահարձակ ներկայացնելու ադրբեջանական նենգափոխման բացահայտումն է: Այս խնդրին վերստին անդրադառնալը հրատապ է այն ցավալի իրողության առումով, որ թեև վերոհիշյալ գիտական հրապարակումներում բազմիցս ցույց ենք տվել «ապստամբության» առասպելի անհարկի շրջանառության ռազմաքաղաքական ու գիտաճանաչողական բացասական հետևանքները, սակայն հայ պատմագրության մեջ համառորեն շարունակում են նախորդների սխալների վերարտադրության ակամա կամ միտումնավոր փորձերը[17]:

---

[14] Միքայելյան Ա., Ղարաբաղի վերջին դեպքերը, «Հայրենիք», Բ., 1923, № 7, էջ 156-167, № 8, էջ 110-122, № 9, էջ 115-121, № 11, էջ 110-119, № 12, էջ 118-127 (այն արտատպվել է. Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան. գիրք Թ, Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1813-1933), էջ 778-827), Ստեփանեան Յ., Արցախեան կամ Շուշուայ գնդի պատմութիւնը, «Հայրենիք», Բ., 1935, №№ 3-7, Սարուր (Քիրս Սարոտ), Ղարաբաղի կցումը Ադրբեջանին, «Հայրենիք», Բ., Յունիս, 1929, № 8, արտատպված է՝ «Դրօշակ», մարտ, 1990, էջ 78-96, նույնի՝ Ղարաբաղի կռիվների շուրջ, «Հայրենիք», Բ., 1934, № 5, Լեռ, Անցյալից, Թ., 1925 (վերահրատարակվել է 2009 թ., Երևանում), Мелик-Шахназаров З., Записки карабахского солдата: Воспоминания участника событий 1918-1920 гг. в Нагорном Карабахе, М.-Е., 1995, Melik - Shahnazarow Z., Sketches of Karabakh soldier, M., 1996, Տեր-Դանիելյան Մ. (Արամայիս), Ղարաբաղի տագնապը (պատմության համար). օրագրություն (26 ապրիլի-26 հուլիսի 1919 թ.), Ե., 1993, Իշխանյան Ե., Լեռնային Ղարաբաղ. 1917-1920, Ե., 1999, Թումյան Հ., Դեպքերը Լեռնային Ղարաբաղում. 1917-1920 թթ., պատմական ակնարկ, Ե., 2008. Կսիբեկյան Ա., Հուշեր, 2 գրքով, Ե., 2011 ևն:

[15] Հմմտ.՝ Հարությունյան Մ., Շուշիի մարտյան ողբերգության պատմագրության հիմնահարցերը, «Ադրբեջանի պետական ահաբեկչությունը և էթնիկական զտումների քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի դեմ», 2010թ. 21-24-ը Ստեփանակերտում և Շուշիում կայացած միջազգային գիտագործնական կոնֆերանսի զեկուցումներ: Խմբ. Մ. Ա. Հարությունյանի «Կաճառ» տարեգիրք, գիրք 4, Շ., «Կաճառ» գիտ. կենտրոնի հրատ., էջ 45-60:

[16] Կարելի է հատկանշել Շուշիից նահանջող ռուսական ստորաբաժանման հանդեպ վերաբերմունքը, զենքի և զինամթերքի, կռվող ուժի պակասը, նախանշանակման վայր Շուշիի գնդի տեղափոխումը, ռազմավարական նշանակություն ունեցող Բերդաձորի անկումը, հայերի դիմադրության կարևոր կենտրոններից մեկի՝ Բաքվի կորուստը, զորավար Անդրանիկի արշավանքի ընդհատումը, կառավարման ու անվտանգության ապահովման ոլորտներում թույլ տրված կոպիտ սխալները, հատկապես՝ ինքնապաշտպանության սխալ ռազմավարությունը, նախահարձակ մահմեդականների հետ գոյակցության հնարավորության մասին պատրանքները, ռազմաքաղաքական ու սոցիալ-տնտեսական մի շարք գործոնների անտեսումը և այլն:

[17] Հարությունյան Հ., Շուշին Արցախյան գոյապայքարում(1918–1920 թթ.), «ՊԲՀ», 2013, № 1, էջ 22-43, նույնի՝ Շուշիի հայության կոտորածները (1919 թ. հունիս և 1920 թ. մարտ), «Բանբեր հայագիտության» (հայագիտական միջազգային հանդես), Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2015, N 1, էջ 50-69, Բալայան Վ., նշվ. հոդվ., էջ 31 (հմմտ.՝ անգլ. թարգմ. Journal of Armenian Studies, 2016, № 2, p. 95), Գևորգյան Հ., նշվ. գիրքը, էջ 563-564, 568-569, Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախը 1917-2000, գիրք Ա (1917-1923), Ե., 2003, էջ 178-183 ևն:

Հիմնահարցի ճշգրիտ գնահատմանը խանգարում էր այն հանգամանքը, որ ողբերգական իրադարձություններին հաջորդած առաջին մի քանի տարիներին՝ կապված «նոր կարգերի» հաստատման, դրանց «առավելության» առասպելի հաստատման և նախկին իշխանությունների վարկաբեկման որդեգրված ուղեգծի հետ, հնչել են միայն փոխադարձ մեղադրանքներ: Հրեշավոր եղեռնագործությանը զուգ-ընթաց ԱԴՀ-ն դիվանագիտական խողովակներով շրջանառության մեջ դրեց հայերի ապստամբության մասին ստահոդ վարկածը՝ իր կազմակերպած ոճրագործությունը փորձելով ներկայացնել որպես հայերի հուսահատ ընդվզման հետևանք:

Շուշիում կատարված ոճրագործությունների վերաբերյալ դեռևս 1920 թ. մարտի 30-ին «մուսավաթի» խորհրդի ընդհանուր ժողովի, իսկ ապրիլի 1-ին Ադրբեջանի պառլամենտի ընդունած բանաձևերում լկտիաբար մեղադրվել են հայերն ու Հայաստանի կառավարությունը: Փորձելով քավության նոխազ դարձնել մի խումբ ապստամբների՝ ԱԴՀ-ն չի մոռացել նաև սպառնալու, որ «**հետագայում ավելին կարվի, եթե Ղարաբաղի հայությունը խոհեմ ու հնազանդ չպահի իրեն**[18]», ինչն աներկբա բացահայտում է մուսավաթական կառավարության հանցագործ ու ֆաշիստական բնույթը (ընդգծումը մերն է.- Մ. Հ.): Փաստերի ծանրության տակ ակնհայտ է Թուրքիայի ծրագրած և ԱԴՀ-ի պետականորեն կազմակերպած ու իրագործած ցեղասպանության քաղաքականությունը, որի հերթական զոհը դարձավ նաև ծաղկուն Շուշի քաղաքը:

Ալեքսանդր Խատիսյանի կառավարության ու ՀՅԴ ներկայացուցիչ Արսեն Միքայելյանը, որի խղճին, դատելով ժամանակակիցների արժանահավատ վկայություններից ու գնահատականներից, ծանրացած է Շուշիի ինքնապաշտպա-նության աղետաբեր ձախողումը[19], թվարկելով հակառակորդի ագրեսիվ գործո-ղությունները և ներկայացնելով վճռական բախման անխուսափելիությունը՝ ջանում էր ապացուցել, որ բավարար ուժեր կային բնակչության ինքնապաշտպանության ու անվտանգության ապահովման համար, սակայն առկա հնարավորությունները չօգտա-գործվեցին: Ահա թե ինչ է գրել նա այդ առթիվ. «Քաղաքի Ինքնապաշտպանութեան Մարմնի և նախօրօք եղած առաջարկների հիման վրայ, դէպքերի ժամանակ, Ղարաբաղի Ինքն. Կեդր. Մարմինը կատարում է իր վրայ դրուած պարտակա-նութիւնները, քաղաք ուղարկելով Վարանդայի երկու շրջանի ոստիկանապետներին՝ իրենց զինուած ոստիկաններով (90 հոգի), 160 զինուած գիւղացիներ՝ Ն. Ա.-ի և Գ.-ի ղեկավարությամբ: Իսկ քաղաքը, այդ կռիւների ժամանակ, իր տրամադրութեան տակ ունէր մօտ 400 զինուած կռուողներ, որոնց օգտագործումը կախուած էր քաղաքի

[18] “Азербайджан”, 2 апреля, 1920 г., № 67:

[19] ՀՅԴ ԿԱ, թղ. 1649, գ. №№ 1- 6, ՀՀ ԲԿԱ (Հայաստանի հանրապետության Բոստոնի կենտրոնական արխիվ), ֆ. Ս. Վ. (Սիմոն Վրացյան), թղ. 8, գ. № 10, էջ 3: Հմմտ.՝ Hovannisian R., The Republik of Armenia. v. 3. From London to Sevres, February-August, 1920. University of California press, B.-L.- A.-L., 1996, p. 149-151, Իշխանյան Ե., նշվ. գիրքը, էջ 614-615, Գևորգյան Հ., նշվ. աշխ., էջ 563-565:

Ինքնապաշտպանական Մարմնից եւ ոստիկանապետ Ա. Տ.Ս.-ի[20] հրահանգներից»: Իսկ թե ինչու չհաջողվեց կանխել աղետը, նա փորձել է բացատրել հետևյալ կերպ. «Քաղաքը սակայն չի կարողանում օգտագործել այդ ուժերը: Ինքնապաշտպանական Մարմինը անգիտակ է իրերի կացութեան, իսկ Ա. Տ. Ս.-ն՝ անտարբեր: Ներս մտնող օգնական ուժերը գործում են ինքնագլուխ, իսկ քաղաքի ազգաբնակչութեան մէկ մասը, գլխաւորապես Ադրբէջանի կողմնակիցները, գլխավորութեամբ յայտնի ռուսամոլ եւ թրքամոլ Գիգի աղայի, սկսում են խանգարել՝ կարեւոր դիրքերը գրաւելու եւ յայտարարում են, թէ իրենք համաձայնել են Սուլթանովի հետ, որ հայկական կոտորած չպիտի լինի»:

Մյուս պատճառը թերևս համար մեկ պատասխանատու անձը համարել է ավանդական ու խրոնիկ հիվանդությունը. «Այդ վտանգի բոպէին քաղաքի ինտելիգենցիայի երկպառակութիւնը,- շարունակել է Ա. Միքայելյանը,- կռուող ոյժերի անղեկ դրութիւնը, Ինքնապաշտպ. Մարմնի խելակորույս վիճակը մէկ կողմից եւ այն, որ Սուլթանովի՝ առաջուց զանազան հայ տներում տեղեւորած սպաներն ու զինուորները սկսում են հրդեհել իրենց բնակած վայրերը, առաջ են բերում խուճապ, եւ ազգաբնակչութիւնը սկսում է փախչել դէպի գաւառ՝ Քարին Տակի խճուղիով՝ մառախուղի միջով, որ մեծապէս նպաստում է շատ շատերի փրկութեան»[21]:

Մեր հայրենակից Լեոն, ծանր տանելով հարազատ ծննդավայրի կորուստը, դառնաղի խոսքերով է գնահատում ողբերգությունը. «Խրախուսվելով Զանգեզուրցիների տարած հաղթությամբ, Դաշնակցությունը որոշել էր խլել Ադրբեջանի ձեռքից նաև Ղարաբաղը զուտ ֆիդայական եղանակով, այսինքն տեղական ապստամբության միջոցով, առանց պատերազմ հայտարարելու»: Անձնական վիշտը ազդել է նաև հետագա իրադարձություններին Լեոյի տված զգացմունքային գնահատականների վրա. «Շուշու հայությունը զգում էր, որ իրեն պիտի կոտորեն եւ ամեն կերպ աշխատում էր շահել քուրդ բժշկի [Սուլթանովի] սիրտը: Բայց հենց այն միջոցին ֆիդայականությունը դուրս էր սողում իր բույնից՝ մի անգամ էլ հայ ժողովրդի գլխին երկնքի պատուհաս դառնալու իր հիմար ու զզվելի տղայամտությամբ»: Պատմաբանն ամբողջ մեղքը բարդում է այդ արկա-ծախնդրությունը նախաձեռնողի գլխին. «Շուշու դահիճ հանդիսանում է դաշնակ-ցական սեւանուն Արսեն Միքայելյանը: Ոճրագործի հանդգնությամբ լցված այս մարդը վաթսուն հոգով մտնում է Շուշի նովրուզի (պարսկական նոր տարվա) օրը՝ մարտի 30-ին (՞ - Մ. Հ.), երբ թուրքերն իրենց տոնով էին զբաղված: Գիշերը մի ինչ որ տան արբեցողությամբ անցկացնելով՝ առավոտը գնում են զորանոցը վերցնելու եւ կրակ են բաց անում նրա դեմ: Թուրք զինվորները դուրս են վազում, կռիվ է սկսվում եւ մեր քաջերը կծիկս են գնում իրենց անպետք գլուխներն ազատում, թողնելով ժողովուրդը

[20] Այստեղ վրիպակ կա: Ոստիկանապետը Ավետիս Տեր-Ղուկասյանն էր (Разгром Шуши (От нашего корреспондента, Евлах, 11 апреля), "Слово", 16 апреля 1920 г.):

[21] Միքայէլեան Ա., Ղարաբաղի վերջին դէպքերը, «Հայրենիք» ամսագիր, Բ., 1923, № 11, էջ 118, № 12, էջ 121:

մուսավաթական ասկերների, թուրք խուժանի եւ նրանց առաջնորդ երկու բժիշկների՝ Սուլթանովի եւ Մեհմանդարովի ձեռքին»[22]: Անշուշտ, տեղի սղությունը հնարավորություն չի տալիս անդրադառնալ բոլոր կարծիքներին, բայցևայնպես, այս երկուսը, թերևս, տիպական են շրջանառվող երկու հիմնական տեսակետների համար: Ի դեպ, «ապստամբության» մասին խոսող ժամանակակից հայ հեղինակները, որպես կանոն, մարտի 23-ին Շուշի քաղաքից հեռու են եղել (Հարություն Թումյանը՝ Ասկերանում էր, Աբրահամ Կիսիբեկյանը՝ Հադրութում, Եղիշե Իշխանյանը՝ Հայաստանի հանրապետությունում, Լեոն՝ Թիֆլիսում, և այսպես շարունակ):

Այս հիմնախնդիրն արծարծելով՝ չենք կարող անտեսել 1922 թ. հունիսին Արցախի և Զանգեզուրի գործիչների մասնակցությամբ Թավրիզում տեղի ունեցած ժողովի նախագահ Գերասիմ Բալայանի և քարտուղար Զաքար Յոլյանի ստորագրությամբ «Ղարաբաղի դէպքերի պատմութիւն» խորագրով զեկուցագիր-տեղեկագրի[23] արձանագրումները, որոնք փաստում են Շուշիի կործանմանը ՀՀ կառավարության և ՀՅԴ բյուրոյի մեղսակցությունը: Այդ փաստը չեն անտեսել ՀՅԴ հայտնի գործիչ, անաչառ հուշագրող Եղիշե Իշխանյանը[24] և պատմաբան Համլետ Գևորգյանը[25]: Վերջինս, մասնավորապես, գրել է. «Արցախում տեղի ունեցած իրադարձությունները ներկայացնող վավերագրերի հավաստմամբ՝ այդ գործում հիմնական մեղավորները Արցախ գործուղված ՀՅԴ բյուրոյի գործիչներն էին»[26]: Այս հիմքի վրա եզրակացությունը կարող է լինել մեկը. ինչպես ժամանակին այդ կուսակցության «տղայամիտ» լիազոր-ներկայացուցիչները գործիք դարձան Ադրբեջանի մուսավաթական իշխանությունների ձեռքին Արցախի ինքնապաշտպանությունը ձախողելու և Շուշի քաղաքը կործանելու գործում, այնպես էլ նրա ապիկար գործիչների հետագա շաղակրատությունները սնուցում էին հայերին որպես սադրիչներ մեղադրելու և Ադրբեջանի ռազմական հանցագործությունները պարտակելու ձեռնարկումներում ադրբեջանական քարոզչությունը:

Հարկ է նշել, որ տարաբնույթ ու զանազան ծագում ունեցող փաստաթղթերում հանդիպող տեսակետները, իրար հակասող տեղեկություններն իսկական խառնաշփոթ են ստեղծել և գրեթե անհնար դարձրել միանշանակորեն որևէ վարկած պնդելը, մանավանդ՝ ապացուցելու հաջողությունը: Այս խառնիճաղանջությունը, ցավոք, նկատելի է նաև հետագա ուսումնասիրողների աշխատություններում: Այն տպավորությունն է ստեղծվում, որ արխիվային փաստաթղթերը հաճախ օգտագործվել են ոչ քննադատաբար, առանց դրանց ծագման բնույթի հաշվառման (խոսքը, օրինակ,

[22] Լեո, Անցյալից, էջ 437-438:

[23] ՀՅԴ ԿԱ, թծ. 1649, գ. №№ 1-6 (ցավոք, առայժմ մեզ անհասանելի են այդ նյութերը: Դրանց մասին որոշակի պատկերացում են տալիս պատմաբաններ Ռիչարդ Հովհաննիսյանի և Համլետ Գևորգյանի ընդարձակ մեջբերումները հիշյալ գործերի նյութերից. հմմտ.՝ Hovannisian R., The Republik of Armenia. v. 3. p. 153, Գևորգյան Հ., նշվ. աշխ., էջ 566):

[24] Իշխանյան Ե., նշվ. գիրքը, էջ 548, 552-554, 577 ևն:

[25] Գևորգյան Հ., նշվ. աշխ., էջ 563-565:

[26] Նույն տեղում, էջ 566:

փաստաթղթի միտումնավոր կամ վարկաբեկիչ, քաղաքական պատվեր, ոչ իրազեկ կամ աչառու հեղինակի ձեռքի գործ լինելու մասին է) և բանաքաղված տեղեկությունների ստուգման:

Ուսումնասիրելով այդ շրջանին վերաբերող բազմաթիվ փաստաթղթեր ու վավերագրեր, որոնց մեծ մասը հրապարակվել է առանձին ժողովածուներում, գիտական հանդեսներում ու աշխատությունների հավելվածներում՝ կարելի է գալ այն եզրահանգման, որ դրանցում ապակողմնորոշող ու գիտականության պահանջները չբավարարող, ինչու չէ՝ նաև անարժանահավատ տեղեկություններ շատ կան, որոնց սարդոստայնում չխճճվելու համար հարկ է քննախույզ մոտեցում ցուցաբերել և դրանք օգտագործել զգուշորեն, կիրառելով պատմահամեմատական մեթոդը և, որ կարևոր է՝ իրադարձությունների զարգացման տրամաբանությանը համապատասխան: Անշուշտ, դրանով չենք ուզում ասել, թե նախորդ ուսումնասիրողներն այս ամենը չեն նկատել և, առավել ևս՝ մտադիր չենք նշույլ անգամ նսեմացնելու կամ ստվեր գցելու նրանց կատարած շնորհակալ ու տքնաջան աշխատանքի վրա: Բայց նաև չենք կարող չարտահայտել նրանց երկերից մեր ստացած տպավորությունը, որոնց ընդհանուր թերությունը, մեր կարծիքով, քաղաքագիտական մտքի ու գնահատականների պակասն է: Սա հատկապես ակնհայտ է այսպես կոչված «ապստամբության» առասպելի տարփողման ու անհարկի ուռճացման պարագայում, մինչդեռ չենք կարծում, թե ամեն ինչ եղել է այնպես, ինչպես ներկայացվում է՝ ակամա տրվելով հակառակորդի ասպարեզ հանած հերթական քաղաքական սադրանքին: Պատահական չէ, որ ուսումնասիրողներից, օրինակ, Բագրատ Ուլուբաբյանը, փորձել է խուսանավել երկու տեսակետների միջև[27] (այսինքն՝ ապստամբությու՞ն, թե՞ զինված ինքնապաշտպանություն նախահարձակ եղած ադրբեջանական զորքերից): Ընդհանուր մտայնությունն այն է, որ էլեկտրականացված (լարված) մթնոլորտում Սուլթանովը և մյուս դահիճները առիթի էին սպասում վաղուց ծրագրված հայերի բնաջնջումն իրականացնելու համար: Սա ևս կարելի է ընդունել: Սակայն ոչ համոզիչ ու անտրամաբանական է այն թյուր վարկածը, թե իբր «հայկական կողմն է տվել այդ առիթը»: Այն որևէ կերպ չի տեղավորվում այն փաստի մեջ, որ մուսավաթական Ադրբեջանի կանոնավոր զորքերի և թուրք-թաթարներից ու քրդերից կազմավորված ավազակախմբերի հարձակմանը հայերը պատասխանել են զինված ինքնապաշտպանությամբ, ինչը Ադրբեջանի քարոզչական մեքենան ներկայացրել է որպես ապստամբություն՝ հետևանքը պատճառի նենգափոխելու միջոցով միջազգային հանրությանը մոլորեցնելու և երբեմնի ծաղկուն Շուշի քաղաքի ավերումն ու հայ բնակչության ցեղասպանությունն արդարացնելու նպատակով[28]:

Ուսումնասիրելով անցյալը, խնդրո հարցի վերաբերյալ բազմաթիվ վավերագրերն ու վկայությունները՝ կարելի է համոզվել, որ հայ ժողովրդին այդպես էլ

[27] Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարը, Ե., «Գիր գրոց», 1994, էջ 78-83:
[28] Հարությունյան Մ., Անցյալը մեզ հետ է. վերազնահատումներ, խորհրդածություններ, էջ 32:

չհաջողվեց լիարժեքորեն ինքնակազմակերպվել և ամբողջովին չեզոքացնել բնիկների դանդաղ ոչնչացման կամ ուծացման թուրքական քաղաքականությունը: Այս տեսանկյունից մանավանդ վերահիմաստավորման կարիք ունի ժողովրդի ղեկավարման ղեկը ստանձնած քաղաքական կուսակցությունների ու առանձին գործիչների բախտորոշ ժամանակների գործունեությունը: Դժվար չէ նկատել, որ նրանք տասնամյակներ շարունակ հեղեղել են հայ տեղեկատվական ու գաղափարական ամբողջ տարածությունը երևակայական ու մտացածին պատմություններով՝ ինքնարդարացման և քաղաքական ընդդիմախոսներին մեղադրելու (ավելի ճիշտ՝ մեղքը նրանց գլխին բարդելու), մի խոսքով՝ պատասխանատվությունից խուսափելու նպատակներով:

Փաստերը վկայում են նաև այն մասին, որ արդեն 1920 թ. սկզբներին Ադրբեջանում գլուխ էին բարձրացրել իթթիհատականները և ագրեսիվ քարոզչություն ու տրամադրություններ էին տարածում և՛ կառավարության, և՛ ողջ մահմեդական բնակչության շրջանում: Այդ մասին ժամանակին իրազեկել է Ադրբեջանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Տիգրան Բեկզադյանը՝ Ուորդրոպի հետ ունեցած զրույցի մասին զեկույցում. «Ես նրան (Ուորդրոպին.- Մ. Հ.) պարզաբանեցի, որ տարաբախտաբար Ադրբեջանի կառավարության շրջաններում խաղաղարար ու բարեմիտ գործիչների դրությունը բավական խախուտ է այժմ, իտտիհատ կուսակցության պրոպագանդայի եւ գործունեության հետեւանքով: Մասնավորապես Ուսուբեկովի դիրքը բավականաչափ խախտվել է ներկայումս եւ խնդրեցի Ուորդրոպին յուր ազդեցությունը գործ դնել իտտիհատականների ազդեցությունը թուլացնելու եւ նոցա վարած ագրեսիվ քաղաքականությունը չեզոքացնելու»[29]: Սա ցեղասպանության, այդ թվում՝ Շուշիի կործանման թուրք-ադրբեջանական նախապատրաստությունների մասին մեր տեսակետը հաստատող ևս մեկ փաստարկ է:

Ուսումնասիրելով այն ժամանակվա վավերագրերը և ականատեսների ու մասնակիցների վկայությունները՝ ընդունելի ենք համարում ողբերգական իրադարձությունների հետևյալ վերականգնումը. Սուլթանովի հրամանով մուսավաթական զորքերը հարվածել են հայության գլխավոր կենտրոնին՝ Շուշիին: Միաժամանակ Աղդամում կենտրոնացված զորքը և սպառազինված ամբոխը, ինչպես և կանխատեսված էր, սկսել են արշավանքն Ասկերան-Խոջալու-Խանքենդ-Շուշի երթուղով՝ նպատակ ունենալով համալրել ու ըստ ամենայնի աջակցել Շուշիի հայությանը «հնազանդեցնող» (իրականում՝ բնաջնջող) ոճրագործներին: Բացի այդ երթուղուց ինքնավար Լեռնային Ղարաբաղի դեմ բացահայտ պատերազմ սկսած ԱԴՀ-ի զորքերն՝ ուժեղացված զինավառ ավազակներով, լայնածավալ հարձակման էին անցել նաև Գանձակի, Շամքորի և այլ ուղղություններով՝ հայ ազգաբնակչության բռնի

[29] Տե՛ս Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում. 1918-1920 թթ., փաստ. № 362 (թիվ 132 առ 30 հունվարի 1920 թ., Բաքու), էջ 434:

տեղահանության ու էթնիկական զտման նպատակով:

Արցախի հայ ազգաբնակչությանն ահաբեկելու, սարսափազդու կոտորածներով ընկճելու՝ ԱԴՀ-ի պետական քաղաքականության իրականացումը Սուլթանովը պատահաբար չէր Շուշիից սկսել, քանի որ Արցախի մայրաքաղաքի բնակչությունն առնվազը 1919 թվականից պատանդի կարգավիճակում էր (Լեռ) և, ինչպես վավերագրերն են հաստատում, այդ դիմադրական կենտրոնին տիրելը հակառակորդը համարում էր Արցախը նվաճելու կարևոր գործոն: Այդ մասին է վկայում նաև հետևյալ վավերագիրը. «Հուսով եմ, - Ադրբեջանի նախարարների խորհրդի նախագահի անունով զեկուցագրում պնդում էր տխրահռչակ Սուլթանովը,- որ Շուշի քաղաքում Կենտրոնի և հայկական շարժման պաշտոնապես ենթարկեցումով, Ղարաբաղում հայերի ենթարկեցման հարցը արագ կընդունի բարեհաջող ավարտ»[30]:

Համաձայն նախապես ծրագրված մարտավարության (կամ ռազմական տերմինաբանությամբ՝ պաշտպանության մտահղացման), ինքնապաշտպանության ուժերը 1920 թ. մարտի 23-ին դուրս շպրտեցին ադրբեջանցի զավթիչներին և ազատագրեցին Արցախի ռազմաստրատեգիական հենակետերից մեկը՝ Ասկերանը, ինչպես Աղդամից ադրբեջանական զորքերի հետագա առաջխաղացումը կասեցնելու, այնպես էլ կենաց մահու պայքարում Շուշիի ու Խանքենդի պաշտպանների թիկունքն ապահովելու համար: Այս առումով Խանքենդի ադրբեջանական զորքերի շրջապատումն էլ իր հերթին Ասկերանի և Շուշիի թիկունքն ապահովելու խնդիրն էր հետապնդում: Հենց ինքնապաշտպանությունից բխող այս քայլերն են ադրբեջանցի-ները նենգափոխել «ապստամբություն» հասկացությամբ, մի կողմից՝ իրենց ոճրագործությունները «արդարացնելու», իսկ մյուս կողմից՝ ցեղասպանությունը ուրանալու, ապա և ժխտելու նպատակով:

Ռազմաքաղաքական գործընթացների հեղեղի հորձանուտում քաղաքական կուսակցության՝ գլուխը կորցրած մերօրյա հետևորդները ցինիկաբար խոսում են այն մասին, որ իբր Շուշիի կորուստը դեռ Արցախի կորուստ չէր (ոմանք շատ հեռու գնալով ակնարկում են Շուշին հանուն Արցախի «զոհաբերելու» վարկածի մասին[31]), մինչդեռ Շուշիի կորուստը, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, զգալի նահանջ էր առանց այն էլ սաղմնային վիճակում գտնվող պաշտպանական-անվտանգային բաղադրիչների ապահովման դիրքերից:

Այսպիսով, Շուշիի եղեռնագործության լուսաբանման հիմնահարցերի վերոհիշյալ քննությունը ցույց է տալիս, որ դրանց մի մասը և հատկապես «ապստամբության» առասպելը հայ պատմագրությունն իներցիայով շրջանառում է՝ ակամա հայտնվելով ցեղասպանության քաղաքականությունն ուրացող մեր

[30] Տե՛ս Нагорный Карабах в 1918-1923 гг. Сборник документов и материалов, док. № 153, с.238:

[31] Газарян В., Двух истин не бывает,"Советский Карабах", 20 июля 1988 г., Ղազարյան Վ., Մի հանիրավի մեղադրանքի առթիվ, «Ազատ Արցախ», 8.06.1999 թ., № 66, նույնի, Անցյալը պահանջում է հարգալիր և անաչառ մոտեցում, «Ազատ Արցախ», 2. 11.1999 թ., № 129:

հակառակորդների նենգափոխումների սարդոստայնում: Դա հատկապես ակնհայտ է պատմությունը որպես քաղաքական զենք Հայաստանի դեմ օգտագործող նրա հարևանների վարած տեղեկութային պատերազմի համատեքստում: Բարեբախտաբար, հայրենական պատմագրության մեջ վերջին շրջանում նկատելի է այն ուսումնասիրողների տեսակարար կշռի աճը, որոնք դա լավ հասկանում են և, ըստ այդմ, վերանայում են նախորդ սխալ մոտեցումները[32]:

ОСВЕЩЕНИЕ ПРИЧИН ПРОВАЛА САМООБОРОНЫ ГОРОДА ШУШИ 1920Г. В АРМЯНСКОЙ ИСТОРИОГРАФИИ - ***МГЕР АРУТЮНЯН***- *Целью этой статьи является критический анализ оценок со стороны армянской историографии на причины провала самообороны города Шуши 23 марта 1920 года, чтобы на этой основе сделать соответствующие и необходимые выводы.*

Научная новизна заключается в постановке вопроса и исследовательских результатах, основанных на совершенно новых заключениях и военно-критическом анализе новых и находящихся в научном обороте фактов.

Самым актуальным вопросом является раскрытие азербайджанской фальсификации о мифе так называемом «восстании», представляющий армянскую сторону агрессором.

Возвращение к этой проблеме актуально с учетом той печальной реальности, что хотя в наших научных публикациях неоднократно демонстрировали военно-политические и научно-позновательные негативные последствия ненужного оборота мифа о «восстании», в армянской историографии продолжаются непроизвольные или преднамеренные попытки воспроизвести ошибки предшественников.

Анализ проблем освещения арменоцида в Шуши показывает, что некоторые из них, и особенно миф о «восстании», по инерции циркулируют в армянской историографии, невольно появляясь в сети лжи наших противников, отрицающих политику геноцида.

[32] Տե՛ս, օրինակ, Ղուլյան Յու., Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների պատմությունից.1918-1920 թթ., Ե., 2009, էջ 308, Բաղդասարյան Գ., Շուշիում հայերի կոտորածի չպարզաբանված երեք հանգամանք, «Անալիտիկոն», մարտ, 2015 (հմմտ.՝ թվային տարբերակի հետ՝ http://theanalyticon.com/?p=6079#more-6079 [ներբեռնումը՝ 18.02.2020 թ.]): 2018 թ. ԱրՊՀ-ում Ղարաբաղյան շարժման 30-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովում պ. գ. դ., պրոֆեսոր Հրանտ Աբրահամյանը, որը մասնագիտացել էր Արցախի պատմության 1918-1923 թթ. ժամանակահատվածի ուսումնասիրությամբ, խոստովանեց, որ «մինչև հիմա սխալվել է՝ գրելով 1920 թ. մարտյան ապստամբության մասին: Փաստերը խեղաթյուրելով՝ դա շրջանառության մեջ են մտցրել մուսավաթական Ադրբեջանի պաշտոնյաները, իսկ հետագայում լայնորեն տարածել ադրբեջանցի պատմաբաններն ու մյուս հեղինակները (պատմաբանը ծանոթացել էր նրանց 80-ից ավելի գործերին), որպեսզի Շուշիում հայ ազգաբնակչության հանդեպ իրականացված եղեռնագործությունն արդարացնեն և դրանում մեղադրեն հայերին»: Մեր պարտքը համարեցինք անհապաղ արձանագրելու, որ այդ մասին շարունակաբար գրում ենք արդեն տասը տարի, սակայն Հրանտ Աբրահամյանի այս արձագանքն առաջինն է՝գնահատելով այն որպես սառույցը տեղից շարժելու նախանշան կամ սկիզբ:

Ключевые слова: *армянская историография, самооборона Шуши, критический анализ, новые выводы, азербайджанское вероломство, военно-политические последствия, миф "восстания", политика геноцида.*

COVERAGE OF THE REASONS FOR THE FAILURE OF SHUSHI'S SELF-DEFENSE IN ARMENIAN HISTORIOGRAPHY (IN 1920) - ***MHER HARUTYUNYAN****- The purpose of this article is a critical analysis of assessments by Armenian historiography on the reasons for the failure of the self-defense of the city of Shushi in March 23, 1920, in order to draw relevant and necessary conclusions on this basis.*

Scientific novelty consists in posing the question and research results based on completely new conclusions and a military-critical analysis of new and scientific facts.

The most pressing issue is the disclosure of Azerbaijani falsification of the myth of the so-called "rebellion", representing the Armenian side as the aggressor.

A return to this problem is relevant given the sad reality, that although in our scientific publications have repeatedly demonstrated the military-political and scientific-cognitive negative consequences of the unnecessary turn of the myth of "rebellion", involuntary or deliberate attempts to reproduce the mistakes of predecessors continue in Armenian historiography.

An analysis of the problems of lighting the Armenocide in Shushi shows that some of them, and especially the myth of the "rebellion", circulate by inertia in Armenian historiography, unwittingly appearing in the network of lies of our opponents who deny the policy of genocide.

Key words*: Armenian historiography, Shushi self-defense, examination analysis, new conclusions, Azerbaijani deception, military-political consequences, myth of "rebellion", genocide policy.*

ՀԱՅԿԱՐԱՄ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՈԳԵՎՈՐ ԵՎ ԱՇԽԱՐՀԻԿ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՏԱՇԵՍՅԱՆ ԴԻՆԱՍՏԻԱՅԻ ՕՐՈՔ

Հոդվածում հելլենիստական ազդեցության լույսի ներքո քննվում է Մեծ Հայքի թագավորությունում Ք. ա. II-I դարերում հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունների խնդիրը: Վերակազմավորվող նոր պետական ապարատում մեծ դեր է հատկացվել տվյալ փոխհարաբերություններին, քանի որ դրանք ունակ էին օգտագործելով արտաքին ազդեցությունները զարգացնել բուն հայ էթնոսին պատկանող ավանդույթները, ինչը իր հերթին ավելի ամրապնդեց Արտաշեսյան պետության ինքնուրույնությունը:

Ցույց է տրվում այդ հարաբերությունների ընդհանուր պատմական աստիճանական զարգացման օրինաչափություններից տարբերվող բնույթը: Ուսումնասիրվում է Արտաշես Ա-ի գահակալումից սկսված ժամանակի ոգուն համապատասխան թագավորական իշխանության բացարձակեցման ջանքերը և դրա հետևանքները վերոհիշյալ հարաբերություններում: Այդ գործընթացի բարձրակետ է դառնում ապրող արքայի աստվածացումը: Ներկայացվում է դրա նշանակությունը պետական գաղափարաբանության տեսակետից, ինչպես նաև պատճառները ու դերը կախված քաղաքական և ռազմական հզորության աստիճանից:

Բանալի բառեր՝ *հելլենիստական, միապետ, բազմաստվածություն, քրմապետ, դինաստիա, թագավորական նախնիների պաշտամունք, պաշտամունքային կենտրոն, կենտրոնական թագավորական իշխանություն, ապրող արքայի աստվածացում, պետական գաղափարաբանություն:*

Մեծ Հայքում Արտաշեսյանների օրոք հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունների ուսումնասիրությունը վեր է հանում համաշխարհային պատմական շրջադարձային նշանակության իրադարձությունների ազդեցությունը հայ ժողովրդի ներքին կյանքում: Հելլենիստական դարաշրջանի խարիզմատիկ արքաների քաղաքականության արդյունքում, տվյալ հարաբերություններում դրսևորվում էին զարգացման առանձնահատուկ որոշակի դրվագներ: Տվյալ տեսակետից, Ք. ա. II–դարում վերակազմավորված հայոց պետական ապարատի իշխանական մարմինների դասավորվածության և դիրքի համար ուսումնասիրվող խնդիրն ունի հարացուցային նշանակություն: Արատաշեսյան թագավորության ժամանակաշրջանը տարբեր մասնագետների կողմից ենթարկվել է բազմակողմանի

ուսումնասիրության, սակայն, այդուհանդերձ, կարիք է զգացվում այդ շրջանի հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերության ամբողջական ուսումնասիրության: Տվյալ ժամանակաշրջանը շատ կարևոր մաս է Հայոց պատմության համար ոչ միայն այն պատճառով, որ այն Հայաստանը հասցրեց իր հզորության գագաթնակետին, այլև նրա համար, որ հենց այդ շրջանում Հայաստանը՝ դուրս գալով այլ տերությունների խոր ազդեցությունից, դրանց զուգորդմամբ զարգացրեց այն քաղաքական, հոգևոր, մշակութային ավանդույթները, որոնք ծնել էր հենց հայ էթնոսը: Հայաստանը՝ ավելի քան երկու հարյուր տարի գտնվելով Աքեմենյան տիրապետության տակ՝ գրեթե ամբողջական մասն էր դարձել ընդհանրական ձևավորված համակարգի: Հետագայում Ալեքսանդր Մեծի ջանքերով հունական և Աքեմենյան ու արևելյան այլ ավանդույթների սինթեզի արդյունքում ծնվեց հելլենիզմը, որն իր խորը ազդեցությունը թողեց Հայաստանի վրա Սելևկյան պետության միջոցով: Սելևկյան տիրապետությունը հաղթահարելուց հետո Ք. ա. 189 թ. Արտաշես Ա-ը Հայաստանի կրած այս խորը ազդեցությունների և Երվանդունիների միջոցով փոխանցված բնիկ ավանդույթների հիման վրա սկսեց վերակազմավորել նոր պետականություն և դրա հետ մեկտեղ նույնանման ազդեցություններ կրած հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերություններ:

Արտաշեսյան հարստության հիմնադրման հենց սկզբից լուրջ ուշադրություն դարձվեց հոգևոր իշխանությանը: Մովսես Խորենացու վկայությամբ՝ Արտաշես Ա-ը Մեծ Հայքի իշխանության գլուխ բարձրանալով կազմավորում է նոր պետական ապարատ: Նախորդ արքայատոհմի վերականգնումը բացառելու համար Արտաշես Ա-ը սպանել է տալիս Երվանդական թագավորության վերջին արքա Երվանդ Դ-ի եղբայր քրմապետ Երվազին[1]: Վերջինս Երվանդ Դ-ի կողքին մինչև վերջ մնացած սակավաթիվ նշանավոր դեմքերից էր: Մեծ Հայքի իշխանության գլուխ բարձրանալուց հետո անհրաժեշտ էր օրինականացնել այդ քայլը, ինչը կատարվում էր քրմապետի միջոցով, ուստի Երվազի փոխարեն. «Ի վերայ բագնացն կացուցանէ զընտանի Արտաշիսի, աշակերտ մոգի ուրումն երազահանի, որ յայն սակս և Մոգպաշտէ անուն կարդային»[2]: Ավելի ուշ տեսնում ենք, որ Արտաշես Ա-ն իր որդի Մաժանին է նշանակում քրմապետ Բարձր Հայքի Դարանաղյաց գավառի Անիի Արամազդի գլխավոր տաճարում[3]: Արտաշես Ա-ի որդիներից Մաժանի նշանակումը քրմապետի պաշտոնում, Արտավազդի նշանակումը ամբողջ զորքերի հրամանատար և Վրույրի նշանակումը հազարապետ կարող էր կապված լինել հին հնդեվրոպական ավանդության հետ: Ըստ այդ ավանդության, արքայազներից յուրաքանչյուրը հանձն էր առանում քրմական, ռազմական ու

[1] Տե՛ս **Մովսէս Խորենացի,** *Պատմութիւն Հայոց,* (քննական բնագիրը և ներածությունը Մ. Աբեղեանի և Ս Յարութիւնեանի), Երևան, 1991, էջ 174-175:
[2] Նույն տեղում էջ 175:
[3] Տե՛ս **Մովսէս Խորենացի,** *Պատմութիւն Հայոց,*էջ 183:

տնտեսական հիմնական հասարակական դասերից մեկի պատասխանատվությունը[4]:

Գահակալությունը օրինականացնելու քայլ էր նաև Արտաշես Ա-ի կողմից իրեն Երվանդունիների ժառանգ հայտարարելը, ինչի մասին վկայում են նաև նրա թողած արձանագրությունները[5]: Նկատենք, որ Մովսես Խորենացին «Արշակունի» է համարում ինչպես ներկայիս պատմագիտության մեջ ճանաչված վերջին Երվանդունիներին, այնպես էլ Արտաշեսյաններին և Արշակունիներին: Այս իմաստով, խորենացիական ընկալմամբ, Արտաշեսը ևս կարող է համարվել Երվանդունիների շառավիղ: 1964 թ. Զանգեզուրից գտնված արամեերեն արձանագրությունում նա իրեն կոչում է. «Արտաշես արքա Երվանդական, բարի որդի Զարեհի»[6]: Իր տիտղոսաշարը Արտաշես Ա-ը կազմում է ըստ Աքեմենյան պաշտոնական կանոնի, որը նույնպես վերջանում էր արքայի հոր անվան և դինաստիայի պատկանելիության հիշատակությամբ[7]: Սակայն, այդ ամենով հանդերձ, Արտաշեսի «բարի» պատվատիտղոսը, որը թարգմանվում է նաև որպես բարեպաշտ[8], ուներ հելլենիստական բնույթ և նման էր Եվսեբիոս (Εὐσεβής-բարեպաշտ) կոչումին: Այդ կոչումը, հնարավոր է, որ նա ստացել էր պաշտամունքային վայրերի շինարարության համար, ինչի մասին վկայություն կա Մովսես Խորենացու կողմից և հոգևոր դասի հետ լավ փոխհարաբերությունների շնորհիվ: Տվյալ կոչումը կրոնի հետ առնչվող նշանակություն ուներ և դրա շնորհումն էլ հենց կրոնական պաշտոնյաների միջոցով պետք է կատարվեր նոր դինաստիայի հիմնադրի վարկը ժողովրդի առաջ ավելի բարձրացնելու համար: Ըստ Գ. Սարգսյանի, Արտաշես Ա-ը «բարի» կամ «բարեպաշտ» տիտղոսը հնարավոր է, որ ստացած լիներ թագավորական նախնիների պաշտամունքի հաստատման համար[9]:

Հելլենիստական դարաշրջանում թագավորական նախնիների պաշտամունքը տարածված երևույթ էր: Սելևկյանների տերությունում, որից Մեծ Հայքի թագավորությունը ամենից շատն էր ազդեցություն կրել, թագավորական նախնիների

---

[4] Տե՛ս **Պետրոսյան Ս.,** *Հայոց երեք արքայազունների հասարակական ֆունկցիաների մասին,* ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ գիտ. աշխատություններ, III, Գյումրի, 2000, էջ 57:

[5] Տե՛ս **Տիրացյան Գ.,** *Արտաշես Ա-ի արամեատառ նորագյուտ արձանագրությունը,* Հ ՍՍՌ ԳԱ Տեղեկագիր, թ. 10, Երևան, 1957, էջ 107:

[6] Նույն տեղում էջ 107, **Տիրացյան Գ.,** *Արտաշես Ա-ի ևս մեկ նորագյուտ արամեական արձանագրություն,* ՊԲՀ, թ., Երևան, 1977, էջ 4254-259, **Периханян А. Г.,** *Арамейская надпись из Зангезура. Некоторые вопросы среднеиранской диалектологии,* ՊԲՀ, թ. 4, Երևան, 1965, էջ 108, **Կարախանյան Գ.,** *Արամեերեն նորահայտ երկու արձանագրություններ,* ՊԲՀ, թ. 3, Երևան, 1971, էջ 274-276:

[7] Տե՛ս **Хачатрян Ж.,** *Отражение Ахеменидских традиций в эллинистическом и позднеантичном периодах,* ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ գիտ. աշխատություններ, III, Գյումրի, 2000, էջ 42, **Soudavar A.,** *Iranian complexities. A Study in Achaemenid, Avestan and Sasanian controversies,* Houston, 2018, p. 31, **Bottero J., Herrenschmidt C.,** *Ancestor of the West. Writing, Reasoning and Religion in Mesopatamia, Elam and Greece,* Chicago, 2000, p. 117.

[8] Տե՛ս **Քոչարյան Գ.,** *Արտաշես Ա Բարին որպես հզոր պետականության կերտող (Կերպարային դիմանկարի վերականգնման փորձ),* ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ գիտ աշխատություններ, III, Գյումրի, 2000, էջ 27:

[9] Տե՛ս **Սարգսյան Գ. Խ.,** *Հայաստանի պետական կարգը հելլենիստական դարաշրջանում,* Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Երևան, 1971, էջ 670:

պաշտամունքը սկսվել էր Անտիոքոս Ա-ի ժամանակվանից: Անտիոքոս Ա-ը Պերգամոնի արքայազն Փիլիտերոսից ստանալով իր հոր՝ Սելևկիոս Ա-ի դիափոշին, տաճար կառուցեց և ամփոփեց այն այնտեղ[10]: Սելևկյանների տերությունում հատուկ քրմեր էին նշանակված արքայական նախնիների և ապրող արքաների պաշտամունքի համար[11]: Սակայն Մեծ Հայքում թագավորական նախնիների պաշտամունքը ոչ թե հելլենիստական ազդեցության արդյունքում էր սկզբնավորվել Արտաշես Ա-ի կողմից, այլ այն գոյություն ուներ թե՛ արատաշեսյաններին նախորդած Երվանդունիների օրոք և թե՛ Վանի թագավորության ժամանակ[12]: Արտաշեսյանների օրոք թագավորական նախնիների պաշտամունքի մասին վկայում է Մովսես Խորենացուց մեջբերված ներքոհիշյալ հատվածը նրանց կուռքերը Արտաշատ տեղափոխելու մասին: Դրա մասին կարող են վկայել են նաև Վասպուրականում, Բագրևանդում ու Արշարունիքում կառուցված Զարեհավան և Աղիովտում ու Վանանդում կառուցված Զարիշատ քաղաքները, որոնք, ըստ տարածում գտած տեսակետի, հիմնել է Արտաշես Ա-ն իր հոր՝ Զարեհի անվամբ[13]:

Երվանդ Դ-ն արդեն իսկ նոր մայրաքաղաքի կառուցմամբ առանձնացրել էր հոգևոր-պաշտամունքային կենտրոնը Բագարանում, իսկ թագավորական իշխանության կենտրոնը՝ Երվանդաշատ մայրաքաղաքում: Հելլենիստական երկրներում նույնպես ընդհանուր առմամբ կրոնական գլխավոր կենտրոնները կառուցվում էին առաձին վայրերում[14]: Սակայն Արտաշես Ա-ն Արտաշատ մայրաքաղաքը կառուցելիս «կանգնէ ի նմա մեհեան, և փոխէ ի նա ի Բագարանէ զպատկերն Արտեմիդեայ և զամենայն կուռս հայրենիս. բայց զԱպողոնի պատկերն արտաքոյ քաղաքին կանգնէ հուպ ի ճանապարհն»[15]: Թագավորական նախնիների և աստվածների արձանների միևնույն տաճարում տեղադրումը փաստում է դրանց՝ պետական կրոնի կարևոր մասը հանդիսանալու հանգամանքը[16]: Արտաշատ քաղաքի հնագիտական պեղումները ևս հաստատեցին այս հիշատակությունը: Պաշտամունքային համալիրը կառուցված է եղել վեցերորդ բլրի վրա, ներկայիս Խոր Վիրապի վանքի տեղում, որի բարձրությունը 50 մ է: Քաղաքը կառուցված էր ըստ ժամանակի հելլենիստական պետական կարգերի, և հետաքրքրական է այն փաստը, որ թագավորական պալատը,

---

[10] Տե՛ս **Appian,** *Roman History,* vol. II, (Edeted by Page T. E., translated by White H.) London, 1962, p. 227.

[11] Տե՛ս **Бикерман Э.,***Государство Селевкидов,* Москва, 1985, с. 331-332.

[12] Տե՛ս **Հացունի Վ.,** *Պատմութիւն հին հայ տարազին,* Վենետիկ, 1923, էջ 20, **Հակոբյան Հ.,** *Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունը Հայաստանում Երվանդական ժամանակաշրջանում (Ք. ա. IV-III դարեր),* ՄՄՀ Լրատու, թ. 2, Երևան, 2019, էջ 44-45:

[13] Տե՛ս **Սարգսյան Գ. Խ.,** *Քաղաքը հելլենիստական դարաշրջանի Հայաստանում,* Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Երևան, 1971, էջ 657, **Саркисян Г. Х.,***Тигранакерт. Из истрии древнеармянских городских обшин,* Москва, 1960, с. 43:

[14] Տե՛ս **Խաչատրյան Ժ. Դ.,** *Հայաստանի անտիկ շրջանի քաղաքներն ու քաղաքաշինությունն՝ ըստ Մովսես Խորենացու,* ՊԲՀ, թ 1-2, Երևան, 1998, էջ 182:

[15] **Մովսէս Խորենացի,** *Պատմութիւն Հայոց,*էջ 177:

[16] Տե՛ս **Պետրոսյան Լ.,** *Դիցական գլխավոր եռյակը Երվանդական և Արտաշեսյան Հայաստանում,*ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ գիտ աշխատություններ, XV, Գյումրի, 2012, էջ 25:

վարչական շինությունները կառուցվել էին 70 մ բարձրությամբ երկրորդ բլրի վրա, և նույնիսկ դրանով շեշտվում էր թագավորական իշխանության գերակայությունը կրոնական համակարգի վրա[17]: Ավելին, Բագարանից Արտաշատ պաշտամունքային կենտրոնի տեղափոխման մասին կարող է վկայել Արտաշատից գտնված կրոնական նշանակության ուրարտական կնիքը[18]: Հայտնի է, որ Բագարան կրոնական կենտրոնը տեղափոխվել էր Արմավիրից, որը ժամանակի նույն ուրարտական Արգիշտիխինիլի քաղաքն էր, իսկ դրանում գործում էր Խալդիի տաճարը: Կրոնական կենտրոնը մի տեղից մյուսը տեղափոխվելուց տարվում էին թե՛ աստվածների արձանները և թե՛ պաշտամունքի ժամանակ օգտագործվող այլ առարկաները: Եղած փաստերը մեզ թույլ են տալիս ենթադրել, որ թե՛ Երվանդունիների և թե՛ Արտաշեյանների օրոք հարատևել են ուրարտական պաշտամունքային որոշակի տարրեր:

Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների կենտրոնների առանձնացումն իրարից արդեն իսկ այդ իշխանությունների հարաբերությունների զարգացման նոր աստիճան էր ցույց տալիս: Հարց է ծագում, թե ի՞նչու էր Արտաշեսի ժամանակ այդ հարաբերությունների ոլորտում հետադարձ քայլ կատարվում: Հարցին պատասխանելու համարկարևոր է հաշվի առնել, որ հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունները կրում են պատմական աստիճանական զարգացման օրինաչափություններից մի փոքր տարբերվող բնույթ: Միևնույն աշխարհագրական տարածքում, միևնույն էթնոսի ներկայացուցիչները իշխանական և վարչական կտրուկ փոփոխությունների դեպքում կարող են նորից անցնել այդ հարաբերությունների որոշակի փուլեր: Արտաշեսը Ա-ի կողմից սկզբնավորված նոր արքայական հարստությունը պետք էր նոր իրադրությունում վերաձևավորեր աշխարհիկ և հոգևոր իշխանությունների փոխհարաբերությունները: Արտաշես Ա-ի գլխավոր խնդիրը գերկենտրոնացված պետության ստեղծումն էր, ինչին էր ուղղված նաև հոգևոր կենտրոնի «վերադարձը» մայրաքաղաք:

Հետաքրքրական է, որ պատերազմի ժամանակ կողմնակալության պատասխանատու արքայազներից մեկի բարդ իրադրությունում հայտնվելու պարագայում օգնության էին շտապում մնացած բոլոր արքայազունները, այդ թվում նաև քրմապետի պաշտոնը կատարողը[19]: Արտաշես Ա-ի օրոք հոգևոր և աշխարհիկ իշխանությունների համատեղ գործակցությամբ ծաղկում էին ապրում արվեստը և գիտությունը, որի արդյունքում կազմվում է հայկական նոր տոմարը, որը սկսվում է գործածվել երկրում օտարերկրյա տոմարի փոխարեն[20]: Այդ ժամանակ քրմական դասը համարվում էր գրի,

[17] Տե՛ս **Хачатрян Ж.,** *Архивы столицы древней Армении-Арташата,* Ереван, 2008, с. 8-9.
[18] Տե՛ս **Առաքելյան Բ .Ն.,** *Հին Արտաշատ,* Երևան, 1975, էջ 15:
[19] Տե՛ս **Մովսէս Խորենացի,** *Պատմութիւն Հայոց,*էջ 184:
[20] Տե՛ս Նույն տեղում, էջ 188:

գիտության, բժշկության, կրթության և մշակույթի հիմնական կրողն ու զարգացնողը,[21] և պատահական չէ, որ քրմական դասի հովանավոր աստվածը համարվում էր հենց դպրության աստված Տիրը[22]: Ուստի տոմարի կազմությունը թագավորի հրամանով կատարվել էր հենց քրմական դասի շրջանակներում, ինչն ավելի ինքնուրույնություն էր հաղորդել երկրին: Արտաշես Ա-ի ժամանակից սկսած հիշատակվում է հունական կուռքերի և քրմության ներմուծումը Հայաստան: Այդ կուռքերի մի մասը իրենց քրմերի հետ զետեղվել էր Անիում: Ուշադրության արժանի է այն փաստը, որ Մովսես Խորենացին Արտաշեսի իշխանության գալու հատվածի համար որպես աղբյուր օգտագործում է հենց Անիի տաճարի Ողյումպ քրմի «Մեհենական պատմությունը»: Ամենայն հավանականությամբ, հենց Արտաշես Ա-ի պատվերով էլ Ողյումպ քրմի կողմից գրի էին առնվել իր կատարած գործերը:

Մովսես Խորենացու «Հայոց պատմության» Բ գրքի ԾԵ գլխում նշվում է, Արտաշեսի որդի Մաժան քրմապետը, որը մինչ քրմապետություն ստանձնելը կատարում էր նաև ռազմական առաջադրանքներ, քայլեր էր ձեռնարկում սպարապետության պաշտոնին ևս տիրանալու համար[23]: Դա նշանակում է, որ նման պետական ապարատում որոշակի պայմանների պարագայում, քրմապետ նշանակված արքայազունները կարող էին հավակնել նաև գահին: Այդ խնդրի լուծման համար Արտավազդ Ա-ը հոր մահից հետո գահ բարձրանալով Այրարատից, որը համարվում էր արքունի ոստան, հեռացնում է բոլոր արքայական տան ներկայացուցիչներին, բացի գահը ժառանգողից և նրանց բնակեցնում Աղիովիտ և Առբերանի գավառներում[24]: Այդ կերպ Արտաշատից հեռացվում է նաև քրմապետը, որի պաշտոնը, ինչպես արդեն նշեցինք, այդ ժամանակ իրականացվում էր թագավորական տան ներկայացուցչի կողմից: Դա, անշուշտ, նպատակ ուներ կանխելու թագավորական ընտանիքի մյուս անդամների հնարավոր գահակալական նկրտումները: Այդ կերպ Արտավազդի Ա-ի ժամանակ կրկին իրականացվում է հոգևոր և աշխարհիկ իշխանությունների կենտրոնների բաժանումը:

Արտաշեսյան դինաստիայի ժամանակ հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունների վրա մեծ ազդեցություն է ունեցել թագավորական կենտրոնական իշխանության հզորացումը: Այդ գործում մեծ դեր կատարեց հելլենիստական այլ թագավորությունների օրինակով Մեծ Հայքում շատ քաղաքների հիմնադրումը, որոնք դառնում էին տնտեսական, հասարակական և ռազմական ամուր հենարան արքայի համար: Միևնույն ժամանակ, Հին Արևելքի պետական զարգացման օրինաչափություններին համապատասխան՝ երկրի հողատարածքների վրա հաստատ-

[21] Տե՛ս **Կրկյաշարյան Ս. Մ.,** *Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ,* Երևան, 1970, էջ157:**Աբրահամյան Ա. Գ.,** *Նախամաշտոցյան հայ գիր և գրչություն,* Երևան, 1982, էջ 79:

[22] Տե՛ս **Բարսեղյան Պ.,** *Վաղ Հավատալիքներն ու դիցաբանությունը Հայաստանում,* Երևան, 2015, էջ 239, **Կոստանեանց Կ.,** *Հայոց հեթանոսական կրօնը,* Վաղարշապատ, 1879, էջ 35:

[23] Տե՛ս **Մովսէս Խորենացի,** *Պատմութիւն Հայոց,* էջ 185-186:

[24] Տե՛ս նույն տեղում,էջ 191:

վեց թագավորական իշխանության հաղթանակը[25]: Արդյունքում սահմանափակվեց մանր իշխանությունների հզորությունը, և բոլորը վերածվեցին միապետի ան-վերապահ ենթակաների, և Արտաշեսյան միապետական իշխանությունը դարձավ բացարձակ[25]: Արտաշեսյան արքաների դիրքի բարձրացման շարունակական այդ ջանքերը և դրան գումարած Տիգրան Մեծի հսկայական նվաճումները հանգեցրին նրան, որ նա արդեն իր պատվին նվիրված Տիգրանակերտի կառուցումից հետո կարողանում էր հրաման արձակել Մեծ Հայքի ժողովրդի մեծամեծերին՝ իրենց ունեցվածքով հանդերձ տեղափոխվել նոր մայրաքաղաք, հակառակ դեպքում կբռնագանձվեր մայրաքաղաք չտեղափոխված նրանց ունեցվածքը[26]: Տիգրան Բ-ի իշխանությունը տարածվում էր իր ենթակայության տակ եղողների անձի, մարմնի և ազատության վրա: Պլուտարքոսի խոսքերով, Տիգրան Բ-ին ենթակա թագավորներից յուրաքանչյուրը «տիրոջ տրամադրությանն էր հանձնում նաև իր ազատությունը և պատրաստակամություն հայտնում ամեն ինչ տանել, հանդուրժել առանց առարկության»[27]: Այդ պատճառով Ստրաբոնը հայերի վերաբերմունքը արքայի նկատմամբ բնորոշել է տերմինով, որը միաժամանակ նշանակում էր և՛ ծառայել, և՛ պաշտել[28]: Փաստորեն Տիգրան Բ-ն իր տերության սահմաններում հասել էր անսահմանափակ իշխանության և դրան գումարված մեծամեծ գործերը հեշտացնում էին նրա աստվածացման գործընթացը:

Տիգրան Մեծի աստվածացման գործընթացում լուրջ դեր է կատարել Սիրիայի գահին բազմելու հրավերը և այդտեղ նրա 14 տարվա խաղաղ գահակալության հաստատումը[29]: Բազմելով Սելևկյան գահին, Տիգրան Բ-ին պետք է փոխանցվեին այն պատիվները, որոնք տրվում էին Սելևկյան արքաներին, այդ գործում կարևոր դեր ուներ նաև տվյալ երկրի հոգևոր դասը: Բացի այդ, Տիգրան Բ-ին էր փոխանցվել պարթևական «արքայից արքա»տիտղոսը[30], որը, բացի իր տիրապետության տակ այլ արքաներ ունենալու իմաստից, ուներ ավելի խորը նշանակություն: Ըստ Ա. Ստեփանյանի, այդ տիտղոսը ստեղծված էր սեմական լեզվական կարծրատիպի համաձայն, որի դեպքում նմանատիպ կրկնությունը տալիս էր գերադրական

---

[25] Տե՛ս **Մանասերյան Ռ. Լ.,** *Թագավորական իշխանության հաստատության զարգացման առանձնահատկությունները Արտաշեսյանների օրոք (թագավորը և ավագանին),* ԼՀԳ, թ. 1, Երևան, 1999, էջ 79:

[25] Տե՛ս **Կրկյաշարյան Ս.,** *Թագավորական իշխանությունը Հին Հայաստանում,* Բանբեր Երևանի համալսարանի, թ. 1, Երևան, 1970, էջ 166:

[26] Տե՛ս **Appian,** *Roman History,* Volume II, (translated by White H., edeted by Page T.), London, 1962, p. 399.

[27] *Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա. Հնագույն ժամանակներից մինչև Ք. Հ. 298* (կազմողներ՝ **Պ. Հովհաննիսյան, Ա. Մովսիսյան**), հատոր 1, Երևան, 2007, էջ 325:

[28] Տե՛ս **Մանասերյան Ռ. Լ.,** *Հին Հայաստանի քաղաքական և գաղափարաբանական զարգացման հիմնահարցերը. Թագավորական իշխանություն, միջազգային հարաբերություններ, պետական գաղափարաբանություն (մ. թ. ա. 1-ին դ.-մ. թ. 4-րդ դ.),* ատենախոսություն, Երևան, 1998, էջ 21:

[29] Տե՛ս **Հակոբյան Հ.,***Հայոց պատերազմները և ռազմարվեստը,* Երևան, 2013, էջ 40-41:

[30] Տե՛ս **Պտուկեան Զ.,** *Տիգրան Մեծի պղնձեայ դրամներու դրամագիւտ մը և Արտաշէսյան հարստութեան դրամագիւտ մը,* Լոս Անճելէս, 1991, էջ 25:

նշանակություն, ինչպիսին էր, օրինակ՝ եբրայական «սրբություն սրբոցը», որ նշանակում էր ամենասուրբ: Այդ կերպով «արքայից արքան» բարձրացվելով տվյալ հասկացության բարձրակետին, սրբազնացվում էր և կապի մեջ էր մտնում աստվածության հետ[31]: Հելլենիստական երկրներում գործում էր մի օրինաչափություն, ըստ որի նախ սահմանվում էր թագավորական դինաստիայի պաշտամունք, ապա որոշ ժամանակ անց, հատկապես նոր միապետի իշխանության հզորացման պարագայում, այդ պաշտամունքը վերաճում էր տվյալ ժամանակ գահակալող արքայի պաշտամունքի[32]: Հարկ է նկատել, որ նույնիսկ թագավորի մահացած նախնիների աստվածացման ժամանակ գահակալող թագավորին վերագրվում էր աստվածային ծագում:

Տիգրան Բ-ի աստվածացման համար կար մեկ այլ լուրջ պատճառ, որը կապված էր թե՛ բուն հայկական տարածքում և թե՛ նվաճված տարածքներում բազմազգ բնակչության գոյությամբ: Մինչև Տիգրան Բ-ն Արտաշեսյան արքաները ղեկավարում էին հիմնականում մոնոէթնիկ բնակչության: Տիգրան Բ-ի գահակալության ժամանակ ռազմական արշավանքների արդյունքում Մեծ Հայք են բերվում մեծ թվով ռազմագերիներ, որոնց միջոցով լուծվում էր նորակառույց քաղաքների մարդկային ռեսուրսի խնդիրը: Միայն նոր մայրաքաղաք Տիգրանակերտի համար Կիլիկիայից, Կապադովկիայից և Սիրիայից տեղափոխվեցին 300000 հույներ և հելլենականացված այլազգիներ[33]: Արդյունքում տերության մեջ հայտնվեց տարբեր լեզուներով, ավանդույթներով, քաղաքակրթական զարգացման աստիճանի և կրոնի պատկանող բազմազգ բնակչություն:

Տերությունը միասնական, ամուր կառույցի վերածելու համար բավական չէր միայն ռազմական ուժը, անհրաժեշտ էր նաև տնտեսական, վարչական, մշակութային, գաղափարական և կրոնական միասնական համակարգի ստեղծում: Այդ համակարգի ստեղծման ջանքերի արդյունքն էին հանդիսանում տերությունում հելլենիզմի զարգացման փորձերը: Սակայն հունական աստվածների ներմուծումը և դրանց սինկրետիզմը տեղական աստվածների հետ չտվեցին սպասված արդյունքը՝ մնալով իշխող դասակարգի շրջանակներում[34]: Մեծ Հայք տեղափոխված այլազգիները ապրում էին իրենց համայնքներով և նվաճված երկրների ազգաբնակչության նման պաշտում իրենց՝ միմյանցից տարբեր աստվածներին:

Բազմաստվածության պարագայում չկար կրոնափոխության միտում: Ուստի անհրաժեշտ էր համընդհանուր մի պաշտամունքի սկզբնավորում, որը պետք է կատարվեր բոլորի կողմից, և նման պաշտամունք հանդիսացավ գահակալող արքայի

---

[31] Տե՛ս **Ստեփանյան Ա.,** *Պատմության կերպափոխությունները Մեծ Հայքում. Արտաշեսյան դարաշրջան,* Գիրք Ա, Երևան, 2012, էջ 80:

[32] Տե՛ս **Կրկյաշարյան Ս. Մ.,** *Հին Հայաստանի պետական կառուցվածքը (մ. թ. ա. VI-մ. թ. IV դդ.),* Երևան, 2005, էջ 127:

[33] Տե՛ս **Լեռ,** *Երկերի ժողովածու,* հատոր Ա, Երևան, 1966, էջ 303:

[34] Տե՛ս **Третьякова П. Н., Монгайта А. Л.,** *Очерки истории СССР. Первобытно-общинный строй и древнейшие государства на территории СССР,* Москва, 1956, с.455, **Խաչատրյան Ժ.,** *Մեծն Արտաշես Առաջին՝ աշխարհակալ արքա հայոց,* Էջմիածին, թ. Դ, Էջմիածին, 2014, էջ 49:

աստվածացումը: Կրոնական նման համակարգի ավելի հանգամանալից փաստարկված օրինակ մեզ համար հանդիսանում է առաջին դարի Հռոմեական կայսրությունը: Առաջին դարում ողջ կայսրության տարածքում ապրող ազգաբնակչությունը կարող էր պաշտել այն աստվածներին, որոնց ցանկանում էր, եթե այդ պաշտամունքը չէր հակասում որոշակի նորմերի, իսկ կայսրի պաշտամունքը պարտադիր էր բոլորի համար: Հենց կայսրի պաշտամունքով էր որոշվում՝ անձը հավատարիմ էր երկրին, թե ոչ[35]:

Մովսես Խորենացին վկայում է, որ Տիգրան Բ-ի կառուցած շատ քաղաքների հետ մեկտեղ, նույնիսկ դրանցից ավելի վաղ, առաջին հերթին կառուցվել են տաճարներ, բերվել են հունական աստվածներ, քրմեր ու հաստատվել են պաշտամունքային կարգեր[36]: Երկիր բերված հունական աստվածների արձանները, որպես ավար, արքայի կատարած հաղթանակների նշաններ էին և աշխարհակալության արդյունք ու ապացույց[37]: Այդ աստվածներից Աֆրոդիտեի արձանը «իբրև Հերակլեայ տարփաւորի, առ նորին պատկերին Հերակլեայ հրամայեաց կանգնել յաշտից տեղիսն»[38]: Ափրոդիտեի արձանը Տիգրանի հրամանով Աշտիշատ բերելու հանգամանքը անտրամաբանական է դարձնում Հերակլեսի արձանը նույն տեղը բերելու համար Վահունիներին քրմությունից և նրանց պատկանող հողատարածքներից զրկելը: Ըստ երևույթին, այդ հատվածը օտար արժեքները ներմուծելու կողմնակիցների և տեղական պահպանողական հոսանքների հակասության արձագանքն է: Արքայի և քրմական տոհմի մեջ ծագած հակասության պատճառը կարող էր հանդիսանալ ոչ թե Վահունիների կրոնական հարցերում կատարած ինքնուրույն որոշումը, այլ հենց այդ տոհմի համար նոր և չընդունված գահակալող արքայի պաշտամունքը: Դրա արդյունքում Վահունիներին փոխարինում են հունական քրմեր, որոնք վաղուց իրականացնում էին ապրող արքայի պաշտամունք: Հույն քրմերին Հայաստան բերելը կարող էր ունենալ նաև արշավանքների արդյունքում բերված հույն և հելլենականացված մեծաթիվ ազգաբնակչությանը նոր երկրի հետ կապելու նպատակ: Հունական քրմության հովանավորությամբ Արտաշեսյան գահակալը բնակչության վերոհիշյալ լայն զանգվածի համար հանդես կգար ոչ թե իբրև մի բարբարոս տիրակալ, այլ իբրև հելլենասեր (ինչի արդյունքը տեսնում ենք Արտաշեսյան դրամների գրություններում)[39]և հելլենիստական օրինավոր միապետ: Սելևկյան արքաների նման Արտաշեսյան արքաներն իրենք էին նշանակում քրմապետեր[40], հողեր նվիրում տաճարներին և հարկ եղած պարագայում նույնիսկ

[35]Տե՛ս **Hekster O., Kaizer T.,** *Frontiers in the Roman World,* Leiden, 2011, p. 156.
[36]Տե՛ս**Չամչեան Մ.,** *Պատմութիւն հայոց. Ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տն .1784,* հատոր Ա, Վենէտիկ, 1874, էջ 222:
[37]Տե՛ս **Կարիէրի Ա.,** *Հեթանոս Հայաստանի ուր մեհեաններն. Ագաթանգեղոսի եւ Մ. Խորենացւոյ համեմատ,* (թարգմ Տաշեան Հ. Յ.), Վիեննա, 1899, էջ 39:
[38]**Մովսէս Խորենացի,** *Պատմութիւն Հայոց,* էջ127:
[39]Տե՛ս **Մուշեղյան Խ.,** *Հայոց պատմության դրամագիտականը,* Երևան, 1997, էջ 21:
[40]Տե՛ս **Thonemann P.**, *Attalid Asia Minor. Money, International Relations and State,* Oxford, 2013, page 8.

քրմական կարևորագույն տոհմերից հետ վերցնում նրանց պատկանող տարածքները[41]:

Տիգրանի Բ-ն առաջինն էր Արտաշեսյան արքաներից, որն իրեն հռչակեց աստված[42], ինչի մասին վկայում է նաև Հուստինոսը: Տիգրան Բ-ի դրամների վրա գրված է եղել θεός «աստված»[43], ինչը հելլենիստական աշխարհում նշանակում էր, որ տվյալ արքան իր կենդանության օրոք աստվածացվել է[44]: Տիգրան Բ-ի պատվատիտղոսները և կրոնական կյանքում ձեռք բերած դիրքն անցնում են իր սերունդներին: Տիգրանյան թագն ինքնին հուշում էր, որ այն պատրաստված էր կրոնական գաղափարով և վերարտադրությունն էր Միհրի թագի[45]: Արտաշեսյան թագի կենտրոնում արեգակն էր պատկերված, իսկ դրա շուրջը արեգակին նայող, սակայն հակառակ կանգնած երկու արծիվներ: Դեռևս Վանի թագավորության շրջանում գոյություն ուներ DArsibidini աստվածություն, որի դիցանունը նշանակում էր «արծիվ աստված»: Այդ աստվածությունը կապված էր գերագույն աստծու հետ և հանդես էր գալիս որպես նրա լրատար և երկնքի ու երկրի միջնորդ[46]: Հետաքրքրական է, որ Նեմրութ լեռան սրբավայրում պաշտվող գլխավոր աստվածների արձանների հետ մեկտեղ կար նաև արծվի հսկա արձան: 1973-1975 թթ. պեղումների արդյունքում Արտաշատից ևս գտնվել են արծվի մետաղյա արձանիկներ, հայտնի են նաև արծվազարդ մեդալիոններ[47]: Արծիվը ավելի ուշ հանդիսացել է երկնքի ու արևի աստվածության խորհրդանիշ[48]: Իսկ կենտրոնում պատկերված արևը, ըստ երևույթին,խորհրդանշում էր հենց արևի աստված Միհրին[49]: Այս առումով հետաքրքրական նյութ է հանդիսանում Մովսես Խորենացու հիշատակած Ռշտունյաց նահապետի երդումը. «Երդնու նմա յարեգակն և ի լուսին և յամենայն պաշտամունս իւրեանց երկնայինս և երկրայինս, և յարև Արտաշեզի և Տիգրանայ»[50]: Ըստ երևույթին, հայ ժողովրդի մեջ տարածված երդման նման ձևը նախապես վերաբերվել է հայոց արքային, որը հանդիսացել է դրա մարմնացումը: Արքայի անունը բարձրացվել է պաշտվող աստվածների անվան հետ նույն հարթության վրա և համարվել երկրի վրա եղող ամենասրբազան իրողություններից մեկը, որի միջոցով կատարվել է ամենանվիրական երդումը: Վերլուծելով նշյալ իրողությունները՝ տեսնում ենք, որ արքայի արևը հանդիսանում էր ժամանակի հասարակության կոսմոլոգիական հայացք-

---

[41]Տե՛ս **Մանանդյան Հ.,** *Երկեր,* հատոր Դ, Երևան 1981, էջ 454:

[42]Տե՛ս **Ադենց Ն.,** *Երկեր,* հատոր Դ,Երևան, 2009, էջ 503:

[43]Տե՛ս **Սարգսյան Գ.Խ.,** *Հայաստանի պետական կարգը հելլենիստական դարաշրջանում,* էջ 670:

[44]**Տե՛ս Կրկյաշարյան Ս.,** *Հայոց արքայի տիտղոսաշարի մասին,* ԼՀԳ, թ. 9, Երևան, 1982, էջ 49:

[45]Տե՛ս **Հացունի Վ.,** *Պատմություն հայ տարազին,*Վենետիկ, 1923, էջ 69:**Դեմոյան Հ.,** *Հայկական ազգային խորհրդանիշներ.Զինանշաններ, դրոշներ, պարգևներ,* Երևան, 2012, էջ 41:

[46]Տե՛ս **Հմայակյան Ս. Գ.,** *Վանի թագավորության պետական կրոնը,* Երևան, 1990, էջ 58:

[47]Տե՛ս **Խաչատրյան Ժ.,** *Հայաստանի Անտիկ շրջանի մեդալիոնները (մ. թ. ա. II-մ. թ. I դդ.),* Հ ՍՍՀ ԳԱ, ԼՀԳ, թ. 5, Երևան, 1978, էջ 50:

[48]Տե՛ս **Խաչատրյան Ժ.,** *Արտաշատի VII բլրի 1973-1975 թթ. պեղումների արդյունքները,* ԼՀԳ, թ. 8, Երևան, 1978, էջ 67:

[49]Տե՛ս **Տէր Ղեւոնդեան Հ.,** *Արտաշէսեան Արքայատոհմի Թագերը եւ Անոնց Ծագումը,* Վիեննա, 1989,էջ 22:**Հացունի Վ.,** *Հայ դրոշները պատմութեան մէջ,* Վենետիկ, 1930, էջ 29:

[50]**Մովսէս Խորենացի,** *Պատմութիւն Հայոց,* էջ 134:

ների կենտրոնը և պետականության հիմքը, ինչից կյանք ու կանոնականություն էր հաղորդվում ստեղծված իրականությանը: Թագի արծիվներն էլ նշանակում էին, որ երկրի գլուխը հանդիսացող արքան միջնորդն էր երկնքի և ժողովրդի միջև, ինչպես նաև գերագույն իմաստության փոխանցողն ու գործադրողը:

Արտաշեսյան արքաները ոչ միայն շեշտում էին իրենց կապը Միհրի հետ, այլև նրան համարում էին իրենց հովանավոր աստվածը[51]: Արտավազդ Բ-ը հանդես էր գալիս որպես Միհր արեգակի երկրային մարմնավորում, և նրա պաշտամունքը միացված էր Միհրի պաշտամունքին[52]: Ինքնին Արտավազդ անունը նշանակում էր հաստատուն արդարություն[53] ու «հրամեծար»[54] և, հավանաբար, ինքն էլ, Կոմմագենեի հայոց արքաների նմանողությամբ կատարում էր հրեղեն էության ունեցող Միհրի[55] քրմական գործառույթները: Նրա դրամի ետևում պատկերված էր անտիկ շրջանում տարածված արևակառքի, այսինքն՝ Միհրի պատկերումը,[56]իսկ անվան և արքայից արքա պատվատիտղոսի հետ նշվում էր նաև «աստվածային»[57]: Հայտնի է, որ Արտավազդ Բ-ը ստացել էր իր ժամանակի աշխարհի լավագույն հելլենիստական կրթությունը և հունարեն լեզվով գրել է ստեղծագործություններ: Այդ, ինչպես նաև արքայազուններից ավագը չլինելու հանգամանքը, պատճառ են հանդիսացել որոշ մասնագետների այն կարծիքի համար, որ նա նախապես պատրաստվել է քրմապետության պաշտոնը ստանձնելուն, սակայն մյուս արքայորդիների՝ Տիգրան Բ-ի դեմ դուրս գալու պատճառով[58] գահին է բազմել Արտավազդ Բ-ը:

Թեպետև Արտավազդ Բ-ին հաջորդող Արտաշեսյան մյուս գահակալների դրամների վրա հանդիպում են նույն θεόσ «աստված» կոչումը[59], սակայն այն արդեն չուներ այն դերը, որը կար Տիգրան Բ-ի կամ Արտավազդ Բ-ի ժամանակ: Մինչև Հռոմեական ազդեցության շրջանը գահակալած Արտաշեսյան արքաներն իրենց դրամների վրա պատկերվում էին ավելի իդեալականացված, աստվածակերպ պատկերային ոճով, իսկ դրանից հետո ավելի շեշտադրվում է ռեալիստական ոճը[60]: Հռոմեական կայսրությունը՝ ելնելով իր ծավալապաշտական ծրագրերից՝ ամեն կերպ փորձում էր Մեծ Հայքում թուլացնել թագավորական իշխանությունը և քայքայել դրա գաղափա-

[51]Տե՛ս **Тревер К. В.,** *Очерки по истории культуры древней Армении. (II в. до н. э.-IV в. н. э.),* Москва, 1953, с. 94.

[52]Տե՛ս **Մարգարյան Ե.,** *Միհրականությունը Հին աշխարհի քաղաքական և կրոնահոգևոր համակարգում. Կոմմագենե, Հայաստան, Հռոմ,* Երևան, 2014, էջ 142:

[53] Տե՛ս **Աճառյան Հ.,** *Հայոց անձնանունների բառարան,* Երևան, 1942, էջ 310:

[54]Տե՛ս **Ավդալբեգյան Թ.,** *Հայագիտական հետազոտություններ,* Երևան, 1969, էջ 37:

[55]Տե՛ս **Գրիգորյան Գ.,** *Փոքր Միհրի կերպարի մի քանի գծերը,* Հ ՍՍՌ ԳԱ, Տեղեկագիր, թ. 10, Երևան, 1957, էջ 63:

[56]Տե՛ս **Ադասյան Ա., Հակոբյան Հ.,** *Հայ արվեստի պատմություն. Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը,* Երևան, 2009, էջ 45:

[57] Տե՛ս **Վարդանյան Ռ.,** Արտավազդ II-ի դրամները, Երևան, 2004, էջ 44:

[58]Տե՛ս **Саркисян Г. Х.,***Свидетельство поздневавилонской клинописной хроники об Армении времени Тиграна II,* ՊԲՀ, թ. 1, Երևան, 1991, с.49.

[59]Տե՛ս **Մուշեղյան Խ. Ա.,** *Դրամական շրջանառությունը Հայաստանում (մ. թ. ա. V դ.-մ թ XIV դ.),* Երևան, 1983, էջ 57-61

[60]Տե՛ս **Мушегян Х.,** *Портреты Армянских царей эпохи эллинизма,* Ереван, 1978, с. 9.

բական հիմքը: Արտաշեսյան վերջին գահակալների կրած «աստված» կոչումը ցույց է տալիս, որ այն միայն հզորության, ռազմական մեծ հաջողությունների և աշխարհակալության հետ չէր կապված, սակայն իր սպասված ազդեցությունը ունենում էր թվարկված գործոնների պարագայում: Արքայի աստվածացումը ավելի շատ կառավարելաձև էր և հպատակների նկատմամբ ունեցած իշխանության բացարձակեցման փորձ:

Այսպիսով, Արտաշեսյանների օրոք Մեծ Հայքի թագավորության հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս՝

- Արտաշեսյան թագավորության շրջանում հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունները պարսկական և հելլենիստական ազդեցություն կրելով հանդերձ, զարգանում էին Վանի թագավորությունից և Երվանդունիներից իրենց փոխանցված հայկական ավանդույթների հիմքի վրա:
- Քրմապետի պաշտոնը՝ սկսած Արտաշես Ա-ի ժամանակից, շարունակվում էր տրվել արքայական ընտանիքի անդամներին, սակայն այդ շրջանում արդեն ի հայտ է գալիս արքայական ընտանիքից առանձին, զուտ քրմական տոհմ, ինչպես նաև հունական աստվածների հետ երկիր բերված օտարազգի քրմեր:
- Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունները՝ փոքր-ինչ տարբերվելով համընդհանուր պատմական աստիճանական զարգացման օրինաչափություններից, կարող են ենթարկվել զարգացման փուլային կրկնության:
- Հելլենիստական քաղաքական հիմունքների համաձայն կազմավորված Արտաշեսյան թագավորության շրջանում նկատվում էր արքայի դերի միանշանակ գերազանցությունը՝ աշխարհիկ և հոգևոր իշխանությունների փոխհարաբերություններում:
- Մյուս արքայազունների նման, քրմապետը ևս կարող էր հավակնել նաև գահին, ինչը բացառելու համար Արտաշեսյանների օրոք Արքայից ու գահաժառանգից բացի, թագավորական ընտանիքի մնացած անդամները բնակեցվում են արքայանիստ Այրարատ նահանգից դուրս:
- Առկա է կրոնական համակարգում արքայական սակրալ էության աստիճանական զարգացում: Այն սկզբում արտահայտվում էր թագավորական նախնիների պաշտամունքով, շարունակվում աստվածային ծագմամբ ու դրսևորումներով գահակալների համբավի ստեղծմամբ և հանգուցակետին հասնում ապրող արքայի աստվածացմամբ:
- Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերություններն ի սպաս էին դրվում կրոնական, մշակութային և գաղափարական միասնական համակարգի ստեղծմամբ՝ տերության ամրապնդման գործին:

ВЗАИМООТНОШЕНИЕ ДУХОВНОЙ И МИРСКОЙ ВЛАСТИ В ЦАРСТВЕ ВЕЛИКОЙ АРМЕНИИ ПРИ ДИНАСТИИ АРТАШЕСЯНОВ- ***АЙКАРАМ АКОПЯН-*** *В статье в свете эллинистического воздействия изучается взаимоотношение духовной и мирской власти в II-I веках до нашей эры в царстве Великой Армении.В преобразовавшемся новом государственном аппарате большая роль отводилось данному взаимоотношению, так как оно было в состоянии, используя внешние воздействия, развивать обычаи, принадлежащие истинному армянскому этносу, что в свою очередь еще больше укрепило самостоятельность государственности Арташесянов.*

Изображается различающаяся от закономерности общеисторического постепенного развития сущность данных взаимоотношений. Изучаются усилия, направленные наабсолютизацию царской власти со времен вступления на престол Арашеса I в соответствии с духом времени, а также их последствия на вышеупомянутые взаимоотношения. Кульминационной точкой этого процесса становится обожествление живущего короля. Представляется его значение с точки зрения государственной идеологии, также причины и роль, связанные с уровнем государственной и военной мощи.

Ключевые слова: *эллинистическая, монарх, политеизм, верховный жрец, династия, королевский родовой культ, культовы центр, центральная королевская власть, обожествление живого короля, государственная идеология.*

THE RELATIONSHIP BETWEEN THE SPIRITUAL AND SECULAR AUTHORITIES IN THE KINGDOM OF GREAT ARMENIA DURING ARTAXIAD DYNASTY REIGN- ***HAYKARAM HAKOBYAN-****The article examines the importance of the relationship between spiritual and secular authorities in Artaxiad dynasty during II-I centuries. In reshaped new state system an important role was given to those relations because they were using external influences, to develop the traditions of the Armenian ethnicity itself which in turn reinforced the independence of the Artaxiad state.*

It shows a general gradual historical development of these relationsin nature different from the norms. Efforts to Absolve the Royal Authority Relevant to the Spirit of the Time Starting from the Reign of Artaxias Iand its consequences in the mentioned relationshipThe deification of the living king becomes the pinnacle of this process. Its significance in terms of state ideology is presented as well as the causes and role depending on the degree of political and military might

Key words: *Hellenistic, monarch, polytheism, high priest, dynasty, royal ancestor worship, a cult centre, central royal authority, deification of the living king, state ideology.*

ԶԱՐՈՒՀԻ ԶԱՔԱՐՅԱՆ

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԼԾԱԿՆԵՐԸ

Հոդվածի նպատակն է *ցույց տալ Անդրկովկասում Թուրքիայի վարած քաղաքականության նպատակը, բնույթը, շահերը: Թուրքիայի հետաքրքրվածությունը գլխավորապես պայմանավորված է տարածաշրջանի աշխարհաքաղաքական ու աշխարհառազմավարական կարևորությամբ: Անդրկովկասը մնում է առաջնային ուղղություն, որտեղ Թուրքիան ձգտում է առավելագույնս հետևել եվրոպական վարքագծի չափորոշիչներին և միաժամանակ ամրապնդել իր դիրքերը:*

Հոդվածի խնդիրն է *վերհանել Հարավային Կովկասում տիրող բարդ հարաբերությունների խճանկարը, մանրամասն ներկայացնել տարածաշրջանում տիրող իրավիճակը, խոչընդոտներն ու խնդիրները և դրանց վերաբերյալ Թուրքիայի տեսլականը:*

Հետազոտության իրականացման ընթացքում օգտագործվել են պատմական եւ իրավական նյութերի վերլուծություններ, ինչպես նաև Արցախի պետական պաշտոնյաների հարցազրույցներ և հոդվածներ:

Հետազոտության կարևոր եզրահանգումներն են. *Թուրքիան շահագրգիռ է տարածաշրջանում դիրքերի ամրապնդման գործում, ուստի մասնակցություն է ունենում տարածաշրջանային կարևոր ծրագրերում, մասնավորապես՝ էներգետիկ ծրագրերում՝ լծակներ ունենալով Արևմուտքի վրա: Թուրքիան արտաքին քաղաքականության համար կարևորում է հատկապես «0 խնդիր հարևանների հետ» սկզբունքը, որի նպատակը հարևանների հետ հարաբերությունների նորմալացումն ու կարգավորումն է: Թուրքիայի նոր քաղաքական սկզբունքներից մեկն էլ «բազմավեկտոր ու հավասարակշռված քաղաքականության» վարումն է, ինչը էականորեն ազդեցություն է ունենում Թուրքիայի հարավկովկասյան քաղաքականության վրա:*

Բանալի բառեր՝ *տարածաշրջանային աշխարհաքաղաքականություն, տարածաշրջանային անվտանգություն, ադրբեջանա-դարաբաղյան հակամարտություն, Անդրկովկասի աշխարհաքաղաքականություն, շահերի բախում, էներգետիկ ռեսուրսներ:*

ԽՍՀՄ փլուզումից հետո Անդրկովկասում առաջացած վակուումը մեծացրեց տարածաշրջանի նկատմամբ հետաքրքրվածությունը, և տարածաշրջանը հայտնվեց աշխարհի ուշադրության ու մրցակցության կենտրոնում: Այդ հետաքրքրվածությունը գլխավորապես պայմանավորված է տարածաշրջանի աշխարհաքաղաքական ու աշխարհառազմավարական կարևորությամբ: Այն արևելքն ու արևմուտքը կապող

կամուրջ է: Ուշադրության կենտրոնում հայտնվելու մյուս պատճառը տարածաշրջանում էթնիկ հակամարտությունների առատությունն էր (Լեռնային Ղարաբաղ, Աբխազիա, Հվ. Օսիա): Տարածաշրջանում ազդեցության հաստատման համար հիմնական մրցակցող կողմեր հանդիսացան Թուրքիան, Ռուսաստանը, Իրանը, ԱՄՆ-ն և ԵՄ-ն[1]: Հետխորհրդային ժամանակաշրջանում Թուրքիան ծրագրավորում էր հետխորհրդային երկրների հետ նախ հաստատել բարիդրացիական հարաբերություններ, ապա ստեղծել իր համար ազդեցության նոր գոտի: Թուրքիան փորձում էր այս երկրներին որպես զարգացման մոդել առաջարկել իր քաղաքական ու տնտեսական համակարգը, որն էլ կդառնար նրանց վրա ազդեցության հաստատման գործիք[2]: Թուրքիան այս հարցում ակնկալում էր Արևմուտքի աջակցությունը, բայց միաժամանակ գիտակցում էր, որ այլևս Արևմուտքի համար չունի այն նշանակությունն, ինչն ուներ Սառը պատերազմի ընթացքում, որպես բուֆերային շրջան Արևելքի ու Արևմուտքի միջև: 1987 թ. Թուրքիայի՝ ԵՄ-ին անդամակցության հայտին ընդառաջ՝ ԵՄ-ն թույլ տվեց Թուրքիային հասկանալ, որ դա իրականություն չի կարող դառնալ առաջիկա տասնամյակներում, իսկ ԱՄՆ-ն 1990 թ. կրճատեց Թուրքիային տրվող աջակցությունը: Այս ամենը ապացուցում է, որ Արևմուտքի համար Թուրքիան իսկապես կորցրել էր իր նախկին դերակատարումը: Արևմուտքը, Թուրքիայի առջև փակելով դռներ, գուցե ուղղորդում էր նրան ծավալվելու դեպի Արևելք: Այսինքն՝ Թուրքիան սկսեց հանդես գալ որպես միջոց հետխորհրդային տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցության թուլացման և Իրանի Իսլամական հանրապետության ազդեցությանը հակակշռելու համար[3]: Սակայն Թուրքիան ո՛չ բավարար պատկերացում ուներ տարածաշրջանի մասին, ո՛չ էլ բավարար ֆինանսական ռեսուրսներ: Ծրագրի ձախողումից հետո իրավիճակը փոխվեց[4]: Թուրքիայի քաղաքականությունն էականորեն տարբերվում է մինչև Արդարություն և զարգացում կուսակցության իշխանության գալը (2002թ.) և դրանից հետո, երբ փոխվեցին Թուրքիայի արտաքին քաղաքականության սկզբունքները, հիմքում ընկած գաղափարախոսությունը և այն դարձավ առավել պրագմատիկ՝ ուղղված Թուրքիան տարածաշրջանային, իսկ հետագայում նաև համաշխարհային գերտերության վերածելուն: Համաձայն ԱԶԿ-ի որդեգրած քաղաքական կուրսի՝ Անդրկովկասը Թուրքիայի համար մեծ կարևորություն ունի: Նախ և առաջ Թուրքիայի սահմանների մոտ տեղի ունեցող իրադարձություններն անմիջական ազդեցություն են ունենում

[1] Տե՛ս M. Aydin, Turkey's Policies toward the South Caucasus and its Integration in the EU, 2006, p.69, https://www.academia.edu/468889/Turkey_s_Policies_toward_the_South_Caucasus_and_its_Integration_in_the_EU

[2] Տե՛ս А. Горгулу, Турция и Южный Кавказ в 2010 г., Ежегодник Института Кавказа / Ред. А.Искандарян. – Ер.: Институт Кавказа, 2012, стр. 141-142

[3] Տե՛ս Ա. Զարգարյան, Թուրքիայի քաղաքականությունը Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում ԽՍՀՄ փլուզումից հետո, http://dpir.mskh.am/hy/node/759

[4] Տե՛ս А. Горгулу, Турция и Южный Кавказ в 2010 г., Ежегодник Института Кавказа / Ред. А.Искандарян. – Ер.: Институт Кавказа, 2012, стр. 141-142

Թուրքիայի անվտանգության վրա: Տարածաշրջանն անվտանգային երաշխիք լինելուց բացի՝ ունի աշխարհատնտեսական կարևոր դերակատարում, այն միջանցք է դեպի ածխաջրածնային պաշարներով հարուստ կասպիական շրջաններ: Թուրքիայի համար տարածաշրջանը նաև տարանցիկ ուղի է Մեծ Թյուրքական աշխարհ ձևավորելու համար: Ինչպես նաև տարածաշրջանի վրա ազդեցության հաստատումը կարևորվում է տարածաշրջանային գերտերություն դառնալու համար[5]: Արտաքին քաղաքականության այլ սկզբունքների շարքում Անդրկովկասում վարվող քաղաքականության համար կարևորվում է հատկապես «0 խնդիր հարևանների հետ» սկզբունքը, որի նպատակը հարևանների հետ հարաբերությունների նորմալացումն ու կարգավորումն է[6]: Թուրքիայի նոր քաղաքական սկզբունքներից մեկն էլ «բազմավեկտոր ու հավասարակշռված քաղաքականության» վարումն է, ինչն էականորեն ազդեցություն է ունենում Թուրքիայի հարավկովկասյան քաղաքականության բնույթի վրա: Թեև Թուրքիային շահեկան չէ տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցության հաստատումը, բայց, հաշվի առնելով Ռուսաստանի հետ ունեցած առևտրային-էներգետիկ հարաբերությունները, Թուրքիան Կովկասում լուրջ մարտահրավերներ չի ստեղծում Ռուսաստանի քաղաքականության համար՝ չվտանգելով այդ հարաբերությունները:

Անկախ Իրանի հետ տարածաշրջանում առկա մրցակցությանը՝ Իրանի հետ փխրուն հարաբերությունները ևս պայմանավորում են Անդրկովկասում Թուրքիայի զուսպ քաղաքականությունը[7]: Թուրքիայի անդրկովկասյան քաղաքականության լծակները, հնարավորություններն ընդգծելու համար անհրաժեշտ է անդրադառնալ Թուրքիայի՝ անդրկովկասյան պետությունների հետ կառուցած հարաբերությունների բնույթին, հարաբերություններում առկա համագործակցությանը, որը, բնականաբար, ուղղված է տարածաշրջանում Թուրքիայի նպատակների ու շահերի բավարարմանը:

Ադրբեջանը եզակի դեր ունի Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ: Համագործակցային հարաբերությունները պայմանավորված են ոչ միայն մշակութային, գաղափարական, լեզվական նմանություններով, այլ նաև համընկնող տնտեսական, ռազմավարական, քաղաքական շահերով, որոնք բավարարվում են համատեղ գործողությունների, փոխադարձ աջակցության միջոցով: Երկու պետությունների միջև առկա են սերտ առևտրատնտեսական հարաբերություններ: Համագործակցությունը մեծ ծավալների է հասնում էներգետիկ ոլորտում: ԽՍՀՄ փլուզումից հետո Ադրբեջանը որոշակիորեն մեկուսացած էր համաշխարհային շուկայից և ուներ իր բնական արտադրանքը և Կասպից ծովի գազն ու նավթը համաշխարհային շուկա

[5] Տե՛ս Ա. Բարսեղյան, Թուրքիայի և ՌԴ-ի մրցակցող շահերը Հարավային Կովկասում, 27 / 06 / 2013, http://www.times.am/?p=27533&l=am/turqiayi+ev+rd-i+mrcakcox+shahery+haravayin+kovkasum

[6] Տե՛ս N. Beriker, Turkey's role in the South Caucasus, p. 175-176, http://myweb.sabanciuniv.edu/beriker/files/2011/11/Turkeys-Role-in-South-Caucausus-1.pdf

[7] Տե՛ս Regional Dynamics in the South Caucasus: An Interview with Neil MacFarlane, 12.01.2015, http://steppedispatches.com/2015/01/12/regional-dynamics-in-the-south-caucasus-an-interview-with-dr-s-neil-macfarlane/

արտահանելու նոր ուղղությունների կարիք: Լուծումը նոր նավթային ու գազային խողովակաշարերի կառուցումն էր, ինչն աջակցություն ստացավ Արևմտյան երկրների կողմից, ովքեր ևս ձգտում էին ազատվել Ռուսաստանից ունեցած էներգետիկ կախվածությունից[8]: Նախաձեռնված ծրագրերի ակտիվ մասնակիցներ դարձան Թուրքիան ու Վրաստանը, որը ոչ միայն զարգացրեց եռակողմ համագործակցությունն, այլ նաև մեծացրեց նրանց դերակատարումն արևմուտքի համար: Առավել նշանակալի էներգետիկ ծրագրերն են Բաքու-Սուպսա, Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղերը և Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարը: Բաքու-Սուպսա նավթատարը (837 կմ) գործարկվեց 1997թ., հանդիսացավ հարավային էներգետիկ միջանցքի հիմքն, ու շնորհիվ այս նավթամուղի Ադրբեջանն իր անկախության տարիներին առաջին անգամ ունեցավ էներգետիկ այլընտրանքային հոսք[9]: Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարը (1770 կմ) գործարկվեց 2005թ.: Նավթատարի շահագործման ժամկետը, որով օրվա ընթացքում սպասարկվում է 1մլն բարրել նավթ՝ 20 տարի է[10]: Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարը (980 կմ) գործարկվեց 2007թ. և ունի տարեկան 20 մլրդ մ³ գազ տեղափոխելու հնարավորություն[11]: Էներգետիկ կոնտեքստում ամենախոշոր ծրագիրը Տրանսանատոլական գազային խողովակաշարն է, որի մասին հայտարարվեց 2011թ.-ին[12]: Եռակողմ հարաբերություններում շատ կարևորվեց 2007թ. նախաձեռնված Կարս-Ախալքալաք-Թբիլիս-Բաքու երկաթգծի կառուցումը, որը կապում է Եվրոպան, Կովկասը և Ասիան[13]: Թուրքիայի համար այս էներգետիկ ու տրանսպորտային ծրագրերը մեծ հնարավորություններ են որոշակի կախվածության մեջ պահել Արևմուտքին:

Ադրբեջանի և Թուրքիայի հարաբերություններում կարևոր դերակատարում ունի փոխադարձ քաղաքական աջակցությունը՝ Թուրքիան Ադրբեջանին՝ Լեռնային Ղարաբաղի հարցում, Ադրբեջանը Թուրքիային՝ Հայոց ցեղասպանության հետ կապված, կիպրոսական և այլ հարցերում[14]: Առկա է լուրջ համագործակցություն անվտանգային-ռազմական հարցերում: Ադրբեջանի՝ ՆԱՏՕ-ի հետ համագործակցության խորացման հարցում Թուրքիան մեծ դերակատարում ունի: Իրականացվում

[8] Տե՛ս M. R. Goudarzi, A. B. Lashaki, S. F. M. Lakani, Turkish Foreign Policy in South Caucasus and Its Impact in Iran-Azerbaijan Relationship, Journal of Politics and Law; Vol. 8, No. 1; 2015, http://www.ccsenet.org/journal/index.php/jpl/article/viewFile/44378/24875

[9] Տե՛ս Стратегия транспортировки энергетических ресурсов, http:// www. azerbaijans. com/ content _ 1030_ru.html

[10] Տե՛ս А.А. Гурьев, Геополитический ракурс нефтепровода Баку-Тбилиси-Джейхан, http:// www.iimes. ru/rus/stat/2005/19-06-05.htm

[11] Տե՛ս Baku-Tbilisi-Erzurum Gas Pipeline, http://www.socar.az/socar/en/activities/transportation/baku-tbilisi-erzurum-gas-pipeline

[12] Տե՛ս Turkey's ambitions in the South Caucasus, 01.06.2013, http://www.turkishreview.org/reports/turkey-s-ambitions-in-the-south-caucasus_540458

[13] Տե՛ս Ա. Բալասանով, Վրաստան-Ադրբեջան. Երկկողմ կախվածություն, 08.05.13, http://www .aysor. am / am/news/2013/05/08/georgia-azerbaijan-1/609612

[14] Տե՛ս Р. М.Турарбекова, Политика Турции в отношении стран постсоветского пространства, стр. 30

են համատեղ վարժանքներ ու մարզումներ[15]: 2010թ. երկու պետությունների միջև ստորագրվեց համաձայնություն ռազմավարական գործընկերության և փոխադարձ օգնության մասին, որի հիմնական հարցերից մեկը ռազմական համագործակցությունն է՝ այդ թվում առաջնային նպատակ ունենալով լուծել Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը[16]: Այսինքն՝ Ադրբեջանի հետ ունեցած տնտեսական, քաղաքական, անվտանգային-ռազմական սերտ հարաբերություններն ու այս ոլորտներում առկա փոխկախվածությունը Անդրկովկասում Թուրքիայի վարած քաղաքականության կարևորագույն լծակներից է:

Թուրքիայի համար Ադրբեջանի հետ կապող տարանցիկ երկիր է Վրաստանը, որի հետ ևս ԽՍՀՄ փլուզումից հետո դիտարկվում է բազմաոլորտ համագործակցության զարգացում՝ համատեղ շահերի բավարարմամբ: Համագործակցության առաջին կարևոր դաշտը, բնականաբար, էներգետիկն է, որտեղ մեծ է Վրաստանի տարանցիկ դերակատարումը: 2007թ. երկու երկրների միջև ստորագրվեց ազատ առևտրի պայմանագիր: Վրաստան-Թուրքիա ռազմական համագործակցությունը սկսվել է դեռ 1992-1993 թթ., որն ավելի ակտիվացավ, այն բանից հետո, երբ Վրաստանը խոսեց ՆԱՏՕ-ին անդամակցության ցանկության մասին, ինչն աջակցության արժանացավ Թուրքիայի կողմից: 1997թ.-ին կնքվեց ռազմական համագործակցության պայմանագիր[17]: Համագործակցությունն առկա է նաև քաղաքական ոլորտում: Թուրքիան Վրաստանի հետ ջերմ հարաբերությունների միջոցով ապահովում է հավասարակշռությունը՝ նվազեցնելով Ռուսաստանի դերակատարումն Անդրկովկասում, ինչը ռուս-վրացական լարված հարաբերությունների պայմաններում շահավետ է նաև Վրաստանի համար[18]: 2008թ. ռուս-վրացական պատերազմը լուրջ անհանգստություն առաջացրեց նաև Թուրքիայում: Չնայած այն հանգամանքին, որ առկա էին լավ հարաբերություններ Վրաստանի հետ, բայց Թուրքիան նաև Ռուսաստանի առևտրային գործընկերն է: Թուրքիան պետք է հավասարակշռություն պահպաներ Ռուսաստանի և Վրաստանի միջև[19]: Վրաստան-Թուրքիա հարաբերություններում առկա են նաև հակասություններ: Մասնավորապես, Թուրքիան՝ ճանաչելով Վրաստանի տարածքային ամբողջականությունը, շարունակում է ակտիվ կապեր պահպանել Աբխազիայի հետ՝ դրանով ինչ-որ առումով լեգիտիմացնելով դրա անկախացումը: Խնդիր կա նաև՝ կապված Վրաստանից 1944թ.

[15] Տե՛ս B. Gültekin, Turkey's Interest and Strategies in the South Caucasus, Economic Policy Research Foundation of Turkey, 2012, http://www.tepav.org.tr/upload/files/1336992403-3.Turkey s Interest and Strategies in the South Caucasus.pdf

[16] Տե՛ս Г. Новикова, Военное закрепление России и Турции на Южном Кавказе, 20.10.2010, http://www.spectrum.am/articles-ru/2010/10/2100/?lang=ru

[17] Տե՛ս M. Vindimian, Evolution of Turkish Foreign Policy towards Georgia, ISPI, Policy brief, 196, 09.2010, p.3, http://www.ispionline.it/it/documents/PB_196_2010.pdf,

[18] Տե՛ս M. Cecire, Georgia-Turkey relations in a Georgian Dream era, Caucasus analytical digest No. 48, Philadelphia, 3.03. 2013,

[19] Տե՛ս B. ARAS, P. AKPINAR, The Relations between Turkey and the Caucasus, p.62-63, http://sam.gov.tr/the-relations-between-turkey-and-the-caucasus/

տեղահանված թուրք-մեսխեթների Վրաստան վերադարձի հարցի չլուծման հետ[20]: Չնայած այս խնդիրների առկայությանը՝ երկու պետությունների համար էլ կարևոր են բարիդրացիական հարաբերությունները: Վրաստանը Թուրքիայի համար մուտքի միջանցք է դեպի Անդրկովկաս և Կենտրոնական Ասիա, հետևաբար և Վրաստանի հետ համագործակցային հարաբերությունների զարգացումը Թուրքիայի անդրկովկասյան քաղաքականության կարևորագույն լծակն է: Թե՛ Վրաստանում, թե՛ Ադրբեջանում ազդեցության մեծացման համար Թուրքիան կիրառում է «փափուկ ուժ»՝ այս երկրներում իրականացնելով կրոնական, մշակութային, սոցիալական, տնտեսական հատուկ քաղաքականություն: Արդի թուրքական քաղաքականությունը բնութագրվում է «ապառազմականացման», «տնտեսականացման» արտաքին քաղաքականություն տերմիններով[21]:

Անդրկովկասում Թուրքիայի նպատակների նվաճմանն ու ազդեցության մեծացմանը խոչընդոտում են Թուրքիա-Հայաստան լարված հարաբերությունները: ԽՍՀՄ փլուզումից հետո Թուրքիան ճանաչեց ՀՀ անկախությունը, հաստատեց դիվանագիտական հարաբերություններ, բայց 1993թ. Ադրբեջանին համերաշխություն հայտնելով Լեռնային Ղարաբաղի հակամարտության հարցում, փակեց Հայաստանի հետ սահմաններն ու կասեցրեց դիվանագիտական հարաբերությունները[22]: Երկու պետությունների հարաբերությունների լարվածության հիմնական պատճառները Թուրքիայի աջակցությունն է Ադրբեջանին ԼՂ հակամարտության հարցում, Թուրքիայի ժխտողականությունը 1915թ. Օսմանյան կայսրության տիրապետության տակ հայերի նկատմամբ իրականացրած ցեղասպանության նկատմամբ: 2008թ. ՀՀ-ի կողմից նախաձեռնված «ֆուտբոլային դիվանագիտության» ու փոխադարձ այցելությունների շրջանակներում Հայաստան-Թուրքիա հարաբերություններում լարվածության թուլացում նկատվեց: 2009թ. հոկտեմբերի 10-ին Ցյուրիխում ստորագրվեցին հայ-թուրքական արձանագրություններ՝ ուղղված հարաբերությունների նորմալացմանը: Ադրբեջանական գործոնի ազդեցության ներքո Թուրքիան իրրև հարաբերությունների կարգավորման նախապայման առաջ քաշեց Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման խնդիրն՝ այդպիսով ձախողելով արձանագրությունները[23]: Թեև փակ սահմանի առկայությանը՝ Թուրքիան Հայաստանի

[20] Տե՛ս J. Bartlett, N. Samvelidze, Turkey and the South Caucasus: Prospects and Challenges for Cooperation, 25.10.2013,http://www.hazar.org/blogdetail/blog/turkey_and_the_south_caucasus_prospects_and_challenges_for_cooperation_908.aspx

[21] Տե՛ս Г. Евгения, Политика Турции на Кавказе и в Центральной Азии в постсовестский период, Центральной Азия и Кавказ, Том 14, выпуск 3, 2011, стр.167, http://cyberleninka.ru/article/n/politika-turtsii-na-kavkaze-i-v-tsentralnoy-azii-v-postsovetskiy-period

[22] Տե՛ս B. Balci, Strengths and Constraints of Turkish Policy in the South Caucasus, 18.06.2014, http://carnegieendowment.org/2014/06/18/strengths-and-constraints-of-turkish-policy-in-south-caucasus

[23] Տե՛ս B. Gültekin, Turkey's Interest and Strategies in the South Caucasus, Economic Policy Research Foundation of Turkey, 2012, http://www.tepav.org.tr/upload/files/1336992403-3.Turkey___s_Interest_and_Strategies_in_the_South_Caucasus.pdf

հինգերորդ առևտրային գործընկերն է: Առևտուրն իրականացվում է Վրաստանի տարածքի միջոցով, և տարեկան առևտրաշրջանառությունը կազմում է 200 մլն դոլար[24]: Թուրքիայի համար Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորումը կարող էր լինել տարածաշրջանում նպատակային քաղաքականության իրա-կանացման ևս մեծ լծակ:

Այսպիսով, Թուրքիան Անդրկովկասում ունենալով բազմազան շահեր ու ձգտելով դրանց բավարարմանը, վարում է հնարավորինս պրագմատիկ քաղաքականություն: Մասնավորապես հաստատում է համագործակցային հարաբե-րություններ Վրաստանի ու Ադրբեջանի հետ, ձևավորում փոխկախվածություն երկկողմ հարաբերությունների բազմազան ոլորտներում, ինչպես նաև դիտարկում Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման հնարավորությունները: Նման քաղաքականության վարումը հանդես է գալիս իբրև միջոց՝ տարածաշրջանում նպատակային քաղաքականության վարման հնարավորությունների մեծացման ու լծակների ձեռքբերման համար, որպես վերջնական նպատակ ունենալով տարածաշրջանում ազդեցության հաստատումը: Այս տարածաշրջանում Թուրքիան ունի հիմնականում համընկնող շահեր Արևմուտքի հետ, հետևաբար ստանում է Արևմուտքի որոշակի աջակցությունը տարածաշրջանային քաղաքականություն վարելիս՝ միաժամանակ փորձելով հակասություններ ու բախումներ չունենալ տարածաշրջանով հետաքրքրված այլ կողմերի հետ:

*РЫЧАГИ ЗАКАВКАЗСКОЙ ПОЛИТИКИ ТУРЦИИ- **ЗАРУИ ЗАКАРЯН-** Цель статьи: показать цель, сущность, интересы политики, проводимой Турцией в Закавказье. Заинтересованность Турции по большей части обусловлена геополитической и геостратегической важностью. Закавказье по-прежнему остается приоритетным направлением, в котором Турция стремится максимально следовать критериям европейской модели поведения и одновременно укреплять свои позиции.*

Задача статьи: выявить мозаику сложных отношений в Южном Кавказе, детально представить ситуацию, барьеры и проблемы в регионе, а также видение Турции в их отношении.

В ходе исследования были использованы исторические и правовые аналитические материалы, а также интервью и статьи государственных должностных лиц Арцаха.

Ключевые выводы, полученные в результате исследования: Турция заинтересована в укреплении позиций в регионе, поэтому она принимает участие в важнейших региональных программах, в частности в сфере энергетики, приобретая рычаги влияния на Запад. В плане внешней политики Турция считает особенно важным

[24] Sť u T. De Waal, Armenia and Turkey: bridging the gap, Carnegie, Endowment for international peace, Policy brief, 2010, p. 3

принцип «0 проблем с соседями», цель которого – нормализация и урегулирование отношений с соседями. Одним из принципов новой политики Турции является многовекторность и сбалансированность, что оказывает существенное влияние на политику Турции в Южном Кавказе.

Ключевые слова: *региональная геополитика, региональная безопасность, азербайджано-карабахский конфликт, геополитика Южного Кавказа, столкновение интересов, энергетические ресурсы.*

THE LEVERAGE OF TURKEY'S TRANSCAUCASIAN POLICY- ***ZARUHI ZAQARYAN****- The purpose of this article is to show the goal, nature, interests of Turkey's policy in Transcaucasia. Turkey's interest is mainly conditioned with the geopolitical and geo-strategic importance of the region. Transcaucasia remains the main direction where Turkey strives to follow the European standards of behavior simultaneously strengthening its position.*

The task of the article is to reveal the mosaic of complex relations in the South Caucasus, present in details the situation, obstacles and problems existing in the region and Turkey's vision regarding them.

During the research, various historical and legal materials were analyzed, as well as interviews and articles of public figures of Artsakh were used.

Important conclusions of the study are as follows: Turkey is concerned in strengthening its positions in the region. For that reason it participates in significant regional projects, particularly, in energetic projects, getting leverage over the West. For its foreign policy, Turkey highlights especially "the principle of 0 problems with the neighbors" aimed at normalization of relations with its neighbors. Among the new political principles of Turkey is conducting "multi-faceted and balanced policy" which has a serious influence on Turkey's Transcaucasian policy.

Key words: *Regional Security, Azerbaijani-Karabagh Conflict, South Caucasian Geopolitics, Conflict of Interest, Energy Resources.*

ՄՈՆԹԵ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՍԿԻՀԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԵՋ՝ ՈՐՈՇ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հայկական մանրանկարչության մեջ սկիհի պատկերումը ներկայացված է պարզ և գեղարվեստական միանման ոճավորմամբ: Սակայն նկատում ենք նրա երկակի մեկնաբանման սերտ առնչությունները: Դարեր շարունակ սկիհը կիրառվել է եկեղեցում՝ Ս. Պատարագի ժամանակ որպես զոհաբերվող Քրիստոսի արյան բաժակ: Սակայն ոչ միշտ է սկիհը զոհաբերության խորհրդանիշ: Նշված օրինակների հիման վրա հնարավոր է դառնում առանձնացնել երկու խորհուրդ, որոնք նկատվում են Հաղորդության և հարսանեկան արարողությունների ժամանակ: Մշտապես օրհնված գինով լի սկիհը Քրիստոսի այրան և ինքնազոհաբերման խորհրդանիշը լինելուց զատ, մատնանշում է նրա հրաշագործումը, մաքրագործությունը և Աստվածային էությունը: Ուստի պատկերագրական կանոնիկ տեսարաններն իրենք են կերտում սկիհի խորհրդանշական մեկնությունը:

Բանալի բառեր՝ *սկիհ, Ավետարան, մանրանկարչություն, ինքնազոհաբերում, սուրբ գինի, հրաշագործություն, Կանայի հարսանիքը, Մկրտություն, Խորհրդավոր ընթրիք:*

Բուն Հայաստանում և Հայաստանից դուրս գործած բազմաթիվ մանրանկարչական կենտրոններում[1] ստեղծագործել են տաղանդավոր նկարիչներ[2], որոնք մեծ կարևորություն են տվել ծիսական առարկաների պատկերմանը: Նրանց շնորհիվ դարեր շարունակ մեզ են փոխանցվել եկեղեցական սրբազան արարողություններին վերաբերող մի շարք առարկաներ, որոնցից յուրաքանչյուրն օրհնվում է հատուկ արարողությամբ և կիրառվում՝ ըստ խորհրդաբանության: Հայկական մանրանկարչության մեջ ծիսական իրերի շարքում իրենց ուրույն տեղն են զբաղեցնում

[1] Առանձնապես նշանավոր կենտրոններից են Կիլիկիայի, Գլաձորի, Վասպուրականի, Տաթևի, Երզնկայի, Ղրիմի, Կարին-Էրզրումի, Ջուղայի, Խիզանի և այլ գրչության կենտրոնները(տես՝Կորխմազյան Է., Հակոբյան Հ., Նոր ժամանակների շեմին // Հայկական մանրանկարչություն, Մատենադարանի հավաքածու, Երևան, 2014, էջ 58):

[2] Հայ մանրանկարչության պատմության մեջ առանձնակի տեղ են զբաղեցնում մանրանկարիչները, որոնցից ոչ բոլորի անուններն են հայտնի: Մանրանկարչական տարբեր կենտրոններից նշանավորվում են Թորոս Ռոսլինի, Ավագի, Հովհաննեսի, Թորոս Տարոնացու, Գրիգոր Ծաղկողի, Մոմիկի, Ծերուն Ծաղկողի, Գրիգոր Տաթևացու, Հակոբ Ջուղայեցու, Սարգիս Պիծակի և այլ նկարիչների անուններ(տես՝ Ղազարյան Վ., Հակոբյան Հ., Հայ միջնադարյան կերպարվեստի պատմություն, Երևան, 2013, էջ 199-205):

սկիհները՝ մեր ուսումնասիրության բուն առարկան: Ձեռագրերում պատկերվելիս ողջ ծիսական սպասքն ու անոթներն ունեն որոշակի իմաստ և խորհուրդ: Սկիհը եկեղեցում Սուրբ Պատարագի ժամանակ օգտագործվող այն սրբազան բաժակն է, որի մեջ լցնում են կարմիր գինին: Գինին Սբ. Պատարագի միջոցով սրբագործվում է և գինու տեսքով դառնում Քրիստոսի արյունը[3]: Այս նշանակությունն ունի Աստվածաշնչյան մեկնություն, որում հստակ երևում է, որ սկիհը խորհրդանշում է Հիսուսի չարչարանքների բաժակը և այն գավաթը, որով Հիսուսն օրհնելով գինին Խորհրդավոր ընթրիքի ժամանակ, տալիս է առաքյալներին հաղորդվելու համար[4], ասելով. «Առէք ասիկա ու բաժանեցէք ձեր մէջ: Այս գաւաթը նոր ուխտ է իմ արիւնովս, որ ձեզի համար կը թափուի»[5]: Սակայն մինչ Խորհրդավոր ընթրիքը, գինու մասին հանդիպում ենք Քրիստոսի հրաշքներից առաջինում՝ Կանայի հարսանիքը պատմող հատվածում: Երբ Քրիստոսը հարսանիքի ժամանակ ջրով լի կարասները հրաշքով վերածում է գինու. «Յիսուս ըսաւ անոնց, Լեցուցէք այդ կարասները ջրով, ու լեցուցին զանոնք մինչև բերանը: Եւ հիմա հանեցէք ու սեղանապետին տարէք, անոնք ալ տարին: Ու սեղանապետը երբ գինի եղած ջուրին համը առաւ, և չէր գիտեր ուրկէ ըլլալը: Յիսուսի հրաշքներուն սկիզբը զայս ըրաւ Գալիլեայի Կանա քաղաքին մէջ»[6]:

Մանրանկարչության մեջ սկիհի պատկերը հանդիպում ենք Խորհրդավոր ընթրիքի, Մկրտության, Հովհաննեսի անվանաթերթի, Խորանների, Աբրահամի հյուրընկալումը և Կանայի հարսանիքը տեսարաններում[7]: Նրանցում առկա է գինու օգտագործումը, որպես օրհնության և սրբազնության խորհուրդ: Մանրանկարչությունից զատ, եկեղեցական ծեսում, նման ծիսական առարկան հիմնականում լինում է արծաթից, իսկ ներսից՝ ոսկեզօծ: Դեռևս վաղ շրջանում սկիհները պատրաստվում էին կավից, կիսաթանկարժեք քարերից և ապակուց[8]: Սկիհի բաղկացուցիչ մասն է կազմում մաղզման[9]: Այն ոսկե կամ արծաթե փոքրիկ ափսեն է, որի վրա դրվում է սուրբ նշխարը, ինչպես նաև դրանով ծածկվում է սկիհը[10]: Հայոց եկեղեցում կիրառությունից առաջ

---

[3] Աւետիքեան Հ.,Սիւրմէլեան Հ., Աւգերեան Հ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1837, էջ 721:

[4] Աղանեանց Գ. Արք., Կարգ Աստվածապաշտութեան Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ, Թիֆլիս, 1911, էջ 34-35:

[5] Ղուկաս 22:17-20, Աստուածաշունչ, Նոր Կտակարանաց, Պեյրութ, 1963, էջ 90:

[6] Հովհաննես 2:7-11, Աստուածաշունչ, Նոր Կտակարանաց..., էջ 97:

[7] Покровский Н. В., Евангелие в памятниках иконографии, Москва, 2001, с. 277-380; Бобров Ю. Г., Основы иконографии древнерусской живописи, Санкт-Петербург, 1995, с. 30-44:

[8] Frazer Margaret English, Medieval Church Treasuries// The Metropolitian Museum of Art. Bulletin. Vol. 43, № 3, (Winter 1985-1986), p. 8:

[9] Կռանեան Ա. Վրդ., Բառգիրք հայերէն լեզուի, Պէյրութ, 1998, էջ 283:

[10] Մաղզման հարթ պնակ է, որի մեջ Սուրբ Պատարագի ընթացքում, ամփոփում է Սուրբ Հաղորդության Նշխարը՝ Փրկչի Մարմինը: Այդ փոքր կլոր ամանը սկիհի խուփն է: Նրա միջին մասը սկիհի բերանի չափով խորացված է, որի շնորհիվ այն հարմարավետ տեղադրվում է նրա վրա: Սկիհի պես մաղզման ևս լինում է արծաթից, իսկ ներսից ոսկեզօծ է: Մաղզման ներսի հատվածում պատկերված են Խաչելության կամ էլ Գառն Աստծոյ տեսարանները: Եթե Հաղորդության բաժակը կամ սկիհը Հիսուսի Արյան սրբագործման անոթն է, ապա նրա ծածկոցը՝ մաղզման, խորհրդանիշն է զոհի

սկիհը և մաղզման ըստ Մաշտոցի՝ օրհնվում են. «Ցուպ քո և գաւազան՝ նոքա մխիթարեսցեն զիս։ Պատրաստ արարեր առաջի իմ զսեղան՝ակն յանսիման նեղչաց իմոց։ Օծեր իւղոք ըզ գլուխ իմ. բաժակ քո որ անապակ արբեցոյց զիս»[11]։ Հաճախ եկեղեցական ծեսերում հանդիպում ենք չափերով մեծ սկիհների՝ նախատեսված մեծ նշխարի համար, որոնք օգտագործվել են հազարավոր հավատացյալներին Հաղորդության համար»[12]։ Հայկական սկիհների զարդարումը եղել է կանոնական։ Դրանք հարդարվել են չորս Ավետարանիչների, առաքյալների պատկերներով, Աստվածաշնչյան տեսարաններով, հրեշտակների, քերովբեների, սերովբեների, բուսական և ծաղկային ձևավորումներով։ Սկիհների ձևավորման մեջ հետաքրքիր են նաև ավետարանական թեմատիկ հորինվածքները։ Վերջինս ազդեցություն է կրել Քրիստոսի Զոհաբերության, Հարության և Աստվածահայտնության ժամանակ կատարվող պատարագից։ Առավել հաճախ պատվանդանի վրա հադիպում ենք Քրիստոսի Ծնունդի, Մկրտության տեսարանները՝ կապված Աստվածահայտնության հետ, Քրիստոսի կյանքի վաղ շրջանների սյուժեները, իսկ բաժակի վրա՝ Քրիստոսի չարչարանքները, Խաչելությունը, Հարությունը[13]։

Հայկական մանրանկարչության մեջ վաղ շրջանի առաջին օրինակներից է Էջմիածնի 989 թ. № 2374 Ավետարանի[14] վերջում կցված և 6-րդ դարով թվագրվող Մկրտության տեսարանը (նկ. 1)[15]։ Մկրտության տեսարանը այն չորս տեսարաններից մեկն է, որոնք կցվել են Ավետարանին։ Չորս մանրանկարներն էլ խորհրդաբանորեն կապվում են Աստվածահայտնության թեմայի հետ և ստեղծված են պատկերագրական հնագույն սկզբունքներով[16]։ Մկրտության տեսարանը պատկերագրական ամենից տարածված տարբերակն է. պատկերի կենտրոնում Հիսուսն է ջրերի մեջ, մինչև ուսերը ջրածածկ։ Պատկերված է պատանու տեսքով։ Հորդանանի աջ ափին՝ պատկերի ձախ կողմում, ներկայացված է Հովհաննես Մկրտիչը՝ իրեն բնորոշ արտաքինով՝ մորուքով և երկար մազերով։ Նրա աջ ձեռքը դիպում է Հիսուսի գլխին, իսկ պատկերի վերևում Աստծո Աջն է, որից գլխիվայր դեպի Հիսուսն է իջնում Սուրբ Հոգին։ Ի տարբերություն մյուս երեք մանրանկարների, էջն ունի լայն շրջանակ՝ չորս անկյուններում պատկերված են չորս ավետարանիչները։ Իսկ մանրանկարը երիզող շրջանակի չորս կողմերում պատկերված են թանկարժեք քարերով զարդարված ոսկե

սեղանի, որի վրա զոհաբերվեց աստվածային Գառը՝ Հիսուս Քրիստոսը։ Մաղզման խորհրդանշում է նաև Փրկչի ծննդյան մսուրը և այն գերեզմանը, որի մեջ թաղվեց նրա Սուրբ մարմինը (տես՝ Օրմանյան Մ. Արք., Ծիսական բառարան, Անթիլիաս-Լիբանան, 1979, էջ 153-182)։

[11] Գիրք Մեծ Մաշտոց կոչեցեալ, Կոստանդինուպոլիս, 1807, էջ 216։

[12] Օրմանյան Մ. Արք., Ծիսական բառարան..., էջ 182։

[13] Վարդանյան Մ., Հայկական եկեղեցական սկիհների և Բուխարեստի հայոց Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցու թանգարանի արշաթե սկիհների մասին// Անտառ Ծննդոց, Հոդվածների ժողովածու, Երևան, 2015, էջ 486-487։

[14] Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, Հատոր Ա, Երևան, 1965, էջ 790։

[15] Հակոբյան Հ., Ղազարյան Վ., Հայկական մանրանկարչություն. Սկզբնավորումն և զարգացման ընթացքը, Երևան, 2019, էջ 11։

[16] Измайлова Т. А., Армянская миниатюра XI века, Москва, 1979, с. 11.

սկիհներ, որոնց վրա կանգնած են թռչուններ։ Միջնադարյան հայ արվեստի ուսումնասիրող, բյուզանդագետ և հայագետ Սիրարփի Տեր-Ներսիսյանը գրում է, որ պարանոցը վայր թեքած և կտուցը կրծքին սեղմած այս թռչունը հավալուսնն է և խորհրդանշում է Քրիստոսին[17]։ Միջնադարում տարածված կարծիքի համաձայն՝ հավալուսն թռչունը, իր կուրծքը պատառելով, սեփական արյամբ է սնում իր ձագերին։ Հատկանշական է, որ նման պատկերագրություն հետագայում չենք հանդիպում։ Անշուշտ, այստեղ պարզ է դառնում Անհայտ նկարչի խորդանշական պատկերների նշանակությունը, որտեղ ներկայացնում է Քրիստոսի մոտալուտ զոհաբերության լուրը, ինչպես ինքն իրեն զոհաբերող թռչունն է։ Պատկերված մաղզման խորհրդանշում է զոհի սեղան, որի վրա զոհաբերվում էր Գառը՝ Հիսուս Քրիստոսը։ Այսպիսով՝ մանրանկարում սկիհների վրա իրենց կուրծքը կտուցով պատառոտող հավալուսները՝ իբրև ինքնազոհաբերման կերպարներ իրենց ձագերի համար, զուգորդվում են Քրիստոսի ինքնազոհաբերման հետ։ Իսկ սկիհների պատկերումը խորհրդանիշում է Խորհրդավոր ընթրիքից հետո սպասվող Քրիստոսի չարչարանքները։

Հայկական մանրանկարչության մեջ Խորհրդավոր ընթրիքի պատկերման վաղ օրինակներց են համարվում 11-րդ դարի ձեռագրերում առկա մանրանկարները։ 11-րդ դարում, ուրվագծային պատկերազարդ ձեռագրերում որպես գլուխգործոց նկատվում է 1038 թ. Ավետարանը (Մատենադարան № 6201)։ Ձեռագրում նշված են տարեթիվը և գրչի անունը՝ Եվարգրիս, ինչպես նաև Բյուզանդիայի Միքայել կայսեր անունը[18]։ Ավետարանում սյուժետային նկարները ներկայացվում են միմյանց դիմաց՝ ծածկելով թերթի երկու երեսը։ Վերջին ընթրիքը կամ Խորհրդավոր ընթրիքը (նկ. 2) գծային համաչափությամբ արտացոլում է իրադարձության շարժումը։ Գեղանկարչության պարզ օրինակներից է, սակայն կերպարների նրբության շնորհիվ մանրանկարը կարծես խոսում է դիտողի հետ։ Վերջին ընթրիքի մասին հանգամանորեն պատմում են բոլոր չորս ավետարանիչները։ Պատկերագրական տեսանկյունից մանրանկարում տեսնում ենք Քրիստոսի վերջին ընթրիքը Երուսաղեմում՝ տասներկու աշակերտների հետ։ Այստեղ նա հայտնում է իր մոտալուտ մատնության մասին, սահմանում հաղորդության խորհուրդը և կարևոր պատգամներ տալիս աշակերտներին։ Սեղանի աջ մասում պատկերված է Քրիստոսը, իսկ նրանից ձախ նստած են բոլոր աշակերտները։ Սեղանի վրա պատկերված են պնակներով հաց, ձկներ, դանակներ և մեջտեղում գինու մեկ սկիհ։ Քանզի այս արարողության ժամանակ կատարվում է հոգևոր զոհաբերություն։ Աստծո Որդին՝ Գառն Աստծո, բաժանելով առաքյալներին հացն ու գինին, խորհրդաբանորեն դրանք ներկայացնում է որպես անձի զոհաբերություն, որն իրագործվում է Խաչելության ժամանակ։ Ճաշակելով Քրիստոսի մարմինը և այրունը՝ աշակերտները հաղորդվում են Աստծո հետ։ Եվ այս տեսարանով

[17] Տեր-Ներսիսյան Ս., Հայ արվեստը միջնադարում, Երևան, 1975, էջ 60-61։

[18] Измайлова Т. А., Армянская миниатюра XI века..., с. 46; Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, Հատոր Բ., Երևան, 1970, էջ 269։

նկարիչը ներկայացնում է Քրիստոսի կյանքի հետագա ընթացքը, նրա չարչարանքները, որոնք սպասվում են Խաչելության ժամանակ: Սկիհի և գինու առկայությունը ավելի է շեշտում Քրիստոսի ինքնազոհության փաստը: Աստվածաշնչյան մենություններում բազմիցս նշվում է գինու օրինակով Քրիստոսի արյան լինելիությունը, սակայն մանրանկարներում և նրա կյանքի իրադարձություններում ոչ բոլոր տեղերում է, որ սկիհի և գինու առկայությունը կապվում է զոհաբերության հետ: Անշուշտ, սկիհի և գինու մեկնաբանություններն այլ են Կանայի հարսանքիը ներկայացնող մեկնություններում և մանրանկարներում: Ավետարանական այս պատմությունը քրիստոնեական արվեստում ունի պատկերագրական հիմնական կառուցվածք և իր տարածումն է գտել հայկական մանրանկարչության մեջ: Քրիստոսի առաջին հրաշագործությունը ներկայացնող տեսարանը կարող ենք տեսնել մանրանկարների և քանդակների տեսքով[19]: Դարերի ընթացքում տեսարանում տեղի են ունեցել փոփոխություններ ինչպես ոճական, այնպես էլ պատկերային: Սակայն պատմության գլխավոր հերոսները մշտապես եղել են ուշադրության կենտրոնում, և նրանց գործողությունները մնացել են անփոփոխ: Մանրանկարներում գործողությունների կենտրոնում Քրիստոսն է, մի դեպքում սեղանի մոտ նրա կողքին նստած են հարսանքավորները, մյուս դեպքում՝ առաքյալները: Նրանց գլխավերևում սովորաբար գրվում է «առաքյալն» կամ «աշակերտք»: Տեսարանում հանդիպում ենք նաև Աստվածամոր կերպարին: Սեղանին դրված են ափսեներ և բաժակներ, որոնք խնջույքի մասն են կազմում[20]: Հիմնականում մանրանկարչության մեջ հանդիպում ենք այն պահը, երբ Քրիստոսն օրհնում է իրեն պարզած բաժակը, երբեմն էլ պատկերում են լի ջրով կարասներ: Կանայի հարսանիքը ներկայացնող բովանդակալից մանրանկարների լավագույն շարքին է պատկանում Հովհաննես Խիզանցու 1392 թ. № 3717 Ավետարանում առկա Կանայի հարսանիքը մանրանկարը (նկ. 3)[21]: Ավետարանի մանրանկարները Հովհաննես Խիզանցու արվեստին և ոճին բնորոշ նմուշներ են: Նրա արվեստի առանձնահատկություններից են կերպարների աչքերի արտահայտչականությունը, զարմացած հայացքները և այտերի կարմիր գունավորումը: Մեզ հետաքրքրող՝ Կանայի հարսանիքը տեսարանում Հովհաննես Խիզանցին պատկերի ընդհանուր հորինվածքը բաժանել է երեք անհավասար մասերի: Վերին հատվածում Քրիստոսն ու Աստվածամայրն են, փեսան ու փեսեղբայրը, միջնամասում՝ սեղանապետն ու հարսանիքի մյուս մասնակիցները, ստորին հատվածում՝ մատռվակները, կարասները և սկիհները: Հովհաննես Խիզանցին Քրիստոսի հրաշագործությունը ցույց է տալիս մանրանկարի ստորին մասում:

---

[19] Հայտնի է հետևյալ պատմությունը ներկայացնող նմանատիպ քանդակային հորինվածք Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու քանդակներում (տես՝ Տեր-Ներսիսյան Ս., Հայ արվեստը միջնադարում..., էջ 82-85):

[20] Покровский Н., Евангелие в памятниках иконографии, Москва, 2001, с. 251-265.

[21] Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, Հատոր Ա... էջ 1070; Ավետիսյան Ա., Մանրանկարիչ Հովհաննես Խիզանցի, Մատենադարանի № 3717 Ավետարանի նկարազարդումը, Երևան, 2013, էջ 39-43:

Մատռվակներից մեկը կապույտ սափորով ջուրը լցնում է դրանց մեջ, որն էլ վերածվում է գինու: Գինին վայելում է միջնամասի խումբը, նրանցից մեկն արդեն հարբած է: Խիզանցին ոչ միայն պատկերում է նրան վիճակին համապատասխան դիրքով, այլև նրա գլխավերևում գրում է. «Ննջէ խարբաՀս»[22]: Գինին հրաշքի օգնությամբ հայտնվում է սեղանին, որն էլ քրիստոնյա աշխարհում սկզբնական շրջանում զարմանք է առաջացնում: Այստեղ սկիհի պատկերը խորհուրդ է հրաշագործության, հավատի և երկնային ուժ ունեցող Քրիստոսի ներկայության: Ինքը՝ Քրիստոսը, չբացահայտելով իր կատարած հրաշքը, ցանկանում էր, որպեսզի իր զորությունը ճանաչվի ոչ միանգամից՝ թույլ տալով, որ սպասավորներն իրենք վկայեն Քրիստոսի հրաշագործության մասին: Այս ամենը փաստում է այն զսպվածության և պարզության մասին, որը տեսնում ենք մանրանկարների գեղարվեստական ոճավորման մեջ: Քանզի մանրանկարներում առկա սկիհի պատկերները պարզ են, միօրինակ և նախատեսված են Քրիստոսի խորհուրդը ներկայացնելու համար: Վերը նշված Կանայի հարսանիքի պատմությունը իր հոգևոր խորհրդով կապվում է Խորհրդավոր ընթրիքի հետ, որովհետև, ինչպես Կանայում ջուրը գինու փոխվեց, այնպես էլ Խորհրդավոր ընթրիքի ժամանակ գինին դարձավ Քրիստոսի Աստվածային լինելու խորհրդանիշը: Եվ, որպես կանոն, Քրիստոնեության մեջ գինին արժանանում է օրհնության, հետևաբար, եկեղեցական ծեսում սկիհը նույնպես ստանում է օրհնություն, քանզի նրանով ըմպում են Քրիստոսի փրկչական արյունը: Բազմաթիվ մանրանկարներ վկայում են սկիհի կարևորագույն խորհուրդը Քրիստոսի կյանքը ներկայացնող տեսարաններում: Այդ ամենի շարունակությունն են դառնում արծաթե և ոսկեզօծ բաժակները, որոնց վրա փորագրվում և նկարազարդվում են Քրիստոսի կյանքը պատմող տեսարաններ: Սակայն ժամանակին ընդունված պատկերագրական կանոնիկ կարգին և գեղագիտական նախասիրություններին համահունչ՝ ուսումնասիրված մանրանկարներում սկիհի պատկերումը ստացել է երկու խորհրդաբանական մեկնաբանում: Այն խորհրդանշորեն մատնանշում է Քրիստոսի պարզությունը և մաքրությունը՝ գինով և ջրով լի սկիհի օրինակով: Սակայն մի դեպքում կապվում է նրա անձնազոհության, իսկ մյուս դեպքում՝ Աստվածային էության հետ: Սկիհի պատկերումը առանձնակի ուշադրություն է տարածում մանրանկարի բովանդակության վրա: Նրա առկայությունը թույլ է տալիս հասկանալ պատկերի խորհրդաբանական մեկնությունը: Իսկ մաղզմայի առկայությունը օգնում է մեկնաբանել պատկերի ճշգրիտ խորհուրդը՝ ցույց տալով մեղքերից ազատվելու և ապաշխարհելու փրկարար ճանապարհը: Նրա պատկերում Քրիստոսի զոհաբերության կրկնակի ներկայացնումն է: Այսպիսով, սկիհը ոչ միայն Քրիստոսի արյան բաժակն է, այլև նրա երկնային զորության և զոհաբերության խորհրդանիշը:

[22] Նույն տեղում:

СОВЕТ ПОТИР НА ПРИМЕРЕ НЕКОТОРЫХ МИНИАТЮР В АРМЯНСКОЙ МИНИАТЮРНОЙ ЖИВОПИСИ- ***МОНТЕ МАТЕВОСЯН*** *- Наши исследования показывают, что образ потира в армянской миниатюре представлен в схожей простой и художественной стилнзации. Однако мы замечаем тесные связи его двойной интерпретации. На протяжении веков потир использовали в церкви во время Божественной литургии как чашу для крови жертвоприношенного Христа. Но не всегда это символ жертвоприношения. На основе приведенных выше примеров можно различить два таинства, соблюдаемых во время причастия и свадебных церемоний. Всегда благословенный винный потир, кроме того, что является символом Христа и самопожертвования, указывает так же на его чудодействие, чистоту и божественную сущность. Таким образом, сами канонические изоброжения образуют символическую интерпретацию потира.*

Ключевые слова: *Потир, Евангелие, миниатюра, самопожертвование, святое вино, чудо, брак в Кане, крещение, Тайная вечеря.*

CHALICE'S ADVICE ON THE EXAMPLE OF SOME MINIATURES IN ARMENIAN MINIATURE PAINTING – ***MONTE MATEVOSYAN*** *- Our studies show that chalice's image in Armenian miniature is presented in a simple and artistic style. However, we notice the close connections of his double interpretation. For centuries, the chalice has been used in the church at the Saint Liturgy as a blood sacrifice of Christ. But the chalice not always is a symbol of sacrifice. Based on the above examples, it becomes possible to separate two tips, which are observed during the Sacrament and wedding ceremonies. A continually blessed wine-filled bowl of points to his miracle, purity, and the Divine essence of beyond Christ's burning and self-sacrifice symbol . Hence canonical canvas scenes they create the symbolic interpretation of the chalice.*

Key words: *Chalice, Gospel, miniature, self-sacrifice, saint wine, a miracle, marriage at Cana, Baptism, Last Supper*

Նկարներ

Նկար 1. Մկրտություն, Էջմիածնի 989 թ. Մատ. № 2374 Ավետարան (տես՝ Հակոբյան Հ., Ղազարյան Վ., Հայկական մանրանկարչություն. Սկզբնավորումն և զարգացման ընթացքը, Երևան, 2019)

Նկար 2. Վերջին ընթրիք, 1038 թ. Մատ. № 6201 Ավետարան (տես՝ Измайлова Т. А., Армянская миниатюра XI века, Москва, 1979)

Նկար 3. Կանայի հարսանիքը, 1392 թ. Մատ. № 3717 Ավետարան (տես՝ Հակոբյան Հ., Ղազարյան Վ., Հայկական մանրանկարչություն. Սկզբնավորումն և զարգացման ընթացքը, Երևան, 2019)

ԱՐՄԵՆ ԵՂԻԿՅԱՆ
ՀԵՆՐԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀՀ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2018-19ԹԹ. ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Սույն հոդվածը ներկայացնում է ՀՀ-ում հիփոթեքային շուկայի վերլուծությունը 2018-2019 թթ. և անդրադառնում նրա զարգացման միտումներին: Ներկայացված են տվյալ շուկայի փոփոխությունների վրա ազդող հիմնական ցուցանիշները և գործոնները, հիփոթեքային վարկերի բաշխվածությունը ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով, անշարժ գույքի գործարքների բաշխվածությունը Երևանում և մարզերում, ինչպես նաև ուսումնասիրվում են ոլորտի օրենսդրական փոփոխությունները: Վերլուծությունը ամփոփվում է՝ նշելով, որ հիփոթեքային շուկան հարաբերական կայուն է և ունի աճի միտումներ:

Բանալի բառեր՝ *Հիփոթեքային վարկ, տոկոսադրույք, հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորում, հիփոթեքային վարկի պայմաններ, անշարժ գույք, անշարժ գույքի գործարքների բաշխվածություն, կանխավճար, եկամտային հարկ, դրամավարկային քաղաքականություն, ֆինանսական շուկա:*

Հիփոթեքային շուկան ֆինանսական կազմակերպությունների կողմից դիտարկելիս հարկ է նախ և առաջ ուսումնասիրել հիփոթեքային վարկերի տոկոսադրույքները: 2019 թվականի առաջին 10 ամիսների միջին տոկոսադրույքը ֆիզիկական անձանց հիփոթեքային վարկերի համար 2018թ.-ի նույն ժամանակաշրջանի 11.21% դրամի և 9.9% դոլարի ցուցանիշներից նվազել է և այժմ կազմում է համապատասխանաբար 10.78% և 9.75%[1]: Գծապատկեր 1-ով ներկայացվում է նշված ժամանակաշրջանում տոկոսադրույքների դինամիկան:

[1] cba.am

Գծապատկեր 1



2019թ. առաջին 10 ամիսների ընթացքում ֆիզիկական անձանց համար ավանդների միջին տոկոսադրույքները նվազել են 0.12% դրամով և 0.18% դոլարի դեպքում[2]: Սա կարող է ազդակ հանդիսանալ տնօրինած գումարները այլ ոլորտներում (այդ թվում և անշարժ գույքի) ներդնելու:

2018 և 2019 թթ. դրամով տրամադրված հիփոթեքային վարկերի մասնաբաժինը շարունակում է աճ արձանագրել դոլարով տրամադրվածների նկատմամբ: Եթե 2018թ.-ի 3-րդ եռամսյակում դրամով տրամադրված հիփոթեքային վարկերի մասնաբաժինը հիփոթեքային վարկերի պորտֆելում կազմում էր 55.92%, ապա 2019թ.-ի նույն ժամանակահատվածում տվյալ ցուցանիշը աճել է 7.72%-ով՝ հասնելով 63.64 %-ի:

Պետք է նաև փաստել, որ նշված ժամանակահատվածում նվազեցվել է հիփոթեքային վարկերի պարտադիր կանխավճարների չափը[3], ինչպես նաև երկարացվել են հիփոթեքային վարկերի տրամադրման ժամկետները[4], ինչն էլ իր հերթին նվազեցրել է ամսական մարումների գումարը՝ այն ավելի հասանելի դարձնելով հանրության պակաս եկամուտներ ունեցող շերտերին:

2019թ.-ի 3 եռամսյակների ընթացքում Ազգային Հիփոքեթային Ընկերության (ԱՀԸ) կողմից վերաֆինանսավորվել է 8.352 մլրդ դրամի հիփոթեքային վարկ, ինչը 2018թ.-ի նույն ժամանակաշրջանի ցուցանիշից ավել է 1.053 մլրդ դրամով[5]: Սա պայմանավորված է ինչպես անշարժ գույքի շուկայի ակտիվացմամբ, այնպես էլ նշված վարկերի միջին կշռված տոկոսադրույքի 1.13% նվազումով[6]:

2019թ.-ի 3-րդ եռամսյակի ընթացքում անշարժ գույքի շուկայում իրականացվել է

[2] cba.am
[3] https://banks.am/am/news/newsfeed/18235
[4] https://banks.am/am/news/newsfeed/16667
[5] http://www.nmc.am/hy/1431683122
[6] Նույն տեղում

47152 գործարք, որն ապահովել է 17.88% աճ 2018 թվականի համադրելի ժամանակաշրջանի նկատմամբ[7]:

Ստորև դիտարկվում է 2016-2019 թվականների 3-րդ եռամսյակների ընթացքում գրանցված անշարժ գույքի գործարքների դինամիկան, որից էլ պարզ է դառնում, որ ոլորտը տարեցտարի զարգանում է և ընդլայնում սահմանները[8]:

Գրաֆիկ 1



Ստորև ներկայացվում է անշարժ գույքի շուկայում կատարված գործարքների բաշխվածությունը Երևան քաղաքում և մարզերում:

Գրաֆիկ 2



Ակներև է, որ Երևանը անվիճելի առաջատարն է այս պահի դրությամբ, սակայն

[7] https://www.cadastre.am/storage/files/news/news_7234990944_1_Hodvac_IIIer.2019.pdf
[8] Նույն տեղում

հաշվի առնելով, որ նոր կառավարությունը իր գերակա նպատակներից մեկն է սահմանել տարածքային համաչափ զարգացումը[9], կարելի է սպասել նաև այդ շեղման որոշակի կրճատում: Այս գործընթացի դրսևորումներից մեկը կարելի է համարել Գյումրի քաղաքում 2019թ.-ի օգոստոս ամսին անշարժ գույքի ոլորտում գործարքների աճը հուլիս, ինչպես նաև 2018թ.-ի օգոստոս ամիսների համեմատ, որն էլ հետագայում կմեծացնի Շիրակի մարզի մասնաբաժինը ընդհանուր գործարքների ծավալում[10]:

Նշենք նաև, Երևան քաղաքում նախորդ տարվա համադրելի ժամանակահատվածի համեմատ նկատվել է գործարքների 11% աճ, որն էլ իր ազդեցությունն է ունեցել ոլորտի միջին շուկայական գների վրա: Այսպիսով, 2019թ.-ի 3-րդ եռամսյակի դրությամբ բազմաբնակարան շենքերում բնակարանի 1քմ-ի միջին շուկայական արժեքը 2018 թվականի նկատմամբ աճել է 10.4%: Այս ցուցանիշը մարզերի դեպքում կազմում է 3.6%[11]: Գների դիտարկվող այս աճը բնական երևույթ է՝ հաշվի առնելով այն փաստը, որ անշարժ գույքի շուկայում պահանջարկը շարունակական աճ է արձանագրել[12]:

Հիփոթեքային շուկայի ընդլայնմանը մեծապես նպաստում է նաև օրենսդրական դաշտը, որը հնարավորություն է տալիս ֆիզիկական անձանց օգտվել եկամտային հարկի վերադարձից, այն է՝ նվազեցնել հիփոթեքային վարկով առաջնային շուկայից ձեռք բերված անշարժ գույքի վարկի սպասարկման տոկոսադրույքները վճարված եկամտային հարկի չափով: Այն, որ սա ուղղակիորեն ազդել է հիփոթեքային վարկերի շուկայի վրա, փաստում է այն հանգամանքը, որ եթե 2016 և 2017 թվականներին վարկառուներին է վերադարձվել համապատասխանաբար 1.349 մլրդ և 2.416 մլրդ դրամ եկամտային հարկ, ապա 2018թ.-ին եկամտային հարկի վերադարձը կազմել է 4.683 մլրդ դրամ[13], իսկ 2019թ.-ի հունվար-սեպտեմբեր ամիսներին այն կազմել է 5.445 մլրդ դրամ[14], ինչն էլ ցուցադրվում է գրաֆիկ 3-ով:

[9] https://armtimes.com/hy/article/151337
[10] https://bit.ly/2RkMJVd
[11] https://www.cadastre.am/article/1761
[12] https://www.cadastre.am/article/1761
[13] http://www.petekamutner.am/mdNews.aspx?sid=cs&nid=5576
[14] https://hetq.am/hy/article/107898

Գրաֆիկ 3



Ամփոփելով՝ կարող ենք փաստել, որ 2015-2018թթ. վարկառուները հետ են ստացել կուտակային գումարով 8.7 մլրդ դրամ, ինչը վկայում է այն մասին, որ ֆիզիկական անձինք ակտիվորեն օգտվում են իրենց ընձեռված այս հնարավորությունից[15]:

Այս օրենսդրական հնարավորությունը և հիփոթեքների տոկոսադրույքների նվազումը նպաստել է, որ 2018թ.-ի 3-րդ եռամսյակի նկատմամբ դոլարով հիփոթեքային վարկերն ավելացել են դրամական ծավալով 11.4 մլրդ–ով, իսկ դրամով տրամադրված հիփոթեքները՝ շուրջ 74.3 մլրդ–ով:[16]

Անհրաժեշտ է նաև նշել, որ 2020 թ.-ից ուժի մեջ մտնող հարկային օրենսգրքի ֆիզիկական անձանց եկամտային հարկի օրենքում տեղի ունեցած փոփոխությունների համաձայն, տվյալ հարկի հաշվարկի մեջ տեղի կունենա դրույքի համահարթեցում (այսուհետ կկիրառվի 23% ընդհանուր դրույքաչափ բոլոր աշխատավարձերի համար, նախկինի՝ կախված աշխատավարձի մեծությունից, 23%, 28%, 36%-ի դիմաց), որի արդյունքում, մի կողմից կավելանան ֆիզիկական անձանց եկամուտները, որն իր հերթին կխթանի հիփոթեքների ավելացումը, մյուս կողմից՝ կպակասի պոտենցիալ վերադարձի ենթակա եկամտային հարկի չափը, որն էլ միգուցե նվազեցնի անշարժ գույքի առաջնային շուկայի հետաքրքրությունը: Այդուհանդերձ, 2018թ.-ի հունվարի 1-ից արդեն իսկ ուժի մեջ էին մտել եկամտային հարկի վերադարձից օգտվելու որոշակի սահմանափակումներ (անշարժ գույքի արժեքի առավելագույն շեմ է սահմանվել 55 մլն դրամը, ֆիզիկական անձը կարող է այս վերադարձից օգտվել միայն մեկ անգամ, և եռամսյակային վերադարձը չի կարող գերազանցել 1.5 մլն դրամը), որոնք, սակայն, մեծապես չեն խոչընդոտել շուկայի աշխուժության վրա, ընդհակառակը, հիփոթեքային շուկան շարունակել է զարգանալ:

Ֆինանսական շուկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջին 2

[15] http://www.petekamutner.am/mdNews.aspx?sid=cs&nid=5576
[16] http://www.nmc.am/hy/1431567063

տարիներին բանկային հաշվարկային տոկոսադրույքը մնացել է 12%, իսկ դրամավարկային քաղաքականություն իրականացնող ԿԲ-ի կողմից սահմանված վերաֆինանսավորման տոկոսադրույքը 2018թ.-ին կազմել է 6%, ինչը 2019թ.-ին նվազել է մինչև 5.5%, որը ենթադրում է ֆինանսական շուկայի ակտիվացում: Արդյունքում ԿԲ-ն գնաճը կարողացել է ֆիքսել նպատակադրված միջակայքում, որն էլ հնարավորություն է տալիս ենթադրել, որ ֆինանսական շուկան գտնվում է կայուն վիճակում և կտրուկ փոփոխություններ չեն սպասվում:

Ամփոփելով շարադրանքը, կարող ենք փաստել, որ անշարժ գույքի շուկան աշխուժանում է, որն էլ իր հերթին խթանում է հիփոթեքային վարկերի քանակային և ծավալային ավելացումը: Սա պայմանավորված է ինչպես հիփոթեքային վարկերի տոկոսադրույքների նվազումով և տրամադրման պայմանների մեղմացմամբ, այնպես էլ եկամտային հարկի վերադարձի քաղաքականության ներդրմամբ: Կայուն ֆինանսական միջավայրի պայմաններում կարելի է ակնկալել անշարժ գույքի ոլորտում գործարքների ավելացում և հիփոթեքային վարկերի աճ ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում: Այս իրավիճակում պետք է հնարավորինս զգոն լինել և չափից առավել չմեղմացնել հիփոթեքային վարկերի պայմանները, որը հղի է ժամկետանց վարկերի քանակի ավելացման ռիսկով:

ИЗМЕНЕНИЕ ИПОТЕЧНОГО РЫНКА АРМЕНИИ В 2018-2019 ГГ. И ПЕРСПЕКТИВЫ ЕГО РАЗВИТИЯ - ***АРСЕН ЕГИКЯН- ГЕНРИК МАНУКЯН****-В данной статье представлен анализ ипотечного рынка в Армении в 2018-2019 гг., и тенденции его развития. В статье представлены основные показатели и факторы, влияющие на изменения рынка, рассматриваются соотношения ипотечных кредитов в национальной валюте и в долларах США, расспределение сделок с недвижимостью в Ереване и марзах.*

Рассматривается также влияние изменений в законодательстве на развитие ипотечного рынка.

Обобщая произведенный анализ рынка недвижимости, приходим к выводу, что рынок относительно стабилен и имеются тенденции роста.

Ключевые слова*: ипотечный кредит, процент, рефинансирование ипотечного кредита, условия ипотечного кредитовании, недвижимость, распределение сделки недвижимости, предоплата, подоходный налог, монетарная политика, финансовый рынок*

CHANGES OF MORTGAGE MARKET OF ARMENIA IN 2018-2019 AND ITS DEVELOPMENT TRENDS - ***ARSEN YEGHIKYAN- HENRIK MANUKYAN*** *-This article presents analysis of the mortgage market in Armenia for the period 2018-2019 and refers to its development trends.*

The paper also presents the main indicators and factors, that influence the changes in the market, shows proportion of mortgage lending between National currency and US dollars, as well as proportion of real estate transactions between Yerevan and regions.

Article also considers the impact changes in tax policy on the development of mortgages.

As a result of the above-mentioned analysis we state, that the real estate market is relatively stable and has tendency to grow.

***Key words**: mortgage, interest rate, mortgage refinancing, mortgage conditions, real estate, distribution of real estate transactions, prepayment, income tax, monetary policy, financial market.*

ՀԱՅԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ ՀԻՊԵՐԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ, ԲԱԶԻՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏԻ ՀՆԱՐԱՎՈՐ ՆԵՐԴՐՈՒՄԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԳՅՈՒՂԵՐԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՈՒՄԸ

ԽՍՀՄ փլուզումից հետո անդամ պետություններում սկսեցին խորը ճգնաժամեր, որոնք մեծ ազդեցություն ունեցան երկրի սոցիալ-տնտեսական զարգացման վրա: Մինչ այսօր այդ ճգնաժամի հետևանքները երևում են ՀՀ տարածքային համաչափ զարգացման համատեքստում: Եվ սոցիալական, և տնտեսական առումով ՀՀ տնտեսությունը կոնցենտրացված է մայրաքաղաք Երևանում, իսկ երկրի մարզերում և սահմանամերձ բնակավայրերում իրավիճակը մնում է ծանր: Այս հոդվածում քննարկվում են ֆինանսների ու մակրոտնտեսագիտության մեջ հայտնի հակացիկլիկ գործիքների օգտագործման պրակտիկան և դրա պրոյեկտումը սոցիալ-տնտեսական խնդիրներում: Մասնավորապես, առաջարկվում է մտցնել բազիսային եկամտի գաղափարը և այդպիսով խթանել մարզերում մշտական բնակչության ավելացմանը: Այս մոտեցումը կարող է փոխարինել մինչ այս գործող հարկային արտոնություններով աշխատանքին:

Բանալի բառեր *՝ բազիսային եկամուտ, հարկային արտոնություններ, տնտեսության հիպերկենտրոնացում, համաչափ զարգացում, սահմանամերձ գյուղերի վերաբնակեցում, հակացիկլիկ բուֆերներ:*

Ներածություն

Խորհրդային Միության փլուզումից հետո նորանկախ պետությունները հայտնվեցին խորը տնտեսական ճգնաժամի մեջ, որը պայմանավորված էր մի շարք ներքին և արտաքին գործոններով: Բնակչությունը մեծամասամբ տեղյակ չէր շուկայական տնտեսությունից, շուկայական հարաբերություններից: Մեկ այլ պատճառ էր այն, որ Վերակառուցման տարիներից ի վեր կաշառակերությունը և ոչ պետական մտածելակերպը հաստատվել էին բնակչության լայն շրջաններում, ինչը և պահպանվեց հետխորհրդային շրջանում: Այս խնդիրներին ավելացան տարածքային և ազգային-ժողովրդական բախումները, որոնք հանրապետությունների անկախությամբ նոր թափ ստացան՝ վերածվելով ազգամիջյան ռազմական բախումների:

ՀՀ-ում տնտեսության անկումը ճգնաժամային հետևանքներ ունեցավ մարզերում, մասնավորապես՝ սահմանամերձ բնակավայրերում: Մյուս կողմից, տնտեսական վիճակի վատթարացումը երկրում ուրբանիզացիայի բարձր մակարդակի ձևավորման պատճառ դարձավ, ինչն արտահայտվեց մայրաքաղաքի տնտեսական և

սոցիալական գերակայությամբ մարզերի նկատմամբ և նպաստեց դեպի քաղաքային բնակավայրեր բնակչության ներքին տեղաշարժի արագացմանը:

Այս հոդվածի շրջանակներում սոցիալ-տնտեսական ցուցանիշների միջոցով կներկայացնենք Հայաստանի տնտեսության մի քանի ճյուղ՝ շեշտը դնելով տնտեսության աշխարհագրական կենտրոնացվածության վրա: Կներկայացվի Երևան քաղաքը սոցիալ-տնտեսական հիպերկենտրոնացվածության տեսանկյունից, բնակչության դինամիկան Երևանում և ՀՀ մարզերում վերջին մի քանի տարիների ընթացքում: Ամփոփիչ մասում կփորձենք ներկայացնել սոցիալ-տնտեսական համաչափ բաշխման հասնելու հնարավոր լուծումներից մեկը:

ՀՀ տնտեսության հիպերկենտրոնացվածությունը Երևանում

ՀՀ տնտեսության հիպերկենտրոնացվածության մակարդակը հասկանալու համար դիտարկենք որոշակի ցուցանիշներ: Համաձայն, պաշտոնական վիճակագրության[1], 2018թ. մայրաքաղաքի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռը համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- Արդյունաբերություն՝ 38.0%
- Գյուղատնտեսություն՝ 1.3%
- Շինարարություն՝ 52.3%
- առևտուր՝ 728%
- ծառայություններ՝ 81,7%

Մայրաքաղաքը ծառայությունների ոլորտում բացառիկ առաջատարն է անկախությունից ի վեր, ընդ որում վերջին տարիների դինամիկան անփոփոխ է՝ 80% արդյունք ծառայությունների ոլորտում:

Երևանը շարունակում է մնալ առաջատարը նաև արդյունաբերական արտադրանքի ծավալներով՝ գրեթե 40%: Ընդ որում՝ Երևանում են կենտրոնացվել արդյունաբերական արտադրանքի բոլոր ճյուղերը (մշակող արդյունաբերություն, էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում, ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում), բացառությամբ հանքարդյունաբերության, որի կենտրոնը հանդիսանում են Սյունիքի և Լոռու մարզերը:

Երևանում տնտեսական կյանքի հիպերկենտրոնացվածության ապացույց է նաև այն, որ ՀՀ ՀՆԱ-ի 50%-ից ավելին ստեղծվում է Երևանում, մինչդեռ կան մարզեր, որտեղ ՀՆԱ-ի մասնաբաժինը չի գերազանցում նույնիսկ 2.5%-ը (Վայոց Ձորի, Տավուշի մարզեր):

2019 թվականի սկզբին Երևանում մշտական բնակչության թվաքանակը կազմել է 1081.8 հազար մարդ, որը կազմում է ամբողջ բնակչության 36.48%-ը, այսինքն՝ մեկ երրորդից ավելին:

Հիպերկենտրոնացվածության այսպիսի մակարդակը պարունակում է մի շարք

[1] «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով» վիճակագրական ժողովածու, ՀՀ ՎԿ, Երևան, 2019

տնտեսական, սոցիալական և ժողովրդագրական ռիսկեր՝ խոցելի դարձնելով նաև երկրի անվտանգությունը:

- Տնտեսական իմաստով հիպերկենտրոնացվածության այսպիսի բարձր մակարդակը խոչընդոտում է տարածքային համաչափ զարգացմանը, միաժամանակ պայմաններ ստեղծելով Երևանի տնտեսության «գերտաքացման» և հնարավոր անկման համար:
- Ծառայությունների կենտրոնացվածությունը էապես նվազեցնում է վերջիններիս հասանելիությունը մարզերի բնակչության համար:
- Տնտեսական հնարավորությունների կենտրոնացումը Երևանում սոցիալական իմաստով բացասաբար է անդրադառնալու մարզային մակարդակում աղքատության հաղթահարման վրա: Այն նպաստում է բնակչության տեղաշարժին մարզերից դեպի մայրաքաղաք, ինչն արտահայտվում է գյուղական բնակավայրերում ծնելիության մակարդակի կրճատումով:
- Տարածքային անհամաչափ զարգացումը հանգեցնելու է երևան քաղաքի ու մարզերի միջև առկա տնտեսական և սոցիալական անդունդի խորացմանը, ինչն արդեն սպառնալիք կարող է լինել ազգային անվտանգության համար:
- Ուրբանիզացիայի բարձր մակարդակը բացասական ազդեցություն է ունենում գյուղատնտեսության վրա՝ հաշվի առնելով, որ գյուղացիական խոշոր կազմակերպություններն ու վերավաճառողները դառնում են շուկայում թելադրող, իսկ մանր գյուղացիական տնտեսությունները կորցնում են շուկայական մասնաբաժինը: Այսօր գյուղմթերքի գինը սպառողի համար ցածր չէ, սակայն գյուղացուց այն մթերվում է ցածր գնով: Ներկայումս ամբողջ աշխարհում կարևորվում են բիո և բիոդինամիկ պարենային ապրանքները: Ճիշտ բրենդինգի դեպքում միգուցե գյուղացիական արտադրանքը վաճառվեր շատ ավելի բարձր արժեքով, քան մեծ ընկերությունների արտադրանքը:
- Այսօրվա իրավիճակը մտահոգիչ է ոչ միայն տնտեսական, այլ նաև ռազմաքաղաքական առումով: Սահմանամերձ գյուղերից շատերն այսօր լքված են և չբնակեցված. սա կարող է ազգային անվտանգության սպառնալիք լինել:

Ի՞նչ անել

Հիպերկենտրոնացվածության դեմ պայքարելու, կենտրոնացած և գերտաքացման վտանգի տակ գտնվող տնտեսությունը «սառեցնելու», համաչափ զարգացում խթանելու համար կարելի է ներդնել տնտեսական հակացիկլիկ բուֆերներ[2]:

Հակացիկլիկ բուֆերների գաղափարը լայնորեն օգտագործվում է ֆինանսաբանկային համակարգում 2000-ականների Մեծ ռեցեսիայից հետո: Վերջինիս իմաստը հավելյալ դինամիկ բուֆերների կիրառումն է, որոնք փոփոխական կլինեն՝ կախված

[2] Bank for International Settlements, https://www.bis.org/bcbs/ccyb/

ֆինանսական ցիկլից:

Այսպես, մինչև Մեծ Ռեցեսիան բանկային համակարգում օգտագործվում էին պրոցիկլիկ բուֆերներ (պահուստավորումներ), և տնտեսական բարենպաստ շրջաններում բանկերի ընդհանուր պահուստավորման չափը նվազում էր, և նրանք ընդլայնում էին վարկավորումը՝ առավել բարենպաստ դիրքի հասնելով և այդպես շարունակ[3]: Անբարենպաստ ցիկլերի դեպքում պահուստավորումը մեծանում էր՝ ֆինանսական անվտանգությունից ելնելով, ինչը, սակայն, ավելի էր վատթարացնում բանկերի վիճակը: Մեծ ռեցեսիայի հիմնական պատճառներից մեկը հենց սա էր: Ճգնաժամից հետո ֆինանսական համակարգի մասնակիցները և կենտրոնական բանկերը սկսեցին կարևորել ֆինանսական կայունությունը և այդ կայունությունն ապահովող մակրոպրուդենցիալ քաղաքականությունը: Այսօր մակրոպրուդենցիալ քաղաքականության և ֆինանսական վերահսկողության ստանդարտներ սահմանող հիմնական մարմիններից Բազելյան հանձնախումբը սահմանում է մի շարք գործիքներ, որոնք նպաստում են ֆինանսական անվտանգության պահպանմանը: Դրանց մեջ կարևոր դեր ունեն հակացիկլիկ բուֆերները (ի հակադրություն մինչճգնաժամային պրոցիկլիկ բուֆերների): Վերջիններս թույլ են տալիս խուսափել կտրուկ և շոկային փոփոխություններից: Պրոցիկլիկ բուֆերները ճգնաժամային թեստով ապացուցեցին իրենց անարդյունավետությունը, իսկ հակացիկլիկ բուֆերները և տեսականորեն, և գործնականում դառնում են առաջին անհրաժեշտության գործիք ֆինանսական կայունության համատեքստում:

ՀՀ-ում 2019 թվականից ի վեր բանկային համակարգում օգտագործվում են այս բուֆերները[4]: Եվ քանի որ ոչ միայն ֆինանսական համակարգն է բնութագրվում ցիկլերով, այլև ողջ տնտեսությունն ու վերջինիս բաղադրիչները, ապա ինչո՞ւ չկիրառել հակացիկլիկ բուֆերներ համաչափ զարգացում ապահովելու համար:



Գծանկար 1. *Անընդհատ գծանշումը ցույց է տալիս տնտեսական ցիկլը առանց*

[3] The Procyclical Effects of Bank Capital Regulation, Harvard Law School Forum on Corporate Governance, 2013թ. https://corpgov.law.harvard.edu/2013/01/14/the-procyclical-effects-of-bank-capital-regulation/,

[4] ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի թիվ 16-ն որոշումը «Բանկերի կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափից բարձր շեմերի սահմանման և հաշվարկման կարգը» հաստատելու մասին, 2019թ.

հակացիկլիկ բուֆերների, որտեղ առկա են շոկային վայրէջքներ և վերելքներ (boom and bust), որոնք ծանր ազդեցություններ են ունենում տնտեսության վրա, իսկ կետագիծը ցույց է տալիս հակացիկլիկ բուֆերի կիրառումը։ Հակացիկլիկ գործիքը սանձում է վերելքը և մեղմում վայրէջքը, այսպիսով չեզոքացնելով տնտեսական շոկերը։

Առավել պատկերավոր լինելու համար բերենք հետևյալ օրինակը. ունենք 2 միջավայրից (քաղաքից) բաղկացած տնտեսություն։ Առաջին միջավայրում միջին զուտ եկամուտը (առանց հարկերի) այլ հավասար պայմաններում Ա է, իսկ երկրորդում՝ Բ։ Դիցուք՝ Ա-ն մեծ է Բ-ից։ Ստացվում է, որ առաջին միջավայրն ավելի գրավիչ է, քան երկրորդը։ Բնականաբար, մարդիկ կձգտեն տեղափոխվել առաջին միջավայր, և տնտեսությունը կկենտրոնանա առաջին միջավայրում։ Պետությունը կարող է վերականգնել հավասարակշռությունը հակացիկլիկ բուֆերով, այսինքն՝ կամ առաջին միջավայրում մտցնելով հավելյալ հարկային պարտականություններ, կամ երկրորդում ապահովելով լրացուցիչ եկամուտ։ Այս դեպքում երկու միջավայրերում զուտ եկամուտների չափերը գրեթե կհավասարվեն։

Հենց սա է հակացիկլիկ բուֆերի գաղափարը, որ կարելի է ֆինանսական հարթությունից պրոյեկտել սոցիալ-տնտեսական հարթություն։

Ըստ էության, եթե որոշ հարկային արտոնություններ գործում են սահմանամերձ գյուղերում և այդ արտոնությունները չկան մայրաքաղաքում, ինքնըստինքյան ստացվում է, որ մի բնակավայրում մարդիկ վճարում են ավելի շատ, իսկ մյուս բնակավայրում՝ ավելի քիչ։ Դինամիկ բուֆերների գաղափարը հեշտությամբ կարելի է նկատել։

Սակայն արդյո՞ք այս լուծումը հանգեցրել է մայրաքաղաքի սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական վիճակի «բեռնաթափման»՝ հօգուտ սահմանամերձ գյուղերի։ Այս հարցին պատասխանելով՝ կպատասխանենք գործող արտոնություններ-ների արդյունավետության հարցին։

Մարզային բնակչության թվաքանակի դինամիկան[5], ըստ էության, փաստում է, որ հարկային արտոնությունները սահմանամերձ գոտիներում չեն նպաստել բնակչության թվաքանակի ավելացմանը։

Բնակչություն	2015	2016	2017	2018	2019
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	100.00%	100.00%	100.00%	100.00%	100.00%
Ք.ԵՐԵՎԱՆ	35.59%	35.81%	36.03%	36.25%	36.48%
ԱՐԱԳԱԾՈՏՆ	4.36%	4.33%	4.30%	4.28%	4.23%
ԱՐԱՐԱՏ	8.64%	8.63%	8.65%	8.67%	8.66%
ԱՐՄԱՎԻՐ	8.87%	8.89%	8.90%	8.90%	8.90%

[5] «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով» վիճակագրական ժողովածու, ՀՀ ՎԿ, Երևան, 2019.

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ	7.74%	7.73%	7.73%	7.73%	7.70%
ԼՈՌԻ	7.57%	7.50%	7.40%	7.31%	7.27%
ԿՈՏԱՅՔ	8.47%	8.47%	8.47%	8.46%	8.48%
ՇԻՐԱԿ	8.18%	8.11%	8.01%	7.92%	7.87%
ՍՅՈՒՆԻՔ	4.66%	4.65%	4.65%	4.66%	4.64%
ՎԱՅՈՑ ՁՈՐ	1.71%	1.69%	1.68%	1.67%	1.65%
ՏԱՎՈՒՇ	4.21%	4.19%	4.17%	4.15%	4.12%

Աղյուսակ 1. *ՀՀ մարզերի և Երևանի բնակչությունը՝ հարաբերած ՀՀ ընդհանուր բնակչության, 2015-2019թթ. դինամիկա:*

Իրականում, եթե մարդիկ չունեն եկամուտ, ապա հարկերի ցածր դրույքաչափը նրանց քիչ է հետաքրքրում: Բերենք հետևյալ օրինակը. պետությունը իրավաբանական անձանց կարող է օգնել հետևյալ երկու մեթոդներով.

1. Հարկերի իջեցում
2. Սուբսիդիաների տրամադրում:

Նույն մեթոդները կարող են գործածվել ֆիզիկական անձանց նկատմամբ՝ նպատակ ունենալով վերաբնակեցնել որոշ շրջաններ: Ենթադրենք պետությունը որոշում է «սուբսիդավորել» սահմանամերձ գյուղերում ապրող մարդկանց: Այսինքն նրանց տրամադրել որոշակի եկամուտ՝ անկախ նրանց զբաղվածության կարգավիճակից: Կարևոր է, որ նույն եկամուտը տրամադրվի և՛ աշխատող մարդկանց, և՛ գործազուրկներին, որպեսզի այն չնմանվի գործազրկության կամ անաշխատունակության նպաստի: Այս օրինակում հակացիկլիկ բուֆերի մոդելի նման կարող է աշխատել բազիսային եկամուտը, տես՝ ոչ պայմանական եկամուտ, բացարձակ եկամուտ:

Այդ բազիսային եկամուտը կարող է գրավիչ լինել այն մարդկանց համար, որոնք բնակվում են այլ քաղաքներում կամ գյուղերում, բայց չունեն բավականին եկամուտ: Բազիսային եկամուտը, որքան էլ թվա հեքիաթային և անիրական, արդեն իսկ փորձարկման փուլում է որոշ եվրոպական երկրներում: Խոսքը մասնավորապես Շվեյցարիայի մասին է: Միջազգային մակարդակով ԲԵ-ի տարբեր ձևաչափի տեղայնացված փորձեր են իրականացվել Հնդկաստանում, Նամիբիայում, Նիդերլանդներում:[6]

Եթե մանրամասնենք, թե որտեղից է վճարվելու բազիսային եկամուտը, ապա կստացվի, որ եկամուտի աղբյուր հանդիսացող հարկերի մեծ մասը վճարում են հենց այն մարդիկ, որոնք չեն օգտվում բազիսային եկամտից: Կստացվի, որ, պայմանականորեն, Մովսես գյուղի բնակիչը այլ հավասար պայմաններում ստանում է ավելի շատ գումար, իսկ Երևան քաղաքի բնակիչը վճարում է ավել գումար: Եթե Երևան քաղաքի բնակչին դա դուր չի գալիս, նա կարող է տեղափոխվել Մովսես գյուղ: Եթե Մովսես գյուղի բնակչությունը գնալով մեծանա, բազիսային եկամտի չափը աստիճանաբար կնվազի և կստեղծվի հավասարակշռություն բնակչության և հարկեր-

[6] Վ. Քառյան, ԲԱՅԱՐՁԱԿ ԵԿԱՄՈՒՏ ԵՎ ԴՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ, զեկույց, ՀՖՀՀ 2018թ.

բազիսային եկամտի միջև:

Բազիսային եկամուտը կարող է նոր թափ հաղորդել ՀՀ սահմանամերձ գյուղերում բնակիչների սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը:

Ընդ որում, կարևոր է, որ կիրառվի աստիճանային մոտեցում, այսինքն՝ Երևանից առավել հեռու և սահմանին առավել մոտիկ բնակավայրերն ունենան ավելի բարձր բազիսային եկամուտ, իսկ Երևանն՝ ընդհակառակը, պետք է ունենա համեմատաբար բարձր հարկեր: Մայրաքաղաքում և մեծ քաղաքներում ապրելը պետք է լինի ավելի թանկ, և մարդիկ պետք է նախընտրեն փոքր գյուղերը:

Ամփոփում

ՀՀ-ում տնտեսության աշխարհագրական կենտրոնացվածությամբ պայմանավորված՝ համաչափ զարգացումը և Երևան քաղաքի տնտեսական թեթևացումը դառնում են առաջնային խնդիրներ: Հոդվածում ներկայացված լուծումը, այն է՝ բազիսային եկամտի ներդրումը սահմանամերձ բնակավայրերում, բավական բարդ և առանձին ուսումնասիրություն պահանջող նյութ է: Այս հոդվածը նպատակ ունի ուշադրություն հրավիրել բազիսային եկամտի՝ որպես տարածքային համաչափ զարգացման գործիքի, կիրառման հնարավորությունների և վերջինիս սոցիալական, տնտեսական, ժողովրդագրական և հոգեբանական նշանակության վրա:

Բազիսային եկամտի ներդրման առաջին փուլում բազիսային եկամտի չափը կարող է լինել մոտավոր գնահատական՝ հարկային արտոնություններով պայմանավորված չվճարված հարկերի չափով: Այսինքն տարածաշրջանում հարկային արտոնություններ տրամադրելու փոխարեն գործի ոչ պայմանական եկամուտը: Այս դեպքում պետական բյուջեից հավելյալ ծախս կկատարվի այն դեպքում, երբ բնակչության տեղաշարժի արդյունքում այդ բնակավայրերի մշտական բնակչությունն ավելանա:

Այնուամենայնիվ, հարկավոր է ընդունել, որ ներկայիս բյուջետային հնարավորությունները կարող են հնարավորություն չտալ ապահովելու միգրացիայի հանգեցնող բազիսային եկամտի անխափան կիրառումը: Եվս մեկ արգելք կարող է հանդիսանալ այն, որ գաղափարը բավականին սոցիալիստական է և քաղաքացիների կողմից կարող է ոչ միանշանակ ընկալվել:

СВЕРХКОНЦЕНТРИРОВАННАЯ ЭКОНОМИКА РА, ВОЗМОЖНОЕ ВНЕДРЕНИЕ БАЗОВОГО ДОХОДА И РАССЕЛЕНИЕ ПРИГРАНИЧНЫХ ГОРОДОВ В АРМЕНИИ- ***АЙК ОГАННИСЯН-*** *После распада СССР в государствах-членах Союза начались глубокие кризисы, которые оказали серьезное влияние на социально-экономическое развитие стран. На сегодняшний день последствия этого кризиса очевидны в контексте сбалансированного территориального развития Республики Армения. Как в социальном, так и в экономическом плане экономика Республики Армения сконцентрирована в столице Ереване, и ситуация в провинциях и приграничных регионах страны остается сложной. В данной статье рассматривается*

практика использования антициклических инструментов, известных в области финансов и макроэкономики, и их проекторивание в социально-экономических проблемах. В частности, предлагается включить идею базового дохода и тем самым стимулировать рост постоянного населения в регионах. Этот подход может заменить существующие в некоторых регионах налоговые льготы.

Ключевые слова: *базовый доход, налоговые льготы, концентрация экономики, территориальное развитие, расселение приграничных городов, антициклические буферы.*

*THE HYPER CONCENTRATED ECONOMY OF RA, THE POSSIBLE IMPLEMENTATION OF BASIC INCOME AND THE RESETTLEMENT OF BORDER TOWNS IN ARMENIA -**HAYK HOVHANNISYAN**- After the collapse of the USSR, deep crises began in the member states of the union, which had a serious impact on the socio-economic development of countries. Today, the consequences of this crisis are obvious in the context of the balanced territorial development of the Republic of Armenia. Both socially and economically, the economy of the Republic of Armenia is concentrated in the capital Yerevan, and the situation in the provinces and border regions of the country remains difficult. This article discusses the practice of using countercyclical tools known in the field of finance and macroeconomics, and their projection in socio-economic problems. In particular, it is proposed to include the idea of basic income and thereby stimulate the growth of the resident population in the regions. This approach can replace existing tax incentives in some regions.*

Key words*: Basic Income, tax privileges, concentration of the economy, territorial development, resettlement of border towns, countercyclical buffers.*

ГАЯНЕ ОСИПЯН

ОБ ОСОБЕННОСТЯХ ПРОЯВЛЕНИЯ ФОНЕТИКО-ФОНОЛОГИЧЕСКОЙ ИНТЕРФЕРЕНЦИИ АРМЯНСКИХ ШКОЛЬНИКОВ ПРИ ОБУЧЕНИИ РКИ

В процессе обучения РКИ в языковом окружении, характерном для Арцаха, для предупреждения и коррекции ошибок интерференционного плана, важно учитывать влияние не столько и не только нормативного литературного армянского произношения, сколько привычных для армянских школьников диалектных фонетико-интонационных особенностей их устной русской речи.

В нашей работе языковая интерференция понимается, как явление, возникающее в результате контакта трех языковых систем и приводящее к появлению в речи говорящего отклонений от норм русского языка, что обусловлено влиянием как АЯ (армянского языка), так и его диалекта.

Ключевые слова: *РКИ (русский как иностранный), интерференция, языковой контакт, произношение, билингвизм, фонетика, карабахский диалект.*

Практическое овладение фонетическим строем неродного и/или иностранного языка, как известно, является одним из самых сложных аспектов обучения этому языку. Проблемы обучения фонетике в целом и конкретизация требований к изучающим иностранный язык или РКИ, в частности, в условиях субординативного армяно-русского и русско-армянского билингвизма и диглоссии, еще мало исследованы. Эти требования могут быть разработаны на основе контрастивно-сопоставительного анализа фонологических систем РЯ(русского языка) ,АЯ(армянслого языка) и КДАЯ (карабахского диалекта армянского языка). Одним из условий решения данной задачи является максимальный учет проявлений армяно-русского билингвизма армянских школьников. В контактирующих языках происходят фактически два процесса – частичное смешение и усвоение типологических моделей. Для более точного наименования этого явления специалисты предлагают использовать термин *языковая интерференция*, а не языковое смешение (*Мечковская* http://bugabooks.com/book/240-socialnaya-lingvistika/46-vzaimovliyanie-yazykov-kak-glavnyj-faktor-yazykovoj-yevolyucii.html.).

В методиках обучения неродным и/или иностранным языкам более распространено понимание интерференции как отрицательного переноса навыков родного языка (или навыков, сформированных в другом изучаемом языке) на изучаемый. Отрицательный перенос (интерференция) противопоставляется положительному переносу (трансференции, транспозиции), при котором имеет место перенос уже сформированных навыков первичного систематического явления, не вызывающий нарушений в системе изучаемого языка

(*Мечковская* 1983; *Кулешов* 1987 и др.).

Начиная со второй половины прошлого века понятие *языковая интерференция* последовательно разрабатывается зарубежными и отечественными лингвистами, социолингвистами и методистами:

А) *как сложное языковое явление и следствие языковых контактов* (*Jakobovits* 1969; *Clyne* 1972; *Гавранек* 1972; *Хауген* 1972; *Шухард* 1950; *Щерба* 1958; *Дешериева* 1976; 1981; *Карлинский* 1980; *Виноградов* 1990; *Пономарев* 2002; *Кузьмина* 2008 и др.).

Б) *как проблема двуязычия и многоязычия* (*Балиашвили* 1988; *Михайлов* 1972; *Быстрова* 2000; *Гальскова* 2003; *Черничкина* 2007; *Хачикян* 1989; *Есаджанян, Шахкамян* 1990; *Шахвердова* 1998; *Блягов* 2006; *Балыхина* 2007 и др.).

В) *применительно к методике обучения РЯ иностранцев* (*Калинина* 1976; *Бурнисса* 2004 и др.);

Г) *применительно к проблематике обучения иностранному языку / иностранным языкам в русскоязычной аудитории* (*Розова* 1967; *Верещагин* 1968; *Буранов* 1972; *Вишневская* 1984; *Галкина* 1988; *Васина* 2004; *Черничкина* 2007 и др.);

Д) *как языковое явление в условиях одностороннего / двустороннего национально-русского двуязычия* (*Вафеев* 1984; 1998; 2000; *Василевская* 1990; 2000; *Вербицкая* 2004 и др.).

Интерференция проявляется, как правило: во втором языке билингва под влиянием родного языка и речи; в родном языке билингва под воздействием второго языка и речи. Специалистами подмечено, что интерференция может возникать также как следствие языкового опыта в третьем и прочих языках под влянием второго неродного (иностранного) языка (*Аствацатрян* 1986). В нашем случае имеет место также интерференция во втором языке под влиянием местного диалекта – КДАЯ.

Исследование фонетической интерференции при изучении языков имеет огромное значение. В связи с взаимодействием РЯ и АЯ и КДАЯ должны быть учтены результаты влияния АЯ и КДАЯ на устную русскую речь армян, связанного с межъязыковой и внутриязыковой интерференцией. Это определяется тем, что выявление сходств и различий структур сопоставляемых фонетических систем обусловливает эффективность обучения лишь при условии, когда учитываются интерферентные ошибки. В нашей работе *языковая интерференция* понимается как *явление, возникающее в результате контакта трех языковых систем (в условиях субординативного билингвизма и диглоссии) и приводящее к появлению в речи говорящего отклонений от норм РЯ, обусловленных влиянием как АЯ, так и КДАЯ.*

Несомненно, что в основе любого сопоставления лежит выявление различий, в том числе в сходных явлениях. Нас интересует лингвистический аспект интерференции при армяно-русском двуязычии. В лингвистической литературе выделяются разные типы интерференции. Это прежде всего межъязыковая и внутриязыковая интерференция, в которых можно выделить явную и скрытую интерференцию. Нами учитывается также уровневая интерференция, то есть интерференция фонолого-фонетическая, грамматическая, лексическая

и стилистическая. В настоящем исследовании, как отмечалось, мы обращаем внимание преимущественно на фонолого-фонетическую интерференцию.

Современная методика обучения иностранным языкам и РКИ располагает определенным количеством сведений о фонолого-фонетической интерференции. Однако эти данные не исчерпывают всей глубины этой проблемы, имеющей основополагающее значение для методики обучения нормативному произношению при взаимодействии разносистемных языков и/или диалектов. В частности, недостаточно хорошо изучен вопрос о психологических особенностях и типах фонетической (фонологической) интерференции в условиях диглоссии, что и явилось одной из причин выбора темы нашей статьи. Фонетическая интерференция выступает в качестве одного из основных факторов, которые тормозят процесс образования произносительных навыков и умений при усвоении неродного (иностранного) языка. Степень интерференции, которой подвергаются различные явления фонетического плана во взаимодействующих языковых системах, может быть самой разной, и ее уровень во многом определяется сформированностью и прочностью соответствующих навыков в первом языке (родном диалекте). В нашем случае в русской речи неносителя языка происходит столкновение и взаимодействие трех различных языковых стихий – системы АЯ и КДАЯ с системой РЯ. При инофонном произношении в РЯ привносятся элементы чужих систем, вследствие чего наблюдается не только нарушение произносительных норм, но и употребление образований не только не существующих, но и невозможных в РЯ. Интерференция может быть рассмотрена как предпосылка для взаимодействия двух или более языков. Практическое овладение фонетическим строем неродного и/или иностранного языка, как известно, является одним из самых сложных аспектов обучения этому языку. Проблемы обучения фонетике в целом и конкретизация требований к изучающим иностранный язык и РКИ, в частности, в условиях субординативного армяно-русского и русско-армянского билингвизма и диглоссии ,еще мало исследованы. Эти требования могут быть разработаны на основе контрастивно-сопоставительного анализа фонологических систем РЯ и АЯ и КДАЯ. Одним из условий решения данной задачи является максимальный учет проявлений армяно-русского билингвизма учащихся младших и средних классов.

Российские ученые в принципе разделяют позицию своих зарубежных коллег. Так, согласно В.А. Виноградову, “интерференция – взаимодействие языковых систем в условиях двуязычия, складывающегося либо при языковом контакте, либо при индивидуальном усвоении неродного языка”, а отклонения от нормы и системы неродного языка, вызванные влиянием родного, ученый считает выражением процесса интерференции (Виноградов 1990, 197).

Интерференция может проявляться на лингвистическом и культурологическом уровнях (Гулакян 1988; Красных 2003; Кузьменкова 2005 и др.). Исследование фонетической интерференции при изучении языков имеет огромное значение. В связи с взаимодействием РЯ и АЯ и КДАЯ должны быть учтены результаты влияния АЯ и КДАЯ на устную русскую речь армян, связанного с межъязыковой и внутриязыковой

интерференцией. Это определяется тем, что выявление сходств и различий структур сопоставляемых фонетических систем обусловливает эффективность обучения лишь при условии, когда учитываются интерферентные ошибки. В нашей работе языковая интерференция понимается как явление, возникающее в результате контакта трех языковых систем (в условиях субординативного билингвизма и диглоссии) и приводящее к появлению в речи говорящего отклонений от норм РЯ, обусловленных влиянием как АЯ, так и КДАЯ. Несомненно, что в основе любого сопоставления лежит выявление различий, в том числе в сходных явлениях. Нас интересует лингвистический аспект интерференции при армяно-русском двуязычии. Как указывалось выше, в лингвистической литературе выделяются разные типы интерференции. Это прежде всего межъязыковая и внутриязыковая интерференция, в которых можно выделить явную и скрытую интерференцию. Нами учитывается также уровневая интерференция, то есть интерференция фонолого-фонетическая, грамматическая, лексическая и стилистическая.

Обращение к звуковой системе не представляется возможным без обращения к вопросу о том, насколько фонетически обусловлены фонологические процессы. Эта обусловленность может проявляться в двух формах: во-первых, говорящий на неродном (иностранном) языке может не почувствовать разницы между звуками родного и изучаемого языка (родного диалекта и изучаемого языка) – в этом случае ошибки в произношении обусловлены сенсорными характеристиками говорящего; во-вторых, при адекватной сенсорной оценке правильное произношение может оказаться невозможным под влиянием особенностей артикуляционной базы родного языка (родного диалекта) – в этой ситуации ошибки можно считать моторными по своей природе. Возможно, конечно, и более сложное переплетение причин, порождающих фонолого-фонетическую интерференцию, которая, по мнению некоторых исследователей, наиболее существенна в сопоставлении с иными нарушениями языковой системы (Щерба 1957). Именно на ее долю при обучении неродному и/или иностранному языку приходится свыше 50% всех речевых ошибок.

Современная методика обучения иностранным языкам и РКИ располагает определенным количеством сведений о фонолого-фонетической интерференции. Однако эти данные не исчерпывают всей глубины этой проблемы, имеющей основополагающее значение для методики обучения нормативному произношению при взаимодействии разносистемных языков и/или диалектов. В частности, недостаточно хорошо изучен вопрос о психологических особенностях и типах фонетической (фонологической) интерференции в условиях диглоссии, что и явилось одной из причин выбора темы нашего исследования. Фонетическая интерференция выступает в качестве одного из основных факторов, которые тормозят процесс образования произносительных навыков и умений при усвоении неродного (иностранного) языка. Степень интерференции, которой подвергаются различные явления фонетического

плана во взаимодействующих языковых системах, может быть самой разной, и ее уровень во многом определяется сформированностью и прочностью соответствующих навыков в первом языке (родном дилекте). В нашем случае в русской речи неносителя языка происходит столкновение и взаимодействие трех различных языковых стихий – системы АЯ и КДАЯ с системой РЯ. При инофонном произношении в РЯ привносятся элементы чужих систем, вследствие чего наблюдается не только нарушение произносительных норм, но и употребление образований не только не существующих, но и невозможных в РЯ.

